ԺՈՂՈՎՐԴԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

[ՀԱԿԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՐՈՑԿԻՍՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԹԻՎ]

ՀԱՑԿՈՒՄԱՐԱՑ • ԵՐԵՎԱՆ • 1937

323.27
Ժ-84

ՍՏՈՒԳՎԱԾ է 1961

ԺՈՂՈՎՐԴԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

[ՀԱԿԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՐՈՑԿԻՍՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԹԻՎ]

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՏ • ՑԵՐԵՎԱՆ • 1937

ԳՐԱԴԱՐ

А II / 9957

ВРАГИ НАРОДА

[К итогам процесса
антисоветского
троцкистского центра]

Сборник статей

Армпартиздат, Ереван, 1937

:340.3:329.18

ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՃԻՌԸ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԱՏԱՎՃԻՌՆ Է

Խորհրդային ժողովուրդը միահամուռ հավանությամբ դիմավորեց Դերազույն դատարանի Զինվորական կոլեգիայի դատավճիռը հակախորհրդային տրոցկիստական կենտրոնին մասնակցողների գործի վերաբերմամբ։ Ֆաբրիկաներում և գործարաններում, կոլտնտեսություններում, աշխատավորների համաքաղաքային միտինգներում ծավալվեց ժողովրդական զայրույթի բուռն ալիքը մեր հայրենիքի սուրբ դավաճանների ու մատնիչների դեմ, բանվորներին ու կարմիր–բանակայիններին ապտակողների դեմ, գերմանական ու ճապոնական լրտեսների, համաշխարհային պատերազմի հրձիգների դեմ, վորոնք գործում էին ժողովրդի կատաղի թշնամի Տրոցկու անմիջական ցուցումով։ Ակասկած է, վոր դատարանի արդար դատավճիռն ամբողջ առաջավոր մարդկությունը հավանությամբ կընդունի. այդ դատավճիռը մարդկությանն ազատում է ֆաշիստական շների բանդայից, հաֆաշիստական պատերազմի հրձիգներից, վորոնք իրենց ֆաշիստ տերերի հետ միասին տասնյակ միլիոնավոր աշխատավորների կործանումն էին պատրաստում։

Մի շարք որերի ընթացքում դատական դռնբաց նիստում ամբողջ աշխարհի առաջ քննարկվում էին հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի մասնակիցների, հայրենիքի դավաճանների ու մատնիչների, վնասարարների, դիվերսանտների ու լրտեսների հանցագործությունները։ Դատարանում բացվեց չլսված, հրեշավոր տրոցկիստական չարագործությունների զզվելի, սարսռեցուցիչ պատկերը։ Դատավարության ժամանակ մեղադրյալների ցուցմունքներով ապացուցվեց ժողովրդի ամենավոխերիմ թշնամի Հուդա–Տրոցկու հանցանքը գերմանական ֆաշիզմի գեկավարներից մեկի՝ Ռուդոլֆ Հեսսի հետ բանակցություններ վարելու գործում։ Ժողովրդի թշնամի Լ. Տրոցկին Հեսսի հետ ունեցած իր

բանակցություններում խոստացել է՝ Խորհրդային Միության պարտության հետևանքով տրոցկիստական կառավարությունն իշխանության գլուխ անցնելու դեպքում Գերմանիային ու Ճապոնիային մի շարք քաղաքական, տնտեսական և տերիտորիալ զիջումներ անել ի հաշիվ ԽՍՀՄ-ի, այն է՝ Գերմանիային տալ Ուկրաինան, իսկ Ճապոնիային—Պրիմորյեն և Պրիամուրյեն: Ժողովրդի թշնամի Լ. Տրոցկին գերմանական ֆաշիզմի առաջ պարտավորվել է՝ իշխանությունը գրավելու դեպքում վերացնել խորհտնտեսությունները, ցրել կոլտնտեսությունները, հրաժարվել յերկրի ինդուստրացման քաղաքականությունից և Խորհրդային Միության տերիտորիայի վրա վերականգնել կապիտալիստական հարաբերությունները: Ժողովրդի թշնամի Լ. Տրոցկին պարտավորություն է ստանձնել ամեն տեսակի ողնություն ցույց տալ ֆաշիստական ագրեսորներին պարտվողական ագիտացիայի միջոցով, վնասարարական, դիվերսիոն գործունեության միջոցով՝ ինչպես խաղաղ ժամանակ, նույնպես և առանձնապես Խորհրդային Միության վրա լինելիք ռազմական հարձակման ժամանակ:

Ֆաշիստական ճիվաղ Տրոցկու անմիջական ցուցումներով հակախորհրդային տրոցկիստական «զուգահեռ կենտրոնը» ծավալել է վնասարարական, լրտեսական, տեռորիստական գործունեություն: Տրոցկիստական բանդիտներն շտապում էին վճարել իրենց ֆաշիստական տերերին արյունալի այն մուրհակների դիմաց, որ նրանց տվել էր ժողովրդի ամենավոխերիմ թշնամի Լ. Տրոցկին: Հայրենիքի ստոր դավաճաններն ու մատնիչներն շտապում էին ապացուցել, որ տրոցկիստներն իրոք թե ինչ-որ «ռեալ» ուժ են ներկայացնում: Դավաճանորեն ոգտագործելով իրենց պաշտոնական դիրքը՝ տրոցկիստական բանդիտներն ու լրտեսներն զբաղվում էին պլանաչափ վնասարարությամբ՝ Խորհրդային Միության պաշտպանական հզորությունը վիժեցնելու նպատակով, թշնամուն էին հանձնում կարևորագույն, ամենագաղտնի տեղեկություններ պաշտպանական արդյունաբերության և յերկաթուղիների աշխատանքի մասին: Նրանք կազմակերպում էին մի շարք հրկիզումներ և պայթյուններ գործարաններում ու հանքահորերում, մի շարք յերկաթուղային խորտակումներ: Նրանց չէին կանգնեցնում վիրավորների ու մեռնողների հառաչանքները: «Վորքան շատ զոհեր լինեն, այնքան լավ»,—պնդում էին տրոցկիստական-ֆաշիստական մարդակերները, ձգտելով բանվորների մեջ դժգոհություն առաջացնել խորհրդային իշխանության դեմ:

Ցեվ այդ հրեշները, վոր սեփական ձեռքերով սպանել են տասնյակ և հարյուրավոր աշխատավորների, սառնասրտորեն մատնել են բանվորներին ու կարմիր-բանակայիններին տանջալից մահվան՝ պայթյունների կրակում, յերկաթուղային խորտակումներում, համարձակվեցին դեռ ներման մասին խնդրել:

ԽՍՀՄ-ի դատախազ, պետական մեղադրող ընկեր Ա. Յա. Վիշինսկին, իր վայլուն, խորապես հիմնավորված ճառում յերևան հանելով տրոցկիստական-ֆաշիստական բանդայի սև հանցագործությունները, միանդամայն ճիշտ հայտարարեց.

«Մենակ յես չեմ մեղադրում: Իմ կողքին, ընկե՛ր դատավորներ, յես զգում եմ, կարծես թե ահա այստեղ կանգնած են այս վոճրագործությունների և այս վոճրագործների զոհերը՝ հենացուպերին կոթնած, հաշմանդամ դարձած, կիսակենդան և, կարող ե պատահել, բոլորովին առանց վոտքերի, ինչպես Զուսովսկայա կայարանի այն սլաքավարուհին, ընկեր Նադովիցինան, վորն այսոր ինձ դիմել ե «Правда»-յի միջոցով և վորը 20 տարեկան հասակում կորցրել ե զույգ վոտքերը, կանխելով ահա այս մարդկանց կազմակերպած խորտակումը: Ցես մենակ չեմ: Ցես զգում եմ, վոր իմ կողքին ահա այստեղ կանգնած են սարսուռ ազդող հանցագործությունների՝ սպանված ու հաշմացած զոհերը, վորոնք ինձնից, վորպես պետական մեղադրողից, պահանջում են լրիվ ծավալով ներկայացնել մեղադրանքը:

Ցես մենակ չեմ: Թո՛ղ զոհերը թաղված լինեն, բայց նրանք այստեղ կանգնած են իմ կողքին, մատնացույց անելով մեղադրյալների այս նստարանի վրա, ձեզ վրա, մեղադրյալնե՛ր, իրենց սարսափելի ձեռքերով, վորոնք փտել են դերեզմաններում, ուր դուք ուղարկել եք նրանց...»:

Ժողովրդի կատաղի թշնամի տրոցկիստներին հաջողվեց սպանել շատ տասնյակ լավագույն ստախանովական-բանվորների և հայրենիքի անվեհեր պաշտպան — կարմիր-բանակայինների: Բայց նրանք պատերազմ բռնկելու դեպքում ավերումների և սպանությունների ե՛լ ավելի սոսկալի, իսկական դիվային ծրագրեր եյին նշում Տրոցկու անմիջական ցուցումներով, վորոնք համաձայնեցված եյին գերմանական գլխավոր շտաբի և ճապոնական հետախուզության հետ: Բավական ե ասել, վոր Պյատակովը կարգադրություն եր արել պատերազմն սկսվելու մոմենտին հրկիզել Կեմերովոյի քիմիական կոմբինատը—մեր քիմիական արդյունաբերության կարևորագույն բաղաներից մեկը: Լիվշիցը, Կնյազև-

վը և յերկաթուղային տրանսպորտում յեղած մյուս վնասարարները ու լրտեսները նախապատրաստում եյին զինվորական եշելոնների, ինչպես նաև զորքի անման ու սանիտարական սպասարկման կետերի վարակումը մահաբեր բակտերիաներով:

Տրոցկիստական վիժվածքները ձգտում եյին ինչ գնով էլ ուզում և լինի արագացնել իմպերիալիստների հարձակումը Խորհրդային Միության վրա: Ֆաշիստական պարագլուխները 1937 թվականը նշում եյին վորպես պատերազմ սկսելու վորոշակի ժամկետ: Տրոցկիստները յերազում եյին իշխանության գլուխ անցնել ֆաշիստական ավիների միջոցով, բանվորների և գյուղացիների դիակների կույտի վրայով: Նրանք յերազում եյին մեր դեղեցիկ հայրենիքը մատնել գերմանական ֆաշիզմի և ճապոնական զինվորականության ձեռքը, վորպեսզի նրանք կողոպտեն և հավիտենապես սարկացնեն մեր յերկիրը, միայն թե տրոցկիստներն իշխանության ուրվականին հասնեն: Սոցիալիզմի ամենավոխերիմ թշնամիները՝ տրոցկիստներն ուզում եյին մեր յերկրում վերականգնել կապիտալիստական սարկությունը, բանվոր դասակարգի հերոսական ջանքերով կառուցված սոցիալիստական ինդուստրիան հանձնել ռաբերիկրյա կապիտալին, վերացնել կոլտնտեսությունները ու խորհտնտեսությունները, վերածնել կուլակներին՝ ամենադաժանաբարո այդ շահագործողներին, վերականգնել մասնավոր կապիտալը առևտրի ու արդյունաբերության մեջ: Նրանք նախորոք պարտավորվում եյին յերկար տարիների ընթացքում ֆաշիզմին հսկայական տուրք վճարել հումքով և պարենամթերքով, պարտավորվում եյին ոգնել գերմանական ու ճապոնական իմպերիալիզմին աշխարհը վերաբաժանելու պայքարում:

Գերմանական ֆաշիզմի կոշիկը լիզող արյունարբու ավանտյուրիստ Տրոցկին իրեն Նապոլեոն Բոնապարտ եր յերևակայում: Ռադեկին գրած «դիրեկտիվ» նամակում Տրոցկին իր ձեռնասունին ուղղակի առաջարկում եր նկատի ունենալ պատմական նմանությունը Նապոլեոն I-ի իշխանության հետ, ըստ յերևույթին մոռանալով, վոր Նապոլեոնը յերբեք իր յերկիրը չի ծախել: Խորհրդային Միության ռազմական ջախջախումից հետո տրոցկիստները հույս ունեյին գերմանական ֆաշիզմի և ճապոնական զինվորականության ձեռքից իշխանություն ստանալու և այդ իշխանությունն ոգտագործելու՝ կապիտալիզմի restauրացիայի համար: Բայց վորովհետև Տրոցկին հասկանում է, վոր ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգն ու գյուղացիությունը յերբեք կամովին չեն

համաձայնի վերականգնել կապիտալիզմը, յենթարկվել ֆաշիզմի սարկացմանը, ուստի նա իր ստոր դործակիցներին ապադա այդ տրոցկիստական իշխանությունը բնորոշում է վորպես ֆաշիստական դիկտատուրա, վորպես ֆաշիստական տեռոր աշխատավորության նկատմամբ՝ «ամուր իշխանություն» կեղծանվան տակ:

Այս առթիվ Ռադեկը դատարանում հետևյալ ցուցմունքը տվեց.

«Նամակում Տրոցկին ասել եր. վոչ մի դեմոկրատիայի մասին խոսք լինել չի կարող: Բանվոր դասակարդն ապրել չի հեղափոխության 18 տարի, և նա հսկայական ախորժակ ունի, իսկ այդ բանվորին հարկավոր կլինի վերադարձնել մասամբ մասնավոր դործարանները, մասամբ պետական դործարանները, վորոնք ամենածանր մրցակցության մեջ կդտնվեն ուսարերկրյա կապիտալի հետ: Նշանակում է, վոր բանվոր դասակարդի դրությունը կտրուկ կերպով վատթարանալու է: Գյուղում կվերսկսվի չքավորների ու միջակների պայքարը կուլակության դեմ: Ցեվ այն ժամանակ՝ դիմանալու համար հարկավոր է ամուր իշխանություն, անկախ այն բանից, թե ինչպիսի ձևերով քողարկված կլինի այն: Ցեթե պատմական նմանություններ կուզեք, ապա վերցրեք նմանությունը Նապոլեոն I-ի իշխանության հետ և այդ նմանության վրա լավ մտածեցեք»:

Ըստ Ռադեկի ցուցմունքների՝ Տրոցկին ուղղակի դրում եր, վոր «ԽՍՀՄ-ի սոցիալական կարդերի հավասարեցումը հաղթող ֆաշիստական յերկիրներին — անխուսափելի է»: Ահա թե ինչ եյին պատրաստում տրոցկիստական-ֆաշիստական սրիկաները ԽՍՀՄ-ի աշխատավորների համար:

Ֆաշիստական դաժան դիկտատուրա՝ հիտլերյան դիկտատուրայի որինակով և նմանությամբ—ահա թե ինչ և նշանակում սոցիալական կարդերի տրոցկիստական «հավասարեցումը» ֆաշիստական յերկիրներին: Համակենտրոնացման ճամբարներ, չղթաներ, կատանքներ, կառափնարան ու կախաղաններ բանվորների ու կոլտնտեսականների համար—ահա թե ինչպիսի միջոցներով ժողովրդի ամենավոխերիմ թշնամի Տրոցկին յերազում եր վերականգնել կապիտալիզմը մեր յերկրում, բանվոր դասակարդին քշել դեպի կապիտալիստական ֆաբրիկաները, կոլտնտեսականներին քշել դեպի կուլակային սարկացում:

Սակայն այդ բանը յերբեք չի լինի: Ցեթե 1919 թ. սպիտակդվարդիականների և ուսարերկրյա ինտերվենտների հրոսակները չկարողացան խեղդել Խորհրդային հանրապետությունը, վորն այն

ժամանակ. աղքատ, ավերված, տեխնիկապես հետամնաց, թույլ զինված եր, ասա այժմ արդյոք յերևակայելի՞ յե այդ: Բաղաքացիական պատերազմից հետո անցած տարիների ընթացքում, հատկապես ստալինյան հնգամյակի յերկու տարիների ընթացքում, մեր յերկիրը հեքիաթային կերպով աճեց ու ամրապնդվեց: Հետևելով Լենինի ավանդներին, Լենինի գործը շարունակող ընկեր Ստալինի հանճարեղ ղեկավարությամբ բոլշևիկյան կուսակցությունը մեր յերկրի աշխատավորներին հասցրեց սոցիալիզմի վերջնական ու անվերադարձ հաղթանակին: Խորհրդային Միությունը հետամնաց ու ագրարային յերկրից վերածվեց առաջավոր, ինդուստրիալ պետության: Արդեն անցած՝ 1936 թվականին ԽՍՀՄ-ի արդյունաբերական արտադրության մակարդակը յոթ անգամ գերազանցեց հին Ռուսաստանի մինչպատերազմյան արտադրության մակարդակից, իսկ 1937 թվականին այդ մակարդակից կգերազանցի լինն անգամ: Այդ հիմքի վրա այժմ մեր փառապանծ Կարմիր բանակն սպառազինված է նորագույն տեխնիկայով և կկարողանա հակահարված տալ ու ջախջախել ամեն մի ագրեսորի:

Խորհրդային Միության վրա հարձակվելու իրենց պլաններում ֆաշիստական ագրեսորները, ըստ յերևույթին, քիչ հույսեր չեյին դնում տրոցկիստական վնասարարների, լրտեսների ու դիվերսանտների վրա: Հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի դատավարությունը լուրջ կերպով վիժեցրեց այդ հույսերը: Ներքին գործերի ժողկոմատի պանծալի աշխատողները՝ իրենց նոր ժողկոմ, կայուն հեղափոխական, ստալինյան կոմկուսի տեր բոլշևիկ ընկ. Ն. Ի. Յեժովի ղեկավարությամբ կարողացան յերևան հանել տրոցկիստական ստոր ճիվաղներին, չնայած նրանց ամբողջ քողարկմանը: Անկասկած է, որ հեղափոխական զգոնության հետագա բարձրացման դեպքում մինչև վերջը կլսնվեն ու անվնաս կդարձվեն ժողովրդի բոլոր թշնամիները, ֆաշիզմի բոլոր գործակալները՝ տրոցկիստները, աջ հակահեղափոխականներն ու այլ հակահեղափոխական տարրերը:

*
*

Պատահական չե, որ տրոցկիզմը դարձել է ֆաշիզմի ամենատոր գործակալությունը, սոցիալիզմի ամենաքինոտ թշնամին: Տրոցկիզմի ամբողջ պատմական ուղին տանում եր Տրոցկուն ու տրոցկիստներին դեպի այդ դերը:

Բոլշևիզմի ձևավորման հենց սկզբից Տրոցկին հանդես է

դալիս վորպես բոլշևիկների կատաղի հակառակորդ, Լենինի հակառակորդ։ Դեռևս կուսակցության II համագումարում Տրոցկին հանդես եր գալիս պրոլետարիատի դիկտատուրայի դեմ, կուսակցությունը ըստ Լենինյան կազմակերպական պլանի կառուցելու դեմ։ II համագումարից հետո մենշևիկ Տրոցկին ուժգնորեն հետամտում եր Լենինին ու բոլշևիկներին։ 1905 թվականի հեղափոխության ժամանակաշրջանում Տրոցկին գինված ապստամբությունը վիժեցնելու դիծ եր վարում, «պերմանենտ հեղափոխության» իր եությամբ պարտվողական թեորիան եր զարգացնում։

Ռեակցիայի դարաշրջանում մենշևիկ Տրոցկին հանդես եր գալիս լիկվիդատորների՝ հեղափոխության այդ դերեզմանափորների հետ միասին, վորոնք հայտարարում եյին, թե հեղափոխությունը վերջացած է, և վորոնք ձգտում եյին վոչնչացնել, վերացնել հեղափոխական ընդհատակյա կուսակցությունը։ Տրոցկին ու իր ձեռնասունները յերբեք պրոլետարական հեղափոխականներ չեն յեղել. լավագույն դեպքում նրանք միայն մանր-բուրժուական «ուղեկիցներ» են յեղել, վորոնք դժվար մոմենտներին հեղափոխությունը միշտ լքել են, միշտ փորձել են բուրժուական ազդեցությունը տարածել պրոլետարիատի վրա, տատանել կուսակցության ու պրոլետարիատի շարքերը։

Սրանից ավելի քան 25 տարի առաջ Լենինը նշավակեց Տրոցկուն ստի ու խարեությունի դավաճանական քաղաքականության համար, անվանելով նրան Հուդա-Տրոցկի։ «Ներկուսակցական պայքարի պատմական խմաստը Ռուսաստանում» հոդվածում Լենինը գրում եր Տրոցկու «նորին նենդավորության» մասին, նրա «հիպոկրիտական» վարքի մասին։

Բանվորական շարժման վերելքի ժամանակաշրջանում՝ 1911—1912 թվականներին, Տրոցկին կազմում և անսկզբունք հակաբոլշևիկյան Ողոստոսյան բլոկ՝ բոլշևիզմին թշնամի բոլոր խմբերից (լիկվիդատորներից, վպերյոդականներից և այլն)։ Այդ բլոկի միջոցով Տրոցկին անհաջող կերպով աշխատում եր վիժեցնել ընդհատակյա հեղափոխական պրոլետարական կուսակցության վերածնումը, վորն իրագործեց Պրագայի կոնֆերենցիան։

1915 թվականին Տրոցկին կատաղի կերպով պայքարում է՝ ակզբնապես մեկ, առանձին վերցրած կապիտալիստական յերկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորության Լենինյան թեորիայի դեմ, գրպարտիչ կերպով մեղադրելով Լենինին «ազգային սահմանափակության» մեջ։ Արդեն այն ժամանակ Տրոցկին ամբողջովին անձնատուր յեղավ կապիտալիզմին։

1918 թվականին Տրոցկին վարում է հաշտությունը վիժեցնելու քաղաքականություն, որը կործանիչ էր հեղափոխության համար: 1921 թվին Տրոցկին Բուխարինի հետ միասին կուսակցության ճգնաժամ է ստեղծում, դիսկուսիոն ենդով ցնցում է կուսակցությունը: 1923 թվականին Տրոցկին նորից արշավանքի է դուրս գալիս կուսակցության դեմ: Պատահական չէ, որ դատավարության ժամանակ մի շարք մեղադրյալներ խոստովանեցին, որ հայրենիքի հանդեպ իրենց ստոր դավաճանության արմատները գտնվում են դեռևս 1923 թվի իրենց հակակուսակցական տրոցկիստական գործունեության մեջ, երբ պատրաստվում էին հակահեղափոխական տրոցկիստական կադրերը:

Համկ(բ)կ XIV և XV համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում՝ 1926—1927 թվականներին, տեղի է ունենում այն պրոցեսը, երբ տրոցկիստների ու զինովյևականների հակակուսակցական ֆրակցիան վերաճում և դառնում է հակախորհրդային ուժ, հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկատը: Տրոցկիստներն արտացոլում են խորտակվող կապիտալիստական այն տարրերի դիմադրությունը, որոնք անհաշտ թշնամի են սոցիալիզմին և պրոլետարական դիկտատուրային:

Տրոցկիստական յելույթների և պլատֆորմների հիմքում միշտ յեղել են մեր յերկրում կապիտալիզմը վերականգնելու տենդենցները, կապիտալիստական շրջափակման, համաշխարհային կապիտալիզմին ենթակա լինելու տենդենցները:

Արդեն 1922 թվին Տրոցկին առաջարկում էր արդյունաբերական ձեռնարկություններին, պետական արհեստներին թույլ տալ ձեռնարկությունների հիմնական կապիտալը դրամ դնելու մասնավոր կապիտալիստների մոտ, այսինքն՝ առաջարկում էր անցնել արդյունաբերության վատացի ապաղդայնացմանը, արդյունաբերության մեջ մասնավոր կապիտալի վերականգնմանը: Տրոցկին պնդում էր, որ «մենք չարունակ դանվելու յենք համաշխարհային տնտեսության կոնտրոլի տակ», նա մեր յերկիրը կապիտալիստական սիստեմի մի անզոր կցորդը դարձնելու համար էր պայքարում:

Մեր յերկրի «դաուեսացման» հենց այս ուղին, այսինքն՝ ԽՍՀՄ-ն բան եյութան Գերմանիայի ագրարային դպրոցի վերածելը, պաշտպանում էր մատնիչ Սոկոլնիկովը Համկ(բ)կ XIV համագումարում: Իսկ դավաճան Պյատակովը «դերինդուստրացման» դրոշի տակ նույն տարիներին մշակում էր մի վնասարարական պլան—պետական արդյունաբերության մեջ կատարվող կա-

պիտալ ներդրումների այսպես կոչված «մարող կորագիծը»։ Համաձայն այդ վնասաբերական պլանի՝ վերականգնման ժամանակաշրջանի վերջում, 1926 թվին, առաջարկվում էր այն ժամանակի համար մեր ուժից վեր կապիտալ ներդրումներ կատարել արդյունաբերության մեջ. դրա փոխարեն՝ հաջորդ տարիներին, յերբ արդյունաբերության վերակառուցման համար անհրաժեշտ կապիտալ ծախսումների հնարավորությունը մեծանում էր յերկրի ընդհանուր աճման հետ միասին, ըստ Պյատակովի վնասաբերական պլանի՝ առաջարկվում էր արդյունաբերության վերակառուցման վրա կատարվող կապիտալ ծախսումները խիստ կերպով պակասեցնել, վոչնչի վերածել, առաջարկվում էր «մարել» ինդուստրացման գործը։ Հենց այդ էր «մարող կորագծի» պլանը, վորը մերժվեց կուսակցության կողմից։

Տրոցկիստներն ու զինովյեվականները թաղցնում էին իրենց ուստավրատորական եյութությունը «ձախ» ֆրազներով, ամեն կերպ քողարկում էին այն։ Նրանք հարկադրված էին կիրառել այդ քողարկումը, վորովհետև այն ժամանակ դեռ հույս ունեին բանվորների թեկուզ մի մասին իրենց հետևից տանելու և հասկանում էին, վոր ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի՝ աշխարհիս ամենահեղափոխական բանվոր դասակարգի առաջ չի կարելի հանդես գալ բացահայտ ոպորտունիստական պլատֆորմով։ Բոլշևիկյան կուսակցությունն ընկեր Ստալինի ղեկավարությամբ մերկացրեց տրոցկիստների այդ քողարկումը, ցույց տվեց մասսաներին տրոցկիստների մենշևիկյան, սոցիալ-դեմոկրատական եյութությունը։ Ցեվ հենց այդ պատճառով է, վոր կուսակցությունն ընկեր Ստալինի ղեկավարությամբ ջախջախեց մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակի անհնարինության վերաբերյալ մենշևիկյան, հակահեղափոխական, տրոցկիստական թեորիան, հենց այդ պատճառով է, վոր բոլշևիկները կարողացան միլիոնավոր մասսաներին վոտքի հանել հերոսական պայքար մղելու հանուն սոցիալիստական հասարակության կառուցման և այդ պայքարը պսակեցին սոցիալիզմի հաղթանակով։

Մեր յերկրում սոցիալիզմի հաջողությունների աճին զուգընթաց՝ Տրոցկին արտասահմանում սկսեց բացահայտորեն հանդես գալ իր կեղտոտ «Бюллетень»-ում ԽՍՀՄ-ի մեջ կապիտալիզմը վերականգնելու ծրագրով։ Այդ էր մատնանշում ընկեր Ստալինը դեռևս կուսակցության XVII համագումարում.

«Վերցրեք տրոցկիստական «Бюллетень»-ի անցյալ տարվա համարները,—ասում էր ընկեր Ստալինը։— Ի՞նչ են

պահանջում և ի՞նչի մասին են դրում այնտեղ պարոնայք տրոցկիստները, ինչո՞վ է արտահայտվում նրանց «ձախ» ծրագիրը։ Նրանք պահանջում են. խորհրդային ապրանքների ցրումը, վո՞ր պես անշահաբեր տնտեսություններ, կոլտնտեսությունների մեծ մասի ցրումը, վորպես ուռճացած տնտեսություններ, հրաժարումն կուլակության վերացման քաղաքականությունից, վերադարձ դեպի կոնցեսիոն քաղաքականությունը և մեր մի ամբողջ շարք արդյունաբերական ձեռնարկությունների կոնցեսիայով տալը, վորպես անշահաբեր ձեռնարկություններ։

Ահա ձեզ անարդ յերկչոտների և կապիտուլյանտների ծրագիրը, ԽՍՀՄ-ի մեջ կապիտալիզմը վերականգնելու հակահեղափոխական ծրագիրը»։

Հակախորհրդային ուժի, հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկատի վերաճելու ընթացքում տրոցկիստների մոտ հասունանում եին այն տարրերը, վորոնք բնորոշ են ժամանակակից տրոցկիզմի—ֆաշիզմի անմիջական գործակալության համար։ Դեռևս 1927 թվին տրոցկիստներն սկսեցին պարտվողական ագիտացիա մղել, արդեն այն ժամանակ տրոցկիստներին պատվաստվում եին վայրենի քեն և ատելություն ընդդեմ կուսակցության, ընդդեմ կուսակցության ղեկավարության, պատվաստվում եին տեռորիստական տրամադրություններ։ Դեռևս այն ժամանակ առանձին տրոցկիստական-զինովյեվական խմբակներ Ուկրաինայում խորհում եին «նքսպրոպրիացիայի» մասին, իրենց հակահեղափոխական գործունեության համար խորհրդային ժողովրդական փողերը թալանելու մասին։ Դեռևս այն ժամանակ տրոցկիստներն իրենց հակախորհրդային գործունեությամբ կապված եին սպիտակ-գվարդիական տարրերի հետ։

Վերջապես, դեռևս այն ժամանակ տրոցկիստներն ու զինովյեվականները մեծագույն չարությամբ եին լցված ընդդեմ Խորհրդային Միության բանվոր դասակարգի, վորը չգնաց նրանց հետևից։ Ի՞նչպես եին բացատրում տրոցկիստներն իրենց հակակուսակցական և հակախորհրդային յելույթների պարտությունը 1926 և 1927 թվերին։ Նրանք իրենց ապականված միջավայրում տրտնջում եին «ռեակցիոն» բանվոր դասակարգի դեմ, վորն իրենց չաջակցեց։ Այստեղից էլ բղխում էր նրանց տածած մեծագույն չարությունը ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի դեմ։ Այս պատճառով էլ տրոցկիստական առաջնորդներն ու տրոցկիստա-

կան ձեռնտուներն այնքան հեշտությամբ դիմում էին վնասարարության, բանվորների մասսայական սպանությունների։

* * *

Հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի դատավարության ընթացքում մեղադրյալների ցուցմունքներով հակահեղափոխական գործունեության մեջ մերկացվում են նաև աջ թափթփուկները՝ Բուխարինը, Ռիկովը, Տոմսկին, Ուգլանովը և ուրիշները։ Մեղադրյալ Ռադեկն ու Սոկոլնիկովը հայտարարեցին, որ աջ հակահեղափոխականներն ունեին իրենց կենտրոնը, որի հետ տրոցկիստները կոնտակտ էին պահպանում։

Ահա թե ինչ ցուցմունք եր տալիս դատարանում ժողովրդի թշնամի Ռադեկը Բուխարինի հետ ունեցած իր հանցագործ կապի մասին.

«Առաջին խոսակցությունը տեղի ունեցավ 1934 թվականի հունիսին կամ հուլիսին, երբ Բուխարինն արդեն անցել եր աշխատելու «Известия»-յի խմբագրության մեջ։ Այդ ժամանակ մենք նրա հետ խոսեցինք որպես յերկու համերաշխվող կենտրոնների անդամներ։ Ցես նրան հարցրի. «Դուք տեռորիստական ուղու վրա՞ յեք մոտք դրել»։ Նա ասաց. «Այո՛»։ Ցերբ յես հարցրի նրան, թե ով է ղեկավարում այդ գործը, նա ասաց Ուգլանովի մասին և անվանեց իրեն, Բուխարինին»։

Մեղադրյալ Սոկոլնիկովը դատարանին հաղորդեց, որ իրեն հայտնի էին Կամենևի բանակցությունները Բուխարինի ու Ռիկովի հետ և Զինովյեվի բանակցությունները Տոմսկու և Ուգլանովի հետ։

«Այդ բանակցություններում,—ցուցմունք տվեց Սոկոլնիկովը,—հաստատվեց հիմնական ծրագրային հարցերի ընդհանրությունը և տակտիկական դրույթների ընդհանրությունը, մասնավորապես պայքարի տեռորիստական ձևի ընդունումը»։

Տրոցկիստներն ու աջերը, ինչպես ցույց տվեց Սոկոլնիկովը, համաձայնության էին յեկել մեր յերկրում կապիտալիզմը վերականգնելու ծրագրի շուրջը։ Կապիտալիզմը, մասնավորապես կուլակությունը, վերականգնելու այդ պլատֆորմը աջերի հակախորհրդային ոյուտին-սլեպկովյան խմբավորումն առաջադրում եր դեռ 1932 թվին։ Մի յերկրում սոցիալիզմի հաղթության անհնարինության տրոցկիստական հին թեորիան և «կղամակերպված կապիտալիզմի» բուխարինյան թեորիան (որն ապակից է Կաուցկու «ուլտրաիմպերիալիզմի» թեորիային) սերտ կերպով

միահյուսվել են ֆաշիստական դործակալների, հայրենիքի դավաճանների ու մատնիչների այդ հակահեղափոխական պարավոդական «ծրագրային» դրույթներում։

«... Կենտրոնի ղեկավար անդամները,— դատարանում ցուցմունք էր տալիս Ժողովրդի թշնամի Սոկոլնիկովը,—գտնում էին, վոր մեր հեղափոխությունը, վորպես մեկուսացած հեղափոխություն, չի կարող մնալ վորպես սոցիալիստական, վոր Կաուցկու ուլտրաիմպերիալիզմի թեորիան և բուխարինյան կաղմակերպված կապիտալիզմի թեորիան, վորն աղդակից է նրան, ճիշտ դուրս յեկան։ Մենք գտնում էինք, վոր ֆաշիզմը—այդ ամենակաղմակերպված կապիտալիզմն է, նա հաղթանակում է, գրավում է Ցեվրոպան, խեղդում է մեզ։ Դրա համար ել ավելի լավ է համաձայնության գալ նրա հետ, ավելի լավ է դիմել վորևե կոմպրոմիսի՝ սոցիալիզմից դեպի կապիտալիզմը նահանջելու իմաստով...»։

Այսպիսով բուխարինյան «կաղմակերպված կապիտալիզմի» աջ ոպորտունիստական թեորիան դարձել էր քողարկում, «թեորետիկական» հիմնավորում՝ հայրենիքի հանդեպ ամենաստոր դավաճանություն կատարելու համար, իբր թե «անհաղթելի» ֆաշիզմին ուղղակի ոգնություն ցույց տալու համար, վնասարարության, լրտեսության, դիվերսիաների համար։

Կուսակցության պատմությունը մեզ ասում է, վոր Բուխարինը շատ անդամներ և դուրս յեկել Լենինի դեմ, կուսակցության դեմ, Տրոցկու, Պյատակովի ու Ռադեկի հետ միասին, Կամենևի ու Զինովյևի հետ միասին։ Հիշենք թեկուզ Բրեստի հաշտության ժամանակաշրջանը, յերբ Բուխարինը՝ բլոկ կաղմելով Տրոցկու հետ, կատաղի կերպով հարձակվում էր Լենինի դեմ։ 1921 թվականի դարնան ծանր որերին՝ Կրոնշտատի խռովության նախորյակին, Տրոցկու հետ միասին Բուխարինը նորից դուրս էր գալիս Լենինի դեմ այսպես կոչված պրոֆմիութենական դիսկուսիայի ժամանակ, կուսակցության մեջ ճղնաժամ ստեղծելով։

Բուխարինի, Ռիկովի, Տոմսկու գլխավորած աջ թեքման դիրքի հիմքում միշտ յեղել են կապիտալիզմը մեր յերկրում վերականգնելու տենդենցները։ Ցերբ աջ թեքումը ձևավորվեց վորպես հակակուսակցական ֆրակցիա, վորը պայքար էր նյութում Կենտրոնական կոմիտեի Լենինյան քաղաքականության դեմ, Բուխարինը 1928 թ. ամառը ծածուկ բանակցություններ մեջ մտավ տրոցկիստների հետ, նրանց մեջ դաշնակիցներ փնտռելով։ Բուխարինը գիշերով, գողի նման, թագուն գնում էր Կամենևի մոտ

և նրա հետ հանցագործ, խայտառակ բանակցություններ եր վարում, վոր հետո հրապարակեցին տրոցկիստներն իրենց հակահեղափոխական ընդհատակյա թռուցիկներում: Այդ բանակցությունների մասին տեղեկություն ունեցին նաև Ռիկովն ու Տոմսկին:

Կուսակցության դեմ մղած պայքարում Բուխարինն աճեցրել եր իր՝ Սլեպկովի և Ընկ. տիպի աշակերտների մի «դպրոց», աշակերտներ, վորոնք, ինչպես ցույց տվեց, որինակ՝ ոյուտին-սլեպկովյան խմբավորման գործը 1932 թվին, վաղուց արդեն դլորվել եյին դեպի հակախորհրդային ուղին:

Հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի գործով մեղադրվողների ցուցմունքներով և ուրիշ փաստերով մերկացված աջերի՝ Բուխարինի, Ռիկովի*, Տոմսկու, Ուգլանովի և մյուսների հանցավոր գործունեությունը պետք է մինչև վերջը քննվի: Այդ հակահեղափոխականները պետք է ստանան իրենց արժանի հատուցումը: Այդ են պահանջում հեղափոխության շահերը, այդ են պահանջում բազմաթիվ այն բանաձևերը, վոր հանված են աշխատավորների ժողովներում հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի դատավարության կապակցությամբ:

Հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի դատավարության շնորհիվ ֆաշիզմի հույսերն ի դերև յելան: Բռնված ու անվնաս է դարձված ֆաշիզմի վարձկանների, հայրենիքի ստոր դավաճանների ամենավտանգավոր մի ջոկատ: Զարմանալի չե, վոր ֆաշիստական մամուլը բոլոր ջանքերը գործ եր դնում, վորպեսզի պաշտպանի տրոցկիստական բանդիտներին: Սակայն ամբողջ աշխարհի առաջ անհերքելի փաստերով և հենց մեղադրյալների խոստովանություններով մերկացվեցին ֆաշիզմի արյունարբու ծառաները Հուդա-Տրոցկու գլխավորությամբ, կրկին բռնվեց ու մերկացվեց ֆաշիզմը:

* *
*

Բոլշևիկյան կուսակցությունը և ԽՍՀՄ-ի աշխատավորները կկարողանան հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի դատավարությունից անել բոլոր հետևությունները: Ամենակարճ ժամանակամիջոցում բուժել բոլոր այն վերքերը, վոր վնասարարները, լրտեսները և դիվերսանտները հասցրել են ժողովրդա-

---

* Համաձայն Համկ(բ)Կ Կենտկոմի 1937 թ. փետրվարյան պլենումի վորոշման Բուխարինը և Ռիկովը հակակուսակցական գործունեության համար վտարվեցին Համկ(բ)Կ-ի շարքերից։ Հայ. թարգմ. խմբ.:

կան տնտեսությանը, անչափ բարձրացնել հեղափոխական զգոնությունը, մարդկանց ստուգումը, վորպեսզի մինչև վերջը բոլոնենք ժողովրդի բոլոր թշնամիներին,—այս են գլխավոր հետևությունները:

Դատավարությունը մերկացրեց տրոցկիզմը վորպես ամբողջ առաջավոր ու առաջադեմ մարդկության ամենավոխերիմ թշնամու: Տրոցկիստները մերկացված են վորպես համաշխարհային պատերազմի հրձիգներ, վորոնք կործանում էին բերում տասնյակ միլիոնավոր աշխատավորների համար: Դատավարության ժամանակ քողազերծ արվեց, թե ինչպիսի մեթոդներով պերմանական ֆաշիզմն ու ճապոնական գինվորական-ֆաշիստական դիկտատուրան հարձակում են պատրաստում Խորհրդային Միության դեմ, պատերազմներ են պատրաստում աշխարհի վերաբաժանման համար: Յեվ այդ պետք է նախազգուշացնի բոլոր ազնիվ մարդկանց ամբողջ աշխարհում:

Խորհրդային Միության աշխատավոր մասսաները դատավարության առթիվ իրենց պատասխան արձագանքներում միաձայն հայտարարում են, վոր վոչ մի ուժի չի հաջողվի սոցիալիզմի յերկիրը վերադարձնել դեպի կապիտալիստական ստրկությունը: Վոչ մի ուժի չի հաջողվի կասեցնել մեր շարժումը դեպի կոմունիզմ: Մոսկվայի աշխատավորների համաքաղաքային միտինգը դատավճռին հավանություն տվող իր բանաձևում ասում է.

«Զեն ազատվի ժողովրդի ցասումից, չեն ազատվի հեղափոխական արդարադատությունից թե՛ ֆաշիզմի արյունարբու շուն, ժողովրդի թշնամի Հուդա-Տրոցկին, թե՛ տրոցկիստների ու աջերի ամբողջ հակահեղափոխական վոհմակը:

Աշխարհում չկա և չի լինի այն ուժը, վորը կարողանար սոցիալիզմի մեր հզոր հայրենիքը վերադարձնել հետ՝ կապիտալիստական շահագործման լծի տակ:

Սոցիալիզմի հաղթանակների պահապան, նվաճված և ստալինյան Սահմանադրության մեջ արձանագրված յերջանիկ կյանքի պահապան և կանգնած մեր ամբողջ ժողովուրդը, վորն անձնվիրաբար համախմբված է մեր հայր և բարեկամ ընկեր Ստալինի շուրջը:

Ե՛լ ավելի պինդ խտացնենք մեր շարքերը Լենինի-Ստալինի կուսակցության շուրջը, կուսակցության Կենտրոնական կոմիտեի շուրջը, կոմունիզմի առաջնորդ ընկեր Ստալինի շուրջը, ե՛լ ավելի վեր բարձրացնենք հեղափոխական զգոնությունը ժողովրդի թշնամիների՝ տրոցկիստների ու աջ-

ին—այդ ֆաշիստական վարձկանների, լրտեսների, դիվերսանտների դեմ մղվող պայքարում։

Մենք բոլորս, մեկ մարդու պես, պատրաստ ենք մեր կրծքով, մեր կյանքով հաղթականորեն հետ մղելու մեր հայրենիքի սրբազան սահմանների դեմ, սոցիալիզմի սրբազան նվաճումների դեմ թշնամու կատարած բոլոր ու ամեն տեսակի վոտնձգությունները»։

Հաղթանակած սոցիալիզմի յերկիրն ամրակուռ է և անհողդողդ ինչպես յերբեք։ Սրբելով բոլոր թշնամիներին, մեծ ստալինյան Սահմանադրության դրոշի տակ, ընկեր Ստալինի առաջնորդությամբ նա առաջ է ընթանում դեպի կոմունիզմ։

«Большевик» № 3, 1937 թ.։

ՍՏՈՐՆԵՐԻՑ ՍՏՈՐԱԳՈՒՅՆՆԵՐԸ

Ցերեկ սկսվեց ժողովրդի թշնամիների, հայրենիքի դավաճանների, դիվերսանտների, լրտեսների ու մարդասպանների տրոցկիստական բանդայի դատավարությունը: Մենք հրապարակում ենք մեղադրական եզրակացությունը տրոցկիստական «զուգահեռ կենտրոնի» մասնակիցների գործի առթիվ, վորոնց արարքներն իրենց ստորությամբ գերազանցում են այն ամենն, ինչ վոր մինչև այժմ գիտեր պատմությունը:

Հրեշավոր են Պյատակովի, Ռադեկի, Սոկոլնիկովի, Սերեբրյակովի, մյուս մեղադրյալների և նրանց չայկայի ընդհանուր նատաման Տրոցկու այն վոճիրները, վորոնք մերկացվեցին ու ապացուցվեցին նախնական հետաքննության ընթացքում: Անվիճելի ապացույցների ծանրության տակ իրենց հանցանքը չկարողացան ժխտել նաև մեղադրյալները. նրանք խոստովանեցին այդ վոճիրները և մերկացվում են փաստաթղթերով, իրերեն ապացույցներով ու վկաների ցուցմունքներով:

Նրանք դավաճանել են հայրենիքին, իրենց գլխավոր խնդիր դնելով խորհրդային կառավարության բռնի տապալումը, վորպեսզի ԽՍՀՄ-ում գոյություն ունեցող սոցիալիստական հասարակակարգը փոխարինեն կապիտալիստական հասարակակարգով:

Ռադեկն ու Պյատակովը խոստովանեցին, վոր Տրոցկու դիրեկտիվներում, վորոնք ամբողջովին ընդունել ու վորոնց համամիտ են յեղել իրենք, կապիտալիզմի վերականգնումը հիմքերի հիմքն է յեղել:

«Մենք,—ասում է Ռադեկը հարցաքննության ժամանակ,— Պյատակովի հետ միասին յեկանք այն յեզրակացության, վոր այդ դիրեկտիվն ամփոփում է բլոկի աշխատանքի արդյունքը, ամեն ինչ պարզ կերպով մինչև վերջն ասում է, ամենասուր կերպով առաջադրելով այն հարցը, վոր տրոցկիստական-զինովյեվական բլոկի իշխանությունը բոլոր հանգամանքներում ել կարող է լինել միմիայն կապիտալիզմի վերականգնման իշխանություն»:

Իսկ տրոցկիստական «զուգահեռ կենտրոնի» մյուս մասնակից բանվոր Սոկոլնիկովը, «մանրամասնելով» Տրոցկու ծրագիրը, հարցաքննության ժամանակ ցուցմունք տվեց.

«Այդ ծրագիրը նախատեսում էր հրաժարումն ինդուստրացման, կոլեկտիվացման քաղաքականությունից և, վորպես այդ հրաժարման արդյունք, դյուղում մանր տնտեսության հիման վրա կապիտալիզմի վերելք, վորը արդյունաբերության կապիտալիստական տարրերի հետ միացած՝ զարգանալով կվերածվեր կապիտալիստական ռեստավրացիայի՝ ԽՍՀՄ-ում»:

Նրանք ուզում էին ԽՍՀՄ-ի աշխատավորներից խլել սոցիալիստական հեղափոխության բոլոր նվաճումները: Նրանք, այդ յերիցս անարդ տրոցկիստական սրիկաները, ուզում էին վերացնել կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները: Այն հողը, վորը խորհրդային իշխանությունը տվել է կոլտնտեսություններին ճրիարար առհավետ ոգտագործելու, խորհրդային հողը, վորի վրա ծաղկում է կոլտնտեսային կարգը, տրոցկիստները ուզում էին խլել գյուղացիներից, վերադարձնել կալվածատիրոջ ու կուլակին:

Նրանք ուզում էին ոտարերկրյա կապիտալիստներին տալ մեր արյունով նվաճված և մեր աշխատանքով կառուցված սոցիալիստական ինդուստրիան: Նրանք ուզում էին ԽՍՀՄ-ի աշխատավորների վզին նորից դնել կապիտալիստական շահագործման լուծը: Նրանք ուզում էին հետ դարձնել դեպի կապիտալիզմը մեր յերկրի ժողովուրդների կյանքը, վորպեսզի, ինչպես հնում՝ մինչև 1917 թվականի հոկտեմբերը, այդտեղ իշխեն կալվածատերն ու կուլակը՝ գյուղում, գործարանատերն ու առևտրականը՝ քաղաքում:

Բոլոր աշխատավորների կողմից անարգված ու ատելի տրոցկիստներն ուզում էին ԽՍՀՄ-ի ժողովուրդների վզին փաթաթել իրենց իշխանությունն ոտարերկրյա սվինների ոգնությամբ: Դրա շուրջը զաղտնի բանակցություններ էին վարում և համաձայնություններ էին կնքում գերմանական ու ճապոնական իմպերիալիզմի ներկայացուցիչների հետ շայկայի ատաման Տրոցկին արտասահմանում և նրա գործակատարները ԽՍՀՄ-ում:

Այսպես, Սոկոլնիկովը, ոգտագործելով իր պաշտոնական դիրքը՝ վորպես արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի տեղակալ, Տրոցկու ցուցումներով զաղտնի բանակցություններ է վարել մի ոտարերկրյա պետության ներկայացուցչի հետ: Մի այլ ոտարերկրյա պետության զինվորական կցորդի և մամուլի կցորդ-

դի հետ նման բանակցություններ է վարել Ռադեկը։ Վերջապես, տրոցկիստական կենտրոնը Պյատակովի միջոցով իրազեկ է դարձվել ագրեսորների հետ Տրոցկու վարած բանակցությունների և կնքած համաձայնությունների ամբողջ սիստեմին։ Ահա թե ինչ պայմաններով է համաձայնություն կնքել Տրոցկին Հիտլերի՝ գերմանական նացիոնալ-սոցիալիստական կուսակցության գծով տեղակալ Հեսսի հետ.

«1) Ցերաշխավորել ընդհանուր բարյացակամ վերաբերմունք դեպի գերմանական կառավարությունը և անհրաժեշտ համագործակցություն նրա հետ միջազգային բնույթ կրող կարևորագույն հարցերում.

2) համաձայնել տերիտորիալ զիջումներ անելու.

3) թույլ տալ, որ գերմանական ձեռնարկատերերը կոնցեսիաների ձևով (կամ որևէ այլ ձևով) շահագործեն ԽՍՀՄ-ում այնպիսի ձեռնարկություններ, որոնք տնտեսական անհրաժեշտ լրացում են հանդիսանում Գերմանիայի տնտեսության համար (խոսքը վերաբերում էր յերկաթահանքին, մանգանին, նավթին, վոսկուն, փայտանյութին և այլն)»։

Իսկ Ռադեկին ուղղած նամակում Տրոցկին գրում է.

«...Անխուսափելիորեն կարիք կլինի զիջումների...Կարիք կլինի զիջել Ճապոնիային Պրիմորյեն և Պրիամուրյեն, իսկ Գերմանիային՝ Ուկրաինան։

...Մենք սխալված կլինենք Ճապոնիային զիջել Սախալինի նավթը և ապահովել նրան նավթ մատակարարելը՝ Ամերիկայի հետ պատերազմի բռնվելու դեպքում։ Մենք պետք է թույլ տանք նրան նաև շահագործել վոսկին։ Մենք պետք է համաձայնենք Գերմանիայի պահանջին՝ չհակառակելու մերձդանուբյան յերկիրների ու Բալկանների գրավմանը և չխանգարել Ճապոնիային՝ գրավելու Չինաստանը...»։

Ի՞նչ են նշանակում ծրագրի այս կետերը, մի ծրագիր, որն իրականացնելու վրա աշխատել է տրոցկիստական անարդ շայկան։ Դրանք նշանակում են, որ տրոցկիստներն ուզում էին անդամահատել ԽՍՀՄ-ն և դնել նրան գերմանական ու ճապոնական արտաքին հափշտակիչ քաղաքականության հունի մեջ։ Դրանք նշանակում են, որ տրոցկիստներն ուզում էին ավերի ու կողոպուտի մատնել մեր հայրենիքը, դարձնել գերմանական ու ճապոնական իմպերիալիզմի գաղութ։ Տրոցկիստական բանդան ձգտում էր վերականգնել մեր յերկրում կապիտալիզմը, այն էլ նրա վատթարագույն՝ գաղութային ձևերով։ Ցեվ տրոցկիստների այդ ակն-

կալությունների մասին, այն մասին, թե ինչպես էին իրենք վաճառվում և մեր յերկիրը վաճառում գերմանական ու ճապոնական աղբեսորներին, այդ բոլորի մասին անսքող ցինիզմով խոսում էր յերեկ դատարանում Պյատակովը: Նա պատմում էր, թե ինչպես դողանում էր պետական, խորհրդային փողը՝ ավելի վճարելով գերմանական «Դեմագ» և «Բորզիգ» ֆիրմաներին տրված պատվերների համար: Այդ արվում էր այն նպատակով, որ ֆիրմաները կարողանան Խորհրդային պետությունից դողացված փողով պահել Տրոցկու բանդիտային շայկան:

Հուդա-Տրոցկին և նրա շայկան պարզորոշ կերպով հասկանում էին, որ ժողովուրդը նրանց ատում է, և հույս ունեին հափշտակել իշխանությունը միմիայն ԽՍՀՄ-ի ռազմական պարտության հետևանքով: Ռադեկին ուղարկած իր նամակում Տրոցկին բացեիբաց գրել է.

«Պետք է խոստովանել, որ իշխանության հարցն ամենից ավելի ռեալ կերպով կծառանա բլոկի առջև միմիայն պատերազմում ԽՍՀՄ-ի կրելիք պարտության հետևանքով: Բլոկը պետք է յեռանդագին նախապատրաստվի դրան...Հարկավոր է հնարավոր յեղած չափով արագացնել ընդհարումը ԽՍՀՄ-ի ու Գերմանիայի միջև»:

Այսպիսով, տրոցկիստները դարձել էին ոչ միայն հայրենիքի դավաճաններ, այլև պատերազմի ամենաչարամիտ պրովոկատորներ: Նրանք Խորհրդային պետության բանվորների, գյուղացիների ու ինտելիգենցիայի արյան դեռերում ուզում էին խեղդել սոցիալիզմը: Տրոցկին Պյատակովին ավել է հետևյալ դիրեկտիվը: «Զգալի հարվածներ հասցնել ամենաղդայուն տեղերում», և տրոցկիստական դամփռների վոհմակն անում էր այն ամենը, ինչ վոր կարող էր՝ ատոր դիրեկտիվն իրագործելու համար:

Նրանք վորտեղ վոր կարող էին—կազմակերպում էին ձեռնարկությունների պայթեցումներ, առաջին հերթին՝ պաշտպանական նշանակություն ունեցող ձեռնարկությունների: Այդպես է յեղել Կեմերովոյի հանքերում, վորտեղ գործում էր տրոցկիստ դիվերսանտ Դրորնիսը, վորի կարգադրությամբ պայթեցրին «Յենտրալնայա» հանքահորը և սպանեցին շատ բանվորներ: Այդպես է յեղել Դոբրովկայի ազոտային պարարտանյութերի կոմբինատում, Վոսկրեսենսկի քիմիական կոմբինատում ու Նեվայի գործարանում, վորտեղ պայթեցումներ էր կազմակերպել տրոցկիստ և գերմանական լրտես Ռատայչակը:

Մյուս մեղադրյալ Կնյազեվը, յերկաթուղու պետ լինելով, նույնպես զինվերսիոն առաջադրանքներ եր ստանում և՛ տրոցկիստական կենտրոնից, և՛ անմիջականորեն ճապոնական հետախուզության գործակալ պարոն Ю-ից, վորի հետ տեղի ունեցած նամակագրությունը յերևան հանվեց հետաքննությամբ: Ցե՛վ Ռատայչակը, և՛ Կնյազեվը, և՛ մյուս տրոցկիստ լրտեսները գերմանական ու ճապոնական հետախուզությունների ներկայացուցիչներին մատակարարում եյին պետական կարևորագույն նշանակություն ունեցող գաղտնի տեղեկություններ՝ յերկաթուղիների մոբիլիզացիոն պատրաստականության մասին, զինվորական փոխադրումների մասին, մեր քիմիական գործարանների վիճակի, աշխատանքի ու պլանների մասին: Կնյազեվը կատարել է դնացքների, մանավանդ զինվորական դնացքների մի շարք խորտակումներ, վորոնք պատճառել են մարդկային մեծ զոհեր: Այդ ստոր մարդասպանը կարմիր-բանակայինների՝ սոցիալիստական հայրենիքի պաշտպանների քիչ արյուն չի. թափել. մինչև 1935 թ. հոկտեմբերի 27-ին Շումիխա կայարանում տեղի ունեցած խորտակման ժամանակ մահացան 29 և վիրավորվեցին 29 կարմիր-բանակային:

Նրանց՝ տրոցկիստներին հարկավոր եր ժողովրդական արյուն, վորպիսի արյան ծովեր նրանք ուզում եյին թափել, վորպեսզի ճանապարհ հարթեն զեպի իշխանությունը՝ ռասարերկրյա, ֆաշիստական սվինների ուղնությամբ: Նրանք թափում եյին բանվորների ու կարմիր-բանակայինների արյունը, նրանք ստեղծել եյին մի շարք խմբակներ՝ տեռորիստական մահափորձեր կատարելու համար Համկ(բ)Կ-ի ու խորհրդային կառավարության ղեկավարներ՝ ընկերներ Ստալինի, Մոլոտովի, Կագանովիչի, Վորոշիլովի, Որջոնիկիձեյի և մյուսների կյանքի դեմ:

Գերագույն դատարանի Զինվորական կոլեգիայի առջև կանգնած տրոցկիստական բանդիտների պարագլուխները հայտնի յեն ԽՍՀՄ-ի աշխատավորներին՝ վորպես ժողովրդի վաղուցվա և ամենավոխերիմ թշնամիներ: Նրանց մոլի ստորության և ճարպիկ նենգության առջև նսեմանում են անցյալի պրովոկատորների պատկերները՝ Ազեֆներն ու Մալինովսկիները, միջնադարի ճիզվիտները, Հերոդեսներն ու Հուդաները:

Տրոցկիստներն իրենց արատասահմանյան զաղրելի բյուլետենում կոչ են անում բռնի կերպով տապալելու խորհրդային հասարակակարգը, «քաղաքական հեղափոխություն» անվանելով այդ տապալումը: Այդ բոլոր յերազներն ու դիտավորությունները լիա-

կատար ձախողման են դատապարտված։ Մեր խորհրդային յերկրում վոչ մի տեղ չի կարող քիչ թե շատ պատվաստվել տրոցկիզմը, և ժողովրդին ատելի տրոցկիստների խմբակն այլասերվելով՝ վերածվեց վարձկան մարդասպանների ու լրտեսների բանդայի։ Նրանք անընդունակ են կանգնեցնելու սոցիալիզմի հզոր առաջխաղացումը, բայց վորպես դերմանական ու ճապոնական ֆաշիստական ուժերի լրտեսական և դիվերսիոն-վնասարար գործակալություն՝ նրանք կարող եյին բավականաչափ վնաս հասցնել։

ԽՍՀՄ-ի Գերագույն դատարանի Զինվորական կոլեգիան, մինչև վերջը բաց անելով տրոցկիստական «զուգահեռ կենտրոնի» վոճիրների կծիկը, հայրենիքի դավաճանության համար, բանվոր դասակարգի ու գյուղացիության շահերի չտեսնված դավաճանության համար, բանվորների ու կարմիր-բանակայինների ցինիկ սպանությունների համար, կուսակցության ու կառավարության ղեկավարների դեմ տեռորիստական ակտեր կազմակերպելու համար, լրտեսության ու դիվերսիաների համար, պատմության մեջ իր որինակը չունեցող խարդախության ու սորության համար արժանի դատավճիռ կկայացնի այդ կենտրոնի մասնակիցների վերաբերմամբ։

«Правда», 24 նոյեմբերի 1937 թ.

ՀԱՅՐԵՆԻՔԸ ԾԱԽՈՂՆԵՐԸ

Մությունների տան Հոկտեմբերյան դահլիճում մեղադրյալների նստարանի վրա նստած է հայրենիքի ստոր դավաճանների մի խումբ։ Վնասարարության ամբիոնի պրոֆեսորի նման անկիրք, փայտե ձայնով ցուցմունքներ է տալիս Պյատակովը։ Նրան փոխարինում է ցինիկ, լկտիորեն-սանձարձակ Ռադեկը։ Դավաճանների բերանից, ինչպես ժահր, հոսում է իրենց կողմից հայրենիքը ծախելու սարսռեցուցիչ պատմությունը։

Մարդկության պատմության մեջ դժվար է գտնել իր յերկրին ցինիկորեն, ստոր կերպով դավաճանելու նման որինակներ։ Տալեյրանները, վորոնք ինչպես ձեռնոցներ փոխում եյին մի բուրժուական տերերին մյուսներով,—տրոցկիստների հետ համեմատած փոքրիկ յերեխաներ են։ Վերսալցիները, վորոնք ոգտվեցին գերմանացիների անուղղակի ոգնությունից, վորպեսզի խեղդեն Փարիզի կոմունան, համեմատած այդ չարասիրտ, վայրենացած տրոցկիստական դայլերի վոհմակի հետ՝ լակոտներ են յերևում։ Կոլչակը, Դենիկինը, Յուդենիչը—նույնիսկ նրանք եվ հայրենիքի իրենց մի ինչ-վոր «սպիտակ դաղափարն» ունեյին, գեներալական դիկտատուրայի սվինով ու մտրակով զեկավարվող «միասնական ու անբաժանելի» կալվածատիրական-կապիտալիստական Ռուսաստանի յերազանք ունեյին։ Ֆաշիստներն անգամ—նրանք եվ ունեն իրենց՝ ֆաշիստական նացիոնալիզմը։ Բայց դրանց բոլորից ավելի ցած գլորվեցին տրոցկիստական վիժվածքներն իրենց յերկրին հրեշավոր կերպով դավաճանելու մեջ։

Տասնիններորդ տարի առաջ ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգն իշխանությունն իր ձեռքը վերցրեց, վորպեսզի սոցիալիստական հասարակություն կառուցի։ Նա հաղթեց բոլշևիկյան կուսակցության զեկավարությամբ։ Տրոցկին բոլշևիկների դեմ պայքարել է իր գրեթե ամբողջ կյանքի ընթացքում։ Զինովյևին ու Կամենևը նախահոկտեմբերյան մարտերի որերին դավաճանում եյին կուսակցությանն ու բանվոր դասակարգին։ Ռադեկն ու Պյատակովը

Բրեստի հաշտության ծանր որերին յերկիրը մղում էին դեպի պրովոկացիոն ավանտյուրա և հայտարարում էին, թե իրենք պատրաստ են դիմելու «խորհրդային իշխանությունը կորցնելու հնարավորությանը»: Յերբ մեր յերկիրը, Լենինի–Ստալինի կուսակցության ղեկավարությամբ, դնաց սոցիալիզմի կառուցման ուղիով, տրոցկիստական–զինովյեվական բանդան ամբողջ աշխարհովը մեկ բղավում եր. «Դեպի հե՞տ: Մեր յերկրում սոցիալիզմ չի կարելի կառուցել: Ձե՞ք համարձակվի»: Կուսակցությունն այն ժամանակ ջախջախեց տրոցկիստական–զինովյեվական բլոկը: Ա.Ժ.Մ ԽՍՀՄ–ի աշխատավորները հիմնականում ավարտել են սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում:

Մեր սոցիալիստական հայրենիքի բարեկեցության անընդհատ աճման հետ զուգընթաց աճում եր կապիտալիզմի տրոցկիստական ռեստավրատորների չարությունը: Նրանք չեյին կարող հույս դնել Խորհրդային Միության ժողովուրդների վորևե աջակցության վրա: Մասսաների մեջ ամենավոքր հենակետ անդամ չունեցող այդ դավաճանները խոր արհամարհանք եյին տածում դեպի ժողովրդական մասսաները: Մեկուսացված, դազդազած՝ նրանք դնացին տեռորի, լրտեսության և դիվերսիաների ճանապարհով:

Գերմանական մաշված կոշիկների կոշկատակերում՝ վնասաբար Շեստովը Բեռլինից բերում է Տրոցկու գրավոր դիրեկտիվները՝ կրակել բոլշևիկյան կուսակցության և խորհրդային կառավարության ղեկավարների վրա: Տրոցկիստական–զինովյեվական բլոկն շտապում է կատարել այդ դիրեկտիվը: Զինովյեվն եր, զինովյեվյան, «պատվի» գործն է հայտարարում Կիրովին սպանելը: Տրոցկիստական հակախորհրդային կենտրոնը մահափորձ է կազմակերպում ընկեր Մոլոտովի կյանքի դեմ:

Տրոցկիստական մարդասպաններին հաջողվեց մի տեռորիստական ակտ. Սերգեյ Միրոնովիչ Կիրովի թանդարին դլուխը ծակվեց դավաճանական գնդակով: Տրոցկին շտապեցնում է մարդասպաններին. կրակե՛ք շուտափույթ և ավելի շատ: Տրոցկիստական կենտրոնը նախապատրաստում է «համակենտրոնացրած տեռորիստական ակտ»—կուսակցության ու կառավարության ղեկավարների մի ամբողջ խմբի սպանություն: Սակայն այդ, ինչպես արտահայտվում է Տրոցկին, իշխանության հասնելու իր ճանապարհի «առաջին վարիանտն է» միայն: Յերկրորդ, տրոցկիստների կարծիքով, ամենից ավելի հավանական վարիանտն եր—պատերազմ առաջացնելը, Գերմանիայի և Ճապոնիայի դեմ մղվելիք պատերազմի միջոցով ԽՍՀՄ–ի ռազմական պարտու-

թյունը ձեռք բերելը։ Իսկ պատերազմ առաջացնելու համար հարկավոր է ֆաշիստական ինտերվենտների առաջ բանալ ԽՍՀՄ-ի դռները, հարկավոր է նրանց համար յուղալի ավար ապահովել, հարկավոր է ակտիվ կերպով նրանց ոժանդակել լրտեսությամբ ու դիվերսիաներով։ Մի յերկրում սոցիալիզմ կառուցելու անհնարինության մասին յեղած տրոցկիստական «թեորիան» զարգանում-հասնում է մինչև իր տրամաբանական վախճանը, այն է՝ մինչև ֆաշիստական ինտերվենցիայի ոգնությամբ սոցիալիզմը տապալելու անհրաժեշտությունը։

«Թեորիային» հետևում են գործերը։ Տրոցկին բանակցություններ է վարում և հետո համաձայնություն է կնքում Հիտլերի տեղակալ Հեսսի հետ, զաղութային դավթումների ֆաշիստական տեսաբանի հետ, գերմանական ֆաշիստական կուսակցության հատուկ հետախուզական սպասարկության ղեկավարի հետ, խոշոր քաղաքական ավանտյուրաներ կազմակերպելու գործում «ֆյուրերի» աջ ձեռքի հետ։ Ցերկու, մի մյանց արժանի, պայմանավորվող կողմերն էլ անամոթ սակարկություն էին կատարում Խորհրդային Միության տերիտորիաների, նրա ազատության ու անկախության առուծախի մասին։ Ըստ Տրոցկու—Հեսսի պայմանագրի՝ գերմանական ֆաշիզմին էր տրվում Ուկրաինան—հացով, քարածխով, մետաղով հարուստ մի յերկիր։ Նա պետք է դառնար, ինչպես ցինիկաբար խոստովանեցին Ռադեկն ու Պյատակովը, գերմանական զաղութ, իսկ ուկրաինական ժողովուրդը՝ ֆաշիստական գեներալ-նահանգապետների զաղութային ստրուկը։ Գերմանական ոկուպանտների 1918 թվականի տիրակալությունից հետո տնտեսապես վերածնված, ծաղկող Ուկրաինան տրոցկիստները մատնում էին թալանի և ֆաշիստական բռնության, դատապարտում էին սովի, ազգային ճնշման, զնդակահարումների, կախաղանների և համակենտրոնացման ճամբարների ռեժիմի։ Տրոցկու կողմից Ուկրաինան կանխապես գերմանական ֆաշիստներին վաճառելը ԽՍՀՄ-ի հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի հավանությունն էր ստացել։ Գերմանական ֆաշիզմի հետ Տրոցկու կնքած գործարքները Ռադեկը վավերացնում էր Մոսկվայում զինվորական կցորդ—դիվերսիաների ֆաշիստական գեներալի հետ ունեցած իր անձնական զրույցներով։

Սակայն գերմանական ֆաշիստների հետ կնքած գործարքը հայրենիքը վաճառող տրոցկիստների համար անբավարար էր թվում։ Այդ գործարքը լրացվում է զինվորա-ֆաշիստական ճապոնիայի հետ կնքած գործարքով։ Տրոցկին խոստանում է ճա-

պոնիային հանձնել Պրիմորյեն և Պրիամուրյեն։ Դավաճան Սոկոլ-նիկովը ոտարերկրյա դեսպանի հետ ունեցած իր զրույցում տրոց-կիստական կենտրոնի անունից հաստատում եր Տրոցկու կողմից ճապոնացիներին տված խոստումների «լրջությունը»։ Զուր չե, վոր վերջին յերկու տարիներին ճապոնական զինվորականությունն այդպես հաճախ աշխատում եր ավելով շոշափել, թե արդյոք ամո՞ւր և խորհրդային սահմանը Հեռավոր Արևելքում, թե ժամանակը չե՞ արդյոք կտոր առ կտոր պոկելու այն շրջանները, վոր Ճապոնիա-յին եր զիջում բանդիտական շայկայի ատաման Տրոցկին։ Մեր հերոս-սահմանապահները կրծքով պաշտպանում եյին սոցիալիս-տական հայրենիքի հեռավոր-արևելյան հողերը, վորոնց դեմ վտանգություններ եր անում ճապոնական զինվորականությունը։ Վիրավորված մարտիկները հիվանդանոցից գրում եյին ընկեր Ստալինին. «Մեր ատամները սեղմած, անսահման ատելությամբ լցված դեպի մարդկության թշնամիները, պատերազմի հրձիգնե-ները, մենք կռվում եյինք Խորհրդային հողի յուրաքանչյուր վեր-շոկի համար»։ Այժմ հերոս կարմիր-բանակայինները կիմանան, թե ինչպես Տրոցկին վաճառքի յեր հանում նրանց արյունը, վա-ճառքի յեր հանում նրանց պաշտպանած Խորհրդային հողը։

Վոչ միայն առանձին տերիտորիաներ,—ամբողջ յերկիրն եյին վաճառքի հանում տրոցկիստական դավաճանները։ Գերմանական ֆաշիզմի հետ կնքած պայմանագրի համաձայն—այդ մասին բա-վական ցինիկաբար պատմում եր Ռադեկը—նրանք պարտավորվել եյին գերմանական և ճապոնական կապիտալին հանձնել ֆաբրիկաներն ու գործարանները, հանքահորերն ու հանքարան-ները։ Նրանք գերմանական կապիտալիստներին եյին հանձնում յերկաթահանքը, մանգանը, նավթը, վոսկին ու վայտանյութը։ Նրանք ծախում եյին յերկրի անկախությունը՝ հանձն առնելով ԽՍՀՄ-ը դարձնել ֆաշիստական Գերմանիայի գաղութ։ Նրանք վաճառքի եյին հանում Խորհրդային Միության ժողովուրդներին, ինչպես վաճառում են ճորտացրած ստրուկներին։

Մեր յերկրի աշխատավորներին կրակոտ զայրույթի ու ատե-լության զգացմունքներն են համակում, յերբ նրանք իմանում են այն մասին, թե վորքան ստոր կերպով եյին վաճառում տրոցկիստ-ները մեր յերկիրը, մեր աղատությունը, մեր անկախությունը։

Մենք ջերմ կերպով սիրում ենք մեր մեծ սոցիալիստական հայրենիքը։ Մեր յերկրի մի ծայրից մյուսը հնչում է յերգն այն մասին, թե «հայրենիքը մենք սիրում ենք, պահպանում, վորպես

սիրելի մայր»։ Մեր մայր–հայրենիքն ուզում էլին անարգել տրոցկիստական վիժվածքները։

Հայրենիքի նկատմամբ ունեցած սերը մի հզոր ուժ է, վորը համախմբում է Խորհրդային Միության բաղմազգ հանրապետությունները։ Մեզ համար թանգ է մեր հայրենիքը, նրա հողի յուրաքանչյուր կտորը։ Մեր սրբազան լոզունգը, մեր սոցիալիստական պատվիրանն են ընկեր Ստալինի խոսքերը. «...մեր հողից, վոչ մի վերչոկ մեր հողից չենք տա վոչ վոքի»։

Մեր հայրենիքը ծախելու մենք վոչ վոքի թույլ չենք տա։ Խորհրդային արդարադատության խիստ ձեռքն անողոք կերպով կպատժի ամբողջ աշխարհի աշխատավորության սոցիալիստական հայրենիքի տրոցկիստական ստոր դավաճաններին։

«Правда», 25 հունվարի 1937 թ.

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՌԵՍՏԱՎՐԱՏՈՐՆԵՐԻ ՏՐՈՑԿԻՍՏԱԿԱՆ ՇԱՅԿԱՆ

Հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի դատավարության ընթացքում դատաքննության յուրաքանչյուր ժամն ավելի ու ավելի յե մերկացնում այդ շայկայի մասնակիցների կեղտոտ հոգիները, ավելի ու ավելի յե բացում վոչ միայն նրանց հանցավոր գործողությունները, այլև նրանց ձգտումները, դիտավորությունները, ԽՍՀՄ-ի ժողովուրդներին խեղդելու ծրագիրը: Գյատակովը, Ռադեկը, Սոկոլնիկովը և Տրոցկու մյուս որեր-սրիկաները խոստովանում են, վոր իրենց նպատակը, իրենց ծրագիրն ամենահամառոտակի կերպով բնորոշվում է վորպես կապիտալիզմի վերականգնում մեր յերկրում: Տրոցկիստական շայկան ու նրա ատամանն իրենց չեյին սահմանափակում սոսկ կապիտալիզմի վերականգնման ֆորմուլայով: Նրանք մեկնաբանում ու մանրամասնում եյին այդ ֆորմուլան գերմանական ու ճապոնական իմպերիալիստների հետ վարած բանակցություններում և կնքած համաձայնություններում, իմպերիալիստներ, վորոնց սվինների ուղնությամբ նրանք յերազում եյին անցնել իշխանության գլուխ:

Տրոցկին, վորպես հիմք մեր հայրենիքը վաճառելու շուրջն իմպերիալիստների հետ իր վարած բանակցությունների, առաջադրել է,—ինչպես յերևում է մեղադրական յեզրակացությունից և ինչպես այդ հաստատում են տրոցկիստական բանդիտները դատաբանում,—մասնավոր կապիտալի զարգացումը ԽՍՀՄ-ում, կոլտնտեսությունների ցրումը, խորհտնտեսությունների լուծարքը, հրաժարումն ինդուստրացման քաղաքականությունից, խորհրդային մի շարք ձեռնարկությունների հանձնումն ոտարերկրյա կապիտալիստներին՝ վորպես կոնցեսիա և այլ տնտեսական ու քաղաքական արտոնություններ տրամադրումը Գերմանիային ու Ճապոնիային, այդ թվում նաև խորհրդային տերիտորիայի մի մասի դիջումը:

Ուժասպառ, արյունաքամ, ոտարերկրյա իմպերիալիստների

կողմից պատառ-պատառ արված, կապիտալիստական բարբարոսությանը վերադարձած—ահա այսպես էին ուզում դարձնել մեր հայրենիքը տրոցկիստները: Հուդա-Տրոցկին իր համախոհ Ռադեկին, Պյատակովին և ուրիշներին դրել է, թե ինքը ձգտում է «հավասարեցնել ԽՍՀՄ-ի սոցիալական կառուցվածքը կապիտալիստական պետություններին»: ԽՍՀՄ-ի տարբերվոր բանվորներն ու գյուղացիները լավ գիտեն, թե ինչ է նշանակում կապիտալիստական «հավասարեցումը»: Դա սոցիալիզմի վերացումն է ԽՍՀՄ-ում, բանվոր դասակարգի դիկտատուրայի փոխարինումը կապիտալիստների ու կալվածատերերի դիկտատուրայով:

ԽՍՀՄ-ի ստալինյան Սահմանադրության 6-րդ հոդվածով «հողը, նրա ընդերքը, ջրերը, անտառները, գործարանները, ֆաբրիկաները, հանքահորերը, հանքերը, յերկաթուղային, ջրային ու ոդային տրանսպորտը, բանկերը, կապի միջոցները, պետության կազմակերպած խոշոր գյուղատնտեսական ձեռնարկությունները (խորհրդատնտեսությունները, մեքենատրակտորային կայանները և այլն), ինչպես նաև կոմունալ ձեռնարկություններն ու բնակարանային հիմնական ֆոնդը քաղաքներում ու արդյունաբերական վայրերում, պետական սեփականություն, այսինքն՝ համաժողովրդական ունեցվածք են»:

Ժողովրդի համառ աշխատանքով ձեռք բերված՝ մեր հայրենիքի այդ բոլոր հարստությունները տրոցկիստներն ուզում էին խլել ԽՍՀՄ-ի ժողովուրդներից և հանձնել ստար կապիտալիստների ավազակային ձեռքը:

Դատարանին տված լրենց ցուցմունքներում Պյատակովը, Ռադեկը, Սոկոլնիկովը պատմում են, թե ինչպես էին լրենք պատկերացնում կապիտալիզմի վերածնման պրոցեսը: Նրանք ուզում էին խոշոր ձեռնարկությունները վորպես կոնցեսիա հանձնել ճապոնական ու գերմանական կապիտալիստներին: Կոնցեսիոներների շուրջը կենտրոնացվում է մասնավոր կապիտալը: Վերածնվում է մասնավոր սեփականությունն ու առևտուրը հետզհետե ավելի մեծ չափերով, կազմվում է նոր, «սեփական» բուրժուազիա՝ յենթակա գերմանական ու ճապոնական բուրժուազիային: Կոլտնտեսությունները լուծարքի յեն յենթարկվում և մասնավոր-սեփականատիրական տնտեսության հիման վրա վերականգնվում են կապիտալիստական հարաբերությունները և՛ գյուղում, և՛ քաղաքում:

Տրոցկիստներն ուզում էին, վոր դարձյալ, ինչպես հնում, ֆաբրիկաներում ու գործարաններում թագավորեն կապիտալիս-

տական կարգերը։ Նրանք ուզում էին, վոր այն բանվորը, վորը ներկայումս Խորհրդային Միության մեջ լիիրավ տեր և գործադրանում, դառնա կապիտալիստի տորուկը, վոր այժմ մեքենայի տեր խորհրդային բանվորը դառնա այդ մեքենայի գերին, կցորդը։ Տրոցկիստներն ուզում և ձգտում էին վոչնչացնել ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի նվաճումները՝ համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող նվաճումները։ Նրանք ուզում էին վոչընչացնել յոթժամյա աշխատանքային որը, վոչնչացնել աշխատանքի, հանգստի, կրթության մեր մեծ իրավունքները, վերածնել գործազրկության այն սարսափները, վորոնք լավ են ծանոթ յուրաքանչյուր կապիտալիստական պետության բանվորներին և վորոնցից փրկված և խորհրդային յերջանիկ յերիտասարդությունը սոցիալիզմի հաղթանակի շնորհիվ։

Տրոցկիստներն աշխատում էին, ուզում էին ցրել կոլտնտեսությունները, վորոնք գարձել են կապիտալիստական դիշատիչների ոչքի փուշը։ Կոլտնտեսություններում ԽՍՀՄ-ի տասնյակ միլիոնավոր գյուղացիները փրկություն գտան կալվածատիրոջ ու կուլակի գարավոր շահագործումից, գտան ունևոր և կուլտուրական կյանքի ճանապարհը, գյուղական կյանքի գարավոր խղճուկիզմը վերացնելու ճանապարհը, յերջանկության ճանապարհը։ Ստեղծարար կոլեկտիվ աշխատանքի այդ յերջանկությունից ուզում եր զրկել մեր գյուղացիներին տրոցկիստական չայկան։

Կոլտնտեսությունների զրաղեցրած խորհրդային հողն ստալինյան Սահմանադրությամբ ամրացված և նրանց ձրի և անժամկետ, այսինքն՝ առհավետ ողտագործելու համար։ Հուզա-Տրոցկին և իր բանդան պատրաստվում էին վոչ միայն հանձնել գերմանական ու ճապոնական իմպերիալիստներին Ուկրաինան, Պրիմորյեն և Պրիամուրյեն, այլև ամբողջ յերկրում խորհրդային սքանչելի հողը կորատել՝ վորպես կուլակների ու կալվածատերերի կալվածներ և անհատական տնտեսությունների տասնյակ միլիոնավոր մանրագույն հողաշերտեր։

Տրոցկիստական դարշելիները յերազում էին, վոր հողազրկությունն ու չքավորությունը վերադառնան գյուղացիական ընտանիքները, վոր գարձյալ—ինչպես մի ժամանակ ցարական Ռուսաստանում եր և այժմ ամբողջ կապիտալիստական աշխարհում և—մեր գյուղի մի բևեռում աճեն միլիոնավորների աղքատությունն ու սովը, իսկ մյուս բևեռում՝ մի բուռն շահագործողների հարստությունը։ Նրանք, տրոցկիստական բանդիները, ուզում էին, վոր կուլակները դառնան մեր գյուղի տերն ու տիրա-

կանը, նրանք ուզում էին քայքայել միլիոնավոր գյուղացիներին և հավիտենական ճորտության մատնել նրանց՝ կուլակի և ռատրերիկյա կապիտալիստի ձեռքը, սովի, աղքատության ու ստրացման տառապանքներին մատնել գյուղացիությանը:

Տրոցկին և իր բանդան ձգտում էին մեր ամբողջ յերկիրը դարձնել Գերմանիայի ու Ճապոնիայի կապիտալիստական տընտեսության կցորդը, «տնտեսական լրացումը», մեր ծաղկուն հայրենիքը դարձնել գերմանական ու ճապոնական իմպերիալիզմի գաղութը: Տրոցկին մտադիր էր Գերմանիային ու Ճապոնիային շահագործելու հանձնել մեր հանքերը, մանգանը, վոսկին, նավթը, ապատիտները և համաշխարհային գներից ցածր գնով պարենամթերքը ու յուղ մատակարարել նրանց: Տրոցկին և իր շայկան ուզում էին վերացնել խորհրդային քաղաքացիների մեծ ազատությունները, վորոնք արձանագրված են հաղթանակած սոցիալիզմի ստալինյան Սահմանադրության մեջ, և ճղմել ԽՍՀՄ-ի ժողովուրդներին գերմանական ու ճապոնական դինվորականության կրունկի տակ: Նրանք ուզում էին անդամահատել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը և գաղութային շահագործման լուծը գնել ԽՍՀՄ-ի ժողովուրդների վզին:

Տրոցկիստները՝ լեովին համաձայն լրենց տերերի հետ, լեովին համաձայն Հիտլերի հետ, ուզում էին վերացնել ԽՍՀՄ-ում ձեռք բերված և մեր Սահմանադրության մեջ արձանագրված՝ ազգերի ու ցեղերի լիակատար իրավահավասարությունը: Նրանք ուզում էին ռուս, ուկրաինացի, բելոռուս, վրացի և ԽՍՀՄ-ի մյուս բոլոր ժողովուրդներին հասցնել «ստորին ռասայի» աստիճանի, վորի վրա իշխելու յե գերմանական ավազակային ֆաշիզմի «բարձրագույն ռասան»: Հիտլերի «Իմ պայքարը» գրքում, ֆաշիստական ավազակության այդ ավետարանում, շարադրված են գերմանական իմպերիալիզմի այն «նվիրական» յերազները, վորոնք կազմել են Հուդա-Տրոցկու ծրագրի հիմքը: Հիտլերը գրում է.

«Յերբ մենք խոսում ենք Յեվրոպայում նոր հողեր նվաճելու մասին, մենք, իհարկե, կարող ենք առաջին հերթին աչքի առաջ ունենալ միմիայն Ռուսաստանը և այն ծայրամասային պետությունները, վորոնք յենթակա յեն նրան»:

Գերմանական ֆաշիզմն ուզում է նվաճել խորհրդային հողերը և հպատակեցնել ԽՍՀՄ-ի ժողովուրդներին, վորպեսզի «գործադրի ստորին ռասաների բանվորական ուժը»... և վորպես նվաճող

հարկադրի նրանց «աշխատել այնպես, ինչպես այդ համապատասխանում է իր ցանկությանն ու նպատակներին»:

Ֆաշիստ տերերի այդ զառացանքային յերազը, վորը յերբեք չի իրագործվելու, դարձել է նաև տրոցկիստական բանդայի յերազը, վորն առաջադրել է ԽՍՀՄ-ի դաղութային տարկացման ծրագիր, ԽՍՀՄ-ում կապիտալիզմը վերականգնելու ծրագիր: Տրոցկիստական ծառաները, ինչպես և նրանց տերերը, իրենց հույսը դրել էին միմիայն ԽՍՀՄ-ի պարտության վրա՝ դերմանական ու ճապոնական իմպերիալիզմի հետ մղվելիք պատերազմում, և ձգտում էին արագացնել այդ պատերազմն ու նախապատրաստել ԽՍՀՄ-ի պարտությունը: Նրանք պայթեցումներ էին սարքում ձեռնարկություններում, նրանք լրտեսական ամփոփագրեր էին կազմում ֆաշիստական հետախուզությունների համար, նրանք սպանում ու թունավորում էին բանվորներին և կարմիր-բանակայիններին, մեծահասակներին ու յերեխաներին, նրանք հնարավոր բոլոր ստորություններն ու չարագործություններն անում էին և շարունակ նոր դերստորություններ և ուլտրաչարագործություններ էին հնարում, վորպեսզի ճանապարհ բանան դեպի իշխանությունը և վերականգնեն կապիտալիզմը մեր յերկրում: Յերբեք չեն իրագործվի ստորներից ստորագույնների այդ յերազները: Չկա և չի կարող լինել աշխարհում այնպիսի ուժ, վորը կարողանա հետ դարձնել մեզ, դնել կապիտալիզմի լծի տակ:

Զաղրելի, նողկալի, յերկրես ստոր և նույնիսկ իրենց կատաղությամբ չնչին են տրոցկիստական կատաղի դամփռները, վորոնք յերազել են կապիտալիստական տարկության մատնել ԽՍՀՄ-ի ժողովուրդների մեծ ընտանիքը: Տրոցկիստական լեշի հանդեպ մեծ ցասումով են լցված տասնյակ միլիոնավոր աշխատավորների սրտերը: Սոցիալիստական որենքի դաժան բաղուկը բնաջինջ կանի խորհրդային հրաշալի յերկրի յերեսից տրոցկիստական սղծությունը:

«Правда», 26 հունվարի 1937 թ.

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԴԱՎԱՃԱՆՆԵՐԸ, ՖԱՇԻԶՄԻ ԼԱԿԵՅՆԵՐԸ, ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՍՏՈՐ ՌԵՍՏԱՎՐԱՏՈՐՆԵՐԸ

Խորհրդային յերկրի ամենավոխերիմ թշնամի Հուդա-Տրոցկու հրահանգի համաձայն ստեղծված՝ Պյատակովից, Ռադեկից, Սոկոլնիկովից և Սերեբրյակովից ու նրանց գործակիցներից կազմված «զուգահեռ տրոցկիստական կենտրոնի» գործի վերաբերյալ մեղադրական յեզրակացությունը բաց և անում հայրենիքի նկատմամբ պատմության մեջ անորինակ դավաճանության ու մատնության, խորհրդային ժողովրդի ու սոցիալիզմի նկատմամբ անմարդկային ատելության հրեշավոր մի պատկեր:

Զարդուփշուր և արված այն խորամանկ առաստղը, վոր անցյալ տարվա ոգոստոսի դատավարության ժամանակ աշխատում եյին ստեղծել տրոցկիստական-զինովյեվական հակախորհրդային տեռորիստական ընդհատակի տականքները, վորոնք վողորմելիորեն թոթովում եյին, վոր իրենք, իբր թե, վոչ մի քաղաքական ծրագիր չեն ունեցել և ծանրագույն հանցագործությունների եյին դիմում՝ առաջնորդվելով բացառապես իշխանության ճակատագրական լաստոց ծարավով, զուտ իշխանության ծարավից դրդված: Հանցանքի մեջ բռնված, մերկացված մեղադրյալների ցուցմունքների յերկար շղթայով, իրեղեն ապացույցներով, վկաների ցուցմունքներով, ասույթ հաստատված, անժխտելի փաստերի շարանով վերականգնված և տրոցկիստական հակախորհրդային կենտրոնի քաղաքական ծրագիրն իր ամբողջ նողկալի մերկությամբ, ինչպես նաև տրոցկիստական վիժվածքների հրեշավորության չափ հանցավոր գործունեությունը:

Վո՞րն է այդ ծրագիրը, ի՞նչպիսի նպատակներ և հետապնդում տրոցկիստական հակախորհրդային բանդան:

Այդ՝ կապիտալիստական ռեստավրացիայի, ԽՍՀՄ-ում կապիտալիզմը վերականգնելու ծրագիրն է: Տրոցկին և նրա ցուցումների համաձայն տրոցկիստական կենտրոնը ձգտում եյին իշխա-

նությունը գրավել ոտարերկրյա պետությունների ողնությամբ՝ նպատակ ունենալով վերականգնել ԽՍՀՄ-ում ճնշման ու շահագործման կապիտալիստական հարաբերությունները։ Նրանք խոսում էին այդ մասին մոլի հանցագործների—սոցիալիզմի դաղաղած թշնամիների, աշխատավոր ժողովրդի թշնամիների բացահայտ ցինիկությամբ։ Ինչպես ցույց են տալիս մեղադրյալներ Պյատակովն ու Ռադեկը՝ Տրոցկին իր հակախորհրդային կատաղած շների վոհմակից պահանջելով դիվերսիոն, վնասարարական և տեռորիստական գործունեության ուժեղացումը ԽՍՀՄ-ի մեջ, ընդգծում էր, վոր «տանց» ԽՍՀՄ-ի սոցիալական կառուցվածքի «վորոշ հավասարեցման» կապիտալիստական պետություններին, տրոցկիստական-զինովյեվական հակախորհրդային բլոկի կառավարությունը չի կարողանա իշխանությունն իր ձեռքում պահել։ «Գերմանացիներն ու ճապոնացիները մեզանից կպահանջեն,— գրում էր Տրոցկին Ռադեկին,— խաղաղացնել մթնոլորտը դյուղում, այդ պատճառով պետք կլինի զիջումների դիմել և թույլ տալ կոլտնտեսությունների ցրումը կամ կոլտնտեսություններից դուրս դալը»։ Մեղադրյալ Պյատակովը Նորվեգիայում՝ Ոսլո քաղաքի մոտ, 1935 թվականի դեկտեմբերին Տրոցկու հետ ունեցած իր դրույցի բովանդակությունը պատմելիս պարդաբանում է Տրոցկու բավականաչափ անակնկալ դիրեկտիվները. «...պետք կլինի նահանջել։ Այդ պետք է հաստատապես ըմբռնել։ Նահանջել դեպի կապիտալիզմը»։ Մեղադրյալ Սոկոլնիկովը նույն ձևով է բնորոշում տրոցկիստական-զինովյեվական հակախորհրդային բլոկի ծրագիրը. «Այդ ծրագիրը նախատեսում էր հրաժարվել ինդուստրացման, կոլեկտիվացման քաղաքականությունից և, վորպես այդ հրաժարման արդյունք՝ դյուղում մանր տնտեսության հիման վրա կապիտալիզմի վերելք, վորը, միացած արդյունաբերության կապիտալիստական տարրերի հետ, դարդանալով կվերածվեր կապիտալիստական ռեստավրացիայի ԽՍՀՄ-ում»։

Տրոցկու՝ տրոտսոհմանից ուղարկած հրահանդը բնորոշելով, Ռադեկը հայտարարում է. «Մենք Պյատակովի հետ միասին յեկանք այն յեզրակացության, վոր այդ հրահանդն ամփոփում է բլոկի աշխատանքի արդյունքը, ամեն ինչ պարզ կերպով մինչև վերջն ասում է, ամենասուր կերպով առաջադրելով այն հարցը, վոր տրոցկիստական-զինովյեվական բլոկի իշխանությունը բոլոր հանդամանքներում էլ կարող է լինել միմիայն կապիտալիզմի վերականդնման իշխանություն»։

Ահա թե հանուն ինչի էին պայքարում խորհրդային իշխա-

նության դեմ, խորհրդային ժողովրդի դեմ տրոցկիստական սրիկաները, ահա թե ինչու էին նրանք պայքարում իշխանության համար։ Նրանք ուզում էին թաղել սոցիալիզմը, Խորհրդային երկրի աշխատավորության ուրախ, աղատ սոցիալիստական կյանքը։ Նրանք ուզում էին վերադարձնել կապիտալիստ-շահագործողներին դեպի ֆաբրիկաներն ու գործարանները։ Նրանք ուզում էին խորհրդային բանվորներից խլել նրանց կարևորագույն նվաճումները, նորից գցել նրանց կապիտալիստական շահագործման ստրկության մեջ, վերականգնել կապիտալիստական վարձու ստրկության անիծյալ ժամանակները՝ կապիտալիստական հասարակակարգի գործազրկության և այլ հրաշալիքների հետ միասին, այն հասարակակարգի, որը հաղթված ու ջախջախված է մեր երկրում այնպիսի՛ զոհերի ու ջանքերի գնով։ Նրանք ուզում էին Խորհրդային երկրի գյուղացիներից խլել նրանց ազատ կոլտնտեսային կյանքը, որը նվաճված է կուլակների, կապիտալիստների, կուլակների դեմ համառ պայքար մղելով։ Նրանք ուզում էին վերականգնել կուլակությունը, աշխատավոր գյուղացիներին մատնել արյունախում-կուլակի ձեռքը։

Բայց այդ քիչ է։ ԽՍՀՄ-ում կապիտալիզմը վերականգնելու ծրագիրը, որ մշակել էր տրոցկիստական հակախորհրդային բանդան, նախատեսում էր ամբողջ Խորհրդային երկիրը մատնել կապիտալիստական ոտարերկրյա պետությունների—ԽՍՀՄ-ի ամենավտանգավոր թշնամիների ձեռքը, մեր երկիրը նրանց ստրուկը դարձնել։ Տրոցկիստները յերադում էին Խորհրդային երկրի անդամատման մասին՝ իմպերիալիստական դիշատիչներին գոհացնելու նպատակով։ Խորհրդային ժողովրդի այդ դաղանացած թշնամիները նկատի ունեյին վոչ միայն ոտարերկրյա կապիտալի ներդրավումը կոնցեսիաների ձևով, վոչ միայն ամբողջ տնտեսական ճյուղեր դերմանական ու ճապոնական կապիտալին հանձնելը, —այդ նողկալի մատնիչների, հայրենիքի դավաճանների ծրագիրը նախատեսում էր տերիտորիալ զիջումներ՝ հոդուտ ոտարերկրյա պետությունների։

Պյատակովը ցույց տվեց, որ հենց «համաձայնության այդ հիմունքները, ինչպես պատմել է Տրոցկին, վերջնականապես մշակվել ու ընդունվել էին Տրոցկու և Հիտլերի փոխանորդ Հեսսի հանդիպման ժամանակ»։ 1935 թ. դեկտեմբեր ամսին Ռադեկին գրած նամակում Տրոցկին ճշտում է ոտարերկրյա պետությունների հետ համաձայնության գալու պայմանները։ «...Անխուսա-

վելիորեն պետք կլինի դիմել տերիտորիալ զիջումների,—դրում էր Տրոցկին։—Ճապոնիային պետք կլինի զիջել Պրիմորյին ու Պրիամուրյին, իսկ Գերմանիային՝ Ուկրաինան... Մենք ստիպված կլինենք թույլ տալ, վոր նա (Գերմանիան) մասնակցի հանքանյութերի, մանդանի, վոսկու, նավթի, ապատիտների շահագործմանը, և պարտավորվել վորոշ ժամանակով նրան պարեն ու ճարպանյութ մատակարարել՝ համաշխարհային գներից ավելի ցածր գներով։

Մենք ստիպված կլինենք Ճապոնիային զիջել Սախալինի նավթը և ապահովել Ճապոնիային նավթ մատակարարելը՝ Ամերիկայի դեմ պատերազմելու դեպքում։ Մենք պետք է նաև թույլ տանք, վոր նա մասնակցի վոսկու հանքերի շահագործմանը»։

Ահա թե ինչի համար եյին պայքարում տրոցկիստական սրիկաները հանուն իշխանության։ Նրա համար, վոր ԽՍՀՄ-ը դարձնեն ֆաշիստական Գերմանիայի հումքային կցորդը, նրա համար, վոր անդամատեն ԽՍՀՄ-ը՝ տալով Ուկրաինան ֆաշիստական Գերմանիային, նրա համար, վոր ապահովեն ճապոնական միլիտարիստների ցնորքների իրականացումը՝ արևելքում ԽՍՀՄ-ից տերիտորիաներ պոկելու մասին։ Ահա թե հանուն ինչի եյին դեպի իշխանություն ձգտում, կատարելով ամենահրեշավոր վոճիրներ, հակախորհրդային տրոցկիստական ընդհատակի այդ զազրելի տականքները։

Այդպիսի հրեշավոր ծրագիր ունենալով, բնականաբար, հակախորհրդային տրոցկիստական կտրիճները չեյին եկ կարող մտածել Խորհրդային յերկրի աշխատավորության կողմից վորևե ածել Խորհրդային իշխանության մասին։ Տրոցկիստական բանդան խոր ջակցություն ստանալու մասին։ Տրոցկիստական բանդան խոր ընդհատակում եր աշխատում, միանդամայն գաղտնի կերպով հյուսելով հայրենիքի մատնության ու դավաճանության իր դարշելի վոստայնը։ Այդ բանդան իշխանության հասնելու միայն մեկ ուղի յեր տեսնում, այն է՝ ԽՍՀՄ-ի պարտությունը իմպերիալիստական պետությունների դեմ մղելիք պատերազմում և տեռորիստական գործունեության ու կառավարության ղեկավարների դեմ։ Տրոցկիստական բանդան ուղղակի կապ հաստատեց այն ագրեսիվ պատերկրյա պետությունների հետ, վորոնք իրենց քաղաքականության դլխավոր իմաստը ԽՍՀՄ-ի վրա ռազմական հարձակում գործելն են համարում։ Տրոցկին ուղղակի և ցինիկ կերպով հաղորդել է Պյատակովին այն համաձայնության մասին, վոր ինքը կնքել է գերմանական նացիոնալ-սոցիալիստական կուսակցության ղեկավարներից մեկի հետ։ Նա հաղորդում է նրան նաև, վոր ին-

քը «միանգամայն կանոնավորված կապ ունի ...կառավարության հետ»:

Ինչպես ցուցմունք է տալիս Պյատակովը, Տրոցկու և Հիտլերի փոխանորդ Հեսսի հանդիպման ժամանակ վերջնականապես մշակված ու ընդունված համաձայնության հիմունքները, ի միջի այլոց, տրոցկիստական բլոկին պարտավորեցնում էին «պատերազմի ժամանակ ակտիվ դիվերսիոն աշխատանք ծավալել ռազմական ձեռնարկություններում և ռազմաճակատում, ընդվորում այդ դիվերսիոն աշխատանքը պետք է կատարվի Տրոցկու ցուցումներով՝ համաձայնեցված գերմանական գլխավոր շտաբի հետ»: Մեղադրյալ Ռադեկը ցուցմունք տվեց, վոր Տրոցկին իրեն գրել է արտասահմանից. «Պետք է ընդունել, վոր իշխանության հարցն ամենից ռեալ կերպով կծառանա բլոկի առաջ միայն պատերազմի ժամանակ ԽՍՀՄ-ի պարտություն կրելու հետևանքով: Բլոկն այդ բանին պիտի յեռանդուն կերպով պատրաստվի...Քանի վոր տրոցկիստների՝ իշխանության հասնելու գլխավոր պայմանը, յեթե նրանց չհաջողվի այդ բանին հասնել տեռորի միջոցով, կարող ել լինել ԽՍՀՄ-ի պարտությունը, հարկավոր է, վորքան այդ հնարավոր է, արագացնել ընդհարումը ԽՍՀՄ-ի ու Գերմանիայի միջև»: Համաձայն Տրոցկու տված դիրեկտիվների՝ թե՛ Ռադեկը, թե՛ Սոկոլնիկովը և թե՛ տրոցկիստական բանդայի մյուս «գործիչները» կապ էին հաստատել ռասարերկրյա ագրեսորների գործակալների հետ ԽՍՀՄ-ում՝ ըստ ամենայնի սպասարկելով այդ ռասարերկրյա ագրեսորներին:

Ահա թե ինչ էին ուզում, ահա թե ում համար էին աշխատում մարդասպանների տրոցկիստական բանդային պատկանող այդ սրիկաները, Ֆաշիզմի գործակալները, յերբեք անարդ ու նզովյալ դավաճանները: Տրոցկիստական սրիկաներն ամբողջ ուժերով ձգտում էին կատարել իրենց պարտավորություններն իրենց Ֆաշիստ տերերի առջև:

Տրոցկու հրահանգը կատարելու համար «գուդահեդ կենտրոնը» առաջարկում է իր ձեռնասուններին—Տուրոկին, Կնյազեվին, Ռատայչակին և ուրիշներին՝ անմիջականորեն կապվել գերմանական ու ճապոնական հետախույզ որդանների դիվերսանտ-գործակալների հետ: Այդ կապը հաստատվում է: Ըստ մեղադրյալ Դրորնիսի ցուցումի կազմակերպվել է «Յենտրալնայա» հանքահորի պայթյունը, վորի հետևանքով մեռան 10 և ծանր վիրավորվեցին 14 բանվորներ: Մեղադրյալ Ռատայչակը յերեք դիվերսիոն ակտ է կազմակերպում Գորլովկայի ադոտային պարար-

տանյութերի կոմբինատում և նույնպիսի ակտեր՝ Վոսկրեսենսկի քիմիական կոմբինատում և Նեվսկի գործարանում։ Լիվշիցը, Տուրոկը, Կնյազևը և Բոգուսլավսկին կազմակերպում են մի շարք դիվերսիոն-վնասարարական ակտեր և խորտակումներ երկաթուղային տրանսպորտում։ Մեղադրյալ Կնյազևը ցուցմունք տվեց. «...Ցես այդ աշխատանքը ձեռնարկեցի միայն այն ժամանակ, երբ պարզեցի տրոցկիստական կազմակերպության վերաբերմունքը դեպի լրտեսությունն ու դիվերսիոն աշխատանքը։ Կարմիր բանակում՝ հոդուտ ճապոնական հետախուզության։ Առաջադրանքի այն մասը, որը վերաբերում էր տրանսպորտում դիվերսիոն-վնասարարական աշխատանք ծավալելուն և գնացքների խորտակումներ կազմակերպելուն, ես լիովին կատարել եմ, որովհետև այդ հարցում ճապոնական հետախուզության առաջադրանքը միանգամայն համապատասխանում էր այն առաջադրանքին, որը քիչ առաջ ես ստացել եմ տրոցկիստական կազմակերպությունից»։

Մեղադրյալներն իրենց շատ լավ հաշիվ էին տալիս, որ դիվերսիոն գործողություններն ու խորտակումները մարդկային մեծ զոհեր կառաջացնեն։ Նողկալի հակախորհրդային տրոցկիստական բանդային պատկանող արյունարբու դաղանները հենց այդ բանին էլ ձգտում էին։ Անուղղելի անզգամի և աշխատավորների դահճի ցինիզմով Պյատակովը հաստատեց այդ իր ցուցմունքներում։ Նրա թելադրանքով գործող մեղադրյալ Դրոբնիսն ուղղակի հայտարարում էր, որ «նույնիսկ ավելի լավ է, եթե հանքահորում զոհեր լինեն, որովհետև նրանք, անկասկած, բանվորների մեջ դայրույթ կառաջացնեն, իսկ մեզ այդ էլ հենց հարկավոր է»։ Կնյազևը ցուցմունք տվեց, որ «Լիվշիցը հատուկ հանձնարարություն տվեց նախապատրաստելու և իրագործելու մի շարք այնպիսի դիվերսիոն գործողություններ (պայթյուններ, խորտակումներ կամ թունավորումներ), որոնք առաջ կբերեն մեծ թվով մարդկային զոհեր»։

Խորհրդային յերկրի պաշտպանունակությունը վիժեցնելու համար վնասարարություն անելով և ել ավելի մեծ քանակությամբ վնասարարական գործողություններ ու դիվերսիաներ պատերազմի ժամանակվա համար նախապատրաստելով, տրոցկիստները գործում էին գերմանական ու ճապոնական հետախուզության ներկայացուցիչների ուղղակի ցուցումներով, բացի այդ՝ նրանք վերոհիշյալ հետախուզություններին սիստեմատիկաբար

տալիս էին պետական կարևորագույն նշանակություն ունեցող լրտեսական տեղեկություններ։

Կեղտոտ լրտեսներ՝ Ռատայչակը, Պուչինը, Գրաչեն—բոլորն էլ կապված էին գերմանական հետախուզության հետ։ Գրաչեն ցուցմունք տվեց. «Այն կազմակերպությունը, որին ես պատկանում էի, գերմանական հետախուզության առաջադրանքով քիմիական ձեռնարկություններում ոչ միայն դիվերսիոն, այլև լրտեսական աշխատանք էր կատարում»։

Տրոցկիստական սրիկաներն աշխատում էին ամեն կերպ դուր գալ իրենց արտասահմանյան տերերին՝ կատարելով ամենահրեշավոր հանցագործություններ հայրենիքի հանդեպ, աշխատավոր ժողովրդի հանդեպ։ Նրանք իրենց ձեռքերը ներկեցին բանվորների արյունով, կարմիր–բանակայինների արյունով, վորոնք սպանված են տրոցկիստական սրիկաների կատարած դիվերսիաների հետևանքով։ Նրանք տեռոր են կազմակերպել ընդդեմ Խորհրդային յերկրի դեկավարների, վորոնց ջերմ կերպով սիրում են աշխատավորների միլիոնավոր մասսաները։

Ֆաշիզմի տրոցկիստական–զինովյևյան գործակալների ձեռքերը ներկված են ականավոր մարդու, ամենաազնիվ, ժողովրդին անսահման նվիրված, սոցիալիստական հեղափոխության բոցաշունչ տրիբուն Սերգեյ Միրոնովիչ Կիրովի արյունով։

Դեպի սոցիալիզմը, դեպի Խորհրդային յերկիրն ունեցած ատելությունից ստացած կուրծ, ֆաշիստական ծախու գործակալ Տրոցկին պահանջում էր «...կազմակերպել հուսալի մարդկանց մի նեղ կորեկտիվ՝ Համկ(բ)կ ղեկավարների, առաջին հերթին Ստալինի դեմ տեռորիստական մահափորձեր կատարելու համար»։ Պայտակավոր ցուցմունք տվեց, վոր Տրոցկին զրույցի ժամանակ իրեն հայտնել է. «Հասկացեք, վոր առանց տեռորիստական ակտերի մի ամբողջ սերնդի, վորը պետք է կատարվի ըստ հնարավորին շուտ, չի կարելի տապալել ստալինյան կառավարությունը»։ Տրոցկիստները մահափորձ կազմակերպեցին ընկեր Մոլոտովի դեմ, յերբ նա կուրորտումն էր։

Ահա նրանց հանցագործ ծրագիրը և գարշելի պրակտիկան։ Սրանք են հրեշավոր այն դավադրության սարսռեցուցիչ մանրամասնությունները, վոր նրանք սարքում էին ընդդեմ ԽՍՀՄ–ի բանվորների ու գյուղացիների, ընդդեմ սոցիալիզմի ուրախ, ծաղկող յերկրի, մի յերկրի, վորը տրոցկիստները—ֆաշիստական գործակալները, լրտեսները, դիվերսանտները, տեռորիստներն ու վնասարարները պատրաստվում էին անդամատել և հանձնել գեր-

մանական ֆաշիզմին ու ճապոնական միլիտարիզմին ի սրկություն։

Դատարանում յերեկ հրապարակված մեղադրական յեզրակացությունը յերևան է հանում հրեշավոր մի պատկեր ստոր, դավաճանական, հակախորհրդային այն գործունեության, որ հանդես են բերել յերկրս անարդ, քայքայված ֆաշիստական վարձկանները, հայրենիքի դավաճանները, ժողովրդի ամենավոխերիմ թշնամիները—տրոցկիստները, որոնք գերմանական ու ճապոնական ֆաշիստական ուժերի ուղղակի գործակալներն են դարձել։

Տրոցկիստական վոհմակին պատկանող այդ մարդիկ յերկար տարիների ընթացքում անընդհատ պայքարել են սոցիալիստական հեղափոխության հանճար Վլադիմիր Իլյիչ Լենինի դեմ, լենինյան կուսակցության դեմ, ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթանակի դեմ։

Վերջնական ջախջախում և պարտություն կրելով, ԽՍՀՄ-ում սոցիալիզմի լիակատար հաղթանակի հետևանքով Խորհրդային յերկրի ներսում զրկվելով վորևե հենարանից, իրենցից ներկայացնելով մեկուսացած և քաղաքականորեն դատապարտված բանդիտների և լրտեսների մի խումբ, որոնք նշավակված են խորհրդային ժողովրդի ընդհանուր արհամարհանքով,—Տրոցկին և իր գործակիցները՝ Պյատակովը, Ռադեկը, Սոկոլնիկովը, Սերեբրյակովը, Լիվշիցը և մյուս տրոցկիստական վիժվածքները կատարեցին բանվոր դասակարգի և գյուղացիության շահերի մի չլսված դավաճանություն, դավաճանեցին հայրենիքին և դարձան գերմանական ու ճապոնական ֆաշիստական ուժերի լրտեսական և դիվերսիոն-վնասարարական գործակալությունը։

Վոչ միայն Խորհրդային յերկրի աշխատավորների միլիոնավոր մասսաների—բանվորների, կոլտնտեսականների, ինտելիգենցիայի,—այլ նաև ամբողջ առաջավոր, պրոգրեսիվ մարդկության անսահման զայրույթն ու վրդովմունքը կարող է լինել միակ պատասխանը տրոցկիստական բանդայի դաղանացած սրիկաների, կատաղած ֆաշիստական շների հրեշավոր վոճրագործություններին։

Ջախջախել տրոցկիստական ճիվաղը—այս է միահամուռ պահանջն այն բոլոր ազնիվ խորհրդային մարդկանց, որոնք սիրում են իրենց հայրենիքն ու ազատությունը։

«Известия», 24 հունվարի 1937 թ.

ՄԱՐԴԱՍՊԱՆՆԵՐԻ ՅԵՎ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԴԱՎԱՃԱՆՆԵՐԻ ՏՐՈՑԿԻՍՏԱԿԱՆ ԲԱՆԴԱՆ

Հակահեղափոխական տրոցկիստական–զինովյեվական բանդայի մարդասպանների և նրանց պարագլուխների՝ Զինովյեվի, Կամենևի, Սմիրնովի, Մրաչկովսկու և ուրիշների դատավարությունը, վոր կայացավ 1936 թվականի ոգոստոսին, ոգնեց հայտարերելու, վոր սոցիալիզմի ու ժողովրդի այդ մերկացված և հանցանքի տեղում բռնված անուղղելի թշնամիներից բացի, դոյություն ունի տրոցկիստական սրիկաների մի կենտրոն ևս, վորը նոզկալի հակահեղափոխական պայքար և մղում մեր կուսակցության դեմ, մեր սոցիալիստական հայրենիքի դեմ:

Այժմ ընկեր Ն. Ի. Յեժովի ղեկավարությամբ ՆԳԺԿ-ի որդանների կողմից յերևան բերված և մերկացված է հակախորհրդային տրոցկիստական «զուդահեռ կենտրոնը», վորը վաղուց արդեն դոյություն է ունեցել և կազմված է յեղել բանվոր դասակարգի ամենաստոր թշնամիներից, հին, մոլեռանդ տրոցկիստ յերկերեսանիներից՝ Պյատակովից, Ռադեկից, Սոկոլնիկովից, Սերեբրյակովից, Լիվշիցից և այլ հակահեղափոխական բանդիտներից: Այդ հակախորհրդային տրոցկիստական «զուդահեռ կենտրոնի» մեղադրական յեզրակացության ու դատավարության նյութերը ցույց են տալիս, թե ինչպիսի ստորության և ցինիկ յերկերեսանիության, ինչպիսի զզվելի դավաճանության, նոզկալի անկման ու անազնվության են հասել հայրենիքի դավաճանները, դաղաղած, մոլեղնած տրոցկիստական–զինովյեվյան վիժվածքները:

Տրոցկիստական–զինովյեվյան այդ անիծված ճիզվիտների, հայրենիքի դավաճանների, սոցիալիզմի ամենավոխերիմ թշնամի Հուդա–Տրոցկու անմիջական հրահանգով ստեղծված այդ հակախորհրդային տրոցկիստական «զուդահեռ կենտրոնի» ամբողջ հանցավոր գործունեությունը ցույց է տալիս հայրենիքի ու ժողովրդի հանդեպ մարդկային պատմության մեջ դեռ չտեսնված, ամենախայտառակ, ամենաստոր դավաճանության մի նոզկալի

պատկեր։ Ամբողջապես յերևան է հանված հակախորհրդային տրոցկիստական «զուգահեռ կենտրոնի» հակահեղափոխական քաղաքական ծրագիրը, սոցիալիստական հայրենիքի չլսված, սև դավաճանության և դարշելի մատնության ծրագիրն իր ամբողջ ողվելի վոգորմելիությամբ։

Հակահեղափոխական տրոցկիստական հուդանների քաղաքական ծրագրի գլխավոր նպատակը կապիտալիստական restավրացիայի ծրագիրն է, ԽՍՀՄ-ում կապիտալիզմը վերականգնելու ծրագիրը, մեր յերկրում բուրժուական իշխանության տիրապետությունը վերականգնելու ծրագիրը։ Հակախորհրդային «զուգահեռ կենտրոնին» պատկանող, հանցանքի տեղում բռնված լկի դավաճանների ցուցմունքները, յեղած փաստաթղթերն ու իրեղեն ապացույցները միանգամայն հաստատում են, վոր մարդասպանների տրոցկիստական վոհմակը—այդ ֆաշիստական վարձկաններն իրենց գլխավոր խնդիրն եյին համարում խորհրդային կառավարությունը բռնի կերպով տապալել՝ ԽՍՀՄ-ում գոյություն ունեցող տնտեսական և պետական կարգերը փոխելու նպատակով։ Հաստատված ու ապացուցված է, վոր ժողովրդի վաղուցվա թշնամի Տրոցկին և, ըստ նրա ցուցումների, տրոցկիստական «զուգահեռ կենտրոնը» ձգտում եյին ֆաշիստական սվինների ողնությամբ բռնի կերպով դրավել իշխանությունը՝ «կապիտալիստական հարաբերությունները ԽՍՀՄ-ում վերականգնելու նպատակով»։

Ստոր հակահեղափոխական Ռադեկն ու Պյատակովը խոստովանեցին, վոր նրանք համաձայնեցին ու ընդունեցին իրագործելու Տրոցկու հրահանգը՝ մեր յերկրում գոյություն ունեցող սոցիալիստական կարգերը բռնի կերպով կապիտալիստների իշխանության տիրապետությամբ փոխարինելու անհրաժեշտության մասին։ Տրոցկիստական այդ բանդիտները խոստովանեցին, վոր հակախորհրդային տրոցկիստական «զուգահեռ կենտրոնի» քաղաքական ծրագրի եյությունը, հիմքը կազմում եր կապիտալիզմի restավրացիան մեր յերկրում։

Պրոֆեսորների ու մարդասպանների հակահեղափոխական չայկայի պարագլուխ Տրոցկին շարադրել է իր ցուցումներն իր գրած դիրեկտիվ նամակում, վոր ստացել է Ռադեկն անձամբ։ այս վերջինը դատական քննության ժամանակ հաղորդեց։

«Պետք է հասկանալ,— գրում եր Տրոցկին,— վոր առանց ԽՍՀՄ-ի սոցիալական կառուցվածքի վորոշ հավասարեցման կապիտալիստական պետություններին, բլոկի կառավարությունն իշ-

խանության դլուխ մնալ և խաղաղություն պահպանել չի կարողանա... Գերմանական ու ճապոնական կապիտալին ԽՍՀՄ-ի շահագործումը թույլատրելը կապիտալիստական խոշոր շահեր կստեղծի խորհրդային տերիտորիայում: Գյուղում դեպի նրանց կձգտեն այն խավերը, որոնց մեջ կապիտալիստական հոդերանությունը չի վերացել և որոնք կոլտնտեսություններից դժգոհ են: Գերմանացիներն ու ճապոնացիները մեզանից կպահանջեն խաղաղացնել մթնոլորտը դյուղում, այդ պատճառով պետք կլինի զիջումների դիմել և թույլ տալ կոլտնտեսությունների ցրումը կամ կոլտնտեսություններից դուրս դալը»:

Խոսելով Տրոցկու այդ դիրեկտիվի մասին, որ ստացել եր հակախորհրդային տրոցկիստական-զինովյեվյան բլոկը, Ռադեկը հարցաքննության ժամանակ հայտնեց.

«Մենք՝ Պյատակովի հետ միասին յեկանք այն յեզրակացության, որ այդ դիրեկտիվն ամփոփում է բլոկի աշխատանքի արդյունքը, ամեն ինչ պարզ կերպով մինչև վերջն ասում է, ամենասուր կերպով առաջադրելով այն հարցը, որ տրոցկիստական-զինովյեվական բլոկի իշխանությունը բոլոր հանդամանքներում կարող է լինել միմիայն կապիտալիզմի վերականդնման իշխանություն»:

Կապիտալիզմի վերականդնում, բուրժուական իշխանության վերականդնում—ահա տրոցկիստական-զինովյեվական բլոկի քաղաքական ծրագիրը:

Դատարանին տված իր ցուցմունքներում նույնը հաստատեց քարթու տրոցկիստ, դաղտագ հակահեղափոխական Պյատակովը, որը հատկապես դնացել եր արտասահման՝ Ոսլո քաղաքը, Տրոցկուն հանդիպելու և նրանից մանրամասն դիրեկտիվներ ստանալու համար: Իր տված ցուցմունքներում Պյատակովը հաստատեց, որ Տրոցկին պահանջում եր Խորհրդային Միության տրոցկիստական կազմակերպության ամբողջ դիվերսիոն, վնասարարական և տեռորիստական դործունեության ակտիվացում: Ինչպես ցույց տվեց Պյատակովը, Տրոցկին նրա հետ ունեցած դրույցում չեչտել է, որ ոտարերկրյա պետությունների հետ համաձայնության դալու հեռանքով անհրաժեշտ է «նահանջել դեպի կապիտալիզմը»:

Իր հենց այդ ցուցմունքներում Պյատակովը հաստատեց, որ Տրոցկին իրեն անձամբ ասել է հետևյալը.

«Այդ նշանակում է, որ պետք կլինի նահանջել: Այդ պետք է հաստատապես ըմբռնել: Նահանջել դեպի կապիտալիզմը: Թե

վորքան հեռու, ինչ չափով, այժմ դժվար է ասել,— այդ կարելի է կոնկրետացնել միայն իշխանության հասնելուց հետո»:

Ճիշտ նույնպիսի խոստովանություններ արեց նաև մի ուրիշ մոլի տրոցկիստ, յերկերեսանի և զավաճան Սոկոլնիկովը, վորը հաստատեց, վոր տրոցկիստական «զուգահեռ կենտրոնի» ծրագիրը ԽՍՀՄ-ում կապիտալիզմը վերականգնելու ծրագիր եր: Հարցաքննության ժամանակ իր ցուցմունքներում Սոկոլնիկովը հայտարարեց.

«Այդ ծրագիրը նախատեսում եր հրաժարվել ինդուստրացման ու կոլեկտիվացման քաղաքականությունից և, վորպես այդ հրաժարման արդյունք՝ դյուղում մանր տնտեսության հիման վրա կապիտալիզմի վերելք, վորը միացած արդյունաբերության մեջ յեղած կապիտալիստական տարրերի հետ՝ զարգանալով կվերածվեր կապիտալիստական ռեստավրացիայի ԽՍՀՄ-ում:

... Կենտրոնի բոլոր անդամները համամիտ եյին այն բանն ընդունելու, վոր ներկա պայմաններում ուրիշ ծրագիր չի կարող լինել և վոր անհրաժեշտ է կենսագործել բլոկի հենց այդ ծրագիրը»:

Այս է տրոցկիստական քաղաքական այն ծրագիրը, վորի իրագործման համար խորհրդային իշխանության դեմ, խորհրդային ժողովրդի դեմ, սոցիալիզմի դեմ պայքարում եյին դաղանացած տրոցկիստական հակահեղափոխականները, վորոնք աշխատում եյին զվվելի, կեղտոտ, ինչ մեթոդներով ուզում է լինի և ինչ գնով ուզում է լինի հասնել իշխանության: Այդ տրոցկիստական տականքները, հակահեղափոխության կեղտոտ թափթփուկներն ուզում եյին կապիտալիզմի ռեստավրացիայի միջոցով թաղել սոցիալիզմն ու բանվոր դասակարգի նվաճած լուսավոր, ուրախ, յերջանիկ և ունևոր կյանքը: Նրանք ուզում եյին վերացնել տնտեսության սոցիալիստական սիստեմը, սոցիալիստական արդյունաբերությունը, վերացնել կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները:

Կատարելով ֆաշիստական լակեյ Հուդա-Տրոցկու հրամանները՝ «դեպի կապիտալիզմը նահանջելու» անհրաժեշտության մասին, զարշելի տրոցկիստական-ղինովյեվական դահիճները վորձում եյին դեպի հետ շուռ տալ պատմության անիվը: Նրանք ուզում եյին մեր յերկրում բուրժուազիայի իշխանությունը վերադարձնել, ֆաբրիկանտներին, գործարանատերերին, կապիտալիստներին վերադարձնել ֆաբրիկներն ու գործարանները, ուզում եյին կալվածատերերին և կուլակներին դյուղ վերադարձնել:

Կապիտալիզմի ստոր տրոցկիստական-զինովյեվական ռեստավրատորներն ուզում էին մեր յերկրում վերականգնել կապիտալիստական շահագործումն ու տարկությունը, վորոնք լիովին ու ընդմիշտ վերացված են մեր Խորհրդային յերկրում:

ԽՍՀՄ-ում կապիտալիզմը վերականգնելու համար էին պայքարում հայրենիքի դավաճան-տրոցկիստներն ու զինովյեվականները: Հանուն այդ բանի նրանք ծախվեցին ֆաշիստական բուրժուազիային և ձգտում էին իշխանության հասնել:

* * *

Սոցիալիզմի յերկիրը չարամտորեն ատող՝ ֆաշիզմի տրոցկիստական-զինովյեվական վարձկաններն աշխատում էին ամեն զնով, ամեն միջոցներով իրագործել կապիտալիզմը վերականգնելու իրենց ծրագիրը՝ սոցիալիզմի յերկրի դեմ պայքարելիս ոգտագործելով ամենամոլեռանդ մեթոդներն ու ճիզվիտական յեղանակները: Տրոցկիստական անիծված բանդան դաշինք էր կապել սմբողջ աշխարհի աշխատավորության ամենավոխերիմ թշնամիների՝ ֆաշիստների հետ և համաձայնել էր մեր յերկիրն ստրկացնել կապիտալիստական պետություններին:

Արյունարբու ֆաշիստական չուն Տրոցկին՝ «զուլահեռ կենտրոնին» պատկանող մարդասպանների իր բանդայի հետ միասին, պայմանավորվել էր ֆաշիստական կապիտալիստական պետությունների հետ՝ սոցիալիզմի յերկրի դեմ միասնիվ պայքարելու մասին, ռազմական ինտերվենցիայի միջոցով խորհրդային կառավարությունը տապալելու մասին: Հատկապես այդ նպատակի համար Տրոցկին և իր գործակիցները դարձան ֆաշիզմի հավատարիմ ծառաները:

Շայկայի պարագլուխ Տրոցկին այդ մասին գրել է Ռադեկին գրած իր նամակում.

«Անհեթեթություն կլիներ կարծել, թե կարելի է իշխանության գլուխ անցնել առանց կարևորագույն կապիտալիստական կառավարությունների բարյացակամ վերաբերմունքն ապահովելու, հատկապես այնպիսի առավել ագրեսիվների, ինչպիսիներն են Գերմանիայի և Ճապոնիայի ներկայիս կառավարությունները: Միանգամայն անհրաժեշտ է այժմ արդեն այդ կառավարությունների հետ ունենալ կոնտակտ և համաձայնություն...»:

Զգտելով շուտափույթ «կոնտակտ ու համաձայնություն» հաստատել ֆաշիստական կառավարությունների հետ, ստորներից ստորագույն Տրոցկին բանակցությունների մեջ է մտել Հիտլերի

փոխանորդ Հեսսի՝ գերմանական ֆաշիստական կուսակցության ղեկավարի հետ։ Հիտլերյան այդ փոխանորդի հետ Տրոցկին համաձայնություն է կնքել հետևյալ պայմաններով.

«1) յերաշխավորել ընդհանուր բարյացակամ վերաբերմունք դեպի գերմանական կառավարությունը և անհրաժեշտ համագործակցություն նրա հետ միջազգային բնույթ կրող կարևորագույն հարցերում.

2) համաձայնել տերիտորիալ զիջումներ անելու.

3) թույլ տալ, վոր գերմանական ձեռնարկատերերը կոնցեսիաների ձևով (կամ վորևե այլ ձևով) շահագործեն ԽՍՀՄ-ում այնպիսի ձեռնարկություններ, վորոնք տնտեսական անհրաժեշտ լրացում են հանդիսանում Գերմանիայի տնտեսության համար (խոսքը վերաբերում եր յերկաթահանքի, մանգանին, նավթին, վոսկուն, փայտանյութին և այլն).

4) ԽՍՀՄ-ում բարենպաստ պայմաններ ստեղծել գերմանական մասնավոր ձեռնարկությունների գործունեության համար.

5) պատերազմի ժամանակ ակտիվ դիվերսիոն աշխատանք ծավալել ռազմական ձեռնարկություններում և ռազմաճակատում։ Ընդվորում այդ դիվերսիոն աշխատանքը պետք է կատարվի Տրոցկու ցուցումներով՝ համաձայնեցված գերմանական գլխավոր շտաբի հետ»։

Այդ ամենադարշելի, դավաճանական համաձայնությունը գերմանական ֆաշիզմի հետ արդեն կնքել են Տրոցկին և իր ձեռնասունները։ Տրոցկիստների կնքած այս համաձայնությունը գերմանական ֆաշիզմի հետ՝ նշանակում է, վոր ժողովրդի այդ յերբեցս նզովված դավաճաններն ու մատնիչներն ուզում եյին վոչ միայն վերականգնել կապիտալիզմը մեր յերկրում, ուզում եյին վոչ միայն վերականգնել կապիտալիստների ու կալվածատերերի իշխանության տիրապետությունը։

Նրանց՝ տրոցկիստների համար, այդ քիչ է յեղել։

Ամենաստոր հակահեղափոխական Տրոցկու և նրա գործակիցների կնքած գաղտնի համաձայնությունը գերմանական ֆաշիզմի հետ՝ նշանակում է, վոր անարգ թշնամիները վճռել եյին իրագործել կապիտալիզմի վերականգնումը մեր յերկրում ոտարերկրյա կապիտալիստական պետությունների ոգնությամբ, ֆաշիստական ավիացիաների ոգնությամբ։ Խորհրդային ազատ ժողովրդի կողմից ատված ու արհամարհված տրոցկիստական սրիկաները միտք են ունեցել իշխանության գլուխ անցնել ֆաշիստական պետությունների ոգնությամբ։

Այդ պատճառով նրանք դաշնի համաձայնություն են կնքել գերմանական ֆաշիստների հետ, պատրաստվելով առատորեն վճարելու նրանց այդ «ծառայության» համար՝ խորհրդային տերիտորիաներ տրամադրելու միջոցով:

Հենց նույն իր դիրեկտիվ նամակում Տրոցկին, ինչպես ցուցմունք տվեց Ռադեկը, նրան դրել է հետևյալը.

«... Անխուսափելիորեն կարիք կլինի դիմելու տերիտորիալ զիջումների... կարիք կլինի Ճապոնիային զիջել Պրիմորյեն և Պրիամուրյեն, իսկ Գերմանիային՝ Ուկրաինան:

Գերմանիային հարկավոր են հումք, պարենամթերք և սպառման շուկաներ: Մենք ստիպված կլինենք թույլ տալ, որ նա մասնակցի յերկաթահանքի, մանգանի, վոսկու, նավթի, ապատիտների շահագործմանը, և պարտավորվել վորոշ ժամանակով նրան պարենամթերք ու ճարպ մատակարարել համաշխարհային գներից ավելի ցածր գնով:

Մենք ստիպված կլինենք Ճապոնիային զիջել Սախալինի նավթը և ապահովել նրան նավթ մատակարարելը Ամերիկայի դեմ պատերազմելու դեպքում: Մենք պետք է նաև թույլ տանք, որ նա մասնակցի վոսկեհանքերի շահագործմանը: Մենք հարկադրված կլինենք համաձայնել Գերմանիայի պահանջին՝ չդիմադրել նրան Մերձդանուբյան յերկիրներն ու Բալկանները գրավելու գործում և չխանգարել Ճապոնիային՝ Չինաստանը գրավելու գործում...»:

Տրոցկու այս դիրեկտիվներն ու պլանները, ինչպես նաև նրա կնքած դաշնի համաձայնությունները գերմանական ու ճապոնական ֆաշիզմի հետ, ամբողջովին ընդունվել են հակախորհրդային տրոցկիստական «զուգահեռ կենտրոնի» կողմից: Ինչպես յերևում է մեղադրյալների բոլոր ցուցմունքներից, խորհրդային ժողովրդի այդ դաշնացած թշնամիները նախապատրաստում է-ին մեր սոցիալիստական հայրենիքի տերիտորիալ անդամատումը՝ ի հաճույս ամենավայրենի իմպերիալիստական դիշատիչների —ֆաշիստների:

Ֆաշիզմի տրոցկիստական լակեյները՝ ձգտելով իրագործել կապիտալիզմի վերականգնումը մեր յերկրում, ուզում եյին վոչ միայն ներգրավել ռուսերկրյա կապիտալը կոնցեսիաների ձևով, վոչ միայն ճապոնական ու գերմանական կապիտալի ստրկացմանը յենթարկել մեր սոցիալիստական ժողովրդական տնտեսության ամբողջ ճյուղեր, այլ, վոր դլխավորն է, նրանք վորոշել են մեր յերկիրը բաժանել մասերի, Խորհրդային Ուկրաինան դցել ֆա-

շիստական Գերմանիայի ճանկը, ոգնել ճապոնական միլիտարիստներին՝ պոկելու մեր հայրենիքից նրա տերիտորիաներն Արևելքում։ Մեր սոցիալիստական հայրենիքի հանդեպ ամենածանր զեն և դավաճանության այդ հանցավոր պլանի իրագործումն արդեն նախապատրաստվում էր տրոցկիստական բանդիտների արյունոտ ձեռքերով։

Ինչպես հաստատված է, հակահեղափոխական տրոցկիստներզինովյեվականներն արդեն նյութում, գործում էին, աշխատում էին շուտափույթ կերպով իրագործելու իրենց նենգ, դավաճանական պլանները՝ հանուն կապիտալիզմի վերականգնման մեր յերկրում։

Տրոցկիստները դաղտնի բանակցություններ, դաղտնի զրույցներ էին վարում ճապոնական ու գերմանական գլխավոր շտաբների լրտեսների, հակահետախույզների, գործակալների հետ։

Ամեն կերպ ոգտագործելով իրենց պաշտոնական դիրքը՝ յեվված յերկերեսանիներ Պյատակովը, Սոկոլնիկովը, Ռադեկը և մյուսներն անձնական կապեր էին հաստատել գերմանական ու ճապոնական ֆաշիզմի ներկայացուցիչների հետ, վորոնց հետ դաղտնի կերպով բանակցում էին, սիստեմատիկաբար հանդիպում, զրույց էին ունենում, տալիս էին նրանց ռազմական բնույթի դանազան տեղեկություններ և դաղտնի նյութեր։

Տրոցկիստները դարձել են ֆաշիզմի հավատարիմ ծառաները, պատրաստ լինելով մեր յերկիրը մատնելու ֆաշիստական դահիճների թալանին։

* * *

Սակայն մեր յերկրում կապիտալիզմը վերականգնելու համար իշխանության գլուխ անցնելու իրենց գլխավոր հույսերը Տրոցկին ու իր հանցակիցները դնում էին Խորհրդային Միության պարտության վրա՝ իմպերիալիստական պետությունների հետ սպասվող պատերազմում։

Այդ պատճառով Տրոցկին ու իր գործակիցները ֆաշիստական ոտարերկրյա պետությունների հետ վարած իրենց բանակցություններում իրենց ամբողջ հանցավոր գործունեությամբ ձգտում էին արագացնելու այդ կապիտալիստական պետությունների ռազմական հարձակումը Խորհրդային Միության վրա։ Այդ փաստը լիովին հաստատեցին մեղադրյալներն իրենց ցուցմունքներով։

Այսպես, Ռադեկը խոստովանեց, վոր Տրոցկին արտասահմանից իրեն գրել է հետևյալը.

«Պետք է ընդունել, վոր իշխանության հարցն ամենից ուժալ կերպով կծառանա բլոկի առաջ՝ մի այն պատերազմի ժամանակ ԽՍՀՄ-ի պարտություն կրելու հետևանքով։ Բլոկն այդ բանին պետք է յուրանդուն կերպով պատրաստվի... Բանի վոր տրոցկիստների՝ իշխանության հասնելու գլխավոր պայմանը, յեթե նրանց չհաջողվի այդ բանին հասնել տեսորի միջոցով, կարող էր լինել ԽՍՀՄ-ի պարտությունը, հարկավոր է, վորքան այդ հնարավոր է, արագացնել ընդհարումը ԽՍՀՄ-ի ու Գերմանիայի միջև»։

Սհա թե ինչպիսի ցուցումներ էր տալիս կատաղած ֆաշիստական ճիվաղ Տրոցկին, պահանջելով արագացնել ֆաշիստական Գերմանիայի ռազմական հարձակումը Խորհրդային Միության վրա, ձգտելով, վոր այդ պատերազմում մեր Խորհրդային յերկիրը պարտություն կրի։ Այդ ճանապարհն էր ընտրել ֆաշիզմի ատոր լակեյներից ատորադույնը, վորպեսզի իրագործի կապիտալիզմի վերականգնումը մեր յերկրում։

Խորհրդային յերկրի վրա ֆաշիզմի ռազմական հարձակումն արագացնելու և Խորհրդային Միության պարտությունը նախապատրաստելու այդ հրեշավոր տրոցկիստական պլանն ամբողջովին ընդունվել էր հակախորհրդային տրոցկիստական «զուգահեռ կենտրոնի» կողմից։

Իրենց չայկայի պարագլուխ Տրոցկու դիրեկտիվները կատարելով, տրոցկիստական «զուգահեռ կենտրոնի» պրովոկատորները՝ Ռադեկը, Սոկոլնիկովը, Պյատակովը և մյուսները ծավալել էին տեռորիստական, վնասարարական, դիվերսիոն, լրտեսական գործունեություն՝ նպատակ դնելով խախտել մեր Խորհրդային յերկրի տնտեսական ու ռազմական հզորությունը։ Նախապատրաստելով Խորհրդային Միության ռազմական պարտությունը, տրոցկիստներն արդեն մի շարք պետական ամենածանրագույն հանցագործություններ են կատարել սոցիալիստական հայրենիքի հանդեպ։

Հակախորհրդային տրոցկիստական «զուգահեռ կենտրոնի» բոլոր մասնակիցներն անմիջականորեն կապվել էին գերմանական ու ճապոնական հետախուզական որդանների լրտեսների, վնասարարների ու դիվերսանտների հետ։ Նրանք սիստեմատիկաբար լրտեսությամբ են զբաղվել՝ հոգուտ ֆաշիստական Գերմանիայի ու Ճապոնիայի, վնասարարական ու դիվերսիոն քայքայիչ

գործողություններ են կատարել, պայթյուններ ու ավերածություններ են առաջացրել մեր սոցիալիստական ինդուստրիայի կարևորագույն ձեռնարկություններում, սոցիալիստական յերկաթուղային տրանսպորտում, հատկապես այն ֆաբրիկաներում ու գործարաններում, որոնք պաշտպանական նշանակություն ունեն:

Հաստատված է, որ հենց այդպիսի ճանապարհով հայրենիքի անիծված դավաճանների, դիվերսանտների, լրտեսների, մարդասպանների տրոցկիստական վոհմակն աշխատում եր ի կատար ածել այն բոլորը, ինչ որ նա խոստացել եր իր ֆաշիստ տերերին: Զգտելով տապալել խորհրդային իշխանությունը, աշխատելով հասնել կապիտալիզմի վերականգնմանը մեր յերկրում՝ ֆաշիստական գործակալ-տրոցկիստները պատրաստում եյին մեր յերկրի վրա ռազմական հարձակման արդյունքը և նրա ռազմական պարտությունը:

Ժողովրդի մոլի թշնամի տրոցկիստ Պյատակովը դատական հետաքննության ժամանակ խոստովանեց.

«Ցես հանձնարարել եյի իմ մարդկանց (և ինքս ել անում եյի այդ) իրենց վնասարարական աշխատանքում բաժան-բաժան չլինել, իրենց ուշադրությունը կենտրոնացնել արդյունաբերության հիմնական խոշոր այն օբյեկտների վրա, որոնք պաշտպանական և համամիութենական նշանակություն ունեն: Այդ կետում յես գործում եյի Տրոցկու դիրեկտիվի համաձայն.

«Զգալի հարվածները հասցնել ամենից ավելի զգայուն տեղերին»:

Տրոցկիստական շների վոհմակն այդ վնասարարական աշխատանքը կատարում եր իրականում, կատարում եր պրոֆեսիոնալ մարդասպանների սառնասրտությամբ ու դաժանությամբ: Կեմերովոյի հանքարանում տրոցկիստական մարդասպաններն ու դիվերսանտները կազմակերպեցին «Ցենտրալնայա» հանքահորի պայթյունը, որի հետևանքով թափվեց մեր խորհրդային բանվորների արյունը: Տրոցկիստական վնասարարները յերեք դիվերսիոն պակտ են կազմակերպել Դոնբասում՝ Գորլովկի ազոտային պարարանյութերի կոմբինատում: Տրոցկիստական անզգամների կատարած այդ քայքայիչ գործողություններն ևս տվին մարդկային զոհեր, բանվորների կորուստ և ահագին նյութական վնաս պատճառեցին պրոլետարական մեր պետությանը:

Ինչպես պարզվեց դատական հետաքննությամբ և հաստատվեց դատավարության ժամանակ, տրոցկիստական սրիկաներն ամե-

նից աչքի ակտիվ դիվերսիոն վնասարարական աշխատանք էին ծավալել պաշտպանական նշանակություն ունեցող ձեռնարկություններում և երկաթուղային տրանսպորտում։ Մեղադրյալներ Լիվշիցն ու Կնյազեվը և տրոցկիստական մյուս դիվերսանտները կազմակերպել և իրագործել են գնացքների՝ խորտակումներ՝ հատկապես զինվորական շարժակազմերի խորտակումներ։ Այդ խորտակումների ժամանակ մեծ թվով մարդկային զոհեր են եղել։

Մեղադրյալ տրոցկիստ հակահեղափոխական Կնյազեվը բազմաթիվ գնացքների խորտակումներ է կազմակերպել վոչ միայն երկաթուղային տրանսպորտում դիվերսիոն-վնասարարական աշխատանքի ղեկավար տրոցկիստ Լիվշիցի ցուցումներով, այլ նաև ճապոնական հետախուզության անմիջական հանձնարարություններով։ Կնյազեվն ինքը խոստովանեց իր ցուցմունքներում.

«Իսկ ինչ վերաբերում է լրտեսական աշխատանքին և զինվորական գնացքների՝ մարդկային զոհեր առաջացնող խորտակումներ կազմակերպելու միջոցով Կարմիր բանակին հարվածհասցնելուն, ապա յես այդ աշխատանքին ձեռնամուխ եղա միայն այն ժամանակ, երբ պարզեցի տրոցկիստական կազմակերպության վերաբերմունքը դեպի լրտեսությունն ու դիվերսիոն աշխատանքը Կարմիր բանակում՝ հոգուտ ճապոնական հետախուզության»։

Հենց նույն այդ տրոցկիստական դիվերսանտը միևնույն տեղում ցուցմունք տվեց.

«Առաջադրանքի այն մասը, վոր վերաբերում եր տրանսպորտում դիվերսիոն-վնասարարական աշխատանք ծավալելուն և գնացքների խորտակումներ կազմակերպելուն, յես լիովին կատարել եմ, վորովհետև այդ հարցում ճապոնական հետախուզության առաջադրանքը միանգամայն համապատասխանում եր այն առաջադրանքին, վոր քիչ առաջ յես ստացել եյի տրոցկիստական կազմակերպությունից»։

Տրոցկիստական լրտեսների ու դիվերսանտների դավաճանական վոհմակն արդեն իրականում գործակցում եր ռուսերկրյա ֆաշիստական հետախուզությունների գործակալների հետ և ամեն կերպ ողնում եր նրանց, կազմակերպելով բանվորների ու կարմիրբանակայինների սպանություններ, առաջացնելով գնացքների խորտակումներ, մեր սոցիալիստական ձեռնարկությունների պայթեցումներ ու հրկիզումներ։ Ֆաշիստական ագրեսորների տրոցկիստական դաշնակիցներն ու աջակիցներն ամեն բանի դիմում

Եյին, վորպեսզի նախապատրաստեն Խորհրդային յերկրի պարտությունը և դրանով իսկ հասնեն կապիտալիզմի վերականգնման արագացմանը:

* * *

Զգտելով շուտափույթ կերպով թուլացնելու Խորհրդային յերկրի ռազմական ու տնտեսական հզորությունը՝ հակահեղափոխական տրոցկիստական հրեշները պայքարի վոչ մի ամենազզրելի, ամենասոսկալի միջոցներից չեյին խորշում, կատարում եյին ամենահրեշավոր վոճրագործությունները բանվոր դասակարգի դեմ, թունավորում և սպանում եյին բանվորներին՝ աշխատելով իրենց կեղտոտ պրովոկացիայով աշխատավոր մասսաների դժգոհությունն առաջացնել խորհրդային իշխանության դեմ: Հենց այդ պատճառով տրոցկիստները գիտակցաբար դիմում եյին բազմաթիվ մարդկային զոհերի, բանվորների սպանությունների ու թունավորումների: Ժողովրդի տրոցկիստական թշնամիներն այդ առթիվ իրենք ցինիկաբար հայտարարում եյին.

«Նույնիսկ ավելի լավ է, յեթե զոհեր լինեն հանքահորում, քանի վոր դրանք, անկասկած, դայրույթ կառաջացնեն բանվորների մեջ, իսկ մեզ այդ ել հենց հարկավոր է»:

Տրոցկիստական շները, Ֆաշիզմի ստոր լակեյներն իրենց չարակամության մեջ այնքան ցած եյին գլորվել, վոր իրենց ձեռնասուններին տալիս եյին ամենահրեշավոր առաջադրանքներ, վորոնք ուղղված եյին աշխատավորների ֆիզիկական վոչնչացման նպատակին: Սոցիալիզմի դեմ, խորհրդային ժողովրդի դեմ ուղղված իրենց տեսությունից դրդված՝ տրոցկիստները պատրաստում եյին բանվորների և կարմիր-բանակայինների մասսայական թունավորումներ: Յեվ նրանք արդեն ի կատար եյին ածում ճապոնական հետախուզության գործակալներից ստացած նման չարագործ հակահեղափոխական առաջադրանքներ:

Ահա թե ինչ հաղորդեցին այդ մասին իրենք՝ մեղադրյալ հակահեղափոխական տրոցկիստներն իրենց ցուցմունքներում.

«... Ճապոնական հետախուզությունն առանձնապես խիստ կերպով ել դնում պատերազմի մոմենտին բակտերիոլոգիական մեջոցներ գործադրելու հարցը՝ զորքի փոխադրման համար տրամադրվող գնացքները, ինչպես նաև սնման ու սանիտարական ապահովման կետերը սուր վարակիչ բակտերիաներով վարակելու նպատակով...»:

Այդպիսի հրեշային գավաճանական աշխատանք՝ հոգուտ

ֆաշիստական պետությունների, արդեն կատարում էին հայրենիքի տրոցկիստական դավաճանները։

Դատարանը հաստատեց, վոր ֆաշիստական ռազմական հարձակումը մեր յերկրի վրա շտապեցնելու և մեր յերկրի պարտությունն արագացնելու համար տրոցկիստական «զուգահեռ կենտրոնը» սիստեմատիկ լրտեսություն և կազմակերպել հոգուտ ռտարերկրյա ֆաշիստական հետախուզությունների։ Տրոցկիստական լրտեսները սիստեմատիկաբար ֆաշիստական հետախուզություններին մատակարարել են գաղտնի տեղեկություններ մեր ձեռնարկությունների տեխնիկական վիճակի, մեր յերկաթուղիների մոբիլիզացիոն պատրաստականության, ռազմական փոխադրումների, մեր քիմիական գործարանների դրության ու աշխատանքի մասին։

Վնասարարությունն ու դիվերսիան, սպանություններն ու լրտեսությունը սոցիալիստական պետության դեմ պայքարելու սովորական միջոցներ էին, վոր կիրառում էին տրոցկիստական դավաճաններն ու վարձկան մատնիչները։ Մոլի տրոցկիստ-յերկերեսանի, դերմանական լրտես Ռատայչակն իր կապը դերմանական հետախուզության հետ իրագործում եր «Լինդե» ֆիրմայի մոնտյոր—վոմն Լենցի միջոցով։ Լրտես Ռատայչակն այդ դերմանական ֆաշիստական հետախուզին տվել է հետևյալ նյութերը.

«1) տվյալներ 1934 թվականին Միության բոլոր քիմիական ձեռնարկություններում մշակված արտադրանքի մասին.

2) Միության բոլոր քիմիական ձեռնարկությունների 1935 թվականի աշխատանքի ծրագիրը.

3) Ազոտային այն կոմբինատների շինարարության պլանը, վորի մեջ նախատեսված էին շինարարական աշխատանքներ՝ մինչև 1938 թվականը ներառյալ»։

Մեր ռազմա-քիմիական գործարանների աշխատանքի մասին նույնպիսի գաղտնի նյութեր Ռատայչակը սիստեմատիկաբար մատակարարում եր դերմանական ֆաշիստական հետախուզությանը։ Հոգուտ ռտարերկրյա ֆաշիստական հետախուզությունների նույնպիսի լրտեսական աշխատանք են տարել նաև մյուս հակահեղափոխական տրոցկիստները, վորոնք բռնված են ֆաշիստական հետախույզների հետ հանցագործ լրտեսական կապ ունենալու մեջ։

Փաստեր են հաստատված, վորոնք ճշտում են տրոցկիստների ակտիվ լրտեսական գործունեությունը հոգուտ դեր-

մանական ֆաշիստական հետախուզության, ինչպես նաև հավատված են նրանց ունեցած կապերը գերմանական վորոշ կապիտալիստական ֆիրմաների հետ: Փաստեր են հավաստված, վորոնք հաստատում են, վոր Տրոցկու և գերմանական վորոշ ֆիրմաների միջև համաձայնություն է կնքվել այն մասին, վորպեսզի այդ ֆիրմաները տրոցկիստներին դրամական դումարներ վճարեն այն ֆոնդի հաշվին, վորն ստեղծվում էր Գերմանիայում գնվող ապրանքների գներին վրադրումներ անելու միջոցով:

Այդ բանը խոստովանեց մեղադրյալ Պյատակովը, վորն, իր ժամանակին աշխատում էր ավելի շատ պատվերներ տալ (և իրոք այդ կենսագործում էր) գերմանական «Դիմադ» և «Բորսիգ» ֆիրմաներին, վորոնց ներկայացուցիչների հետ Տրոցկին կապեր ուներ և պայմանավորվել էր այդ կապիտալիստների հետ, վոր նրանք դրամական մուծումներն անեն տրոցկիստական դրամարկղը: Այդպիսով գողացված խորհրդային փողերով Պյատակովը ֆինանսավորում էր Տրոցկու և հակախորհրդային «զուդահեռ կենտրոնին» պատկանող նրա ձեռնասունների հակահեղափոխական գործելի աշխատանքը:

Դատնալով արյունարբու ֆաշիզմի վարձկան աջակիցներ, տրոցկիստական բանդիտները դարձան նրա հավատարիմ պահապան շները, վորոնք լիզում են իրենց ֆաշիստ տերերի կոշիկները: Զգտելով վերականգնելու կապիտալիզմը մեր յերկրում, տրոցկիստական դավաճանները հույս էին դրել պատերազմի արագացման և մեր սոցիալիստական հայրենիքի ռազմական պարտության վրա:

* * *

Խորհրդային կառավարությունը տապալելու և մեր յերկրում կապիտալիզմը վերականգնելու համար իշխանությունը գրավելու իրենց պլանների իրագործմանը ձգտելով՝ Տրոցկին և «զուդահեռ կենտրոնին» պատկանող նրա ոգնականները հսկայական ուշադրություն էին կենտրոնացրել մեր բոլշևիկյան կուսակցության և խորհրդային կառավարության ղեկավարների դեմ տեռորիստական ակտեր նախապատրաստելու վրա: «Զուդահեռ կենտրոնն» արդեն կազմակերպել էր մի շարք տեռորիստական խմբեր յերկրի մի քանի քաղաքներում ու կենտրոններում: Այդ բանը խոստովանեցին իրենք մեղադրյալները՝ տեռորիստական ակտերի տրոցկիստական կազմակերպիչներն ու մասնակիցները:

Ռադեկն իր ցուցմունքներում խոստովանեց, վոր Տրոցկին

համառ և խիստ կերպով պահանջում եր «կազմակերպել հուսալի մարդկանց նեղ կոլեկտիվ՝ Համկ(բ)կ ղեկավարների, առաջին հերթին Ստալինի դեմ տեռորիստական մահափորձեր կատարելու համար»:

Նույն բանը հաստատեց նաև Պյատակովը, վորը ցուցմունք տվեց, վոր դեռևս 1935 թվին՝ արտասահմանում իր հետ ունեցած հանդիպման ժամանակ անձնական զրույցում Տրոցկին ասել է.

«Հասկացեք, վոր առանց տեռորիստական ակտերի մի ամբողջ սերիայի, վորը պետք է հնարավորին չափ շուտ կատարել, չի կարելի ստալինյան կառավարությունը տապալել: Պետք է պայքարն ել ավելի սրել, ել ավելի ընդարձակել: Հարկավոր է, տատացիորեն, վոչ մի բանի առաջ կանգ չառնել՝ Ստալինին տապալելու համար»:

Այսպես զաղրելի, սատանա կորած Հուդա–Տրոցկու կողմից հրահանգված նրա վիժվածքները կազմակերպեցին սոցիալիստական հեղափոխության բոցաշունչ ժողովրդական տրիբունի, պայծառ, մաքուր, կոմունիզմին անսահման նվիրված Սերգեյ Միրոնովիչ Կիրովի սպանությունը: Աշխատելով դուր դալ իրենց ֆաշիստական տերերին՝ տրոցկիստական ճիվաղները մահափորձ եյին պատրաստում համաշխարհային պրոլետարիատի սիրելի և մեծ առաջնորդ՝ հարազատ ընկեր Ստալինի և նրա մերձավորագույն զինակիցների դեմ: Տրոցկիստական հրեշները մահափորձ կազմակերպեցին ընկեր Վ. Մ. Մոլոտովի դեմ, յերբ նա ուղևորվել եր Կուզբաս:

Կատաղած տրոցկիստական հրեշ բանդիտներն իրենց ձեռքերը ներկեցին բանվորների ու կարմիր–բանակայինների արյունով, վորոնք դոհվեցին տրոցկիստների կազմակերպած պայթյունների ժամանակ մեր սոցիալիստական ձեռնարկություններում և գնացքների խորտակման ժամանակ մեր սոցիալիստական յերկաթուղային տրանսպորտում:

Սրանք են անարդ ֆաշիստական լակեյների, հայրենիքի տրոցկիստական–դավաճանների, ժողովրդի և սոցիալիզմի թշնամիների հակահեղափոխական գործունեության հավաստված փաստերը: Բոլշևիկյան կուսակցության և խորհրդային իշխանության դեմ իրենց մղած յերկարատև պայքարում վերջնականապես լիակատար պարտություն կրելով ու ջախջախվելով, մեր յերկրում սոցիալիզմի լիակատար հաղթանակի հետևանքով կորցնելով ժողովրդական զանգվածների վորևե աջակցություն, ընդհանուր տարդանքով և աշխատավորության խիստ զայրույթով նշավակ-

ված, տրոցկիստական մարդասպաններն ու լրտեսները հայրենիքի հանդեպ ծանրագույն հանցագործություն էին կատարում՝ աշխատելով իրենց հակահեղափոխական դավաճանական գործունեությունները նախապատրաստել ֆաշիզմի արագացրած հարձակումը և սոցիալիստական հայրենիքի ռազմական պարտությունը, վերջապես մեր երկրում վերականգնեն կապիտալիզմը և բուրժուական իշխանության տիրապետությունը:

Տրոցկիստական Հերովդեսների շայկայի կատարած ծանրագույն վոճիրները յուրաքանչյուր աշխատավորի ահեղ ցասումն են առաջացնում: Զզվելիագույն տրոցկիստական յերկիրբեսանիների՝ Գյատակովի, Ռադեկի, Սոկոլնիկովի, Սերեբրյակովի, Մուրալովի և հակախորհրդային «զուդահեռ կենտրոնին» պատկանող նրանց բոլոր ձեռնասունների չարամիտ ստորության ու նենգության առջև նսեմանում են պրովոկատոր Ազեֆների, Մալինովսկիների և միլիցադարյան ճիզվիտների ու մատնիչների նշանավոր կերպարանքները:

Խորհրդային մեծ Միության ժողովուրդները ցասումով պահանջեցին արժանի պատիժ, ահեղ հատուցում տրոցկիստական մոլի սրիկաներին: Պրոլետարական արդարադատության արդարացի, պատժիչ սուրը կկոչնչացնի Խորհրդային յերկրի յերեսից բոլոր տրոցկիստական յերիցս արհամարհված լրտեսներին, դիվերսանտներին ու մարդասպաններին: Պրոլետարական դատարանի պատժող ձեռքը կզտնի և ըստ արժանույն կպատժի տրոցկիստական բանդայի՝ զերմանական ու ճապոնական ֆաշիստական ուժերի անմիջական գործակալության թաղնված աջ գործակիցներին ու դաշնակիցներին:

Մեր խորհրդային ժողովուրդն անսահմանորեն սիրում է իր դեղեցիկ հայրենիքը՝ ամբողջ աշխարհի աշխատավորների հայրենիքը: Խորհրդային Միության աշխատավորները Լենինի—Ստալինի կուսակցության և խորհրդային կառավարության առաջին իսկ կոչով պատրաստ են պաշտպանելու իրենց սոցիալիստական հայրենիքն ու ամբողջապես ջախջախել ամեն մի թշնամու, յեթե նա համարձակվի հարձակվել մեր հայրենիքի վրա:

Մեր կուսակցությունն ու ամբողջ մեր հզոր խորհրդային ժողովուրդն ե՛լ ավելի կրարձրացնեն Մարքսի—Ենգելսի—Լենինի—Ստալինի մեծ, անհաղթելի դրոշը, ե՛լ ավելի ամուր ու սերտ կերպով կհամախմբվեն սիրելի ուսուցիչ, հարազատ առաջնորդ՝ ընկեր Ստալինի շուրջը, վորը մեզ առաջնորդում է դեպի կոմունիզմի նորանոր հաղթանակներ: Կուսակցական մասսաներն ե՛լ

ավելի կբարձրացնեն իրենց հեղափոխական, բոլշևիկյան զգոնությունը, իրենց յերկաթե կարգապահությունը, և՛ լ ավելի ուժեղ կերպով կամրացնեն իրենց բոլշևիկյան միասնությունն ու համախմբվածությունը մեծ Ստալինի շուրջը: Մեր խմաստուն առաջնորդ ընկեր Ստալինի հանճարեղ ղեկավարությամբ մենք կհասնենք կոմունիզմի վերջնական հաղթանակին մեր յերկրում և ամբողջ աշխարհում:

«Партийное строительство», № 3, 1 փետրվարի 1937 թ.

ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՃԻՌԸ ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆՆ Է

Հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի դատավարությունը վերջացավ։ ԽՍՀՄ-ի Գերագույն դատարանի Զինվորական կոլեգիան 17 մեղադրյալ տրոցկիստական լրտեսների, դիվերսանտների և մարդասպանների յերիցս արժանի դատավճիռը կայացրեց՝ խորհրդային ժողովրդի հանդեպ նրանցից յուրաքանչյուրի հանցանքի չափին համապատասխան։ Նրանք դավաճանել եյին հայրենիքին։ Իսկ ԽՍՀՄ-ի Սահմանադրության համաձայն չկա ավելի ծանր հանցագործություն, քան պետական դավաճանությունը։ «Հայրենիքին դավաճանելը — յերդումը խախտելը, թշնամու կողմն անցնելը, պետության ռազմական հզորությանը վնաս հասցնելը, լրտեսությունը պատժվում են որենքի ամբողջ խստությամբ, վորպես ամենածանր չարագործություն»։

Մեղադրյալների մեծամասնությունը կատարել է ամենածանր չարագործությունների այդ ամբողջ շրջանը։ Յեվ ահա հասավ ստորներից ստորագույնների հատուցման ժամը՝ Խորհրդային յերկրի ժողովուրդների հանդեպ կատարած նրանց բոլոր արյունալի վոճրագործությունների համար, այն է՝ հայրենիքի դավաճանության և ԽՍՀՄ-ի դեմ պատերազմի պրովոկացիա նյութելու համար, դերդավաճանության և նենգության համար, սոցիալիստական ձեռնարկություններն այրելու, պայթեցնելու և գնացքները խորտակելու համար, վնասարարության ու տեռորի համար, բանվորների, կարմիր-բանակայինների ու յերեխաների՝ նրանց ձեռքով թափած արյան համար։

Մեղադրյալներից տասներեքը, վորպես այդ հանցագործությունների կազմակերպիչներ ու անմիջական կատարողներ, դատապարտված են քրեական պատժի բարձրագույն չափին՝ գնդակահարության։ Սոլոնևիկովին ու Իսաղեկին՝ «վորպես հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի անդամների, վորոնք պատասխանատվություն են կրում այդ կենտրոնի հանցավոր գոր-

ծունեության համար, բայց անմիջական մասնակցություն չեն ունեցել դիվերսիոն-վնասարարական, լրտեսական ու տեռորիստական ակտերի կազմակերպման ու իրագործման վերաբերող գործունեության մեջ, յուրաքանչյուրին 10 տարի ժամանակով բանտարկության յենթարկել». Արնոլդին յենթարկել 10 տարվա բանտարկության. Ստրոյիլովին՝ 8 տարվա բանտարկության:

Գերագույն դատարանի ընդունած դատավճիռը տրոցկիստական շայկայի վերաբերմամբ—այդ ամբողջ խորհրդային ժողովրդի դատավճիռն է, այդ ժողովրդի կամքն ու ցասումն է, վոր նա արտահայտեց դատավարության բոլոր որերի ընթացքում: Հենց վոր հայտնի դարձան տրոցկիստական սրիկաների բոլոր չարագործությունները, հենց վոր ժողովրդի ամենալավներիմ թշնամի Տրոցկու բանդայի հրեշավոր վոճրագործությունների կծիկն սկսեց բացվել, ամբողջ Խորհրդային յերկրում հնչեց միլիոնավոր բանվորների, կոլտնտեսականների, կարմիր-բանակայինների, ինտելիգենցիայի ձայնը՝ ժողովրդի ձայնը, վորը պահանջում էր վոչնչացնել ու անվնաս դարձնել կապիտալիզմի կատաղած շներն տրոցկիստական վոհմակին:

Խորհրդային ժողովրդի անունով դատավճիռ է հանված վոչ միայն տրոցկիստական ավազակային շայկայի դեներալների ու սպաների վերաբերմամբ: Մահվան դատավճիռ է հանված տրոցկիզմի վերաբերմամբ, վորը յերկար տարիներ, թե՛ մինչև սոցիալիստական հեղափոխության հաղթանակը ԽՍՀՄ-ում և թե՛ նրանից հետո շարունակ բանվոր դասակարգին դավաճանելու, ժողովրդի շահերին դավաճանելու, սոցիալիզմի գործին դավաճանելու կենտրոն է յեղել: Հուդա—սև դավաճանության այս համանունը Լենինը դրոշմել է՝ ինչպես խարան՝ Տրոցկու ճակատին քառորդ դարից ավելի առաջ:

Այն ժամանակից ի վեր Հուդայի դրոշմը քանի գնում, այնքան ավելի ցայտուն ու վորոշակի կերպով է յերևում Տրոցկու և նրա համախոհների գործերի վրա: Նրանք սկսեցին վորպես բուրժուական ազդեցությունը պրոլետարիատի վրա անցկացնող գործակալներ: Նրանք, Տրոցկին ու տրոցկիստները, անցան բանվոր դասակարգի նկատմամբ կատարվող պրովոկացիաների ու դավաճանությունների յերկար ուղին—թե՛ 1905 թ. հեղափոխության ժամանակ, թե՛ ինքնակալական ռեակցիայի մռայլ տարիներին, թե՛ այն ժամանակ, յերբ Ռուսաստանում բանվորական շարժման նոր վերելք սկսվեց, և թե՛ յերիտասարդ Խորհրդային պետության՝ իր կյանքի, ամրացման ու զարգացման համար մղած

մարտերի տարիներին։ Բոլոր այդ ժամանակաշրջաններում տրոցկիզմը քանի գնում այնքան ավելի վորոշակիորեն ու լիտիբաբ դառնում է հակապրոլետարական ուժերի արտահայտություն՝ վերջին տարիներս դառնալով ֆաշիզմի անմիջական գործակալություն, նոր համաշխարհային պատերազմի ամենազզվելի պրովոկատորների ու հրձիգների դրոշ։

Վորքան ավելի աճում ու բազմանում էին սոցիալիզմի հաղթանակները ԽՍՀՄ-ում, այնքան ավելի չար, այնքան ավելի կատաղի էին դառնում հակահեղափոխության տրոցկիստական շները։ Ցեվ վերջացած դատավարության ժամանակ ամբողջ աշխարհի առաջ յերևան յեկան վոչ միայն անուղղելի տրոցկիստական լրտեսները, վնասարարները ու մարդասպանները, այլ և յերևան յեկավ տրոցկիզմի կենդանի դիակը, մերկ ու դիմակազերծ, վորի յեռեռը վոչինչ չկա և չի կարող լինել, բացի մարդկային ամենագարշելի տականքներից, բացի պատերազմի ճապոնական ու գերմանական հրձիգների ամենասանձարձակ ուժերից։ Տրոցկիզմը ջարդված և սպանված է մեր յերկրում, և ի դեմս տրոցկիստական կենտրոնի մասնակիցների գերեզման կիջնեն տրոցկիստական շայկայի պարագլուխները ԽՍՀՄ-ում։ Հուզա-Տրոցկին՝ խորհրդային ժողովրդի և ամբողջ աշխատավոր մարդկության ամենավոխերիմ թշնամին, գերմանական ու ճապոնական փողերով դեռ հյուսում է դավաճանությունների, պրովոկացիաների, լրտեսության թակարդները, բայց տրոցկիզմն արդեն մեռած է։

Տրոցկիստական ամբողջ աղտեղությունից զեղեցիկ Խորհրդային յերկիրը մաքրում է Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատն իր նոր, պանծալի զեկավար, ամրակուռ բոլշևիկ ընկեր Ցեժովի դլխավորությամբ։ Մաքրում է և կմաքրի մինչև վերջը։ Կարելի յե չկասկածել, վոր վոչ մի հակահեղափոխական ճիվաղ՝ տրոցկիստական, աջ կամ մի վորևե այլ յերանգի՝ չի պրծնի խորհրդային արդարադատությունից։

Տրոցկիստական կենտրոնի դատավարությունը մի անդամ ել ցույց տվեց, թե վորքան անհրաժեշտ է մեծագույն զգոնությունն այժմ՝ պատերազմների նախադռանը, վոր պատրաստում, նյութում են իմպերիալիստները։ Ժողովրդի թշնամիները՝ Տրոցկին և լրտեսների ու մարդասպանների իր վոհմակը գերմանական ու ճապոնական տերերի առաջադրանքով մտադրվում էին հենց պատերազմի սկզբին ծավալել առավել սուր քայքայիչ, դիվերսիոն

գործունեությունն՝ հատկապես պաշտպանական արդյունաբերության ու տրանսպորտի մեջ։ Զուր չէ, վոր մինչև դատավճիռը գերմանական ու ճապոնական ֆաշիզմի մամուլն աղաղակում և դրպարտում է դատավարության առթիվ. չէ՞ վոր տրոցկիստական բանդայի բռնվելը գրկեց նրանց հետախույզների, լրտեսների, դիվերսանտների, պրովոկատորների և նոր արյունալի իմպերիալիստական սպանդ սարքողների կարևորագույն ջոկատից։

ԽՍՀՄ-ի աշխատավոր մասսաները միահամուռ կերպով հավանություն կտան Գերագույն դատարանի դատավճռին, վորն ամբողջ խորհրդային ժողովրդի կամքի ու ցանկությունների արտահայտությունն է։ Մասսաների այդ միահամուռ հավանությունը պարզորոշ կերպով յերևում է այն արձագանքներից, վոր տվին գիշերային հերթափոխության բանվորները, վորոնց արագ կերպով հասավ դատավճռի լուրը։ ԽՍՀՄ-ի հզորությունը քայքայելու վերաբերյալ տրոցկիստների դրվելի չարագործությունները մասսաները պատասխանում են և կպատասխանեն շատ արագ կերպով վերացնելով տրոցկիստական վնասարարության հետևանքները, ժողովրդական տնտեսության նոր ավելի մեծ վերելքով, աշխատանքի արտադրողականության նոր ռեկորդներով, սոցիալիստական մրցման նոր, ե՛լ ավելի լայն թափով։

Տրոցկիստական վոհմակը՝ իր ֆաշիստ տերերի որհնությամբ՝ ուզում էր սպանել խորհրդային ժողովրդի առաջնորդներին, վորպեսզի սպանի սոցիալիզմը։ Խորհրդային ժողովուրդն այդ դիտավորություններին պատասխանում է ավելի սերտ կերպով համախմբվելով Լենինի—Ստալինի մեր կուսակցության շուրջը, մեր կուսակցության Կենտրոնական կոմիտեի շուրջը, վոր ղեկավարում է ընկեր Ստալինը, վորը հասցրեց հայրենիքը սոցիալիզմի հաղթանակին։ Այդ հաղթանակը նվաճված է ընդմիշտ. չկա և չի լինի այն ուժը, վոր կարողանար ընկճել ԽՍՀՄ-ի ժողովուրդներին, խորտակել սոցիալիզմը ԽՍՀՄ-ում, շուռ տալ մեր յերկիրն ու մեր ժողովրդին դեպի հետ՝ դեպի կապիտալիզմը։

Իմպերիալիստ-ագրեսորների դեմ մղելիք ապագա մարտերում ամբողջ խորհրդային ժողովուրդը, սոցիալիստական հայրենիքի հայրենասերների ժողովուրդը վոտքի կկանգնի պաշտպանելու իր նվաճումները, իր հողը, իր համաժողովրդական ունեցվածքը, պատմության մեջ առաջին անգամ ձեռք բերած իր յերջանկությունը։ Այդ զգացմունքներն ու հայրենիքը պաշտպանելու պատրաստակամությունը լավ և պարզ կերպով արտահայտեցին Գոր-

բունովի անվան զորամասի բանվորները։ Նրանք լրենց բանաձևում ասացին.

«Արյունով ձեռք բերված մեր նվաճումները մեղանից վոչ վոք և վոչ մի ժամանակ չի կարող խլել։ Մենք մի մարդու պես վոտքի կեցնենք պաշտպանելու հայրենիքը, յեթե թշնամին հարձակում գործելու լինի մեզ վրա, և նա կջարդվի, վորովհետև սոցիալիզմի յերկրի ժողովուրդներն անհաղթելի յեն»։

Վորպեսզի աճի ու ամրապնդվի ԽՍՀՄ-ի հզորությունը, վորպեսզի ամբողջովին ապահովված լինի մեր հաղթանակը, վորպեսզի սոցիալիստական ժողովրդական տնտեսությունը, մեր առաջնորդներին, մեր բանվորներին, կարմիր-բանակայիններին և յերեխաներին պաշտպանենք թաղնված տրոցկիստական, ֆաշիստական զազրելի արարածների խայթումներից,—վստահելի միջոցն է՝ քաշել-հանել այդ զազրելի արարածների խայթոցը։ Տրոցկիստական ստոր գործերի պարագլուխների ու վարպետների թունավոր խայթոցները ԽՍՀՄ-ում հանված են Գերագույն դատարանի Զինվորական կոլեգիայի դատավճռով։ Բայց դեռ իր ստորագույն աշխատանքը կատարում է արյունարբու ֆաշիստական շուն, ԽՍՀՄ-ի ժողովրդի և ամբողջ մարդկության թշնամի՝ Հուդա-Տրոցկին։ Նա պատերազմի ջահը ձեռքին դեռևս սուրում է աշխարհում՝ նյութելով ու նախապատրաստելով նոր պատերազմներ, հարյուր հազարավոր մարդկանց վոչնչացումն այդ պատերազմներում։

Անկեղծորեն խաղաղություն ցանկացող պետությունների շահերը, առաջավոր ու պրոլետարական ամբողջ մարդկության շահերը պահանջում են վճռականորեն դադարեցնել Տրոցկու այդ հրձիգային, չարագործ գործունեությունը։ Ժողովուրդների միջև խաղաղություն պահպանելու համար հարկավոր է ամբողջ աշխարհում վերջ տալ տրոցկիզմին ու ֆաշիզմին, վորոնք պատերազմի թունավոր սերմեր են ցանում։

«Правда», 30 հունվարի 1937 թ.

ՅԵՐԿԻՐԸ ՎՈՂՋՈՒՆՈՒՄ Է ԱՐԴԱՐ ԴԱՏԱՎՃԻՌԸ

Ամբողջ յերկիրը լարված ուշադրությամբ հետևում եր հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի դատավարությանը: Մեղադրական յեզրակացությունը, դատական հաշվետվությունը, վորն ամեն որ հրապարակվում եր մեր մամուլում, պետական մեղադրողի և դատապաշտպանների ճառերը — այդ ամենը քննարկվում եյին Խորհրդային Միության բոլոր անկյուններում: Ցեվ ընկեր Վիշինսկին հաղար անգամ իրավացի յեր, յերբ իր վայլուն մեղադրական ճառի մեջ ձևակերպելով մեղադրյալների պատժի չափը, հայտարարեց, թե այդ վոչ միայն իր պահանջն է, այլև բազմամիլիոն խորհրդային ժողովրդի կամքը:

Ցուրաքանչյուր ազնիվ քաղաքացու կրծքում յեռում եր ատելությունը, խորն ատելությունը դեպի այն վոճրագործների բանդան, վորոնք ձգտում եյին դեպի հետ շուռ տալ մեր կյանքը և վոչնչացնել Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության բոլոր նվաճումները: Բազմաթիվ բանաձևերում աշխատավորներն ասացին իրենց դատան, բայց արդարացի խոսքը· վոչընչացնել հայրենիքի անարդ դավաճաններին:

Ցերեկ հրապարակվեց ԽՍՀ Միության Գերագույն դատարանի Զինվորական կոլեգիայի դատավճիռը, վորը կայացվել է յոթ որվա մանրամասն դատաքննությունից հետո: Տրոցկիստական ճիվաղների, վնասարարների, դիվերսանտների, ֆաշիստական դրածակալների անարդ բանդան ստացավ ըստ արժանույն:

Թերթերը, հեռադիրը, ռադիոն դատարանի վճիռը հասցրին մեր պետության բոլոր ծայրերը, ամբողջ աշխարհին: Խորհրդային ժողովուրդը գոհունակությամբ ու միահամուռ հավանությամբ դիմավորեց դատարանի վճիռը:

«Կիրովցիները բոցաշունչ վողջունում են ԽՍՀՄ-ի Գերագույն դատարանին, վորն իր դատավճռի մեջ արտահայտեց մեծ խորհրդային ժողովրդի միահամուռ պահանջը»,—գրում են Կիրո-

վի անվան գործարանի՝ Լենինգրադի խոշորագույն ձեռնարկության բանվորները։ Ուկրաինայից և Ուրալից, Վրաստանից և Արևմտյան Սիբիրից, գործարաններից ու ֆաբրիկաներից, խորհտնտեսություններից ու կոլտնտեսություններից,— ամեն տեղից, վորտեղ բարախում է խորհրդային հայրենասերի աղնիվ սիրտը, բուռն հորձանքով սլանում են Գերագույն դատարանին ուղղված վողջույնի խոսքերը։

«Մենք, «Կրասնայա Ռոզա» կոմբինատի (Մոսկվա) բանվորներս ու բանվորուհիներս, մեծագույն գոհունակությամբ վողջունում և հավանություն ենք տալիս հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի գործի առթիվ ՍՍՀ Միության Գերագույն դատարանի Զինվորական կոլեգիայի կայացրած դատավճռին։ Այդ դատավճիռն արտահայտեց ամբողջ ժողովրդի կամքը։ Պրոլետարական դատարանի վճիռն ուժգին հարված կլինի միջազգային հակահեղափոխության առաջավոր ջոկատին—տրոցկիզմին։ Թող դիտենան և հիշեն մեր հայրենիքի բոլոր թշնամիները, վոր ժողովրդի ձեռքում յերբեք չի դողա պրոլետարական դիկտատուրայի պողպատե սուրը, և նա, ով ձեռք կրարձրացնի մեր դրոշի վրա, մեր հեղափոխական նվաճումների վրա, կարժանանա նույնպիսի ճակատագրի։ Անարդներից անարդը, ժողովրդի թշնամի Հուդա-Տրոցկին չի կարողանա խուսափել պրոլետարիատի հատուցումից՝ իր բոլոր դաղրելի, արյունոտ վոճիրների համար։ Մենք պահանջում ենք ամենաշտապ կերպով քննել աջ թափթփուկների՝ Բուխարինի, Ռիկովի, Ուդլանովի գործունեությունը։ Մենք, բանվորներս ու բանվորուհիներս, դրանիտ պատի նման կկանգնենք մեր առաջնորդների, մեր թանդաղին, սիրելի ընկեր Ստալինի շուրջը»։

Դատավճռին հավանություն են տալիս բանվորները, վորոնց տրոցկիստները ցանկանում եյին նորից դարձնել կապիտալիզմի ստրուկներ, վորոնց գործարաններն ու ֆաբրիկաները կապիտալիզմի անարդ ուստավրատորները ձգտում եյին տալ բուրժուազիային։ Դատավճռին հավանություն են տալիս խորհրդային գյուղացիները, վորոնց կոլտնտեսությունները դատապարտված հանցագործները մտադրություն ունեյին ցրել, խորհրդային գյուղի աշխատավորներին դարձնելով դեպի հետ, դեպի աղքատություն, հողազրկություն, դեպի արորն ու կուլակային ստրկություն։ Դատավճռին հավանություն են տալիս խորհրդային ինտելիգենտները, գիտության, տեխնիկայի, արվեստի մար-

ղիկ, նրանք բոլորը, ում վոր սոցիալիստական հասարակակարգը չտեսնված հնարավորություններ է տրամադրել ստեղծագործական գործունեության համար՝ ի բարորություն ժողովրդի և ամբողջ մարդկության: Դատավճռին հավանություն են տալիս մեր սահմանների քաջարի պաշտպանները՝ կարմիր-բանակայիններն ու կարմիր-նավատորմայինները: Տրոցկիստական բանդիտները փորձում էին Կարմիր բանակին խոցել թիկունքից, խորտակելով մարտիկներին վոխադրող էշելոնները, ֆաշիստական գլխավոր շտաբներին հաղորդելով ռազմական գաղտնիքներ: Դատավճռին հավանություն են տալիս Խորհրդային Միության բոլոր աշխատավոր քաղաքացիները, մեր պանծալի, մեծ հայրենիքի զավակներն ու դուստրները, հայրենիքի, վորը զավաճաններն ու մատնիչները ցանկանում էին վաճառել գերմանական ֆաշիստներին ու ճապոնական սամուրայներին, վերածել գաղութի:

Այդպիսի և միայն այդպիսի դատավճիռ էին սպասում խորհրդային մարդիկ, այդպիսի դատավճիռ էին սպասում Խորհրդային Միության բոլոր բարեկամները՝ արտասահմանում:

Մոսկվայի, Խորհրդային Միության մայրաքաղաքի աշխատավորները տրոցկիստական վնասարարների ու տեռորիստների շայկայի նկատմամբ կայացրած դատավճռին պատասխանեցին հավանության ժողովրդական ցույցով: Մոսկվացիների տրանսպարանտների ու պլակատների վրա չնորհակալության խոսքեր էին գրված ԽՍՀՄ-ի Գերագույն դատարանին՝ արդար վճռի համար և Ներքին Գործերի ժողովրդական Կոմիսարիատին՝ այդ անարգ շայկան հայտարերելու համար: Աշխատավորների բազմահազար ցույցերը, վոր տեղի ունեցան Լենինգրադում, Սվերդլովսկում, Տուլայում և այլ քաղաքներում, վողջունում էին ժողովրդի յերդվյալ թշնամիների դատապարտությունը:

Աշխատավորների հավանության թնդյունի մեջ կարմիր թելի պես անցնում է մեկ միտք—հարկավոր է աշխատել ե՛լ ավելի լավ, ե՛լ ավելի արտադրողարար, վոչ միայն ծածկելու համար այն վնասը, վոր հասցրել են մեր յերկրին տրոցկիստ-վնասարարները, այլև ե՛լ ավելի արագորեն, քան մինչև այժմ, բազմապատկելու համար ժողովրդական հարստությունը, մեր հայրենիքի հզորության ու վեհության նյութական բազան: Խորհրդային Միության բոլոր բանվորներին ուղղած իր դիմումի մեջ Մոսկվայի «Серп и Молот» գործարանի կոլեկտիվը գրում է.

«Մենք պարտավոր ենք ե՛լ ավելի մեծ յեռանդով ու համառությամբ այժմ ձեռք զարկել վնասարարության հետե-

վանքները վերացնելու դործին։ Ընկեր մետաղադործնե՛ր, ընկեր ածխահատնե՛ր, ընկեր ենթերդեսիկնե՛ր, ընկեր քիմիկոսնե՛ր, ընկեր յերկաթուղայիննե՛ր։ Մենք պարտավոր ենք այժմ ե՛լ ավելի խորը դիտել մեր ձեռնարկությունների բոլոր անկյունները, սոցիալիստական տնտեսատիրոջ աչքով դննել բոլոր մութ տեղերը, մաքրել բոլոր բծերը։ Ստախանովյան համերաշխ աշխատանքով հատուցենք յերկրին այն վնասը, որ պատճառել են մեղ տրոցկիստական բանդիտները... Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում 1937 թվականը պետք է տա աշխատանքի այնպիսի արտադրողականություն, որպիսին չի լմացել և չի լմանում կապիտալիստական աշխարհը...»։

Աշխատավորները դատավարությունից իրենց համար անում են միանդամայն ճիշտ հետևություն—լինել ե՛լ ավելի ղգաստ, սովորել ճանաչել թշնամական դործունեության բոլոր պրիոմներն ու մեթոդները։ Անուշադիր, առանց քննության ու պատժի չթողնել վնասարարության վոչ մի, նույնիսկ ամենաննշան ակտ։ Փորձը ցույց է տալիս, որ այնտեղ, որտեղ ղգաստությունը յեղել է իսկական, և վոչ թե ցուցական, այնտեղ թշնամուն չի հաջողվել վնաս հասցնել, որքան ել թեկուղ նա ձդտել է այդ բանին։

«Մենք կտասնապատկենք մեր դասակարդային հեղափոխական ղգաստությունը,— հայտարարում են Մոսկվայի Ֆրունզեյի անվան դործարանի բանվորները,— և անողոքաբար կմերկացնենք ու կջախջախենք բոլոր նրանց, ովքեր փորձում են քայքայել մեր պողպատե շարքերը և դանդաղեցնել մեր առաջընթացը լուսաշող ապադայի ուղիով»։

Դատավճռի առթիվ աշխատավորների բաղմաթիվ արձագանքները տողորված են ջերմ սիրով ու անսահման նվիրվածությամբ դեպի Լենինի-Ստալինի կուսակցությունը և խորհրդային կառավարությունը, որի առաջնորդությամբ Խորհրդային Միության ժողովուրդներն իրենց հաղթական ճանապարհին վոչնչացնում են բոլոր թշնամիներին։

Սոցիալիստական արդարադատության հատու սուրն անողոքաբար իջավ մի բուռը հանցադործների ու դավաճանների դլխին։ Թող դիտենան արտասահմանի նրանց դաշնակիցները Ֆաշիզմի դանակում, որ նույնպիսի ճակատագիր է սպասում յուրաքանչյուրին, ով կհանդդնի ձեռք բարձրացնել մեր յերկրի ազատության ու անկախության վրա, ով կհանդդնի կանդնել դեպի

մարդկային յերջանկության բարձունքները տանող մեր հաղթական ճանապարհին: Թող դիտենա անարդներից անարդը, ամբողջ աշխարհի աշխատավորների կատաղի թշնամին, նոր պատերազմի մոլի հրձիգ Հուդա-Տրոցկին, վոր նրան ևս չի հաջողվի խուսափել ժողովրդի ցասումից: Նրան, ֆաշիզմի մերկապարանոց ու անարդ դաշնակցին ևս կհասնի դաժան պատիժն այն հրեշագործ վոճիրների համար, վոր նա կատարել և կատարում է: Մեր հզոր, անխորտակելի հայրենիքը հող ու մոխիր կդարձնի յուրաքանչյուր մեկին, ով ձեռք կբարձրացնի նրա ամբողջականության ու անկախության վրա: Վոչ վոք, վոչ մի բան չի կարող խանդարել խորհրդային ժողովրդին ապրելու, հաղթանակելու և հաղթականորեն առաջ շարժվելու դեպի կոմունիզմ:

«Правда», 31 հունվարի 1937 թ.

ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ, ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՐՁԻԳՆԵՐԸ

Պատերազմի սպառնալիքը կախվել է Եվրոպայի վրա, Հեռավոր Արևելքի վրա, ամբողջ աշխարհի վրա: Նրա հրեշավոր ուրվականն արդեն մարմնավորված է ինտերվենցիոնիստական բանակների դիվիզիաների մեջ, որոնք մահ ու ավերածություն են սփռում Խորհրդային Հայաստանում: Ագահ հափշտակիչները տեր ու տնօրեն են դարձել Մանջուրիայում, հոշոտում են Չինաստանը: Ֆաշիստ ագրեսորները, ագահ, անկշտում, ձգտում են դաղութների, նոր շուկաների հափշտակման, աշխարհի վերաբաժանման: Պատերազմի հրձիգները՝ կատաղորեն սպառազինվելով, հարված են պատրաստում Արևմուտքում և Արևելքում: Ֆաշիստ ագրեսորների ավանդարդում հանդես են գալիս նրանց գործակալները—տրոցկիստական դավաճանները:

Պյատակովը, Ռադեկը, Սոկոլնիկովը, Սերեբրյակովը և մյուս 13 հոգին պատասխանատու յեղան մեծ հայրենիքի հանդեպ իրենց կատարած շատ հանցագործությունների համար: Բայց նրանց հանցագործությունների անօրինակ հրեշավորությունը հատուկ ուժով դրսևորվեց այն փաստի մեջ, որն իբրև հուժկու ահազանգ ամբողջ աշխարհին հարկադրեց զգաստ լինել: Այդ փաստը լիտի դավաճանների ջանքն է՝ Խորհրդային Միության և ամբողջ աշխարհի ժողովուրդներին ներգրավելու նոր արյունոտ պատերազմի մեջ: Տրոցկիստ հանցագործները հույս էին դրել ԽՍՀՄ-ի դեմ ֆաշիստական պետությունների պատերազմն արագացնելու վրա: Նրանք ձգտում էին համաշխարհային պատերազմ առաջացնել: Քանի որ հակախորհրդային արյունալի պատերազմը, նրանց հաշիվներով, միակ հարմար իրադրությունն էր,—չէ՞ որ յերկրի ներսում տրոցկիստները նույնիսկ ամենափոքր ոժանդակություն չեին վայելում,—իշխանությունը գրավելու և իրենց գըլ-

խավոր ու հիմնական նպատակն իրագործելու, ԽՍՀՄ-ում կապիտալիզմը վերականգնելու համար:

«Այն, ինչ չեն բուժում դեղերը, բուժում է յերկաթը,—չչընջում եր դավաճան Տրոցկին դավաճան Ռոմմի ականջին,—ինչ չի բուժում յերկաթը, բուժում է կրակը»: Հուսահատ ավանտյուրիստի, մարդկության թշնամու, պատերազմի հրձիգի այդ հրեշավոր խոսքերն այժմ լսում է ամբողջ աշխարհը: Այդ մինչև ուղն ու ծուծը դավաճանը պատերազմի հրդեհի մեջ ցանկանում եր վոչնչացնել այն ամենը, ինչ աշխատավոր մասսաները ձեռք են բերել, նվաճել են յերկարատև, ծանր պայքարում: Նա ցանկանում եր կործանիչ պատերազմի հրդեհի մեջ նետել Խորհրդային Միության յերջանիկ, աղատագրված, նոր կյանք կառուցող ժողովուրդներին: Դիվակների վրայով, ժողովրդական մասսաների արյան դետերի վրայով տրոցկիստական բանդան ցանկանում եր ելնելությունն անցնել՝ մեր հայրենիքը դերմանական կապիտալիստների ու ճապոնական բարոնների ճիր տակ դցելու համար:

ԽՍՀՄ-ի դեմ պատերազմ հրահրելու համար տրոցկիստական բանդիտները ժլատություն չեյին անում ստորության մեջ: Վոչ մի բան, վոչ մի տեսակի վոճրագործություն չեր կասեցնում նրանց: Նրանք ցինիկաբար մեր յերկիրն եյին հրավիրում ինտերվենտներին: Նրանք նախապատրաստում եյին մեծ Խորհրդային Միության բաժանումը:

Այն ժամանակ, յերբ հանցագործ բանդայի «գործարարներն» ու «պրակտիկները»—Կնյազևը, Շեստովը, Արնոլդը և ուտարերկրյա հետախուզությունների մյուս մշտական գործակալները վնասարարական-դիվերսիոն աշխատանք եյին կատարում, այդ նույն ժամանակ Ռադեկն ու Սոկոլնիկովը «դիվանագիտական ծառայություն» եյին վարում: Վաճառելով սոցիալիստական հայրենիքը, նրանք ուտարերկրյա պետությունների ներկայացուցիչներին հավաստիացնում եյին, թե «ԽՍՀՄ-ում կան ռեալ քաղաքաղետներ և վոչ-ռեալ քաղաքաղետներ. վոչ-ռեալ քաղաքաղետներ՝ այդ խորհրդային կառավարությունն է, իսկ ռեալ քաղաքաղետներ՝ այդ տրոցկիստական-զինովյեվական բլոկն է»: Ըստ վորում «ռեալը» բնորոշվում եր վերին աստիճանի կոնկրետ կերպով. խոսքը վերաբերում եր յերկիրն ինտերվենտների միջև բաժանելուն: «Գերմանիային տալ Ուկրաինան,—հայտարարեց դատարանում Ռադեկը,— Պրիմորյեն ու Պրիամուրյեն՝ Ճապոնիային»: Միջազգային հետախուզությունների, պատերազմի ֆաշիստ

հրձիգների այդ խղճուկ ու ստոր ծառաները սոցիալիստական հայրենիքի դավաճանների անջնջելի դրոշմով կմտնեն կեղեքիչների դեմ ժողովուրդների մղած պայքարի պատմության մեջ։

«Ձերբ Պյատակովը վերադարձավ Ոսլոյից,—հայտարարեց դատարանում Ռադեկը,—յես մի շարք հարցեր տվի նրան արտաքին քաղաքական տեսակետից։ Նա հաղորդեց ահա թե ինչ—Նախ՝ Տրոցկին նրան ասել է, վոր խոսքը վերաբերում է վոչ հնդամյակի տերմիններին, խոսքը հինգ տարիների մասին չէ, այլ խոսքը մեկ տարվա, ծայրահեղ դեպքում՝ յերկու տարվա մասին է։ Խոսքը 1937 թվականի պատերազմի մասին է... Ցես նրան հարցրի, թե խոսքը ԽՍՀՄ-ի դեմ մեկուսացված պատերազմի՞ մասին է։ Պյատակովը դրան պատասխանեց, թե Տրոցկին խոսում եր առհասարակ 1937 թվականի պատերազմի մասին, ԽՍՀՄ-ի վրա կատարվելիք հարձակումը չմեկուսացնելով ընդհանուր ընթացքից»։

Իրենց ֆաշիստ տերերի հետ տրոցկիստական լակեյների կնքած համաձայնության մեջ խոսքը վոչ միայն Խորհրդային Միության վրա ռազմական հարձակումն արագացնելու մասին եր։ Խոսքը վերաբերում եր համաշխարհային սպանդ կազմակերպելուն, բոլոր յերկիրների ու ժողովուրդների դեմ ֆաշիստական ագրեսիան արագացնելուն, այն յերկիրների ու ժողովուրդների, վորոնց անվտանգությանն ու անկախությանն սպառնում են խաղաղության թշնամիները և՛ Եվրոպայում, և՛ Հեռավոր Արևելքում։ Հետաքննության նյութերը և մեղադրյալների ցուցմունքները յերևան բերին խաղաղության դեմ սարքված այդ չարագուշակ դավադրության ուրվագծերը, մի դավադրություն, վորը կազմակերպել եր մարդկության թշնամի Տրոցկին։

Մերձդանուբյան յերկիրների մասին, բալկանյան պետությունների մասին Տրոցկին գրում եր, թե «տեղի յե ունենում գերմանական ֆաշիզմի եքսպանսիան, և մենք վոչ մի բանով չպետք է խանգարենք այդ փաստը»։ Առաջին հերթին պետք է գերմանական ֆաշիստների հոչոտմանը հանձնվեր Չեխոսլովակիան։ Տրոցկու—Հեսսի կառավարությունը պարտավորվում եր խղել հարաբերությունները Չեխոսլովակիայի հետ և նրան թողնել իր սեփական ճակատագրին։ Ի՞նչպիսի դրություն կստեղծվեր Ֆրանսիայի, Բելգիայի համար, յեվրոպական Արևմուտքի մյուս յերկիրների համար այն բանից հետո, յերբ ֆաշիստական Գերմանիան չոքելով հարավ-արևմտյան Եվրոպայի կոկորդին և կործանելով այդտեղ ստեղծված անվտանգության ամբողջ սիստեմը,

աղատություն ստանար իր գործողությունների համար։ Թող այդ մասին մտածեն պարոնայք Ֆրանսական և այլ ռեակցիոներները։

Իսկ Հեռավոր Արևելքը։ Ճապոնական իմպերիալիստների հետ Տրոցկու կնքած «պակտը» վոչ միայն նախատեսում եր ղինել նրանց Պրիմորյեն և Պրիամուրյեն։ Նկատի յեր առնվում «վոչ միայն տալ նրան (Ճապոնիային։ Խմբ.) Սախալինի նավթը, այլև Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ պատերազմելու դեպքում՝ ապահովել նրան նավթով։ Մատնանշվում եր ճապոնական իմպերիալիզմի կողմից Չինաստանը նվաճելու գործում վոչ մի խոչընդոտ չստեղծելու անհրաժեշտությունը»։ Այս բոլորը հաստատվեց դատարանում։ Տրոցկիստական շայկան ցանկանում եր չինական մեծ ժողովրդին հանձնել ճապոնական իմպերիալիստների ալան-թալանին։ Գերմանական ֆաշիստները դաղտնի ռազմական դաշինք են կնքել իմպերիալիստական Ճապոնիայի հետ։ Պատերազմի հրձիգների այդ արյունոտ դաշինքին միացել եյին նաև տրոցկիստական բանդիտները։

Աշխարհիս հրդեհումը յերկու կողմից, պատերազմի միաժամանակյա բռնկում Ցեվրոպայում և Խաղաղ Ովկիանոսում,— ահա այն կոնկրետ հեռանկարները, վոր գծում եյին Ռադեկն ու Սոկոլնիկովը, յերբ նրանք քշվշում եյին ոտարերկրյա դիվանագետների հետ, հանդես գալով «ռեալ քաղաքագետների», կապիտալիստական ռեստավրացիայի բլոկի ապագա մինիստրների դերում։

Մեղադրյալների ցուցմունքներով ապացուցված ու հաստատված այս փաստերի լույսով տրոցկիզմը հանդես է գալիս վորպես ֆաշիստական դլխավոր շտաբների միջազգային գործակալություն։ Ցեվ արյունարբու բոբենիների այս վոհմակը, պատերազմ հրահրողների այս մոլի բանդան փորձում են իրենց պաշտպանության տակ առնել II Ինտերնացիոնալի լիդերներից վոմանք, վորոնք յերեսպաշտորեն ավսվում են անարդներից անարդներին դթություն չնորհելու մասին։

Պատերազմի հրձիգների տրոցկիստ գործակալները նույն այդ մեթոդներով գործում են ամենուրեք, վորտեղ միայն հարմար իրադրություն է ներկայանում։ Իսպանիայում նրանք գործում են Ֆրանկոյի, գերմանական ու իտալական ինտերվենտների ոգին, փորձելով վիժեցնել պաշտպանության գործը։ Ֆրանսիայում նրանք ֆաշիստական լիդաների հետ միաբերան կատաղի հակախորհրդային կամպանիա յեն մղում, հայտարարելով, թե ԽՍՀՄ-ի դեմ մղվող պայքարում «թույլատրելի յեն բոլոր միջոց-

ները»։ Ցեվ այդպես ամենուրեք։ «Տրոցկիստներն ու ֆաշիստները,—գրում եր Կաշենը,—սպառնում են ընդհանուր խաղաղությանը վոչ միայն Մոսկվայում, այլև Փարիզում, Մադրիդում, ինչպես նաև Հեռավոր Արևելքում։ Ահա թե ինչու Մոսկվայի դատավարությունը, ֆաշիստական սպառնալիքի պայմաններում, ունի միջազգային նշանակություն»։ Ցեվ իզուր չե, վոր դատավարության գնահատականի հարցում համաշխարհային բուրժուական մամուլի մեջ նկատվեց լուրջ սահմանազծում։ Բուրժուազիայի առավել զգաստ ու հեռատես ներկայացուցիչներն ոկսում են վերջապես հասկանալ, թե ում ոգտին են գործում տրոցկիստները։

Տրոցկիզմն ուղի յե հարթում ագրեսորի համար։ Նա ջահ է մատուցում պատերազմի հրձիգներին։ Տրոցկիզմն ամբողջ առաջավոր մարդկության թշնամին է։

«Правда», 1 փետրվարի 1937 թ.

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՆԵԼ ԲՈԼՈՐ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի դատավարությունն ավարտված է: Մերկացված է տրոցկիստների՝ ֆաշիստական պահնորդական բաժինների անարդ գործակալների դիվերսիոն, լրտեսական, տեռորիստական ու վնասարարական գործունեությունը: Գերագույն դատարանի դատավճիռը, վորին հավանություն տվին Խորհրդային Միության ժողովուրդները, ի կատար է ածված:

Բանվորներն ու ինժեներները ձեռնարկել են վնասարարության հետևանքների վերացմանն արդյունաբերության ու տրանսպորտի այն ձեռնարկություններում, ուր դավաճաններին հաջողվել եր թափանցել, վորտեղ կատարվել եյին դիվերսիոն ու վնասարարական գործողություններ: Ցերկիրն ստեղծագործական նոր վերելքով, ստախանովյան նոր ռեկորդներով պատասխանեց տրոցկիստների ստոր, վնասարարական, քայքայիչ աշխատանքին:

Մասսաներին ատելի տրոցկիստական բանդիտների անարդ վոհմակը չկարողացավ, իհարկե, կանգնեցնել արդյունաբերության ու յերկաթուղային տրանսպորտի անշեղ, հաղթական առաջխաղացումը: Ժողովրդական տնտեսության խոշորագույն ճյուղերը, չնայած վնասարարությանը, հնգամյակը կատարեցին չորս տարում: Բայց փաստը հաստատված է. ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերում տեղի յե ունեցել վնասարարություն, վնասարարական գործողություններից մի քանիսը դատարանում ցինիկ կերպով պատմում եյին մեղադրյալները, այդ փաստերը հաստատված են նաև եքսպերտիզայի կողմից:

Ապացուցված է, վոր Կուզբասում, Դոնբասում և մյուս ածխային ավազաններում ձեռնարկված հանքահորերի հոյակապ նոր շինարարությունը դիտավորյալ կերպով արգելակվում եր, ձըգ-

ձրգվում, թանդացվում եր, կլանում եր ավելորդ ուժեր ու միջոցներ։

Ապացուցված է, վոր մեր հզոր կոքսաքիմիական արդյունաբերությունը, վորն ստեղծվել ու մեծ հաղթանակներ է տարել վերջին տասը տարվա ընթացքում, ներկայումս հասած կլիներ զարգացման ել ավելի բարձր աստիճանի, յեթե նրա վրա իրենց կեղտոտ թաթը չդնեին Պյատակովը, Ռատայչակը և նրանց ողնությամբ՝ գերմանական հետախուզությունը։

Ապացուցված է, վոր այնպիսի հսկաների շինարարությունը, ինչպես Ուրալվագոնստրոյը և Սրեդուրալմեդստրոյը, Պյատակովների, Մարյասինների, Կոլեգայեվների և նրանց նման տրոցկիստական բանդիտների շնորհիվ ձգձգվում եր ի վնաս տնտեսության և յերկրի պաշտպանության։

Ինչպես այժմ հաստատված է, դիտակցաբար սինթետիկ կաուչուկի լկտի սարոտաժ է կատարել ռետինի արդյունաբերության նախկին գլխավոր տրոցկիստ Բիակերը, հակահարված չհանդիպելով ռետինի արդյունաբերության գործարանների կողմից, չնայած վոր այդ գործարանների աշխատողների համար պարզ եր, թե ինչպիսի նշանակություն ունի հումքի այդ տեսակը։ Միայն ծանր արդյունաբերության ժողկոմ ընկեր Որջոնիկիձեյի անմիջական միջամտությունը կոտրեց սինթետիկ կաուչուկի յուրացման նկատմամբ յեղած սարոտաժը։ Բայց ռետինի արդյունաբերության մեջ ևս վնասարարները քիչ բան չեն կատարել։

Իսկ ինչպե՞ս եր գրությունը տրանսպորտում։ Դատախարությունը յերևան բերեց, թե վնասարարներն ինչպես եյին փոխադրումների վիժեցման նպատակը հետապնդող իրենց գործունեությունը դիմակավորում «սահմանային նորմաներով»։ Տրանսպորտում վորքա՜ն մարդիկ, վնասարարությանն անմեղսակից տնտեսավարներ, ինժեներներ ու տեխնիկներ տարիներ շարունակ թույլ են տվել, վոր սահմանի «տեսարանները» քթից բռնած պար ածեն իրենց։ Հարկ չկա խոսելու նրանց մասին, ովքեր գիտակի իմաստուն տեսքով պաշտպանում եյին այդ նորմաները, գիտակցաբար և անգիտակցաբար կիրառելով վնասարարական գրությունները։ Այդ ամոթալի գրությանը վերջ տրվեց միայն ընկեր Լ. Մ։ Կաղանովիչի տրանսպորտ գալով, վորն արագորեն կարողացավ ճանաչել սահմանային նորմաների պաշտպանների եյությունը և տրանսպորտի լավագույն մարդկանց՝

ստախանովականների հետ միասին ջախջախեց վնասարարական նորմաները։

Այս և այլ փաստեր ցույց են տալիս, որ մի շարք ձեռնարկություններում ու տնտեսության ճյուղերում վատ է դրված յուղել կուսակցական աշխատանքը, բոլշևիկյան ինքնաքննադատությունը բավականաչափ ծավալված չի եղել։ Բացահայտ վնասարարական բնույթի փաստերի նկատմամբ ավելի ուշադիր լինելու կոչ անող ձայները հաճախ հարկ եղած պաշտպանությունը չեն դարձել։ Մանր-բուրժուական ստորաքարշությունը ցեխի, զորձարանի վարչության կամ գլխավոր վարչության հանդեպ՝ յերբեմն բթացնում եր զգաստությունը. կեղծ «գլխական» հեղինակությունների առջև խոնարհվելը հաճախ հասցնում եր ժողովրդական տնտեսության և մեր յերկրի պաշտպանունակության շահերի մոռացության։

Ինժենների, տեխնիկի, վարպետի սուր աչքը չեր կարող չնկատել մի շարք խայտառակություններ, ուղղակի տեխնիկական այլանդակություններ։ Բայց փոխանակ ամբողջ ձայնով աղաղակելու այդ խայտառակությունների մասին, փոխանակ յերեւան բերելու թերությունների ու ավարիաների իսկական պատճառները, արդյունաբերության ու տրանսպորտի վոչ-վոքը թվով աշխատողներ սահմանափակվել են փաստերի պասսիվ արձանագրումով, թերությունների համար արդարացումներ վորոնելով։

Վնասարարության հետևանքների վերացումը պահանջում է նախ և առաջ հրաժարվել այդ պասսիվությունից, արտադրության մեջ գոյություն ունեցող խայտառակությունների ու անկարգության նկատմամբ քաղաքական վերաբերմունք ցուցաբերելուց։ Բոլշևիկյան ինքնաքննադատությունը, վորին բազմիցս կոչել է մեզ ընկեր Ստալինը, պետք է ծավալվի հատուկ ուժով։ Կուսակցական կազմակերպությունները հատուկ պատասխանատվություն են կրում և պետք է դատավարությունից քաղեն բոլոր դասերը։

Նորից պետք է վերանայվեն այն տեխնիկական նախագծերը, հաշիվները, նախահաշիվները, վորոնք կազմված են յեղել վնասարարների ձեռքով։ Ինժենիերների ու տեխնիկների, ստախանովական բանվորների ու հարվածայինների պարտքն է արտադրական խորհրդակցություններում խիստ քննադատության յենթարկել այն ամենը, ինչ մինչև այժմ կատարվել է նրանց ձեռնարկություններում վնասարարների առաջարկությամբ։ Միայն այս ճանապարհով հնարավոր կլինի մերկացնել ու մինչև վերջը

յերևան բերել կատարված բոլոր խայտառակությունները և բոլշևիկյան արագ ու յեռանդուն թափով վերացնել դրանք:

Հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի դատավարությունը մի անգամ ևս ակնբախորեն ցույց տվեց աշխատավորներին, թե ներկայիս պայմաններում ինչ է նշանակում բոլշևիկյան զգաստությունը: Այդ մասին ճիշտ ասացին Մոսկվայի «Серп и Молот» գործարանի աշխատողները՝ ԽՍՀՄ-ի բանվորներին ուղղած իրենց զիմումի մեջ, որն որերս հրապարակվեց «Правда»-յում.

«... Վոչ մի թերություն, վոչ մի ավարիա,— գրում են-յին «Серп и Молот»-ի աշխատողները,— չպետք է անցնի մեզ համար աննկատելի: Մենք գիտենք, որ ադրեգատներն իրենք իրենց չեն կանգ առնում, դազդյահներն իրենք իրենց չեն կտրվում, կաթսաները իրենք իրենց չեն պայթում: Յուրաքանչյուր այդպիսի ակտի հետևում թաղնված է ինչ-վոր մեկի ձեռքը: Արդյո՞ք թշնամու ձեռքը չէ այդ— ահա առաջին հարցը, որ այդպիսի դեպքերում պետք է ծագի մեզնից յուրաքանչյուրի մեջ»:

Վնասարարության հետևանքների վերացման գործում մեծ է նաև մամուլի դերը: Մեր մամուլը շատ բան է արել ստախանովյան շարժումը ծավալելու համար, լավագույն մարդկանց փորձի պրոպագանդի և հանուն պլանների կատարման ու գերակատարման պայքարելու համար: Նա կատարել է նաև մերկացնող աշխատանք, յերևան է բերել խայտառակությունները, բայց, ինչպես յերևում է, բնավ վոչ բավարար չափով: Տրոցկիստական բանդիտները, ճապոնական ու գերմանական լրտեսները հաճախ անպատիժ կերպով կատարել են իրենց ստոր գործերը: Ժողկոմատները, տեղական կազմակերպություններն ու մամուլն իսկական զգուշություն ու զգաստություն չեն ցուցաբերել նրանց նկատմամբ:

Կարելի յե բերել շատ որինակներ, յերբ մերկացնող նյութը, առանձնապես այնպիսի նյութ, որն ուղղված է յեղել խոշոր տնտեսավարների դեմ (յերկաթուղիների պետերի, շինարարությունների ու ձեռնարկությունների գլխավորների դեմ) ուղարկվել է բնավ վոչ ըստ պատկանելության և ընկել է վնասարարների ձեռքը: Նույնիսկ այն ժամանակ, յերբ նյութը տպագրվել է, թերթերը միշտ չէ, որ կարողացել են գործը հասցնել մինչև վերջ և հաղորդվող փաստի հետևում յերևան բերել հանցագործության, վնասարարության պատկերը:

Առանձնապես խիստ պետք է դնել կադրերի ընտրության հարցը, այնպիսի ընտրության, որն ապահովի տրոցկիստական–լրտեսական դործերի կրկնության անհնարինությունը։ Անքննադատ վերաբերմունքը մարդկանց նկատմամբ արտահայտվել է նաև այն բանում, որ յերբեմն չքանչաններով պարգևատրելու համար ներկայացվել են այնպիսի մարդիկ, ովքեր վնասարարությամբ են զբաղվելիս յեղել ժողովրդական տնտեսության մեջ։ Ժողկոմատներն ու տեղական կուսակցական կազմակերպությունները շատ բան ունեն, որոնց վրա պետք է մտածեն ու աշխատեն։

Մեծ է մեր յերկրի աշխատավորների ստեղծագործական վերելքը։ Աճում և լայնանում է հուժկու ստախանովյան շարժումը, յուրաքանչյուր որ առաջ են քաշվում վայելուն աշխատողների նոր անուններ, որոնք սահմանում են աշխատանքի արտադրողականության նորանոր ռեկորդներ։ Բանվորների, կոլտնտեսականների, ինտելիդենցիայի մեջ աճում է պատասխանատվության զդացմունքը յերկրի հանդեպ, իրենց մեծ սոցիալիստական հայրենիքի հանդեպ։

Վնասարարների կողմից սոցիալիստական տնտեսությանը հասցված վնասը հարյուրապատիկ կհատուցվի ամենակարճ ժամկետներում։ Յերկիրն իրավունք ունի սպասելու, որ այն ձեռնարկությունները, որտեղ դործել է թշնամու ձեռքը, շուտով կկարողանան ռասպրտ տալ կուսակցությանն ու կառավարությանը վնասարարության հետևանքները լիակատար ու վերջնականապես վերացնելու և տնտեսական նոր հաղթանակներ ձեռք բերելու մասին, հաղթանակներ, որոնք ամրապնդում են մեր մեծ հայրենիքի հզորությունը։

«Правда», 2 փետրվարի 1937 թ.

ԺՈՂՈՎՐԴԻ ՎԱՅՐԱԳ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ՝ ՏՐՈՑԿԻՍՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի—Պյատակովի, Ռադեկի, Սոկոլնիկովի, Սերեբրյակովի ու մյուսների գործի դատաքննությունը և այդ գործի առթիվ ԽՍՀ Միության Գերագույն դատարանի Զինվորական կոլեգիայի կայացրած դատավճիռը ցայտուն ու սպառիչ կերպով յերևան բերին ժողովրդի դաղաղած և ամենավտանգավոր թշնամիների—դայլերի վոհմակի պետական դավաճանության, ստոր մատնությունների, լրտեսության և այլ անօրինակ հանցագործությունների ամբողջ խորությունը:

Նրանց գլխավոր խնդիրը, նրանց նվիրական նպատակն եր խորհրդային կառավարության տապալումը և ԽՍՀՄ-ում գոյություն ունեցող սոցիալիստական կարգերի փոփոխումը: Ոտարերկրյա ավիների/ոգնությամբ իշխանության գրավումը նրանց հարկավոր եր մեր յերկրում կապիտալիզմը վերականգնելու համար: Զինովյեվը, Կամենևը, Սմիրնովը և տրոցկիստական-զինովյեվական տեռորիստական կենտրոնի մյուս մասնակիցները ստում եյին դատարանում, ասելով, թե իրենք ղեկավարվել են միայն իշխանության ծարավով:

Սպիտակ-դվարդիական տեռորը յերբեք չի յեղել անծրադիր: Ցերը եսերները կրակեցին Լենինի վրա, նրանք նույնպես ձգտում եյին իշխանության: Բոլորին հայտնի յե, վոր նրանք այդ բանն անում եյին հանուն բուրժուազիայի իշխանության վերականգնման: Ցերը սպիտակ-դվարդիականները կրակեցին մեր լիազոր-ներկայացուցիչներ Վորովսկու և Վոյկովի վրա, նրանք Խորհրդային յերկրի դեմ պատերազմի պրովոկացիա եյին անում և ձգտում եյին խորհրդային իշխանության տապալման: Ցերը տրոցկիստական տեռորիստները կրակեցին բոցաշունչ բոլշևիկ ու յերկրին սիրելի Ս. Մ. Կիրովի վրա, վորը նրանք մահափորձեր եյին նյութում ու նախապատրաստում մեր առաջ-

նորդների դեմ, նրանք կատարում էին նույն այդ առաջադրանքը, ճանապարհ հարթելով կապիտալիզմի համար:

Պրեմորյեյի ու Պրիամուրյեյի դիջում Ճապոնիային, Ուկրաինայի դիջում Գերմանիային, Սախալինի նավթի ու Հեռավոր Արևելքի վոսկու հանքերի հանձնում Ճապոնիային, մեր հայրենիքի ունեցած հումքի՝ հանքաքարի, մանգանի, վոսկու, նավթի, ապատիտների, անտառանյութի անսահմանափակ հանձնում Գերմանիային, հսկայական կոնտրիբուցիայի վճարում կենսամթերքով՝ յուղով, հացով, մսով, ԽՍՀՄ-ի վերածումը գերմանական տնտեսության տնտեսական կցորդի, ըստ ամենայնի ոժանդակություն գերմանական ու ճապոնական ձեռնարկատերերին, համագործակցություն ֆաշիստների հետ միջազգային հարցերում և աջակցություն Գերմանիային՝ մերձդանուբյան յերկիրների ու Բալկանյան թերակղզու հափշտակման գործում, ճապոնացիների կողմից Զինաստանի հափշտակման խրախուսում ու ոժանդակում,—ահա այս և, համառոտ դծերով, «արտաքին քաղաքականության» այն ծրագիրը, վորը վոդևորում եր տրոցկիստներին իրենց լրտեսական ու դիվերսիոն աշխատանքում:

Պայքար յերկրի ինդուստրացման դեմ, սոցիալիստական շինարարության հնդամյա պլանների դեմ, բանվոր դասակարգի բոլոր նվաճումների դեմ, կոլտնտեսությունների ցրում, խորհտնտեսությունների լիկվիդացիա, մասնավոր կապիտալիստական շահագործման վերականգնում, խորհրդային խոշորագույն ձեռնարկությունները կոնցեսիայով տալը,—ահա այս և տրոցկիստների «ներքին քաղաքականության» ծրագիրը: Ռեստավրատորական ծրագիր, լկտի կապիտալիստական ծրագիր, վորով տրոցկիստները բացեիբաց չեյին համարձակվում դնալ դեպի մասսաները:

Իդուր չէ, վոր դեռ տասը տարի սրանից առաջ, յերբ տրոցկիստական ծրագիրը դեռ ոպոզիցիայի թեզիսների կերպարանք ուներ, ընկեր Ստալինն անարգանքի սյունին դամեց այդ ծրագիրը, ասելով. «Ոպոզիցիայի պլատֆորմը» մեր կուսակցության քայքայման պլատֆորմ է, բանվոր դասակարգի գինաթափման պլատֆորմ, հակախորհրդային ուժերն ազատ արձակելու պլատֆորմ, պրոլետարիատի դիկտատուրան վիժեցնելու պլատֆորմ»:

Խորհրդային իշխանության գոյության համարյա քսանամյա ժամանակաշրջանում մենք արդեն բազմիցս վկա յենք յեղել, թե

ինչպես խորհրդային դատարանի առաջ մերկացվել է կապիտալիզմի վերականգնման ծրագիրը, վորը փորձում էին իրականացնել համաշխարհային կապիտալի և ռուսական հակահեղափոխության դանդաղ գործակալներ։ Սակայն սպիտակ-գվարդիական դավադիրների՝ մեր առջևով անցած դատավարություններից վոչ մեկն այնպիսի խոր և հզոր ժողովրդական ցասում չեր առաջացրել, այնպիսի զայրույթ չեր հարուցել, ինչպիսին այժմ յեռում է յերկրում ընդդեմ տրոցկիստների ու նրանց շայկայի առաման Հուդա-Տրոցկու։

Հիշողության մեջ վերակենդանանում է անգլիական դեսպան Լոկկարտի և նրա ռուս լրտեսների դատավարությունը, վորը լայնորեն արտացոլեց դասակարգային պայքարի ամբողջ սրությունը 1918 թվականին։ Մեր աչքերի առջևով անցնում է այսպես կոչված «տակտիկական կենտրոնի» 1920 թվականին լված գործը, մի կենտրոն, վորի մեջ մտնում էին բոլոր հակախորհրդային քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները՝ կատաղի միապետականներից ու կադետներից սկսած մինչև մենշևիկներն ու եսերները։ Այդ գործը յերևան բերեց յերկրի ներսում պատրաստվող ռազմական դավադրության սերտ կապերը արտասահմանյան հակահեղափոխության հետ։

Եսերների կուսակցության կենտրոնական կոմիտեյի 1922 թվականին տեղի ունեցած դատավարությունը բացառիկ պայծառությամբ բացահայտեց ամբողջ աշխարհի առջև, վոր ստոր կուլակության այդ ներկայացուցիչները կազմակերպում էին խորհրդային ղեկավարների սպանություններ, կատարում էին գինված կողոպուտներ, դավաճանական հարաբերություններ մեջ էին մտնում ոտարերկրյա պետությունների հետ և գինված պայքար էին բարձրացնում խորհրդային իշխանության դեմ, հանուն միայն մի նպատակի — կապիտալիզմի վերականգնման մեր յերկրում։

Հիշենք 1928 թվականի Շախտիի դատավարությունը, յերբ խորհրդային դատարանի առջև կանգնեց հին տեխնիկական ինտելիգենցիայի հակահեղափոխական վերնախավը։ Մենք դարձյալ կտեսնենք, վոր վնասարարական ակտերի իրականացումը, հանքերի հեղեղումն ու կործանումը, քարածխի արդյունաբերությունը ղեկավարող կենտրոնական մարմինների աշխատանքի ձախողումը, արտասահմանից դրամ ստանալը և շախտեցիների մյուս հանցագործությունները բացատրվում էին այն բանով, վոր այդ մարդկանց սանձը հին տերերի ձեռքին եր, վոր այդ

մարդիկ զբաղվում էին հոգուտ նրանց շահերի և կատարում էին նրանց ամենակի առաջադրանքներն ու դիրեկտիվները։

«Միջազգային բարեգործական կուսակցության» ու մենշևիկ-ինտերնացիոնալիստ «Մենշևիկյան բյուրոյի» հակահեղափոխական կազմակերպությունների 1930—1931 թվականներին տեղի ունեցած գործունեությունները, ինչպես նաև Կոնդրատյևի—Չայանովի «Գյուղատնտեսական կուսակցության կազմակերպության հայտարարությունը», ցույց տվին, որ այդ բոլոր սպիտակ-գվարդիական կազմակերպություններին համախմբում էր ծրագրային հիմքերի ընդհանրությունը։ Նրանք բոլորն էլ իրենց խնդիրն էին դնում կապիտալիզմի վերականգնումը ԽՍՀՄ-ում։ Նրանք բոլորն էլ հույսը դրել էին ինտերվենցիայի վրա, որպես խորհրդային իշխանության տապալման միակ ուղու։ Նրանք բոլորն էլ դիմում էին վնասարարության, որպես հակահեղափոխական պայքարանքի հիմնական մեթոդի։ Նրանք բոլորն էլ կնքել էին յեվրոպական բուրժուազիայի կապիտալիստական շրջանների հետ, իսկ մասնավորապես մենշևիկները կապվում էին II Ինտերնացիոնալի ղեկավար շրջանների հետ։

Այս բոլոր հանցավորությունների միջով,— դատավարության նյութերը հրապարակելիս ԽՍՀՄ-ում հակահեղափոխության պատմությունը դարձյալ ապացուցվեց մի թեզի պես անցնում է այդ դարաշրջանի հանցագործությունների նպատակի միասնությունը՝ կանգնեցնել սոցիալիզմի հաղթանակը, ոչնչացնել սոցիալիստական հասարակարգը, հանձնարարել և ոտքի հանել բանվորների ու գյուղացիների զանգվածներին սոցիալիզմի ու խորհրդային իշխանության դեմ։ Հենց նրանք են, որ մեր յերկրում սոցիալիզմի դեմ պայքարելու համար հրահրում էին բուրժուազիայի հարձակումը կոլտնտեսությունների ու խորհրդային տնտեսության մյուս ճյուղերի դեմ։ Հենց նրանք են, որ մեր յերկրում սոցիալիզմի դեմ պայքարելու համար, ինչպես հանցագործներ, իրենց հանցագործությունները թաքցնելու համար, ստիպված էին դիմել ամենանողոքիչ ահաբեկչության։ Հենց նրանք են, որ մեր յերկրում սոցիալիստական հասարակարգի դեմ պայքարելու համար, հակահեղափոխական դավադրություններ էին կազմակերպում ինտերվենցիոնիստների հետ։

կազմակերպություն և հեշտացնելով այլ հակախորհրդային խմբերի ստեղծումը:

Սակայն իրենց հետագա ստորության մեջ տրոցկիստական բանդիտները դերազանցեցին դավաճանության իրենց սեփական ռեկորդները: Մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակն ավելի ու ավելի ակնբախ դառնալուն զուգընթաց, ֆինանսական կապիտալն՝ կապիտալիստական աշխարհում հեղափոխության հանդեպ ունեցած ահից զրդված ֆաշիզմին անցնելուն զուգընթաց, տրոցկիստներն իրենց ծառայությունն առաջարկեցին կապիտալին՝ վորպես մի ջոկատ, վորն իր ամբողջ նախորդ գործունեությամբ առավել նախապատրաստված է Խորհրդային յերկրի առաջնորդների սպանության համար, պատերազմի հրահրման լրտեսության ու վնասարարության համար, կապիտալիզմի վերականգնման համար:

Գերմանիայի խոշորագույն կապիտալիստական ֆիրմաներին ինչպես «Բորզիգը» և «Դեմագը», վորոնք առևտրական հատուկ հավելումների հաշվին պահպանում եյին Տրոցկու և նրա մատուցածակիցների շայկան, լավ գիտեյին, թե ինչի համար են իրենք վճարում: Շան մղումով ու նվիրվածությամբ՝ նրանց նկատմամբ, ովքեր կերակրում են իրենց, տրոցկիստներն այդ դրամներով վնասարարական ակտեր, դիվերսիա, լրտեսություն և տեռոր եյին կատարում: Նրանք աշխատում եյին գործել անվրեպ: Սերկա Պյատակովը և նրա մանկլավիկները Տրոցկու դիրեկտիվներով հարվածներն ուղղում եյին առավել զգայուն տեղերին: Կեմերովոյի դատավարությունն ամբողջ աշխարհի առջև ցույց տվեց, վոր «Ցենտրալնայա» հանքում տեղի ունեցած վողբերգական պայթյունը, վորի ժամանակ զոհվեցին 10 հանքափոր և ծանր վիրավորվեցին 14 հոգի, Գեստապոյի վարձկանների ու Տրոցկու գործակալների ձեռքի գործն եր:

Զինվորական գնացքի ծանր աղետը Շումիխա կայարանում, վորի ժամանակ զոհվեցին 29 կարմիր-բանակային և վիրավորվեցին 29 հոգի, կազմակերպվել եր բանդիտ Կնյազևի կողմից, տրոցկիստական կենտրոնի ուղղակի դիրեկտիվով և ճապոնական հետախուզության ցուցումներով:

Այդ բոլոր դիվերսիոն ակտերի ժամանակ յեղած մարդկային զոհերի առատությունը մաղաչավ անդամ վարանմունք չեր առաջացնում տրոցկիստական դայլերի մեջ: Նրանք ցինիկաբար չփում եյին ձեռները, իրենց մխիթարելով այն հույսերով, թե

պայթյունները, խորտակումները, բանվորների թունավորումները զայրույթ կառաջացնեն խորհրդային իշխանության դեմ։

Չնայած այն վնասարարական ակտերի վողջ հրեշավորությանը, վոր տրոցկիստներին հաջողվել է իրականացնել, այնուամենայնիվ դրանք պետք է մանկական խաղեր թվան այն հանցագործությունների համեմատությամբ, վոր ժողովրդի թշնամիները Տրոցկու ուղղակի ցուցումներով, գերմանական գլխավոր շտաբի ու ճապոնական հետախուզության հետ համաձայնեցված, նախապատրաստում էին պատերազմի դեպքում ի կատար ածելու համար։ Այդ վոճրագործությունների բնույթի և մասշտաբի մասին կարելի է դատել թեկուզ այն բանից, վոր Պյատակովը կարգադրություն էր արել պատերազմն սկսվելու մոմենտին հրկիզել Կեմերովոյի քիմիական կոմբինատը՝ մեր քիմիական արդյունաբերության միջնաբերդերից մեկը, իսկ Լիվշիցը, Կնյազեվը և տրանսպորտում գործող մյուս վնասարարները պատրաստվում էին բակտերիաներով լայնորեն թունավորելու զինվորական եշելոնները, զորքի սնման և սանիտարական մշակման կայանները։

Վորպեսզի ֆաշիստական հարվածները Խորհրդային յերկրին հասցվեին առավել շեշտակի, տրոցկիստները չեյին սահմանափակվում դիվերսիոն, վնասարարական ակտերի իրականացմամբ ու նախապատրաստմամբ։ Նրանք իրենց վրա եյին վերցրել գերմանական ու ճապոնական հետախուզությունների լրտեսական առաջադրանքների կատարումը։ Ռատայչակը, Պուչինը, Գրաչեն գերմանական հետախուզությանը մանրամասն տեղեկություններ են տվել քիմիական արդյունաբերության սարքավորման վիճակի, պարապուրդների, ավարիաների, արտադրանքի մշակման ու չինարարական պլանների վերաբերյալ։ Ստրոյիլովը և Շեստովը նույնպիսի կապ եյին հաստատել գերմանական հետախուզության հետ, տնտեսական լրտեսության առաջադրանքներ կատարելով հանքային արդյունաբերության մեջ։ Կնյազեվը ճապոնական հետախուզությանը տվյալներ էր հանձնում յերկաթուղիների մոբիլիզացիոն պատրաստության, զինվորական փոխադրումների և այլնի մասին։

Յեթե տրոցկիստական կենտրոնի հրամաններով գործող բոլոր կատարողները լրտեսում եյին և իրենց յերկիրը վաճառում փոքր կտորներով, ապա բուն կենտրոնը հայրենիքը վաճառում էր խոշոր կտորներով։ Հենց այդ նպատակով եյին կազմակերպվում Տրոցկու, Սոկոլնիկովի, Ռադեկի և մյուսների

զավաճանական հանդիպումներն ու բանակցություններն առավել ագրեսիվ ֆաշիստական պետությունների ներկայացուցիչների հետ։

Հանցագործությունների այս ամբողջ ծաղկեփունջը պսակվել էր ճյուղավորված տեռորիստական խմբերի կազմակերպմամբ՝ Մոսկվայում, Լենինգրադում, Կիևում, Ռոստովում, Սոչիում, Նովոսիբիրսկում և այլ քաղաքներում։ Ժողովրդի թշնամի Տրոցկին շտապեցնում էր, նրա մանկլավիկները խթանում էին, նրանց գործակալները զենքի պաշար էին կուտակում, սովորում էին կրակել, լրտեսում էին։ Նրանք ամեն ինչ անում էին կուսակցության ու կառավարության ղեկավարների դեմ տեռորիստական ակտերի մի ամբողջ սերիա է կատար ածելու համար։

Չկար այնպիսի ստորություն, որին ընդունակ չլինեին տրոցկիստները հանուն կապիտալիզմի վերականգնման։ Սակայն ի՞նչ կնշանակեր կապիտալիզմի վերականգնումը ժողովրդական մասսաների համար։

Պատմությունը բացահայտեց դրա պատասխանը՝ բոլոր մանրամասնություններով։ Այդ են պերճախոս կերպով վկայում հակահեղափոխության տարած նույնիսկ ժամանակավոր հաղթանակների հետևանքները։

Ամեն վոք, ով թեկուզ մի վոքր ծանոթ է պատմությանը, յերբեք չի մոռանա այն հրեշավոր դաղանությունները, ծաղր ու ծանակը և բռնությունը, վորոնցով վարձկան մարդասպան վերապալչները հոշոտում էին Փարիզի պրոլետարիատին, իրենց արյունոտ խրախճանքն անելով ջախջախված Փարիզի Կոմունայի մոխրակույտի վրա։ Վոչ պակաս արտահայտիչ պատկեր է ներկայացնում սպիտակ տեռորի խրախճանքը Հունգարիայում՝ պրոլետարական դիկտատուրայի վոդբերդական ջախջախումից հետո։ Հաղթելով յերիտասարդ խորհրդային հանրապետությանը, հունգարական դահիճները տառացիորեն ամբողջ յերկիրը հեղեղեցին դինաթափ արված կոմունիստական, սոցիալ-դեմոկրատական և անկուսակցական բանվորների, նրանց կանանց ու յերեխաների արյունով։

Կախաղաններ, դնդակահարություններ, բանտային խոշտանգումներ ու ծեծ — ահա այն կապիտալիստական «կարգը», վոր բերին իրենց հետ սպիտակ-գվարդիական սվինները։ Զափազանց կարճատև կյանք ունեցող Բավարական խորհրդային հանրապետության խորտակումը նույնպես հավերժացավ բան-

վորների նկատմամբ կատարվող բացառիկ դաժան դատաստանով ու դաժան սպիտակ տեռորով, վորը ֆաշիստական խրախճանքի ամենալայնարշ ձևերի հետագա հասունացման նախաբանը հանդիսացավ:

Վերջապես, թե ինչ է նշանակում կապիտալիզմի վերականգնումը բանվորների, գյուղացիների ու ինտելիգենցիայի համար, դրա ամենակենդանի ու անջնջելի իլյուստրացիան հանդիսանում է սպիտակների ու ինտերվենտների տիրապետության վորձն Ուկրաինայում, Բելոռուսիայում, Արխանգելսկում, Անդրկովկասում, Սիբիրում և Հեռավոր Արևելքում՝ այն տարիներին, յերբ խորհրդային իշխանությունը ժամանակավորապես դուրս մղվեց այդ շրջաններից:

Արդեն սպիտակ-գվարդիականների դալը հենց սովորաբար ուղեկցվում եր կոմունիստների ու կոմյերիտականների ամբողջական կոտորածով, հեղափոխական բանվորների, կարմիր-բանակայինների սպանությամբ, մասսայական գնդակահարություններով, խարույկների վրա տեղի ունեցող մահապատիժներով և աշխատավոր բնակչության միջնադարյան խոշտանգումներով: Կենտրոնական վոլոստների ու հրապարակների լապտերներից կախում եյին առաջավոր բանվորներին ու յերիտասարդությանը, հաճախ նաև վոչ մի մեղք չունեցող քաղաքացիներին: Սակայն այս բոլորն սպիտակների տեռորիստական խրախճանքի միայն սկիզբն եր:

Բավական եր, վոր գյուղացիները թեկուզ վորևե բանով արտահայտեին իրենց դժգոհությունը կալվածատերերի վերադառնալու առթիվ, վորպեսզի ամբողջ գյուղեր ջարդի ու հրկիզման յենթարկվեին (հիշատակենք թեկուզ գեներալ Սլաշչեվի «գործունեությունը», վոր 1919 թվականի նոյեմբերին հրկիզեց Բաշտանովկի և Վիսունովկի հանրապետությունների մի շարք գյուղեր): Տասնյակ հազարավոր գյուղացիներ, վորոնց միակ մեղքն այն եր, վոր կուլակությանը չեյին պատկանում, անողորմ ծեծի յեն յենթարկվում շամփուրներով ու նագայկաներով:

Ֆաբրիկաները, գործարանները, հանքերը, տները վերադարձնելով նախկին տերերին, վերացնելով բանվորների բոլոր նվաճումները, մասնավորապես աշխատաժամի կրճատումը, արձակուրդները, սոցիալական ապահովագրությունը և այլն, հակահեղափոխությունը, խորհուրդների իշխանությունը դուրս մղելուց անմիջապես հետո, անցնում եր ամենասանձարձակ տեռորի:

«Պատերազմական», «պաշարողական», «արտակարգ» դրութիւն մտցնելու պատրվակով սահմանվում էին հատուկ օրենքներ, վորոնք կոչված էին սաղմի մեջ խեղդելու ազատամտութեան ամեն մի արտահայտութիւն: «Մարքսիզմի դեմ պայքարելու» պատրվակով ծավալվում էր ինտելիգենցիայի դաղանային հալածանք՝ տեսոր դիտութեան, արվեստի, դրականութեան բնագավառում: Դպրոցները, դրադարանները, դիտական ինստիտուտները փակվում էին: Կրոնական խավարամոլները ցնծում էին:

Սրանք են քաղաքացիական պատերազմի ժամանակ մեր յերկրի առանձին շրջաններում կապիտալիզմը վերականդնելու հետևանքները: Հեշտ է պատկերացնել, թե ինչի էին ձգտում անիծյալ տրոցկիստները, աշխատելով վերականդնել կապիտալիզմը Խորհրդային յերկրում՝ այն բանից հետո, յերբ նրա բուն արմատներն այստեղ արմատախիլ են արված հիմքից:

Տրոցկիստական թշնամին անհամեմատ ավելի ստոր է, քան հակահեղափոխության վորևե այլ ջոկատ: Մենք հեշտությամբ ճանաչում և հարվածում էինք բացահայտ թշնամուն: Շատ ավելի բարդ ու ավելի վտանդավոր յեղան նրանք, ովքեր կարողացել էին սողոսկել մեր կուսակցական տան մեջ՝ մեր դդաստությունը խաբելու համար: Գործադրելով իրենց յերկերեսանի տակտիկան, մեղրը շրթունքներին, հուդայի արցունքներն աչքերին, նրանք դանակը թաղցնում էին ծոցում և հարված էին հասցնում թիկունքից: Սողոսկելով կուսակցության շարքերը, սողալով, հարմարվելով, դիմակավորվելով, այդ նենդ իժերը թափանցում էին առավել պատասխանատու բնագավառներ, սողում էին դեպի իշխանությունը: Այդ քաղաքական ավանտյուրիստներն ամեն մի ճեղքը, դդաստության ամենափոքր թուլացումն ոգտագործում էին մեզ վնաս հասցնելու և ապականելու համար:

Միապետական դեներալները, կադետները, եսերները, մենշևիկները և խորհրդային իշխանության այլ թշնամիները փորձում էին կալվածատերերին ու կապիտալիստներին վերադարձնել այն, ինչ պրոլետարական սոցիալիստական հեղափոխությունը խլել էր նրանցից: Տրոցկիստական բանդիտները վոչ միայն փորձում են մեզնից խլել նվաճածը, այլև իրենց ֆաշիստական տերերին մատուցել բանվորների ու դյուղացիների ջանքերով ոտալինյան յերկու հնդամյակների ընթացքում ստեղծված տասնապատիկ ավելի մեծ արժեքները:

Դենիկինները և Միլյուկովները ջանում էին թեկուզ և քա-

զաքավարության համար իրենց ճակատին պահել «անրաժանելի» Ռուսաստանի վերաբերյալ բանավոր չաղակրատությունը: Տրոցկիստներն այդ սպիտակ-գվարդիականներից էլ ավելի ցած գլորվեցին: Գերմանական, իտալական, ճապոնական ֆաշիստ ագրեսորները փորձում են ժողովրդի իրենց կողոպուտը քողարկել «հայրենասիրության» թղենու տերևով, թեկուզ և այդ բառի իրենց բուրժուական հասկացողությամբ: Իսկ տրոցկիստները բացահայտորեն ստորադրություն են տալիս, վոր իրենք մեր յերկրի մեծածախ ու մանրածախ առևտրով են զբաղված: Կարո՞ղ է արդյոք լինել ավելի դարշելի տեսարան, կարո՞ղ է արդյոք լինել ավելի խոր անկում:

Դատավարությունն ավարտված է: Խորհրդային արդարադատության պատժող սուրն իջավ տրոցկիստ ճիվաղների գլխին: Սակայն միամտություն կլիներ կարծել, թե դատավճիռն ի կատար ածելով վերջանում է պայքարը ժողովրդի թշնամիների դեմ:

Դատավարության հսկայական նշանակությունն այն է, վոր նա մերկացրեց այն մեթոդները, զենքը, վորոնցով ոգտվում է թշնամին: Թշնամու դավերը ճանաչելը զինում է մեզ նրա դեմ պայքարելու համար: Խնդիրն այժմ այն է, վոր մերկացնենք ու հարվածենք թշնամուն, ինչպիսի դիմակի տակ էլ թաղնված լինի նա:

«Правда», 1 փետրվարի 1937 թ.

Ա. ԴԱՎԻԴՅԱՆ

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Հուդա–Տրոցկու և նրա համախոհների ծախված դրոշի վրա արյունոտ տառերով գրված է կապիտալիստական ռեստավրացիայի ծրագիրը։ Գործնականորեն այդ նշանակում է. բանվորներից ու գյուղացիներից խլել գործարանները, ֆաբրիկաները, հողը, հեղափոխության բոլոր նվաճումները, նորից նստեցնել կալվածատերերին ու կապիտալիստներին, դատաստան տեսնել խորհրդային ժողովրդի հետ և նրան գերմանական ու ճապոնական ֆաշիզմի լծի տակ դցել։

Հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի դատավարությունն ամենայն ակնառությամբ ցույց տվեց, թե տրոցկիստական բանդան մարդկային ու քաղաքական ինչպիսի խորն անկման հասավ՝ մեր ժողովրդի դեմ, սոցիալիզմի դեմ մղած իր պայքարում։ Աշխատավորներին սպանողները, ոտարերկրյա հետախուզությունների լրտեսները, վորոնք ամեն մի ջոցներով ձգտել են մեր յերկրի դռները լայնորեն բանալ ֆաշիստական հորդաների առաջ,—ահա թե մինչև ուր գլորվեցին տրոցկիստները, ժողովրդի ամենավոխերիմ ու կատաղի թշնամիները։

Տրոցկիստներն ունեն և իրենց ազրարային ծրագիրը։ Արժե նրա վրա կանգ առնել, վորովհետև նա նկարագրում է, թե հեղափոխության մեջ գյուղացիության դերի վերաբերմամբ տրոցկիզմի զարգացրած գաղափարների ու հայացքների անելանելի շըրջանակն ինչպես փակվեց։ Այդ ծրագիրը ցույց է տալիս, թե ինչպես ժողովրդի թշնամի Տրոցկին ու նրա հետևորդներն ուզում եյին նոր, խորհրդային կոլտնտեսական գյուղացիության դահիճներն ու խեղդիչները դառնալ։

Այդ ծրագրի եյությունն եր—ցրել կոլտնտեսությունները, լուծարքի յենթարկել խորհտնտեսությունները, լիակատար զար-

դացման ազատություն տալ կապիտալիստական տնտեսությանը։ Դասավարության ժամանակ տրոցկիստական բանվոր Ռադեկը, խոսելով Տրոցկու նամակի մասին, վորի մեջ վերջինս զարգացրել է կապիտալիզմի վերականգնման ծրագիրը, հետևյալ ձևով է հաղորդում Տրոցկու դրույթները գյուղական հարցերի վերաբերմամբ.

«Ագրարային քաղաքականության բնագավառում նա (Տրոցկին) միանգամայն պարզ դնում էր այն հարցը, վոր կոլտնտեսությունները հարկավոր կլինի ցրել, և առաջ էր մղում այն միտքը, վոր պետք է տրակտորներ և գյուղատնտեսական ուրիշ բարդ մեքենաներ տրամադրել մենատնտեսներին՝ նոր կուլակային կարգերի վերածնման համար»։

Այդ թունդ ռեստավրատորական ծրագիրը տրոցկիզմի՝ գյուղացիության հարցի վերաբերյալ ամբողջ քաղաքականության բնական ու տրամաբանական ավարտումն է։

Հայտնի է, վոր տրոցկիզմի՝ կուսակցության դեմ մղած պայքարի հիմքն էր կազմում Տրոցկու հակահեղափոխական, հակալենինյան այն թեորիան, թե մեր յերկրում անհնարին է սոցիալիզմ կառուցել։ Այդ թեորիայի անկյունաքարն էր այն պնդումը, թե իշխանությունն իր ձեռքը վերցրած պրոլետարիատի ու գյուղացիության միջև պառակտումն անխուսափելի է։ Գյուղացիությունը, Տրոցկու ասելով, իր հակահեղափոխական դերը կխաղա, և Ռուսաստանի բանվոր դասակարգն անխուսափելիորեն կճզմվի։

Մինչդեռ կուսակցությունը բանվոր դասակարգի ու գյուղացիության միջև կնքված տնտեսական ու քաղաքական դաշինքի հիման վրա ամրացնում էր պրոլետարիատի դիկտատուրան, տրոցկիզմը գյուղացիությանը համարում էր միայն վորպես «ուղեկից» տարր, վորպես «գաղութ»։ Այստեղից էլն ծագում տրոցկիստների առաջարկությունները՝ գյուղից անչափորեն շատ միջոցներ դուրս քաշելու մասին, վորը կարող էր միայն առաջացնել գյուղատնտեսության դեգրադացիա, արդյունաբերության հումքային բազայի քայքայում և բանվոր դասակարգի անջատումը գյուղացիությունից։

Հեղափոխության մեջ գյուղացիական հարցի վերաբերմամբ ունեցած խորապես սխալ հայացքը տրոցկիստներին հասցրեց պրոլետարիատի դիկտատուրայի լենինյան թեորիայի ժխտմանը։ Մի սխալը հետևում էր մյուսին, ստեղծելով մենշևիկյան հակահեղափոխական կոնցեպցիա։ Ամեն անգամ, յերբ հեղափոխու-

թյան ճանապարհին դժվարություններ եկին յերևան դալիս, յերբ անհրաժեշտ եր լինում կորուկ չրջադարձ կատարել, տրոցկիզմի հակալենինյան եությունն իրեն ղդալ եր տալիս մի առանձին ուժով:

Ժխտելով, վոր գյուղացիությունն ընդունակ է սոցիալիստական ուղիով դնալու, տրոցկիզմը յելք եր վորոնում կապիտալիստական խոշոր տնտեսության մեջ: Տրոցկին, որինակ, 1925 թվին, Զապորոժյեյի կուսակցական ակտիվում հանդես դալով, առաջադրեց կապիտալիստական տիպի ֆերմերության զարդացման ծրագիրը: Տնտեսությունը տարեք կուլակային-ֆերմերական ուղիով — ահա թե ինչ եր քարոզում այն ժամանակ Տրոցկին: Բուրժուական-ռեստավրատորական այդ ծրագիրը ժամանակ առ ժամանակ (1926—1927 թ. թ. ժամանակաշրջանում) քողարկվում եր համաշխարհային հեղափոխության վերաբերյալ «ձախ» ֆրազներով, բայց դրանից գործը չեր փոխվում: Ցեղ այդ ժամանակաշրջանում տրոցկիստական-զինովյեվական բլոկը, քողարկվելով «ձախ» լոզունգներով, փորձում եր վիժեցնել բանվոր դասակարգի զոդումը գյուղացիության հետ:

Ընկեր Ստալինը, տրոցկիզմի դեմ մղվող պայքարում պաշտպանելով սոցիալիզմի կառուցման լենինյան պլանը, մատնանշում եր, վոր հաղթությունը կարող է ձեռք բերվել միայն այն դեպքում, յեթե կուսակցությունը թաղի տրոցկիզմը վորպես հոսանք, վորը «բոլոր չանսերն ունի վոչ-պրոլետարական տարրերի կենտրոնն ու հավաքակետը դառնալու, այն տարրերի, վորոնք ձգտում են թուլացնելու, քայքայելու պրոլետարիատի դիկտատուրան»:

Տրոցկիզմի կապիտուլյանտական, հակահեղափոխական բնույթը առանձին ուժով արտահայտվեց կոլեկտիվացման սկզբնական շրջանում, յերբ չքավորները, իսկ նրանց հետևից նաև միջակները սկսեցին մտնել կոլտնտեսությունների մեջ, յերբ գյուղացիների արտադրության միջոցների պարզ զումարումն իսկ հսկայական տնտեսական արդյունք եր տալիս: Դրան ի պատասխան Տրոցկին դրում եր, վոր «գյուղացիական արորներից և գյուղացիական. հալումաշ ձիերից» չի կարելի խոշոր գյուղատնտեսություն ստեղծել, ինչպես ձկնորսական նավակներից չի կարելի շոգենավ շինել: Տրոցկիստները, այնուհետև, ճիշ ու վնդստոց եկին բարձրացնում այն մասին, թե կոլտնտեսությունների ներսում գոյություն ունի դասակարգային պայքար, թե

նրանց քայքայումն անխուսափելի յե ներքին հակասությունների պատճառով։

Ա՛չ ոպորտունիստների, կուլակության այդ մունետիկների ու պաշտպանների հետ միասին—տրոցկիստներն ու զինովյեվականները քչփչում եյին, թե կուսակցությունն ու կառավարությունը ժողովրդական դրամները «շռայլում են» «դոյություն չունեցող» կոլտնտեսությունների վրա։ Հակահեղափոխական դատարկախոսություններ եյին տեղի ունենում նաև այն մասին, թե աննպատակ և խորհրդային շինարարության վրա ծախսեր կատարելը։

Կուսակցությունը Կենտրոնական կոմիտեյի, ընկեր Ստալինի ղեկավարությամբ վստահ գնում եր իր ճամբով։ Լենինի—Ստալինի թեորիան պայծառ կերպով լուսավորում եր ուղին։ Խորհրդային տնտեսություններ ստեղծելով, կոլտնտեսություններ կառուցելով, կուսակցությունը յերկրի ինդուստրացման հիման վրա վճռում եր պրոլետարական հեղափոխության ամենադժվարին խնդիրը՝ դյուղացիական միլիոնավոր մասսաներին հաղորդակից դարձնել սոցիալիզմին։

«Չի կարելի անվերջ, այսինքն չափազանց յերկար ժամանակաշրջանի ընթացքում,— ասել է ընկեր Ստալինը,— խորհրդային իշխանությունը և սոցիալիստական շինարարությունը խարսխել յերկու տարբեր հիմքերի վրա, ամենախոշոր ու միավորված սոցիալիստական արդյունաբերության հիմքի վրա և ամենամասնատված ու հետամնաց մանրը—ապրանքային դյուղացիական տնտեսության վրա։ Պետք է ասել ճանաչաբար, բայց սիստեմատիկորեն ու համառորեն դյուղական տնտեսությունը փոխադրել նոր տեխնիկական բազայի վրա, խոշոր արտադրության բազայի վրա, քաշելհասցնելով այն սոցիալիստական արդյունաբերությանը։ Կամ մենք այդ խնդիրը կլուծենք,— և այն ժամանակ վերջնական հաղթանակն ապահովված է, կամ մենք դրանից կհեռանանք, այդ խնդիրը չենք լուծի,— և այն ժամանակ վերադարձը դեպի կապիտալիզմ՝ կարող է անխուսափելի յերևույթ դառնալ»[1]։

Խոսքը, հետևապես, հետագա սոցիալիստական հարձակման վճռողական պայմանին եր վերաբերում։

---

[1] Ստալին, Вопросы ленинизма, եջ 362, 9-րդ հրատ.։

Հարձակումը պսակվեց բոլոր թշնամիների—տրոցկիստների, աջ կապիտուլանտների և «ձախ» հրեշների դեմ տարած լիակատար հաղթությամբ և նրանց լիակատար ջախջախումով: Համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակությունը վորպես դասակարգ վերացվեց: Կուսակցությունը վերաղինեց դյուղատնտեսությունը և այն դարձրեց աշխարհիս ամենահզոր, ամենառաջավոր դյուղատնտեսությունը: Կոլտնտեսային դյուղացիությունը դարձավ խորհրդային իշխանության հաստատուն հենարանը և բանվոր դասակարգի հետ միասին, աշխատավոր ինտելիգենցիայի հետ միասին կառուցում և ու արդեն հաջողությամբ ավարտում է սոցիալիստական հասարակության շինարարությունը:

Ցեկ թո՛ղ վորևե մեկը փորձի ասել մեր կոլտնտեսականին, վոր նրա բանած գործից բան դուրս չեկավ: Ամեն մի, նույնիսկ ամենահետամնաց, կոլտնտեսական կտրուկ կերպով կընդհատի այդպիսի հակահեղափոխական խոսակցությունները: Հարյուր հազարավոր տրակտորները, տասնյակ հազարավոր կոմբայնները, կոլտնտեսային անծայրածիր արտերը, ունևորության աճումը ծառայում են վորպես սոցիալիզմի գործի հաղթության ամենածանրակշիռ ու ամենահզոր ապացույցը: Խորհրդային դյուղացիությունը դարձել է նոր դյուղացիություն և բանվոր դասակարգի հետ միասին գրի յե առել իր հաջողություններն ու իրավունքները ստալինյան Սահմանադրության մեջ:

Կուսակցության XVII համագումարում 1934 թ. հունվարին տված իր զեկուցման մեջ ընկեր Ստալինն ասել է.

«Մենք միշտ հայտարարել ենք, վոր «ձախերը» նույն աջերն են, վորոնք իրենց աջությունը քողարկում են ձախ ֆրազներով: Այժմ «ձախերը» հենց իրենք են հաստատում մեր այս հայտարարությունը: Վերցրե՛ք, տրոցկիստական «Бюллетень»-ի անցյալ տարվա համարները: Ի՞նչ են պահանջում և ինչի՞ մասին են գրում այնտեղ պարոնայք տրոցկիստները, ինչո՞վ է արտահայտվում նրանց «ձախ» ծրագիրը: Նրանք պահանջում են — խորհտնտեսությունների ցրումը, վորպես անշահաբեր տնտեսություններ, կոլտնտեսությունների մեծ մասի ցրումը, վորպես ուռցրած տնտեսություններ, հրաժարումն կուլակության վերացման քաղաքականությունից, վերադարձ դեպի կոնցեսիոն քաղաքականությունը և մեր մի ամբողջ շարք արդյունաբերական

ձեռնարկությունները, վորպես անշահաբեր ձեռնարկություններ, կոնցեսիայով տալը:

... Ահա ձեզ անարդ յերկչոտների ու կապիտուլանտների ծրագիրը, ԽՍՀՄ-ում կապիտալիզմը վերականգնելու հակահեղափոխական ծրագիրը»:

Հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի դատավարությունը լիովին հաստատեց ընկեր Ստալինի այդ հետևությունը: Տրոցկիստները վորոճում եյին բանվոր դասակարգին ու գյուղացիությանը կատաղելապես դավաճանելու պլաններ, նրանք արդեն համաձայնություն եյին գալիս ֆաշիստների հետ ԽՍՀՄ-ի տերիտորիան բաժանելու մասին:

Խոսելով տրոցկիզմի ամենամերձավոր ծրագրի մասին, Սոկոլնիկովը ցուցմունք տվեց.

«Այդ ծրագիրը նախատեսում եր հրաժարվել ինդուստրացման, կոլեկտիվացման քաղաքականությունից և, վորպես այդ հրաժարման արդյունք՝ գյուղում մանր տնտեսության հիման վրա կապիտալիզմի վերելք, վորը միացած արդյունաբերության կապիտալիստական տարրերի հետ, զարգանալով կվերածվեր կապիտալիստական ռեստավրացիայի ԽՍՀՄ-ում»:

Ցեվ այդպես, տրոցկիզմը վերջնականապես մի կողմ նետելով ամեն տեսակ «ձախ» դիմակավորում, խոսում և ուղղակի ու բացահայտորեն կոլտնտեսությունների լուծարքի մասին, արյունարբու կուլակների վերածնման մասին: Կապիտալ տրոցկիստական-ինովյեվական գործակալներն ուզում եյին նորից գյուղում աղքատություն ու կարիք հաստատել, ուզում եյին դաշտերը մինչև ակներով կորատել և յերկիրը հին, կոտրած տաշտակին վերադարձնել: Նրանք ուզում եյին գյուղացուն վերադարձնել անդրջրհեղեղյան գործիքներով կատարվող տաժանակիր աշխատանքին, իսկ նրանից բարդ մեքենաները և դրկել նրան գյուղատնտեսի ձրի ողնությունից: Տրոցկիստները յերազում եյին այն մասին, վոր նորից գյուղում յերևան գա կուլակը, վորը խեղդելու և տրորելու յե չքավորությանն ու միջակներին և իր վոստայնով պատելու յե գյուղը: Նրանք ուզում եյին գյուղացիությունը նորից սովի ու աղքատության տանջանքներին մատնել:

Կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները Խորհրդային պետության եկոնոմիկայի կարևորագույն և անկապտելի մասն են կազմում: Մեր յերկիրն ամրանում և զարգանում եր այն պատճառով, վոր խոշոր հանրային տնտեսությունը հողա-

գործության մեջ ստեղծեց խոշոր սոցիալիստական ինդուստրիայի արագ ընդլայնվող հումքային բազա և ապահովեց նաև քաղաքի բնակչության արագ աճող պահանջների բավարարումը։ Զավալանց ցածր ապրանքայնություն ունեցող անհատական արտադրության վերադառնալը, կապիտալիստական հարաբերությունների զարգացումն անխուսափելիորեն նշանակում են միլիոնավորների աղքատության ու սովի աճում—մի բևեռում, և մի բուռն շահագործողների հարստության ու ճարպակալման աճում—մյուս բևեռում։ Կապիտալի տրոցկիստական-զինովյևական լակեյները չեն կարող այդ չիմանալ։ Ցեվ այդ պատճառով, ժխտելով, ատելով այն ամենը, ինչ վոր սոցիալիզմ է հիշեցնում, նրանք յելք են փնտռում խոշոր կապիտալիստական գյուղատնտեսական արտադրության մեջ։ Նրանք ձգտում են վո՛չ թե պարզապես վերածնել կապիտալիզմը գյուղատնտեսության մեջ, այլ վերականգնել կապիտալիզմը շահագործման իր ամենասուր ձևերով ի դեմս խոշոր կապիտալիստական ֆերմերային արտադրության։

Տրոցկին իրեն հավատարիմ մնաց։ Այն, ինչ վոր նա իր ժամանակին Զասլոբոժյեյի ակտիվի ժողովում հռչակեց — խոշոր կապիտալիստական ֆերմերային արտադրության վրա հույս դնել,— այսոր դիրեկտիվ է դարձել տրոցկիստական-զինովյևական ընդհատակի նրա արբանյակների համար, ծրագիր է դարձել հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի համար։

Տրոցկիստները, առաջադրելով մանր տնտեսության վերականգնման ծրագիրը, այնպիսի կուրս եյին վերցրել, վորպեսզի մեր գյուղացիությանը զրկեն բոլոր այն առավելություններից ու նվաճումներից, վոր նրանք ձեռք են բերել։ Այն 150 միլիոն հեկտար հողը, վոր խորհրդային իշխանությունը գյուղացիությանն եր հանձնել, չհաշված այն հողերը, վոր առաջ ել գյուղացիության ձեռքին եյին գտնվում, անշուշտ հարկ կլիներ վերադարձնել իրենց նախկին տերերին՝ կուլակներին ու կապիտալիստներին։ Նորից յերևան կգային հողազուրկ չքավորներ ու բատրակներ, վորոնք մի փութ հացով ստրկացման կղնային կուլակի մոտ։

Սակայն այդ դեռ բոլորը չե։ Տրոցկիստները հույս ունեյին հին կարգերը վերադարձնել գերմանական ու ճապոնական ֆաշիստների ողնությամբ։ Աշխատավոր ժողովրդի վոխերիմ թշնամի Տրոցկին գրում եր.

«Գերմանական ու ճապոնական կապիտալին ԽՍՀՄ-ի շահա-

գործումը թույլատրելը կապիտալիստական խոշոր շահեր կստեղծի խորհրդային տերիտորիայում։ Գյուղում դեպի նրանց կձգտեն այն խավերը, վորոնց մեջ կապիտալիստական հոգեբանությունը չի վերացել և վորոնք կոլտնտեսություններից դժգոհ են։ Գերմանացիներն ու ճապոնացիները մեզնից կպահանջեն խաղաղացնել մթնոլորտը գյուղում, այդ պատճառով պետք կլինի զիջումների գնալ և թույլ տալ կոլտնտեսությունների ցրումը կամ կոլտնտեսություններից դուրս գալը»։

Դուրս է գալիս, վոր վո՛չ միայն հին տերերը կվերադառնան, վո՛չ միայն գյուղում տեր ու տնօրեն կդառնա ռուսական կամ, ասենք, ուկրաինական կուլակը, այլ կգան նաև գերմանական ու ճապոնական ֆաշիստները, վորոնք կարգադրություններ կանեն Խորհրդային յերկրում։ Այդ են ուզում և դրան են ձգտում տրոցկիստները։

Գերմանական ու ճապոնական ֆաշիստները տրոցկիստներին ողնում են վո՛չ միայն այն պատճառով, վոր նրանք ու տրոցկիստները միատեսակ նպատակներ ու խնդիրներ ունեն։ Վորպես պարզև այն բանի համար, վոր ֆաշիստները տրոցկիստներին կոգնեն իշխանության գլուխ անցնելու և իրենց ողնությամբ կապիտալիզմը վերականգնելու, նրանք, ըստ Տրոցկու հետ կայացրած համաձայնության, պետք է մեծ կտորներ ստանային մեր տերիտորիայից և ժողովրդական հարստության տերերը դառնային։

Ահա թե ինչ է գրել Տրոցկին այժմ դատապարտված Ռադեկին.

«Գերմանիային հարկավոր է հումք, պարեն և վաճառահանման շուկաներ։ Մենք ստիպված կլինենք թույլ տալ, վոր նամատանակի հանքանյութերի, մանգանի, վոսկու, նավթի, ապատիտների շահագործմանը, և պարտավորվել վորոշ ժամանակով նրան պարեն ու ճարպանյութ մատակարարել համաշխարհային գներից ավելի ցած գներով»։

Ցեռակի ողակ եյին ուզում դցել տրոցկիստները խորհրդային գյուղացու վրին։ Նախ, նրանք ձգտում եյին վերադառնալու նախկին կապիտալիստական տնտեսությանը, յերբ գյուղում գլխավոր դեմքը կուլակն ու կալվածատերն եր։ Ցերկրորդ, նրանք մեր հողն եյին կանչում գերմանական ու ճապոնական դավթիչներին. նրանց զենքի ողնությամբ նրանք ուզում եյին իշխանության հասնել։ Վերջապես, նրանք ուզում եյին թալանել մատնել մեր գյուղերն ու քաղաքները, ուզում եյին հարկադրեք

գյուղացուն, վորպեսզի նա դառնա ֆաշիստներին ցածր, ջրի գնով մթերքներ մատակարարող:

Արդեն վորոշված եր նաև ֆաշիստներին տրվելիք վճարը: Իր ծառայությունների համար Գերմանիան պետք է ստանար Ուկրաինան, իսկ Ճապոնիան — Պրիմորյեն ու Պրիամուրյեն: Հետևապես, մի քանի տասնյակ միլիոն բնակչություն ունեցող հսկայական վայրեր դատապարտվում եյին ֆաշիստական դաղութների վիճակին, վորտեղ լիակատար ու անբաժան տեր ու տնորեն պետք է լիներ գերմանական ու ճապոնական ղինվորականությունը:

Ուկրաինայի ու Հեռավոր Արևելքի կոլտնտեսականներն արդեն մի անդամ կրել են գերմանական ու ճապոնական ոկուպացիայի սարսափները: Նրանք յերբեք չեն մոռանա, թե ինչ են բերում իրենց հետ իմպերիալիստները: Այդ պատմական դասն անկարելի յե մոռանալ, և այն լավ են հիշում Ուկրաինայի ու Հեռավոր Արևելքի կոլտնտեսականները:

Ուկրաինան դրված գերմանական իմպերիալիզմը 1918 թվականին իր հետ բերեց դաղութային սարկություն, սով, աղքատություն, բռնություն, կախաղաններ ու գնդակահարություններ: Գերմանացիներն ուկրաինական հողի վրա իրենց պահում եյին վորպես նվաճողներ: Գերմանո-ավստրիական ոկուպանտների և Ուկրաինական ռադայի միջև կնքված պայմանագրով (1918 թ. ապրիլ) Ուկրաինան պարտավորվում եր մինչև 1918 թ. հուլիսի 31-ը Գերմանիային, Ավստրո-Հունգարիային մատակարարելու 60 միլիոն փութ հացահատիկ, 2,750 հազար փութ կենդանի քաշ ունեցող յեղջերավոր անասուններ, 400 միլիոն հատ ձու և գյուղատնտեսական բազմաթիվ այլ մթերքներ (շաքար, ճարպ, վուշ, կանեփաթել): Արտադրանքներն ամբողջ եշելոններով ուղարկվում եյին Գերմանիա:

Քիչ փաստաթղթեր չեն մնացել այն մասին, թե ինչպես գերմանական ոկուպանտները վերականգնում եյին վո՛չ միայն ուկրաինական, այլև լեհական կալվածատերերի իշխանությունը: Գերմանական դիվանագետ Մումմը հեռագրում եր Բեռլին՝ արտաքին գործերի մինիստրությանը. «... Անհրաժեշտ է ագրարային հարցը լուծել սեփականության իրավունքը վերականգնելու և գյուղացիներից նրանց ստացած հողի դիմաց վճար վերցնելու միջոցով: Ընդամին անհրաժեշտ է խոշոր կալվածները պահպանել գյուղատնտեսության եքսպորտային հնարավորու-

թյունն ավելացնելու նպատակով։ Առանձին կալվածների առավելագույն չափը պետք է վորոշվի հատուկ որենքով»։

Ուկրաինայի դրավման դեկավարներից մեկը—Բյուլովը հաղորդում էր Բեռլին. «Ցանկալի կլիներ դրավումը կատարել այնպիսի ռազմական ուժերով, վորոնց սոսկ ներկայությունն իսկ սարսափ ներշնչեր բնակչությանը և նրան ստիպեր հացի ավելցուկները վաճառել մեզ, իսկ յեթե պահանջվի, ապա հարկ կլինի ուժով վերցնել հացը»։

Կարելի յե յերևակայել, թե ինչպիսի սանձարձակություն հանդես կբերեին գերմանական ֆաշիստները այժմ, յեթե նրանց հաջողվեր Ուկրաինան գրավել։

Վերջապես, ոկուպանտները պատրաստել եին մի որենք, վորի մեջ ասված եր. «Ցուրաքանչյուր վոք, ով յուրացրել է ուրիշի հողը, նմանապես ուրիշի կենդանի կամ մեռյալ ինվենտարը, պարտավոր է անմիջապես դրանք վերադարձնել նախկին տիրոջը»։

Մի՞թե այս փաստերից յուրաքանչյուր կոլտնտեսականի համար պարզ չե, թե ինչպիսի հրեշային կոտորած կսկսվեր գյուղում, յեթե թեկուզ մի րոպեյով թույլ տանք այն մտքը, վոր տրոցկիստները, ֆաշիստների ոգնությամբ, կկարողանային իրագործել իրենց պլաններն ու դիտավորությունները։

Դատավարության ժամանակ, դատախազի այն հարցին, թե Ուկրաինան ինչ կդառնար, յեթե տրոցկիստները կարողանային հաջողություն ձեռք բերել, մեղադրյալ Ռադեկն ստիպված յեղավ պատասխանել. «Գերմանական նահանգ»։

Ուկրաինայի կոլտնտեսականները չեն ուզում «Գերմանական նահանգի» բնակիչներ լինել, նրանք կկոտրեն դավաճանների վիզը նույնպիսի հաջողությամբ, ինչպես ոկուպանտներին վռնդեցին ու ջախջախեցին 1918 թվականին։ Թող գերմանական ֆաշիստները թողնեն իրենց յերազները ուկրաինական հացի ու ճարպի մասին, թո՛ղ հույս չդնեն իրենց տրոցկիստ – լրտեսների վրա, վորոնք հանցանքի մեջ բռնվել են։

Վոչ պակաս խրատական է նաև Հեռավոր Արևելքի ճապոնական ոկուպացիայի պատմությունը, հատկապես այն չրջանների, վոր տրոցկիստներն արդեն «նախապես վաճառել եին» ճապոնական ֆաշիստներին։ Մինչև այժմ Պրիմորյեյի և Պրիամուրյեյի աշխատավորները հիշում են այն դաղանությունների ու բռնությունների մասին, վոր սպիտակ-գվարդիական գեներալներն ու սպաները կատարել են ճապոնացիների թևի տակ։

Ամերիկյան գեներալ Գրեվսը, նախկին հրամանատար ԱՄՆ-ի այն զորքերի, որոնք մասնակցություն են ցույց տվել Սիբիրում կատարված դաշնակցային ինտերվենցիային, «Ամերիկյան ավանտյուրան Սիբիրում» վերտառությունը կրող իր գրքում սարսռեցուցիչ փաստեր է բերում սպիտակ-գվարդիական այն տեռորի մասին, որ կատարվել է ճապոնացիների հրամանով և աջակցությամբ։ «Սեմյոնովի և Կալմիկովի զինվորները, ճապոնական զորքերի պաշտպանության ներքո գտնվելով, յերկիրը հեղեղում եյին վայրենի դազանների նման, սպանում և կողոպտում եյին ժողովրդին, մինչդեռ ճապոնացիները, յեթե ցանկություն ունենային, ամեն րոպե կարող եյին դադարեցնել այդ սպանությունները»։

Ցեվ այնուհետև. «Արևելյան Սիբիրի գյուղացիության մեջ չափազանց մեծ վրդովմունք եր տիրում ճապոնիայի դեմ, որովհետև յուրաքանչյուր վոք գիտեր, որ այդ դազանությունները ռուսները կատարում եյին ճապոնական դոտում և ճապոնացիների պաշտպանության ներքո»։

Հեռավոր-Արևելյան յերկրի, մեր ամբողջ յերկրի պես ծաղկող ու բերկրալի յերկրամասի կոլտնտեսականները գիտեն կապիտալիզմի ռեստավրատորների արժեքը և կկարողանան հարկ յեղած մոմենտին այնպիսի հակահարված տալ, որ ճապոնական և մյուս զինվորականությունը այլևս վոչ մի ցանկություն չունենան վորևե ավանտյուրա սարքելու մեր հեռավոր-արևելյան սահմաններում։

Այդ պատմական դասերն են ակամայից հիշողության մեջ գալիս, որովհետև նրանք ամենից լավ են ցույց տալիս խորհրդային ժողովրդի հեղափոխական վճռականությունը, խորհրդային գյուղացիության նվիրվածությունը սոցիալիզմի գործին։ Յեթե այն ժամանակ, 1918—1921 թ. թ., յերբ մենք դեռևս լավ զինված կարմիր բանակ չունեյինք, յերբ խանգարումներ ու հեղափոխական ավյունն եր գլխավորապես հաղթում, հակառակորդն անխնա կերպով ջախջախվեց, ապա ուրեմն կարելի յե յերևակայել, թե ինչպիսի ջախջախիչ, խորտակիչ հարվածով կպատասխանի այժմ մեր յերկիրը, մեր ժողովուրդը թշնամու վոտնձգություններին։ Մենք այժմ պաշտպանելու բան ունենք, մենք այժմ պաշտպանելու միջոցներ ունենք, և պաշտպանողնե՛ր ել ունենք։

Ամուր է ու անխորտակելի բանվորների և գյուղացիների դաշինքը։ Նա սրբագործված է՝ Լենինի—Ստալինի մեծ կուսակ-

ցության դրոշի ներքո սոցիալիզմի համար մղված հաղթական պայքարով: Բանվոր դասակարգի, ինտելիգենցիայի հետ միասին նոր, խորհրդային գյուղացիությունը հաստատապես ու վստահ կերպով առաջ է ընթանում սոցիալիստական ուղիով և. յերբեք չի շեղվի նրանից:

Իսկ ինչ վերաբերում է դավաճանների ու լրտեսների անարդ բանդային—տրոցկիստներին, ապա նա կվոչնչացվի մինչև վերջը, և խորհրդային ժողովուրդը մի ծանր քար կդնի այդ աղանդամոլների դերեզմանի վրա:

«Правда», 2 փետրվարի 1937 թ.

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՊԱՏՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

«Կապիտալիստական շրջապատումը հասարակ աշխարհագրական հասկացողություն չէ: Կապիտալիստական շրջապատում—դա նշանակում է, թե ԽՍՀՄ-ի շուրջը կան դասակարգային թշնամի ուժեր, վորոնք պատրաստ են սատարելու մեր դասակարգային թշնամիներին ԽՍՀՄ-ի ներսում՝ թե՛ բարոյապես, թե՛ նյութապես, թե՛ ֆինանսական բլոկադայի միջոցով, թե՛, դեպքը բերելիս, ռազմական ինտերվենցիայի միջոցով: Ապացուցված է, վոր մեր մասնագետների վնասարարությունը, կուլակության հակախորհրդային յելույթները, մեր ձեռնարկությունների ու կառուցումների հրկիզումներն ու պայթեցումները դրամատես ոժանդակվում ու ներշնչվում են դրսից»[1]:

1917 թ. հոկտեմբերին սոցիալիստական մեծ հեղափոխությունը կապիտալիստական սիստեմից դուրս կորզեց յերկրագնդի 1/6 մասը: Այն ժամանակից ի վեր աշխարհը ճեղքվեց դեմ-հանդիման կանգնած և միմյանց թշնամի յերկու բանակների—սոցիալիզմ և կապիտալիզմ: Նրանց բաժանում են վո՛չ միայն պետական սահմանները: Այդ վո՛չ միայն տարբեր տերիտորիաներ են: Այդ—միմյանց հակադիր յերկու հասարակական-տնտեսական իրավակարգեր են:

Սոցիալիզմն անրուժելի վերք հասցրեց կապիտալիզմին, մահացու հարված հասցրեց բուրժուազիայի տնտեսական, քաղաքական և հոգևոր տիրապետությանը: Հենց այդ պատճառով էլ կապիտալիստական մեռնող աշխարհը բոլոր միջոցներով ու յեղանակներով պայքարում էր ու պայքարում է նոր, սոցիալիստական աշխարհի դեմ: Հին աշխարհն անդադրում և անընդհատ ձգտում է կապիտալիստական կարգերը մեր յերկրում վերականգնելուն (ռեստավրացիային):

Ի՞նչն է դրդում իմպերիալիստական բուրժուազիային՝

---

1 Ստալին, «Լենինիզմի հարցերը», էջ 481, Հայկուսհրատ, 1935 թ.:

ԽՍՀՄ-ում կապիտալիստական կարգերը վերականգնելու փորձեր կատարել։

Մեծ պրոլետարական հեղափոխությունը վոչնչացրեց ցարական Ռուսաստանը—արևմտյան իմպերիալիզմի մեծագույն ռեզերվը—և ստեղծեց ազատ ու անկախ Խորհրդային յերկիր։ Նա արևմտա-յեվրոպական իմպերիալիստներին զրկեց ռուսական արդյունաբերության մեջ նրանց ունեցած ներդրումներից, վերացրեց ցարական պարտքերը, կապիտալիզմի առջև փակեց վաճառահանման ու կապիտալների ներդրման շահավետ շուկան։

Վորքան ավելի եյին սրվում իմպերիալիզմի հակասությունները, այնքան ավելի հաճախ եյին միջազգային բուրժուազիայի հայացքներն ուղղվում ԽՍՀՄ-ի կողմը, թե՝ չի՞ կարելի արդյոք այդ հակասությունների արյունոտ կծիկը քանդել ի հաշիվ Խորհրդային Միության։

Բացի դրանից, իր գոյությամբ Խորհրդային Միությունը վոգևորում և կապիտալիստական յերկիրների բանվոր դասակարգին՝ պայքարի յելնելու ճնշողների—իմպերիալիստների դեմ։

Ահա թե ինչու կապիտալիստական շրջապատումը նշանակում է մահու և կենաց կռիվ ԽՍՀՄ-ի դեմ։ Այդ բացահայտ և քողարկված, դիվանագիտական և տնտեսական, արյունոտ և անարյուն կռիվ է, դասակարգային կռիվ է։ Այդ կռիվը արտահայտվել է ԽՍՀՄ-ի ներսում յեղած դասակարգային թշնամիներին բարոյական ու նյութական աջակցություն ցույց տալու ձևով, վնասարարության ու դիվերսիայի, լրտեսության ու պրովոկացիայի ձևով, կոմունիստական կուսակցության առաջնորդների և խորհրդային կառավարության ներկայացուցիչների դեմ տեռոր կազմակերպելու ձևով ու վերջապես ինտերվենցիայի — քաղաքացիական պատերազմի տարիներում ԽՍՀՄ-ի գործերին բացահայտ միջամտություն ցույց տալու ձևով։

Քաղաքացիական պատերազմի տարիներում (1918—1922 թ.թ.), յերբ յերիտասարդ Խորհրդային հանրապետությունը դեռևս թույլ եր, 14 իմպերիալիստական պետություններ նրա դեմ կատաղի ինտերվենցիոնիստական կռիվ եյին մղում։ Ուկրաինայում գերմանացիներն եյին տեր ու տնորինություն անում, Հեռավոր Արևելքում և Սիբիրում—ճապոնացիները, ինտերվենտները տնորինում եյին Հյուսիսում, Հարավում, Անդրկովկասում և Ուրալում։ Նրանք փորձում եյին խեղդել խորհրդային իշխանությունը և ԽՍՀՄ-ն իմպերիալիզմի գաղութը դարձնել։ Ընդամին նրանք հենվում եյին սպիտակ գեներալների, ինչպես նաև

մենշևիկների ու բուրժուական նացիոնալիստների վրա (որինակ, Վրաստանում ու Ուկրաինայում)։ Արխանգելսկում և Մուրմանում իմպերիալիստները հենվում էին իրենց ստեղծած՝ Զայկովսկու եսերական կառավարության վրա։ Ցեվ ամբողջ այդ վոհմակն ինտերվենտների հետ միասին խեղդում էր բանվորներին ու գյուղացիներին։

1924 թ. կազմված «Ինտերվենցիայի զոհերին աջակցող ընկերության» տվյալներով, ինտերվենցիայից կորուստներ են ունեցել մոտ 7½ միլիոն մարդ, կամ ինտերվենցիայի դրված շրջանների բնակչության 8,8%-ը։ Քաղաքացիների գույքային վնասները (ցանքեր, անասուններ, ինվենտար, շինություններ, մթերքներ, ապրանքներ, արժեթղթեր և դրամ, հաղուստեղեն ու կոշկեղեն) կազմել են 558,377,451 ռուբլի։ Վոչնչացել է 111,730 մարդ։ Վերքեր են ստացել ու խեղվել են 29,231 մարդ, բռնության ու ծեծի յեն յենթարկվել 112,805 մարդ։

Հիշեցնենք, վոր ինտերվենցիայի նույն ժամանակաշրջանում իմպերիալիստներն եսերների, սոցիալիզմի այդ վոխերիմ թշնամիների ոգնությամբ գործում էին անկյունից սպանություններ կատարելով, տեռորի միջոցով։ Եսերուհի Կապլանը կրակեց համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ Լենինի վրա։ Եսերները սպանեցին ընկեր Ուրիցկուն և Վոլոդարսկուն։ Ինտերվենտները սպիտակ-գվարդիական դավադրություններ էին կազմակերպում։ Կազմակերպվեց ձախ եսերների դավադրություն Լենինի դեմ. այս դավադրությանը մասնակցություն են ցույց տվել սրիկա Պյատակովը և կուլակային դաղափարախոս Բուխարինը։ Նույն 1918 թվականին ինտերվենտների ցուցումով կազմակերպվեց ձախ եսերների ապստամբություն։ Իմպերիալիստներն ինտերվենցիայի ժամանակաշրջանում գործի դրին նաև այնպիսի միջոց, ինչպես լրտեսությունը, ընդսմին ոգտագործելով «դիվանագիտական անձեռնմխելիության» մանդատը (այդ ցույց տվեց անգլիական դիվանագիտական գործակալ Լոկկարտի գաղը, վորը 1918 թվին դավադրություն և լրտեսություն էր կազմակերպել խորհրդային իշխանության դեմ)։

Հայտնի է, վոր բացահայտ ինտերվենցիան ձախողվեց։

Բայց չնայած ինտերվենցիայի կրախին, համաշխարհային բուրժուազիան հույսը չի կորցրել այդ իրագործելու ավելի «բարեպատեհ» պայմաններում։ Ինտերվենցիան ժամանակավորապես որակարգից հանվեց այն հուսով, վոր Խորհրդային Ռուսաս-

տանը նոր տնտեսական քաղաքականության ռելսերի վրա կապիտալիստական պետությունների դիրքը կվերադառնա: Մոտավորապես նույնպես եղին մտածում նեպական Ռուսաստանի մասին տրոցկիստներն ու զինովյեվականները, վորոնք նեպը համարում եղին անընդմեջ նահանջ դեպի կապիտալիզմը: Իսկ յերբ բուրժուական և տրոցկիստական–զինովյեվական հույսերը նեպի վերաբերմամբ չարդարացան, կապիտալիստական շրջապատման ու նրա գործակալների ռեստավրատորական գործունեությունն ուժեղացավ նոր պայմաններում, նոր ձևերով:

Ամենից առաջ իմպերիալիստները փորձեցին ոգտագործել Խորհուրդների յերկրի դժվարությունները. ոգտագործել դասակարգային պայքարի սրումը, վորն առաջ եր յեկել՝ խորհրդային իշխանության կողմից քաղաքի ու գյուղի կապիտալիստական տարրերի դեմ գործադրվող հարձակողական քաղաքականության առնչությամբ, ոգտագործել միջազգային պայմանների բարդությունը: Նրանք իրենց հույսը դրել եղին կուլակության ու նրա գաղափարախոսների վրա: Իրենց ռեստավրատորական մտադրություններն իրականացնելու համար իմպերիալիստական գիշատիչներն ոգտագործեցին խորհրդային ռեժիմից դժգոհ հին տեխնիկական ինտելիգենցիայի ռեակցիոն տարրերը: Բացի այդ, նրանք ձգտում եղին ոգտագործել ինտելիգենցիայի նաև այն տարրերը, վորոնք սկսել եղին տատանվել տրոցկիստների ու աջ ոպորտունիստների՝ կուսակցության քաղաքականության «կործանման» ու խորհրդային իշխանության «կրախի» վերաբերյալ վայնասունների ազդեցության տակ:

Ասպարեզ յեկան բուրժուական ինտելիգենցիայի ինտերվենցիոնիստական ակնկալությունները և դրա կապակցությամբ՝ վնասարարությունը վորպես դասակարգային պայքարի մեթոդ:

Սոցիալիստական շինարարության տարբեր ժամանակամիջոցներում վնասարարությունը տարբեր ձևերով և արտահայտվել: Վնասարարությունը՝ վորպես դասակարգային պայքարի մեթոդ, առաջին անգամ բացվեց ածխարդյունաբերության վնասարարների դեմ տեղի ունեցած «Շախտիի դատավարությամբ» (1928 թվական):

Վնասարարության մեթոդով գործում եղին նաև Զայանովի—Կոնդրատյևի կուլակային–եսերական խումբը Հողժողկոմատում ու Ֆինժողկոմատում և Ռամզինի «ինժեներական» խումբը:

«Արդյունաբերական կուսակցության» դատավարությունը (1930 թ.), իսկ այնուհետև II Ինտերնացիոնալի հետ կապված

Գրոմանի ու Ընկ. մենշևիկյան կազմակերպության դա՝ ավարությունը (1931 թ.) ցույց տվին, որ բոլոր յերեք խմբերն ել— թե՛ մենշևիկները, թե՛ Եսեր-Հայանովականները, թե՛ Ռամզինի «ինժեներական» խումբը—կապված են յեղել յեվրոպական յերկրների իմպերիալիստական բուրժուազիայի հետ, որոնք դնված ինտերվենցիայի նույն նպատակներն են դրած յեղել: Պլատֆորմը, որի վրա միավորվել եյին բոլոր յերեք հակահեղափոխական խմբավորումները, հետևյալն եր. ա) կապիտալիստական հարաբերությունների վերականգնումը ԽՍՀՄ-ում. բ) հուսադրումն ինտերվենցիայի վրա որպես խորհրդային իշխանության տապալման միակ հնարավոր ուղու. գ) վնասարարությունը որպես հակահեղափոխական աշխատանքի միակ մեթոդը ԽՍՀՄ-ի ներսում և կազմալուծիչ աշխատանք բանակում:

Սակայն վնասարարությունն ու լրտեսությունը կապիտալիստական շրջապատման պայքարի միակ միջոցները չեյին այդ տարիներում: Իմպերիալիստներն ուզում եյին «շոշափել» ԽՍՀՄ-ն, պրովոկացիայի միջոցով նրան պատերազմի դրդել: Այստեղից՝ Պեկինի խորհրդային դեսպանության վրա կատարված հարձակումները, Վարշավայի դեսպանատունը պայթեցնելու փորձը, հարձակումն «Արկոսի» վրա Լոնդոնում, խորհրդային դեսպանների սպանությունը (ընկ. Վոյկով), դիվանագիտական հարաբերությունների խզումն Անգլիայի հետ, վերջապես, դնված կոնֆլիկտը Չին-Արևելյան յերկաթուղում (1929 թ.), յերբ մեր Կարմիր բանակն ստիպված յեղավ մի լավ դաս տալ Չանկայի անցկացրած չինական իմպերիալիստներին:

Ուղղորդելով լիկվիդացիայի յենթարկվող կուլակության դիմադրությունը, իմպերիալիստները բանվորների սպանություններ կատարելու և նրանց թունավորելու պրովոկացիա յեն անում: Ակնառու կերպով այդ ցույց տվեց 48 վնասարար «մատակարարների» դատավարությունը 1930 թվին, որոնք գործելիս են յեղել հասարակական սննդի ֆրոնտում: Հայտնի յե, որ ֆաշիստական և սպիտակ-գվարդիական ամբողջ մամուլը «վահանի վրա» յեր բարձրացնում 1932 թվին Կուբանի շրջանի կոլտնտեսություններում տեղի ունեցող կուլակային սաբոտաժն ու վնասարարությունը: Հայտնի յե, որ գերմանական ու լեհական հակահետախուզությանը վաճառված ուկրաինական նացիոնալիստներն ամեն կերպ ձգտում եյին ուժեղացնել ու բարդացնել վերակառուցման ժամանակաշրջանի դժվարությունները գյուղատնտեսության մեջ:

Մեր յերկրում սոցիալիզմը հաղթանակելու հետ միաժամանակ կապիտալիստական շրջապատումը զրկվեց իր սոցիալական (դասակարգային) բաղայից ԽՍՀՄ-ի ներսում: Ինդուստրացման և կոլեկտիվային կարգերի հաղթանակը, շահագործող դասակարգերի վերացումը ջախջախեցին-քամուն տվին միջազգային բուրժուազիայի և նրա գործակալության հույսերը «սոցիալական հեղաշրջում», կապիտալիզմի restauration կատարելու՝ կուլակության և վնասարարական հին ինտելիգենցիայի ուղնությամբ: Արդեն 1931 թվականին, սոցիալիզմի հաղթանակների ազդեցության տակ նշագծվեց ինտելիգենցիայի նույնիսկ այն մասի վորոշակի շրջադարձը դեպի խորհրդային իշխանության կողմը, վորն առաջ համակրում եր վնասարարությանը:

Այժմ, յերբ մեր յերկրի աշխատավորները միավորված են սոցիալիզմի շինարարության ընդհանուր շահերով, վնասարարների ու կապիտալիզմի restauration-ների կազրեր իմպերիալիստները կարող են գտնել մեր հասարակության տականքների մեջ, ջախջախված դասակարգերի բեկորների մեջ միայն:

Հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի դատավարությունը ցույց տվեց, վոր իմպերիալիստներն իրենց համար գործակալություն են գտել հանձին տրոցկիստական-զինովյեվական բանդայի, վորը ԽՍՀՄ-ում կապիտալիստական restauration-ի դրոշակակիրն ե դարձել, սոցիալիզմին թշնամի բոլոր ուժերի հավաքակետն ե դարձել:

Տրոցկիստական բանդիտներն իրենց ամբողջ անցյալով ու ներկայով ապացուցեցին, վոր նրանք պատրաստ են հավատով ու ճշմարտությամբ ծառայելու կապիտալիզմին, պայքարի միջոցների ու մեթոդների մեջ խարություն չդնելով: Դրան հասցրեց տրոցկիստների, զինովյեվականների ու կապիտալիզմի աջ restauration-ների հակահեղափոխական պայքարի ամբողջ ուղին:

Արդեն 1926 թվականին տրոցկիստական-զինովյեվական բլոկը դարձավ հակախորհրդային բոլոր տարրերն ու հոսանքները դեպի ինքը ձգող մագնիսը: ԽՍՀ Միության դեմ զինված ինտերվենցիա կատարելու բացահայտ կոդմնակից՝ մենշևիկ Իվանովիչը դուր չի գրել. «Ճնորհակալ լինենք ռոզդիցիայից այն բանի համար..., վոր նրա աշխատանքը հեշտացնում ե բոլոր նրանց գործը, ովքեր խորհրդային իշխանության տապալումն իրենց խնդիրն են համարում...»:

Տրոցկիստական-զինովյեվական վոհմակը, վորը տասնյակ տարիներով պայքարել ե բոլշևիզմի դեմ, վորը յերբեք չի հա-

վատացել մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորությանը, մեր հեղափոխության սոցիալիստական բնույթին, ուղում եր խորհրդային տնտեսությունը կապիտալիստական աշխարհի «կցորդը» դարձնել: Արդեն 1922 թվականին Հուդա-Տրոցկին առաջարկում եր՝ մեր ձեռնարկություններին թույլ տալ, վոր նրանք խորհրդային դույքը, այդ թվում նաև հիմնական կապիտալը, դրավ դնեն մասնավոր կապիտալիստների մոտ: Սոկոլնիկովը, պնդելով, վոր պետք է պահպանել մեր յերկրի տնտեսական հետամնացությունը, նրա դաուեսացման, այսինքն, համաշխարհային իմպերիալիզմի կողմից այդ յերկիրը ստրկացնելու բացահայտ կողմնակիցն եր հանդիսանում: Ցեվ այժմ նա, ըստ իր սեփական արտահայտության, դարձել է «ռեցիդիվիստ»: Հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի դատավարության ժամանակ Սոկոլնիկովը շարադրեց Տրոցկու շայկայի ծրագրի եությունը.— «Ինչ վերաբերում է ծրագրային դիրքավորումներին, ապա դեռևս 1932 թվին թե՛ տրոցկիստները, թե՛ զինովյեվականները, թե՛ աջերը հիմնականում համամիտ եյին այն ծրագրի վերաբերմամբ, վորն առաջ բնորոշվում եր վորպես աջերի ծրագիր: Այդ այսպես կոչված ոյուտինյան պլատֆորմն է. այդ պլատֆորմը դեռ 1932 թվին զգալի չափով արտահայտում եր բոլոր յերեք խմբերին ընդհանուր, հենց այս ծրագրային դրույթները: Ինչ վերաբերում է այդ ծրագրի հետագա զարգացմանը, ապա կենտրոնի ղեկավար անդամները գտնում եյին, վոր իբրև մեկուսացած հեղափոխություն մեր հեղափոխությունը չի կարող պահպանվել վորպես սոցիալիստական, վոր կառուցվիական ուլտրամոլերիալիզմի թեորիան և բուխարինյան կազմակերպված կապիտալիզմի նրան աղդակից թեորիան ճիշտ դուրս յեկան: Մենք գտնում ենք, վոր ֆաշիզմը—այդ ամենակազմակերպված կապիտալիզմն է... Ուստի ավելի լավ է նրա հետ համաձայնության գալ, ավելի լավ է նրան վորևե կոմպրոմիս անել՝ սոցիալիզմից դեպի կապիտալիզմ նահանջելու իմաստով»:

Ցեվ նրանք «փնտռում եյին» համաձայնություն կոլտնտեսությունները և խորհտնտեսությունները ցրելու, կուլակային ստրկությունը վերականգնելու հիման վրա, արդյունաբերական ձեռնարկությունները վորպես մասնավոր սեփականություն և վորպես կոնցեսիաներ կապիտալիստներին հանձնելու հիման վրա, վերջապես, ԽՍՀՄ-ի տերիտորիան բաժանելու և այն՝ դերմանական ու ճապոնական ֆաշիստներին վաճառելու հիման վրա: Կապիտալիզմը մեր յերկրում վերականգնելու տրոցկիստական ծրա-

դերը Տրոցկու և նրա գործակիցների համաձայնության հիմքն էր Հեսսի հետ, Ճապոնիայի ու Գերմանիայի գլխավոր շտաբների հետ:

Համաձայնություն կնքելով «բոլշևիզմի դեմ պայքարելու մասին», ճապոնական ու գերմանական ֆաշիստները, ԽՍՀՄ-ի դեմ արշավանքի պատրաստվելով, ձգտում էին ֆաշիստական ջոկատ ստեղծել ԽՍՀՄ-ի ներսում: Ցեվ նրանք դատն այդ ջոկատը հանձին տրոցկիստական-զինովյեվական և «դուդահեռ» կենտրոնների դարշելի տականքների:

Պյատակովը դատարանում ցուցմունք տվեց, որ պարտվողականության տրոցկիստական «վարիանտի» մեկնակետն էր՝ աջակցություն ցույց տալ ֆաշիզմին Խորհրդային Միության վրա հարձակվելու դործում: Տրոցկին ու նրա բանդան հասկանում էին, որ յերկրի ներսում չկա այնպիսի ուժ, որի վրա նրանք հենվել կարողանային, այդ պատճառով նրանք հույսը դնում էին պատերազմի ու պարտվողականության վրա: Իր ձեռնասունի—Պյատակովի հետ զրուցելիս Հուդա-Տրոցկին ասել է նոր պատերազմի մինչև իսկ տարեթիվը—1937 թիվը:

Հակախորհրդային տրոցկիստական կենտրոնը դործել է այդ ծրագրին լիովին համապատասխան: Նա Տրոցկու հետ միասին նախապես գերմանական և ճապոնական իմպերիալիստներին է վաճառել մեր հողի «համեղ պատառները»: Այդ տեսակետից Տրոցկին ավելի ընկավ, քան մինչև իսկ այնպիսի ծախված սպիտակ ատամանները, ինչպես Սեմյոնովը: Վերջինս քաղաքացիական պատերազմի տարիներին Ճապոնիայի հետ համաձայնություն կնքեց Անդրբայկալի վոսկու հանքերը նրան տրամադրելու մասին: Հուդա-Տրոցկին իր կնքած համաձայնության մեջ նախատեսել էր վո՛չ միայն բոլոր վոսկու հանքերը ճապոնացիներին կոնցեսիայով տալը, այլև նախապես վաճառել էր ամբողջ Պրիամուրյեն ու Պրիմորյեն ճապոնական, իսկ Ուկրաինան—գերմանական ֆաշիստներին:

Տրոցկիստները պատրաստվում էին, վորպեսզի պատերազմի մոմենտին քայքայում մտցնեն Կարմիր բանակի շարքերը: ԽՍՀՄ-ի պարտության նախապատրաստման գլխավոր մեթոդն էին նրանք դարձրել դիվերսիան և վնասարարությունը, սակայն վնասարարության, դիվերսիաների դործում նրանք զդալիորեն գերազանցեցին «արդյունաբերական կուսակցության» ամենանարդ վոճրադործներին:

Հայրենիքի դավաճանները վորձում էին գլխավոր շտաբնե-

րի անմիջական առաջադրանքով մեր բանակի հզորությունը թուլացնել պաշտպանական արդյունաբերության մեջ վնասարարություն կատարելով. նրանք զինվորական եշելոնների խորտակումներ էին կատարում, սպանում էին Կարմիր բանակի զավակներին—հայրենիքի պաշտպաններին: Շեստովը—այդ դրոֆեսիոնալ մարդասպանը — դողացած զինամիտով վոչնչացնում էր բանվորների անմեղ յերեխաներին, վորպեսզի խորհրդային ժողովրդի վրդովմունքն առաջ բերի: Նույն «պլանային առաջադրանքներից» էր յելնում դահիճ Դրոբնիսը, վորը բանվորներին սպանում էր համաձայն «վորքան շատ, այնքան լավ» սկզբունքի:

Տրոցկիստական-զինովյեվական բանդան՝ լիակատար համաձայնության յեկած ոտարերկրյա հետախուզությունների հետ և նրանց նյութական ոժանդակությամբ տեռորիստական ակտեր էր պատրաստում Խորհրդային պետության ղեկավարների դեմ, առաջին հերթին ժողովրդի առաջնորդ ընկեր Ստալինի և նրա զինակիցների դեմ:

Տրոցկիստական-զինովյեվական բանդային պատկանող սրիկաներին հաջողվեց սպանել անմոռանալի Կիրովին:

Դիվերսիաների, վնասարարության, լրտեսության, տեռորի հիման վրա ամբողջովին միաձուլվել ու միահյուսվել էր տրոցկիստ-զինովյեվականների գործունեությունը ֆաշիստների, հակահեղափոխականների հետ: Լրտես-հակահեղափոխականների ու տրոցկիստների միջև ամեն տեսակ տարբերություններ վաղուց չքացել էին:

Հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի դատավարությունն ամենաակներև կերպով ցույց տվեց, թե ինչպես է գործում կապիտալիստական շրջապատումը:

Սակայն այդ շրջապատումը միատեսակ չէ: Վո՛չ բոլոր յերկրներն են այժմ ձգտում պատերազմի ընդհանրապես և Խորհրդային Միության դեմ՝ մասնավորապես: Իմպերիալիզմի բանակում անհաշտելի հակասություններ գոյություն ունեն:

Միջազգային պայմաններն այժմ այնպես են դասավորվել, վոր մի քանի պետություններ—նախ և առաջ դեմոկրատական պետությունները—տվյալ մոմենտին շահագրգռված են, վորպեսզի խաղաղությունը պահպանվի: Վորպես պատերազմի հրձիգ այժմ հանդես է գալիս կապիտալի առավել ռեակցիոն, առավել իմպերիալիստական դիկտատուրան—ֆաշիզմը:

Հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի դատավարու-

Թյունն ամբողջ աշխարհին ցույց տվեց ֆաշիզմի լայնորեն հղացած՝ պատերազմի պլանը։ Եվ այդ իմաստով՝ վոչ միայն Խորհրդային Միության աշխատավորները, այլև խաղաղության բոլոր բարեկամները, ամբողջ առաջավոր ու պրոգրեսիվ մարդկությունը կարող է տոնել ֆաշիստ ագրեսորների և պատերազմի տրոցկիստական հրձիգների վերաբերմամբ տարած բարոյական ու քաղաքական հաղթանակը։

Դեռևս ժողովրդի վոչ բոլոր թշնամիներն են բռնված, դեռևս վոչ բոլորն են դինաթափ արված, բայց ինչքան էլ վոր նրանք ճգնեն սոցիալիզմի հզորությունը խախտել, կապիտալիստական հարաբերությունները ԽՍՀՄ-ում վերականգնելու նրանց փորձերն ապարդյուն կանցնեն։ Մեր հայրենիքն անխոցելի է ու անպարտելի։ Եվ եթե իմպերիալիստական, ֆաշիստական պետությունները հանդգնեն նոր հակահեղափոխական պատերազմ հարուցել ԽՍՀՄ-ի դեմ, ապա այդ պատերազմը ֆաշիզմի համար ամենավտանգավոր պատերազմը կլինի։ Նա ամենավտանգավորը կլինի այն պատճառով, վոր ԽՍՀՄ-ի ժողովուրդներն իրենց հայրենիքի համար կկռվեն մինչև հաղթություն տանեն։ Նա ամենավտանգավորը կլինի բուրժուազիայի համար նաև այն պատճառով, վոր պատերազմը տեղի կունենա վոչ միայն ֆրոնտներում, այլ և հակառակորդի թիկունքում։ Համայն աշխարհի աշխատավորները մեզ կոգնեն սոցիալիստական հայրենիքի պաշտպանության գործում, նրանք թիկունքից կհարվածեն իրենց կեղեքիչներին։ Այդ ցույց տվեց Խորհրդային Միության դեմ կատարած առաջին ինտերվենցիան։ Յերբ իմպերիալիստները իրենց զորքերն ուղարկում էին մեր հեղափոխությունը ճնշելու, այդ զորքերն ապստամբում էին։ Անգլիական վարչապետ Լլոյդ-Ջորջը 1919 թվին հայտարարեց. «Եթե ես զինվորների վորևե զորամաս ուղարկեմ Ռուսաստան, նրանք կապստամբեն իմ դեմ»։

Թող չնեղանան իմպերիալիստները, եթե իրենց կողմից մեր դեմ հարուցած պատերազմի մյուս որն իրենց «չարքերից պակասած գտնեն իրենց մոտիկ կառավարություններից մի քանիսին...» (Ստալին)։

«Комсомольская Правда», 2 փետրվարի 1937 թ.

Ն. ԹՈՒՐԻՆՇԵՏՍԿԻ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱՆԱՐԳ ԴԱՎԱՃԱՆՆԵՐԸ ՅԵՎ ՖԱՇԻԶՄԻ ՎԱՐՁԿԱՆՆԵՐԸ

Հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի դատավարությունը բացեց պրոլետարական դատարանի դատավճռով իրենց արժանի պատիժն ստացած՝ ժողովրդի մոլեգին թշնամիների, ֆաշիստական ստորաքարշ ծառաների—Տրոցկու և նրա գարշելի արբանյակների հրեշավորության չափ ստոր, նողկալի հանցագործությունների ամբողջ հյուսվածքը:

Վերջնական պարտություն կրելով կուսակցության ու խորհրդային իշխանության դեմ մղած իրենց յերկարատև պայքարում, մեկուսացած ու քաղաքականապես դատապարտված մի խումբ հանդիսանալով, արժանացած լինելով խորհրդային ժողովրդի կողմից ընդհանուր արհամարհանքի ու նշավակության, տրոցկիստական բանդիտները բանվոր դասակարգի և գյուղացիության շահերի չլսված մատնություն կատարեցին, Հայրենիքին դավաճանեցին և գերմանական ֆաշիստների ու սրանց ճապոնական դաշնակիցների լրտեսական ու դիվերսիոն-վնասարարական գործակալությունը դարձան:

Դատավարությունն անվիճելի պարզությամբ ցույց տվեց, որ իրենց հրեշավոր չարագործություններում տրոցկիստական բանդիտները յերկակեսն ունեցել ԽՍՀՄ-ում սոցիալիզմը վոչնչացնելու ծրագիրը, կապիտալիզմը, կալվածատերերի ու բուրժուազիայի իշխանությունը վերականգնելու ծրագիրը, ԽՍՀՄ-ը վորպես ինքնուրույն պետություն վոչնչացնելու և Խորհրդային Միությունը գերմանական ֆաշիզմի ու ճապոնական իմպերիալիզմի միջև բաժանելու ծրագիրը:

Հատկապես այդ գարշելի ծրագիրն եր շաղկապել-միացրել Տրոցկուն, Պյատակովին, Սերեբրյակովին, Ռադեկին, Սոկոլնիկովին և նրանց ձեռնասուներին ֆաշիստական պարագլուխների,

լրտեսների ու հետախույզների հետ։ Հատկապես այդ ծրագիրն էր պայմանավորել տեռորը, դիվերսիաները, վնասարարությունը, լրտեսությունը, սպանությունները, որ կիրառվում էին տրոցկիստ դավաճանների կողմից։

Հատկապես այդ ծրագրի իրագործման նպատակով են տրոցկիստները տարիներով մշակել նրբին ստի, կուսակցությանը, խորհրդային իշխանությանը և ժողովրդին ստորաբար խաբելու զզվելի տակտիկան, չտեսնված յերկերեսանիության և դարշելի պրովոկացիայի տակտիկան։

«Այդ ծրագիրը,—դատարանում ցուցմունք տվեց ժողովրդի թշնամի Սոկոլնիկովը,—նախատեսում էր հրաժարվել ինդուստրացման, կոլեկտիվացման քաղաքականությունից և որպես այդ հրաժարման արդյունք՝ դյուղում մանր տնտեսության հիման վրա կապիտալիզմի վերելք, որը միացած արդյունաբերության կապիտալիստական տարրերի հետ, զարդանալով կվերածվեր կապիտալիստական ռեստավրացիայի ԽՍՀՄ-ում»։

Իր արբանյակներին դրած դիրեկտիվ նամակներում ժողովրդի թշնամի Տրոցկին, ինչպես դատարանում վկայեց դարշելի դավաճան Ռադեկը,—«միանգամայն պարզ դրել էր այն հարցը, որ կոլտնտեսությունները պետք կլինի ցրել, և առաջադրել էր այն միտքը, որ մենատնտեսներին տրակտորներ և դյուղատնտեսական այլ բարդ մեքենաներ պետք է տրամադրել նոր կուլակային խավի վերածնման համար։ Վերջապես, բոլորովին բացահայտ դրվում էր մասնավոր կապիտալը քաղաքում վերածնելու անհրաժեշտության հարցը։ Պարզ էր, որ խոսքը վերաբերում էր կապիտալիզմի ռեստավրացիային»։

«Կապիտալիզմի ռեստավրացիա՞»։ Ի՞նչ զզվելի ու հրեշավոր են հնչում այս խոսքերը։ Համարյա քսան տարի յե անցել այն ժամանակվանից, յերբ մեր յերկրի բանվորներն ու դյուղացիները Լենինի—Ստալինի կուսակցության ղեկավարությամբ իշխանությունն իրենց ձեռքը վերցրին, բուրժուազիայից խլեցին գործարաններն ու ֆաբրիկաները, կալվածատերերից—հողը։ Ընդմիշտ տապալելով կապիտալիստական շահագործման լուծը, մեր յերկրի բանվոր դասակարգն ու դյուղացիությունը արտադրության գործիքների ու միջոցների, հողի սոցիալիստական սեփականություն հաստատեցին, յերջանիկ ու ազատ կյանք նվաճեցին, որն անհերևակայելի յե կապիտալիստական կարգերի որով։ Ստալինյան Սահմանադրության մեջ գրի յեն առնված աշխատավորների

մեծագույն այն իրավունքները, վոր պրոլետարական դիկտատուրան նվաճել է կապիտալիզմի դեմ մղած դաժան պայքարում։

Կապիտալիզմի ռեստավրացիան, վորին ձգտում էին տրոցկիստական բանդիտները,—այդ նշանակում է բանվորների գանգնային շահագործման վերադարձ, այդ նշանակում է գործազրկություն և աղքատություն, բանվոր դասակարգի ֆիզիկական ու բարոյական ուժասպառումն, այդ նշանակում է տաս և տասներկուժամյա աշխատանքային որ, սոցիալական ապահովագրման բացակայություն, բանվորին մինչև ստրուկի դրության հասցնելը։

Կապիտալիզմի ռեստավրացիա—այդ նշանակում է պորտաբույծ-կուլակների, գյուղացիության կուլակային շահագործման վերածնում, այդ նշանակում է գյուղացիական հողազրկություն ու աղքատություն, գյուղացիական մասսաների սով ու տաժանակիր աշխատանք, անթափանց խավար ու խեղճություն։

Կապիտալիզմի ռեստավրացիա—այդ նշանակում է վերադարձ դեպի ազգային ճնշումը, դեպի առանձին ազգերի փոխադարձ թշնամությունը, դեպի մանր ազգությունների տնտեսական ու կուլտուրական մահացումը։

Կապիտալիզմի ռեստավրացիա—այդ նշանակում է ինտելիգենցիային կապիտալիզմի սպասավորների դերին հասցնել, կապիտալիզմի, վորը ճնշում է ազատ ստեղծագործությունը, կործանում է գիտությունը, կուլտուրան, արվեստը։

Ահա թե ինչ է նշանակում կապիտալիզմի ռեստավրացիայի լոզունգը, վոր իրենց արյունոտ ծրագրում գրել են տրոցկիստական բանդիտները։

Բռնությամբ տապալել խորհրդային իշխանությունը, խլել խորհրդային ժողովրդից այն ամենը, ինչ վոր նա նվաճել է գրեթե յերկու տասնամյակների ընթացքում բոլոր թշնամիների դեմ մղած հերոսական պայքարում. խլել գործարանները, ֆաբրիկաները, հողը, վերադարձնել գործարանատիրոջ և կալվածատիրոջ, արյուն ծծող կուլակի իշխանությունը, վերադարձնել աշխատավորների դաղանային շահագործումը և տաժանակիր աշխատանքը, աղքատությունն ու տգիտությունը,—ահա թե ինչի եյին ձգտում տրոցկիստ սրիկաները։

Տրոցկին, Պյատակովը, Սերեբրյակովը, Ռադեկը, Սոկոլնիկովը և նրանց ձեռնասունները հիանալի կերպով գիտակցում եյին, վոր խորհրդային ժողովուրդը կալվի-կսրբի ամեն մեկին, ով դուրս կգա այդ զարշելի ծրագրով։ Տրոցկին անպատկառորեն

պարզաբանում է Պյատակովին, որ մասսաներին վտանգի կանգնեցնել խորհրդային իշխանության դեմ, կուսակցության դեմ, սոցիալիստական կարգերի դեմ՝ անկարելի է։

«Այդ ուղղությամբ կատարվելիք մեր ամեն մի փորձը,—սատանա-կրկնում եր արիկա Տրոցկին,—կնշանակեր լիակատար անհուսալիություն, արագորեն կտաներ դեպի լիակատար ձախողում, դեպի յերկրում այժմ յեղած համեմատաբար փոքրաթիվ տրոցկիստական կազմերի լիկվիդացիան»։

Բանդիտները հիանալի դիտեին, որ այդ ծրագիրն իրագործելու, խորհուրդների իշխանությունը տապալելու իրենց հաշիվները կարող են հիմնվել խորհրդային ժողովրդի դեմ ամենակատաղի պայքար մղելու վրա միայն։

Դատախազ բնկ. Վիշինսկու հարցին՝ «Կանկրետ, ի՞նչ ուժերի վրա եյիք դուք հույս դրել յերկրի ներսում։ Բանվոր դասակարգի՞», բանդիտ Սոկոլնիկովը անպատասխանորեն պատասխանում է՝ «Վո՛չ»։

Վիշինսկի։ Կոլտնտեսային գյուղացիության՞ վրա։

Սոկոլնիկով։ Իհարկե, վո՛չ։

Վիշինսկի։ Հապա ո՞ւմ վրա։

Սոկոլնիկով։ Ցեթե առանց վարանելու խոսենք, պետք է ասել, որ մենք հույս ունեյինք, թե կկարողանանք հենվել գյուղացիական բուրժուազիայի տարրերի վրա...

Վիշինսկի։ Կուլակի՞ վրա, կուլակի մնացուկների՞ վրա։

Սոկոլնիկով։ Այո՛։

Ահա թե ինչու տրոցկիստական բանդիտների ռեստավրատորական ծրագրի բազան դարձավ դարշելի, հրեշավոր այն պլանը, որի նպատակն եր իշխանության հասնել դերմանական ու ճապոնական ավիոնների ողնությամբ, իսկ դրան ի վարձատրություն վոչնչացնել ԽՍՀՄ-ը վորպես ինքնուրույն, անկախ պետություն և դերմանական ու ճապոնական կապիտալի խղճուկ դաղութը դարձնել այն։

Բանդայի պարագլուխ Տրոցկին Խորհրդային յերկիրը մասմաս վաճառելու մասին ասոնասորտորներն ու անպատկառորեն համաձայնություն եր դալիս ֆաշիստական կուսակցության ղեկավարման գծով Հիտլերի տեղակալը հանդիսացող Ռուդոլֆ Հեսսի հետ։

Խորհրդային իշխանությունը ֆաշիստական ավիոնների ողնությամբ տապալելու համար վորպես վարձատրություն Տրոցկին խոստանում եր Հեսսին։

«1) Յերաշխավորել ընդհանուր բարյացակամ վերաբերմունք գեպի գերմանական կառավարությունը և անհրաժեշտ համագործակցություն նրա հետ՝ միջազգային բնույթ կրող կարևորագույն հարցերում.

2) համաձայնել տերիտորիալ զիջումներ անելու.

3) թույլ տալ, որ գերմանական ձեռնարկատերերը կոնցեսիաների ձևով (կամ որևէ այլ ձևով) շահագործեն ԽՍՀՄ-ում այնպիսի ձեռնարկություններ, որոնք տնտեսական անհրաժեշտ լրացում են հանդիսանում Գերմանիայի տնտեսության համար (խոսքը վերաբերում եր յերկաթահանքին, մանգանին, նավթին, վոսկուն, փայտանյութին և այլն)»:

Իսկ Ռադեկին ուղղած նամակում Տրոցկին հայտարարել է.

«...Անխուսափելիորեն կարիք կլինի դիմելու տերիտորիալ զիջումների... կարիք կլինի զիջել Ճապոնիային Պրիմորյեն և Պրիամուրյեն, իսկ Գերմանիային՝ Ուկրաինան:

...Մենք ստիպված կլինենք Ճապոնիային զիջել Սախալինի նավթը և ապահովել նրան նավթ մատակարարելը՝ Ամերիկայի հետ պատերազմի բռնվելու դեպքում: Մենք պետք է թույլ տանք նրան նաև շահագործել վոսկին: Մենք պետք է համաձայնենք Գերմանիայի պահանջին՝ չհակառակելու մերձդանուբյան յերկրների ու Բալկանների դրավմանը և չխանգարել Ճապոնիային դրավելու Չինաստանը»:

Խորհրդային Միությունը գերմանական ֆաշիզմի ու նրա ճապոնական դաշնակիցների միջև բաժանելու գործը, Տրոցկու գիրեկտիվների համաձայն գերմանական ու ճապոնական շահերը ընկերակցությամբ պլանավորել եյին նաև Տրոցկու սրբանյակները՝ Պյատակովը, Սոկոլնիկովը, Ռադեկը:

ԽՍՀՄ-ը գերմանական ու ճապոնական կապիտալիզմի ստրուկը դարձնելու պլանը մշակվել եր իր բոլոր մանրամասնություններով: Տրոցկիստական դավաճանները ֆաշիստներին խոստացել եյին ԽՍՀՄ-ը անդամահատելուց և Ուկրաինան, Պրիմորյեն ու Պրիամուրյեն հանձնելուց զատ, հսկայական ռազմատուգանք կորզել խորհրդային ժողովրդից: ԽՍՀՄ-ը կողոպտելու պլանով Գերմանիայի համար ապահովվում եյին հումքի, պարենի, ճարպեղենի յերկար ու ձիգ տարիներ տևող մատակարարումները համաշխարհային գներից ցածր գներով, խորհրդային ձեռնարկությունները գերմանական կապիտալիստներին վորպես սեփականություն հանձնելը, կոնցեսիաներ տրամադրելը, պարտատոմսերով փոխառություններ բաց թողնելու իրավունքը: Այլ կերպ ասած՝ տրոց-

կիստական բանդիտները ձգտում էին ԽՍՀՄ-ի ամբողջ ժողովրդական տնտեսությունը և աշխատավորներին դերմանական ֆաշիզմին ու ճապոնական զինվորականությանը հանձնել լիակատար ստրկացման համար, ֆաշիստական դիչատիչներին հանձնել՝ հոչոտելու համար: Տրոցկիստները ավելի ցած էին դլորվել, քան վորևե կուլչակյան, դենիկինյան, կադետ: Նրանք դոնե խոսում էին «միասնական անբաժանելի»-ի մասին. որանք հայրենիքը դնահատում էին վորպես ապրանք՝ դերմանական ֆաշիզմին ու ճապոնական զինվորականությանը մաս-մաս վաճառելու համար: Իհարկե, տրոցկիստական ռեստավրատորները հասկանում էին, վոր խորհրդային ժողովուրդը, վորը բոլշևիկյան կուսակցության առաջնորդությամբ, Լենինի և Ստալինի ղեկավարությամբ յերջանիկ ու բերկրալի կյանք ե նվաճել, իր նվաճումները չի տա, իր մեծ հայրենիքը չի տա կողոպտելու:

Կանխատես դահիճ Տրոցկին անկեղծ ասել ե այն ռեժիմի մասին, վորը նա իր շայկայի ու սրա ֆաշիստական տերերի հետ միասին պատրաստում ե խորհրդային ժողովրդի համար:

Ռադեկի ցուցմունքի համաձայն, Տրոցկին նրան դրած նամակում հայտարարել ե.

«...Վոչ մի դեմոկրատիայի մասին խոսք լինել չի կարող: Բանվոր դասակարդն ապրել ե հեղափոխության 18 տարի, և նա հսկայական ախորժակ ունի, իսկ այդ բանվորին հարկավոր կլինի վերադարձնել մասամբ մասնավոր դործարանները, մասամբ պետական դործարանները, վորոնք ամենածանր մրցակցության մեջ կդտնվեն ռուսերկրյա կապիտալի հետ: Նշանակում ե, վոր բանվոր դասակարդի դրությունը կտրուկ կերպով վատթարանալու ե: Գյուղում կվերսկսվի չքավորի ու միջակի պայքարը կուլակության դեմ: Ցեվ այն ժամանակ՝ դիմանալու համար, հարկավոր ե ամուր իշխանություն, անկախ այն բանից, թե ինչպիսի ձևերով ծողարկված կլինի այն»:

Ինչպիսի՛ դաղանային ատելություն և թշնամանք ե հնչում ազատ խորհրդային ժողովրդի վերաբերմամբ՝ ֆաշիստական սատրաքարշ ծառայի այս դիրեկտիվում:

Հատով ու մեծաքանակ վաճառելով Խորհրդային յերկիրը, ֆաշիստական ավիններ կանչելով, տրոցկիստական ռեստավրատորները պատրաստվում էին նաև քաղաքական իրավակարդը հաստատել մեր յերկրում հիտլերյան Գերմանիայի ձևով ու նմանությամբ: Կախաղանների ու կառափնարանների, համակենտրոնացման ճամբարների ու բանտերի ռեժիմ, խորհրդային ժողովրդ-

գի հետ բացահայտ տեռորի միջոցով հաշիվ մաքրելու ռեժիմ — ահա թե ինչ եյին բերում իրենց հետ աշխատավոր մասսաների այդ դաղանացած թշնամիները։

* * *

Մարտական ժողկոմ ընկ. Ն. Ի. Յեժովի դլխավորած Ներքդործժողկոմատի կողմից մերկացված, վիաստերով, իրեղեն ապացույցներով ու հենց դատավարության ժամանակ վկաների յուցմունքներով հանցանքում բռնված տրոցկիստական բանդիտներն ստիպված յեղան խոստովանել խորհրդային ժողովրդի դեմ իրենց կատարած սոսկալի հանցագործությունները։

Մարդկության պատմության մեջ չեն յեղել այնպիսի վոճրագործություններ, վորոնք իրենց անսահման ստորությամբ, նրբին կատարելագործությամբ հավասարվեին ժողովրդի այդ թշնամիների չարագործություններին։

Տրոցկիստական բանդան կազմակերպեց Սերգեյ Միրոնովիչ Կիրովի սպանությունը և անարդ մահափորձեր եր պատրաստում ժողովրդի առաջնորդ ընկեր Ստալինի ու նրա դինակիցներ՝ ընկ. ընկ. Մոլոտովի, Կաղանովիչի, Վորոշիլովի, Որջոնիկիձեյի, Յեժովի, Ժդանովի, Կոսիորի, Եյխեյի, Պոստիշեվի ու Բերիայի կյանքի դեմ։

Տրոցկիստական դավաճանները սիստեմատիկ, պլանաչափ վնասարարություն եյին կատարում Խորհրդային Միության կարևորագույն ձեռնարկություններում, ձգտելով վիժեցնել մեր տնտեսական պլանները և շարքից դուրս բերել ժողովրդական տնտեսության ամբողջ ճյուղեր, հատկապես այնպիսիք, ինչպես՝ տրանսպորտը, քիմիան, վորոնք հսկայական պաշտպանական նշանակություն ունեն։

Նրանք դիվերսիաներ եյին կատարում, պայթեցնելով Կեմերովոյի հանքահորերը, պայթեցումներ եյին սարքում Գոռլովկայի ագոտա-պարարտանյութերի և Վոսկրեսենսկի քիմիական կոմբինատներում, Նեվսկի գործարանում, յերկաթուղիներում։ Նրանք կազմակերպում եյին պետական միջոցների կողոպուտ։

Տրոցկիստական ճիվաղները, ղեկավարվելով որեր-բանդիտ Տրոցկու «վո՛չ մի բանի առջև կանգ չառնել» դիրեկտիվով, կազմակերպում եյին խորհրդային ժողովրդի լավագույն զավակների՝ յերևելի ստախանովականների, մեր Կարմիր բանակի մարտիկների մասսայական սպանություններ, յերեխաների սպանություններ։

Ճապոնական հետախուզության և Տրոցկու առաջադրանքով սրիկա Լիվշիցը և Կնյազևը խորտակումներ էին սարքում յերկաթուղիներում։ Ճապոնական հետախույզ, նույն ինքը տրոցկիստական շայկաներից մեկի պարապլուխ Կնյազևը ցուցմունք տվեց, վոր միմիայն Հարավային Ուրալի յերկաթուղում 1935—1936 թ. թ. ինքը կազմակերպել է 13—15 խոշոր յերկաթուղային աղետներ։ Գնացքների այդ խորտակումից սպանվել է 63 մարդ, ի թիվս վորոնց 29 կարմիր-բանակայիններ վոչնչացել են Շումիխա կայարանում Կնյազևի կազմակերպած աղետի ժամանակ։

Տասնյակ սպանվածներ և հարյուրավոր վիրավորներ խորտակումից, Վոսկրեսենսկի քիմիական կոմբինատում կատարված տրոցկիստական դիվերսիայի հետևանքով սպանված 17 բանվորները, Կեմերովոյի «Կենտրոնական» հանքահորի պայթյունից վոչընչացած 10 բանվորները, Կեմերովոյի՝ դաղից խեղդված ստախանովականները, Գոռլովկայի ազոտա-պարարտանյութերի կոմբինատի՝ պայթյունից սպանված բանվորները, տրոցկիստ Շեստովի առաջադրանքով սպանված աղնիվ խորհրդային ինժեներ Բոյարչինովի, տրոցկիստների՝ դինամիտի դաղտնի պահեստի պայթյունից վոչնչացած՝ հանքահատների յերեխաները,—ահա տրոցկիստական ճիվաղների զոհերը։

Այլելի ևս հրեշավոր պլաններ էին պատրաստում տրոցկիստական-ֆաշիստական դիվերսանտները պատերազմի ժամանակաշրջանի համար։ Նրանց նպատակն էր՝ զինաթափ անել Կարմիր բանակը, զրկել նրան պաշտպանության անհրաժեշտ միջոցներից ամենակարևոր մոմենտին։ Դիվերսիաներ զորքարաններում (դը-խավորապես պաշտպանական նշանակություն ունեցող), ռազմական պահեստների, մատակարարման կետերի հրկիզումներ, զինվորական գնացքների խորտակումներ և, վերջապես, կարմիր-բանակայինների եշելոնները մահաբեր բակտերիաներով թունավորելը,—ահա թե ինչ էին պատրաստում տրոցկիստական բանդիտները։

Զարադործները լավ գիտեին ՍՍՀՄ-ի աշխատավորների ունեցած ջերմ սիրո և նվիրվածության մասին դեպի իրենց խորհրդային կառավարությունը, հարազատ բոլշևիկյան կուսակցությունը և նրա ղեկավարները։ Հենց այդ պատճառով էլ Տրոցկին ու նրա արբանյակները մշակել և սկսել էին իրագործել հրեշավոր պրովոկացիայի արյունոտ պլանը։ Իր գործակալ Բոմմի միջոցով հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի համար

դիրեկտիվներ հանձնելով, Տրոցկին պնդում եր, վոր մարդկային զոհերն անհրաժեշտ են վնասարարական ակտեր կատարելիս։

«...Հիմնական նպատակն է,—ասել է Տրոցկին,—մի շարք վնասարարական ակտերի միջոցով խախտել վստահությունը դեպի ստալինյան հնդամյակը, դեպի նոր տեխնիկան և դրանով իսկ դեպի կուսակցական ղեկավարությունը»։

Տրոցկու արբանյակներն ընդունեցին ի կատարումն որերդաճիճ Տրոցկու դիրեկտիվը։ Այսպես, որինակ, բանդիտ Դրորնիսը, մի ուրիշ տրոցկիստ—Նոսկովի հետ քննելով Կեմերովոյի հանքահորերի դաղավորման պլանը, անպատկառորեն ասել է, վոր զոհերն անխուսափելի յեն պայթեցման ժամանակ—«այդ նույնիսկ լավ կլինի, վորովհետև դայրույթ առաջ կբերի բանվորների մեջ և հնարավորություն կտա նրանց համակրանքը մեր կողմը դրավելու»։ Հենց այդ նպատակով ել բանդիտները ստախանովյան շարժման սարոտաժ եյին կիրառում։ «Դիրեկտիվ եր տրվել,—դատարանում վկայություն տվեց բանդիտ Շեստովը,—բանվորների նյարդերը քայքայել։ Նախքան աշխատանքի վայրը հասնելը բանվորը պետք է մի յերկու հարյուր անդամ մայր հայհոյի հանքահորի ղեկավարության հասցեյին։ Ստեղծվում եյին աշխատանքի անհնարին պայմաններ։ Վոչ միայն ստախանովյան մեթոդներով, այլև սովորական մեթոդներով ել անհնարին եր նորմալ աշխատելը»։

Գերմանական դիվերսանտ-հետախույզ բանդիտ Ստրոյլովը նմանապես հաստատեց, վոր, որինակ, Արևմտյան Սիբիրում, ոտարերկրյա մի պետության ներկայացուցչի անմիջական պահանջով խորհրդային և ոտարերկրյա բանվորներին դրդում եյին խորհրդային կառավարության դեմ։ Ճապոնական հետախույզ—տրոցկիստ Կնյազևը դատարանում վկայություն տվեց, վոր տրոցկիստական դիվերսանտ Լիվշիցը նրան ասել է, թե անհրաժեշտ է «բնակչությանը մի շարք առանձին հարվածներ հասցնելու միջոցով դայրույթ առաջ բերել Ստալինի դեմ, կառավարության դեմ և բնակչության մեջ այնպիսի տրամադրություն ստեղծել, թե ամեն բանում կառավարությունն է մեղավոր»։ Դանային վորքա՞ն վոխակալություն, վորքա՞ն ատելություն կար այդ մոլեղնած բանդիտների և մարդասպանների սրտում դեպի խորհրդային ժողովուրդը։ «Դու ել մարդ ես դառել խղճալո՞ւ»—անկեղծորեն հայտարարել է Պյատակովը Կեմերովոյի քիմիական կոմբինատի հրկիզումների ժամանակ զոհերի անխուսափելիության մասին ունեցած խոսակցության միջոցին։ «Այստեղ փափկանկա-

տության տեղը չե»,—ձայնակցել ե Պյատակովին մյուս բանդ՝ տ Դրոբնիսը։

Կապիտալիզմի ռեստավրացիայի, ԽՍՀՄ-ն անդամահատելու և մեր յերկրում ֆաշիստական դիկտատուրա հաստատելու ա-նարդ ծրագիրը, այդ ծրագրի համապատասխան՝ խորհրդային ժո-ղովրդի դեմ մղվ..ղ պայքարի հրեշային մեթոդներն ի մի եյին շաղկապել տրոցկիստական բանդիտներին և նրանց տերերին—գեր-մանական ֆաշիստներին ու ճապոնական դինվորականությանը։ Հանձին տրոցկիստների ֆաշիզմը գտել եր արժանի ձեռնասուն-ներ, վորոնք մահու չափ ատում եյին խորհրդային ժողովրդին, խորհրդային կառավարությանը, կոմունիստական կուսակցու-թյանը և նրա ղեկավարներին։ Հանձին տրոցկիստական չնե-րի ֆաշիզմը գտել եր դահիճներ, վորոնք պատրաստ եյին ամեն տեսակ արյունոտ «աշխատանքի», այնպիսի դավաճաններ, վո-րոնք ամեն րոպե պատրաստ եյին ծախելու և դավաճանելու իրենց հայրենիքին։ Հանձին տրոցկիստների ֆաշիզմը ձեռք եր բերել հմուտ վնասարարներ, փորձված լրտեսներ, կարող դիվերսանտ-ներ, պրովոկատորներ, վորոնք վիրտուոզության եյին հասցրել իրենց դիմակավորումը, ձևացումը, յերկերեսանիությունը։

Տրոցկիստական բանդայի ամբողջ գաղտնի գործունեյու-թյունն անխզելիորեն կապված եր, միահյուսված եր գերմանական ֆաշիզմի ու ճապոնական դինվորականության հետ։ Տրոցկիստա-կան դավաճաններն ամբողջովին ու լիովին անձնատուր եյին յե-ղել ֆաշիզմին։ Նրանք դարձել եյին Խորհրդային Միությանը թշնամի կապիտալիստական պետությունների անարդ լրտեսները։ Ստորաբար ոգտագործելով իրենց պաշտոնական դիրքը, նրանք ԽՍՀՄ-ի պետական դաղտնիքները հաղորդում եյին գերմանական ֆաշիզմին ու ճապոնական դինվորականությանը։ Գերմանական և ճապոնական շտաբների ու հետախուզությունների անմիջական ա-ռաջադրանքներով նրանք տեռորիստական ակտեր եյին պատրաս-տում մեր կուսակցության ու կառավարության ղեկավարության դեմ, դիվերսիաներ, պայթեցումներ, հրկիզումներ, խորտակում-ներ եյին կատարում, ձգտում եյին խախտել Խորհրդային Միու-թյան պաշտպանունակությունը։ Գերմանական ֆաշիզմին այդ ծառայությունը մատուցելու մասին բանդայի պարագլուխ Տրոց-կին համաձայնության եր յեկել՝ ֆաշիստական կուսակցության ղեկավարման գծով Հիտլերի տեղակալ Հեսսի հետ։ Այդ մասին ոտարերկրյա պետությունների հետ համաձայնության եյին դալիս սրիկա Սոկոլնիկովը և Ռադեկը։ Այդ առաջադրանքները բանդիտ-

ների ձեռնասուններն ստանում էին գերմանական ու ճապոնական հետախուզությունների գործակալներից։

Տրոցկիստների վնասարարական, դիվերսիոն ու այլ քայքայիչ աշխատանքները ֆաշիստական ներկայացուցիչների հետ «համաձայնեցնելու» վերաբերյալ Տրոցկու դիրեկտիվով բանդիտները կատարում էին գերմանական ու ճապոնական հետախուզությունների անմիջական առաջադրանքները։ «Ի՞նչ էր նշանակում վնասարարությունն ոտարերկրյա շրջանների հետ համաձայնեցնելու վերաբերյալ դիրեկտիվը—դատարանում վկայություն տվեց Ռադեկը։—Այդ դիրեկտիվն ինձ համար նշանակում էր շատ հասարակ մի բան... որ մեր կազմակերպության մեջ է խցկվում ոտարերկրյա պետությունների ռեզիդենտուրան, կազմակերպությունը դառնում է ոտարերկրյա հետախուզությունների անմիջական եքսպոզիտուրան»։

Բացի Պյատակովից, Ռադեկից, Սոկոլնիկովից, որոնք դավաճանական բանակցություններ էին վարում մեղ թշնամի կապիտալիստական կառավարությունների հետ, մյուս բանդիտները նույնպես գերմանական ու ճապոնական հետախուզությունների առաջադրանքների անմիջական կատարողներն էին դարձել։ Բանդիտ Ռատայչակը կապված էր գերմանական հետախուզության հետ։ Վնասարարության, դիվերսիաների համար լիազորություններ և առաջադրանքներ գերմանական հետախուզությունից ստանում էր տրոցկիստական վիժված Շեստովը, որը գործում էր գերմանական հետախույզ և դիվերսանտ Ստրոյիլովի հետ ձեռք ձեռքի տված։ «Մասնագետների» դիմակով քողարկված գերմանական դիվերսանտները տրոցկիստական բանդիտների միջոցով իրագործում էին հանքահորերի հրկիզումներ, գործարանների պայթեցումներ, մեքենաների փչացումներ։ Տրոցկիստական սրիկաներ՝ Կնյազեվը և Լիվշիցը ծառայում էին ճապոնական հետախուզությանը, նրա առաջադրանքներով քայքայիչ ու լրտեսական աշխատանք էին կատարում տրանսպորտում։

Դատավարության ժամանակ պարզվեց նաև խորհրդային բանվորների ու կարմիր–բանակայինների արյան դինը, որոնց կործանումը կազմակերպել էին Լիվշիցը և Կնյազեվը. տրոցկիստ Տուրոկը 35 հազար ռուբլի էր ստացել ճապոնական հետախուզությունից։ Ճապոնական հետախուզությունը վո՛չ թե վճարում էր, այլ փող էր տալիս տրոցկիստական աշխատանքի համար, ինչպես ցինիկաբար այդ մասին դատարանում ասաց բանդիտ Տուրոկը։

Տրոցկիստական բանդայի պարագլուխները ստիպված էին թաղցնել իրենց ծրագիրը, ինչպես դատավարության պարզվեց, վո՛չ միայն ժողովրդից, այլ մինչև անգամ իրենց իսկ կազմակերպության մասնակիցներից։ Ռեստավրատորական ծրագրի այդ թաղցնելն ամենից ավելի ցայտուն կերպով հաստատեց այն փաստը, վոր տրոցկիստները վո՛չ թե քաղաքական կուսակցություն են, այլ հանցագործների բանդա յեն, գերմանական ու ճապոնական հետախուզությունների մի ճյուղն են։

«Եթե այդ կուսակցություն լիներ, ապա նա մասսաներից չեր թաղցնի իր ծրագիրը,—դատավարության ժամանակ ասաց ընկ. Վիշինսկին։—Քաղաքական կուսակցություններն իրենց ծրագիրը, իրենց քաղաքական հայացքները չեն թաղցնում։ Բոլշևիկները—այդ իսկական քաղաքական կուսակցությունը, կուսակցությունը բառիս ամենախիստ և ամենաբարձր իմաստով—յերբեք չի թաղնվել մասսաներից և յերբեք չի թաղցրել իր ծրագիրը»։

Տեսնելով, թե ինչպես ժամ առ ժամ աճում ու ամրանում է հաղթանակած սոցիալիզմի պետության հզորությունը, տրոցկիստական բանդիտները ամենայն ուժով ջանում էին շտապեցնել Ֆաշիզմի հարձակումը ԽՍՀՄ-ի վրա՝ միաժամանակ պատրաստելով Խորհրդային Միության պարտությունն այդ պատերազմում։ Գերմանական Ֆաշիզմի ու ճապոնական դինվերսիանության՝ 1937 թվին ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու մասին ասած խոսքերից հարկադրված լինելով շտապելու՝ տրոցկիստական բանդիտները վախենում էին չլինի թե ժամանակը ձեռքից բաց թողնեն։ Հենց այդ պատճառով էլ Տրոցկին շտապեցնում եր իր արբանյակներին, նրանց հայհոյում եր բավականաչափ ակտիվություն չցուցաբերելու համար, պահանջում եր ավելի յեռանդուն կերպով ծավալել տեռորը, դիվերսիաները, վնասարարությունը։ Տրոցկին գրում եր Ռադեկին. «Պետք է խստորեն, վոր իշխանության հարցն ամենից ավելի ռեալ կերպով կծառանա բլոկի առջև միմիայն պատերազմում ԽՍՀՄ-ի կրելիք պարտության հեռանքով։ Դրա համար բլոկը պետք է յեռանդագին նախապատրաստվի դրան... Հարկավոր է, հնարավոր յեղած չափով, արագացնել ընդհարումը ԽՍՀՄ-ի ու Գերմանիայի միջև»։

Տրոցկիստական բանդիտներն շտապում էին Ֆաշիզմի բանակները թափել ԽՍՀՄ-ի աշխատավորների դլխին։ Բոլոր բարբարոսական ավերումները, բոլոր անհավատալի տանջանքներն ու տառապանքները, վոր գերմանական ու իտալական ին-

տերմինները պատճառում են հերոսական խպանական ժողովրդին,—այդ բոլորը՝ պատերազմի տրոցկիստական պրովոկատորները պատրաստվում էին մեզ մոտ կրկնելու, բայց շատ ավելի լայն մասշտաբներով:

Տնեղոբեն պատրաստելով ռազմական ընդհարումը և Խորհրդային Միության պարտությունը, տրոցկիստական բանդիտները ձգտում էին համախմբել հակահեղափոխական, հակախորհրդային խմբերի բոլոր մնացորդները, ամբողջ տականքը: Նրանք ամենասերտ կերպով կապված էին աջ թափթփուկների՝ Բուխարինի, Ռիկովի, Տոմսկու, Ուգլանովի հետ:

Այժմ արդեն դնդակահարված բանդիտներ Զինովյևը, Կամենևը, Պյատակովը և մյուսները Բուխարինի, Ռիկովի, Տոմսկու և Ուգլանովի հետ համաձայնության էին յեկել ընդհանուր ռեստավրատորական ծրագրի մասին: Այդ միասնությունը պատահական չեր: Հենց իրենք՝ բանդիտներն ստիպված էին այդ խոստովանել դատարանում: «Ինչ վերաբերում է ծրագրային դրույթներին,—վկայություն տվեց Սոկոլնիկովը,— ապա դեռևս 1932 թվականին թե՛ տրոցկիստները, թե՛ զինովյևականները, թե՛ աջերը հիմնականում համամիտ էին այն ծրագրի վերաբերմամբ, որն առաջ քաշվում էր վորպես աջերի ծրագիր: Այդ այսպես կոչված ոյուտինյան պլատֆորմն է»:

Սոցիալիստական ինդուստրացումից և կոլեկտիվացումից հրաժարվելու պլատֆորմի շուրջը, մեր յերկիրը ոտաբերկրյա կապիտալին ստրկացնելու և կապիտալիզմը վերականգնելու պլատֆորմի շուրջը տրոցկիստները համախմբում էին աշխատավորների բոլոր դաշտաղած թշնամիներին: Աջ թափթփուկների կողքին տրոցկիստական բանդիտները ջանադիր կերպով հավաքում էին Անդրկովկասում գործող հակահեղափոխական խմբերի բեկորները—Հայաստանում՝ դաշնակներին, Ադրբեջանում՝ մուսավաթականներին, Վրաստանում՝ վրացական մենշևիկներին: Նրանք կապ էին հաստատել դաշնակների ու մուսավաթականների հետ և համաձայնություն էին կնքել վրացական մենշևիկների հետ՝ միասեղ հակահեղափոխական աշխատանք կատարելու մասին, խոստանալով նրանց ստրկացնել Հայաստանն ու Ադրբեջանը: Բացի այդ, տրոցկիստական բանդիտները, իրենց պարագլուխ Տրոցկու ցուցումով, իրենց քայքայիչ գործունեությանը մասնակից էին դարձրել հին վնասարարներին—չախտեցիներին և «արդյունաբերական կուսակցության» մասնակիցներին:

Այդպես՝ Տրոցկու գլխավորած անարգ ռեստավրատորների և

հայրենիքի դավաճանների ֆաշիստական արյունոտ ծրագրի շուրջը եյին հավաքվում հակահեղափոխության բոլոր տականքները՝ սկսած Պյատակովից մինչև չախտեցինները, սկսած տրոցկիստական բանդիտներից մինչև դաշնակներն ու մուսավաթականները և վրացական մենշևիկները—միասին ու միահամուռ տրոցկիստական բանդիտների տերերի հետ, գերմանական ու ճապոնական շտաբների հետախույզների հետ:

Ոչնչելով գերմանական ու ճապոնական ֆաշիզմին, ձգտելով անդամահատել ու ստրկացնել Խորհրդային Միությունը, վոչնչացնել յերկրագնդի մի վեցերորդ մասում ստեղծված սոցիալիստական հասարակակարգը, տրոցկիստական բանդիտներն աշխատում եյին հաջողեցնել ֆաշիզմի հաղթանակն ամբողջ աշխարհում և միջազգային պրոլետարիատի ջախջախումը: Նրանք հիանալի կերպով հասկանում եյին, վոր ԽՍՀՄ-ի վոչնչացումը կնշանակեր խաղաղության ու դեմոկրատիայի միակ պատվարի, սանձարձակ ֆաշիստական դիշատիչների ու զավթիչների ճանապարհին ծառացած միակ հզոր խոչընդոտի վերացումը: Իզուր չեր, վոր տրոցկիստական բանդիտները գերմանական ֆաշիզմին ու ճապոնական զինվորականությանը խոստանում եյին «համագործակցություն միջազգային բնույթ ունեցող կարևորագույն հարցերում», ուրիշ խոսքով,—անվերապահ ողնություն ու աջակցություն պատերազմի ֆաշիստական հրձիգների բոլոր արկածախնդրություններին:

Տրոցկիստները պատրաստվում եյին Գերմանիային ողնել գրավելու մերձդանուբյան յերկիրները, Բալկանները, իր ձեռքը հավաքել Չեխո-Սլովակիան, հաշիվ մաքրել Ֆրանսիայի հետ: Նրանք խոստանում եյին ճապոնական իմպերիալիստներին ողնել գրավելու Չինաստանը, վերջնականապես ստրկացնելու տառապյալ չին ժողովրդին: Նրանք նախապես համաձայնության եյին յեկել, վորպեսզի նավթով ապահովեն Ճապոնիային Ամերիկայի Միացյալ Նահանգների դեմ պատերազմելու դեպքում:

Հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի դատավարության ժամանակ հաստատված տվյալների լույսի տակ իր ամբողջ զարդելի մերկությամբ յերևան ե գալիս տրոցկիստական բանդիտների միջազգային դերը: Բոլոր յերկրների տրոցկիզմի իսկական դեմքը—այդ ֆաշիզմի գրոհային ջոկատի դեմքն ե, նոր համաշխարհային պատերազմի հրձիգների կերպարանքն ե, դեմոկրատիան ատողների, աշխատավորների հետ բացահայտ տեռո-

բիստական դատաստան տեսնողների, ամբողջ առաջավոր ու պրոգրեսիվ մարդկության թշնամիների կերպարանքն է:

Տրոցկիստները կապիտալիզմը վերականգնելու և ԽՍՀՄ-ն անդամահատելու ստոր պաշտպաններն են, Իսպանիայում հիտլերյան վարձկան—գեներալ Ֆրանկոյի «հինգերորդ զորասյուն» հիմքն են, Ֆրանսիայում—Հիտլերի և Ֆրանսիական ֆաշիստների գործակալներն են. առանց բացառության բոլոր յերկիրներում տրոցկիստներն աշխատավորության ամենավոխերիմ թշնամիներն են, ժողովրդական ճակատը քայքայող ֆաշիզմի անմիջական գործակալներն են, պատերազմի պրովոկատորներն են, վորոնք ձգտում են խեղդել միջազգային պրոլետարիատին:

Հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի դատավարությունն ամենապայծառ կերպով ցույց տվեց չափազանց խոր այն անդունդը, վորը սոցիալիզմի ու դեմոկրատիայի աշխարհը բաժանում է ֆաշիզմից, պատերազմից, տեռորից, աշխատավորության դեմ կատարվող ամենագարշելի հանցագործություններից:

Իզուր չէ, վոր ֆաշիստներն այնպես կատաղում են իրենց տրոցկիստական գործակալների տապալման առթիվ ԽՍՀՄ-ում, գովաբանում են տրոցկիստներին, իրենց լրագրերում գետեղում են բանդիտ Տրոցկու, Ռադեկի, Պյատակովի նկարները:

Ցավ իզուր չէ, վոր բոլոր յերկիրների աշխատավորները, բոլոր հակաֆաշիստները, խաղաղության և դեմոկրատիայի պաշտպանները, մարդկության բոլոր ազնիվ տարրերը խորհրդային ժողովրդի մեծ ցասումի ալիքին միացնում են դեպի տրոցկիստական բանդիտներն ու նրանց տերերը տածած իրենց ատելության ձայնը:

* * *

Տրոցկիստների և նրանց գործակիցների—աջ թափթփուկների նողկալի գործունեության փաստերը, վորոնք մերկացվեցին հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի դատավարության ժամանակ, վերջակում են կուսակցության ու խորհրդային իշխանության այդ թշնամիների դավաճանությունների ու մատնությունների շղթան: Տասնամյակների ընթացքում կուսակցությունը Լենինի և Ստալինի ղեկավարությամբ անդադրում մերկացրել, ջախջախել է բանդայի պարագլուխ Տրոցկուն, Զինովյեվին, Կամենևին, Պյատակովին, Ռադեկին, Սոկոլնիկովին, Սերեբրյակովին: Բոլշևիկյան կուսակցության կատաղի թշնամի Տրոցկու հովանու ներքո այդ վիժվածքները, քողարկվելով «ձախ» ֆրազ-

ներով, դուրս եկին դալիս պրոլետարական Մեծ հեղափոխության դեմ, աշխատում էին խափանել կուսակցության միասնությունը, պաշտպանում էին կապիտալիստական հասարակարգն այն տարիներին, երբ Լենինի—Ստալինի կուսակցությունը բանվոր դասակարգին պատրաստում էր կապիտալիզմի ամբողջությունները դրոհելու համար: Արդեն այն ժամանակ նրանք կուսակցության դեմ ոգտագործեցին Ֆրակցիոն պայքարի և յերկերեսանությունի տրոցկիստական թունավոր զենքը: Յեվ այն ժամանակ արդեն Լենինը նշավակեց Տրոցկուն, անվանելով նրան Հուդա:

Տրոցկին և տրոցկիստները պայքարում էին բոլշևիկյան կուսակցության դեմ 1905—1907 թ. թ. առաջին ռուսական հեղափոխության ժամանակ:

Նրանք ձգտում էին կործանել Լենինի—Ստալինի կուսակցությունը բանվոր դասակարգի ամենածանր փորձությունների տարիներին: Արդեն այն ժամանակ տրոցկիստական քամելիոնները ցույց տվին իրենց վորպես բուրժուազիայի ամենաանարդ գործակալներ բանվորական շարժման մեջ:

Իմպերիալիստական պատերազմի տարիներին Տրոցկին, իսկ նրա հետ նաև Պյատակովը, Ռադեկը, Սոկոլնիկովը չարությամբ լի հանդես յեկան բոլշևիկյան կուսակցության դեմ, մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության լենինյան թեորիայի և նրա հետ անխզելիորեն կապված իմպերիալիզմի ու պատության վերաբերյալ լենինյան ուսմունքի դեմ:

Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ժամանակ Տրոցկին և տրոցկիստները պայքարում էին Լենինի և Ստալինի հաղթական ստրատեգիայի ու տակտիկայի դեմ: 1917 թ. ապրիլին Պյատակովը, դուրս գալով Լենինի Ապրիլյան թեզիսների դեմ, հայտարարեց. «Մենք դեպի սոցիալիզմ չենք գընում»:

Հայտնի յե, վոր կուսակցության VI համագումարում Ստալինը մերկացրեց մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու անհնարինության վերաբերյալ տրոցկիստական պնդումները:

Մեծ պրոլետարական սոցիալիստական հեղափոխությունը ԽՍՀՄ-ում հաղթանակելուց հետո Տրոցկու, Պյատակովի, Ռադեկի և մյուս տրոցկիստների առելությունը դեպի սոցիալիստական շինարարությունը, պրոլետարական դիկտատուրան, դեպի Լենինի—Ստալինի կուսակցությունն ավելի ու ավելի աճում է: Հատկապես ռեստավրատորական, սրա հետ կապված պարտ-

զողական ձգտումներն էին կազմում տրոցկիստների, զինովյևականների, աջերի և այլ խմբերի ու խմբավորումների հակակուսակցական, իսկ հետագայում նաև հակախորհրդային գործունեության հիմքը, վորոնք պայքարել են կուսակցության դեմ վերջին դրեթե քսան տարվա ընթացքում։ Վոչ այլ վոք, բայց յեթե Ռադեկը, առավել անպատկառորեն 1918 թվականին ձևակերպեց կուսակցության հակառակորդների — Պյատակովի, Բուխարինի և մյուսների պատրաստակամությունը խորհրդային իշխանությունը կորցնելու վերաբերմամբ։ Հենց այդ ժամանակ Պյատակովը, ձախ-եսերական հակահեղափոխականների հետ դավադրություն կազմած՝ գաղտնի պլաններ էր կառուցում, այն է՝ ձերբակալել Լենինին ու հակահեղափոխական կառավարության գլուխն անցնել։

Այդ վիժվածքները պարտվողական դիծ էին վարում 1919 և 1920 թվականներին։ Նոր անտեսական քաղաքականության առաջին տարիներին նրանք կանխորոշում էին խորհրդային իշխանության անխուսափելի տապալումը, փորձելով դեմոբիլիզացիայի յենթարկել ու զինաթափ անել պրոլետարիատին։ «Կկուն կանչել է»,— հայտարարեց Տրոցկին 1922 թվին, իր հաշիվները հիմնելով պրոլետարիատի դիկտատուրայի մոտալուտ կրախի վրա, իսկ Սոկոլնիկովը նույն այդ ժամանակ պահանջում էր ռոտարերիայա կապիտալիստներ հրավիրել և սոցիալիստական ձեռնարկությունները նրանց հանձնել սարկական պայմաններով։

1922 թվականին Լենինն անխնա նշավակում էր Ռադեկին ու Բուխարինին, վոր նրանք միջազգային բուրժուազիայի քաղաքական գիջումներ են արել եսերներին դատի տալու հարցում, ըստ էության խրախուսելով խորհրդային ժողովրդի թշնամիների տեռորիստական մահափորձերը։ Հենց այն ժամանակ էլ, 1922 թվին, Լենինի—Ստալինի կուսակցությունը ջախջախեց Տրոցկու առաջարկությունները մեր գործարաններն ու ֆաբրիկաներն ռոտարերիայա կապիտալի մոտ գրավ դնելու մասին։

Ռեստավրատորական ձգտումները կազմում էին տրոցկիստական կապիտուլանտների — Տրոցկու, Պյատակովի, Սերեբրյակովի, Ռադեկի, Սոկոլնիկովի, Մուրալովի, Բոգուսլավսկու, Դրոբնիսի և մյուսների կողմից 1923—1924 թ.թ. կուսակցության դեմ կատարվող գրոհի իսկական բովանդակությունը։

Լենինի մահից հետո, յերբ աշխատավոր մասսաները Ստալինի առաջնորդությամբ սկսեցին ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման մեծ ծրագրի իրագործմանն

անցնել, հեմբից կտրելով կապիտալիզմի բուն խոշ արմատները մեր յերկրում,—կապիտալիզմի վերականգնման և պրոլետարիատի դիկտատուրայի պարտության անարդ ծրագիրը, քողարկված տրոցկիստների բարձրագոչ ֆրազով, համախմբեց-միացրեց սոցիալիզմի վոխերիմ թշնամիներին—տրոցկիստներին ու ղինովյեվականներին: Կուսակցության XIV համագումարում հենց Սոկոլնիկովն եր, վոր հանդես յեկավ Խորհրդային Միությունը դաուեսացման յենթարկելու, այսինքն՝ մեր յերկիրը միջազգային իմպերիալիզմի կցորդը դարձնելու զզվելի ծրագրով: Այդ ծրագրի ռեստավրատորական, հակահեղափոխական բովանդակությունը հենց այն ժամանակ անխնա մերկացրեց ընկեր Ստալինը:

Տրոցկին ու նրա հավատարիմները — Պյատակովը, Ռադեկը և մյուսները, քարոզում եյին, թե ԽՍՀՄ-ն պիտի յենթարկվի համաշխարհային կապիտալիստական շուկային: Տրոցկիստները, ղինովյեվականներն ու աջերը, ամենասուր ձևով ոգտագործելով սոցիալիստական շինարարության դժվարությունները, մոլեգնած պայքարում եյին մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու լենինյան-ստալինյան թեորիայի դեմ և այդ թեորիան իրոք կենսագործելու դեմ՝ ստալինյան հնգամյակի դեմ, սոցիալիստական ինդուստրացման ու կոլեկտիվացման դեմ:

Վորքան ավելի հաջող եր ծավալվում սոցիալիզմի շինարարությունը, վորքան ավելի արագ եյին հաղթանակից դեպի հաղթանակ դնում Խորհրդային Միության ժողովուրդները բոլշևիկյան կուսակցության և ընկեր Ստալինի ղեկավարությամբ, այնքան ավելի կատաղի յեր դառնում ժողովրդի թշնամիների — տրոցկիստների դիմադրությունը, վորոնց անխնա մերկացրել եր ընկեր Ստալինը, ջախջախել եր կուսակցությունը և իր շարքերից դուրս եյին շպրտել աշխատավոր մասսաները:

Տրոցկին և նրա վոհմակը—Պյատակովը, Սերեբրյակովը, Ռադեկը, Սոկոլնիկովը, Մուրալովը, Բոգուսլավսկին, Դրոբնիսը և մյուսները վերջին տասնամյակի ընթացքում անցել եյին ավելի ու ավելի կատաղի ու չարանենգ պայքարի ձևերի՝ ընդդեմ կուսակցության և խորհրդային իշխանության: Կուսակցության վերացման հետ կորցնելով յերկրում միակ հենարանը, նրանք ավելի ու ավելի սերտորեն եյին շաղկապվել Խորհրդային Միության կապիտալիստական շրջապատման հետ:

Արդեն 1931 թվականին ընկեր Ստալինը «Пролетарская революция» ժուռնալի խմբագրությանն ուղղած իր պատասխան

նամակում տրոցկիստների դիմակը պատռեց, ցույց տալով, որ «իրականում տրոցկիզմը առաջավոր ջոկատն է հակահեղափոխական բուրժուազիայի, որը պայքար է մղում կոմունիզմի դեմ, խորհրդային իշխանության դեմ, ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցելու դեմ»[1]:

Ընկեր Ստալինը պայծառ կերպով ցույց տվեց, որ տրոցկիզմը հակահեղափոխական բուրժուազիայի ձեռքը հոգևոր, տակտիկական ու կազմակերպական զենք է տվել բոլշևիզմի դեմ:

Այդպես, հակակուսակցական ֆրակցիոն և հակախորհրդային կազմակերպություններ ստեղծելուց, հակահեղափոխական դրականություն տպագրելուց, հակախորհրդային ցույցերի փորձերից սկսելով՝ տրոցկիստները դլորվեցին-հասան մինչև վերջին սահմանը, դառնալով ֆաշիստական բուրժուազիայի առաջավոր ջոկատը, դառնալով տեռորիստներ, դիվերսանտներ, վնասարարներ, բանվորներ սպանողներ, ֆաշիզմի մոտ ծառայության մատած լրտեսներ:

Ինչպես էլ որ լինի, ինչ գնով ուզում է լինի կապիտալիզմը վերականգնելու և սոցիալիզմը պարտության մատնելու ձգտումը — ահա թե ինչն էր մղում ժողովրդի այդ թշնամիներին դեպի հակահեղափոխական պայքարի, մատնությունների ու դավաճանության ուղին, ահա թե ինչը նրանց հասցրեց ամենագարշելի հանցագործությունների, այն է՝ դերմանական ֆաշիզմի ու ճապոնական դիվերսիոնականության վարձու գործակալությունը դառնալուն:

Պատմությունը տվեց բոլոր այն «թեորիաների» վճռողական հանրագումարը, որոնց քողի տակ Տրոցկին, Զինովյևը, Կամենևը, Պյատակովը, Ռադեկը, Սոկոլնիկովը Բուխարինի հետ միասին կատաղի պայքար էին մղում կուսակցության ու խորհրդային կառավարության դեմ:

1934 թվականին, Հիտլերի՝ իշխանության գլուխ անցնելուց հետո, ժողովրդի վայրաշ թշնամի Տրոցկին իր արբանյակներին ուղղած դիրեկտիվի մեջ պնդում էր, ինչպես վկայում է արիկա Պյատակովը, որ «Հիտլերի՝ իշխանության գլուխ անցնելուց հետո միանգամայն պարզ է, որ նրա, Տրոցկու, դրությամբ մի յերկրում սոցիալիզմ կառուցելու անհնարինության մասին՝ բոլորովին արդարացավ, որ ռազմական ընդհարումն անխուսափելի յե և որ, յեթե մենք, տրոցկիստներս, ցանկանում ենք

---

[1] Ստալին, Լենինիզմի հարցերը, եջ 591 (հայերեն):

պահպանել մեզ ինչպես վորևիցե քաղաքական ուժ, մենք արդեն նախապես պետք է, պարտավորական դիրք բռնելով, վո՛չ միայն պասսիվ դիտենք ու զննենք, այլև ակտիվորեն պատրաստենք այդ պարտությունը»:

Նույն ցուցմունքը տվեց դատարանում նաև բանդիտ Սոկոլնիկովը.— «... Կենտրոնի ղեկավար անդամները գտնում էին, վոր մեր հեղափոխությունը վորպես մեկուսացած հեղափոխություն չի կարող դիմանալ երբև սոցիալիստական հեղափոխություն, վոր կաուցկիական ուլտրաիմպերիալիզմի թեորիան և նրան աղջակից բուխարինյան կազմակերպված կապիտալիզմի թեորիան ճիշտ դուրս չեկան: Մենք գտնում ենք, վոր ֆաշիզմը—դա ամենակազմակերպված կապիտալիզմն է, նա հաղթում է, գրավում է ամբողջ Եվրոպան, խեղդում է մեզ: Ուստի ավելի լավ է նրա հետ համաձայնության գալ, ավելի լավ է վորևե կոմպրոմիս անել՝ սոցիալիզմից զեղի կապիտալիզմ նահանջելու իմաստով»:

Մի յերկրում սոցիալիզմ կառուցելու անհնարինության վերաբերյալ հակահեղափոխական տրոցկիստական «թեորիան» հիմնավորումն դարձավ սոցիալիզմը բռնությամբ այն յերկրում վոչընչացնելու թեորիայի ու պրակտիկայի համար, վորտեղ սոցիալիստական հեղափոխությունը հաղթանակեց 1917 թ. հոկտեմբերին:

Ժողովրդի թշնամու՝ Տրոցկու հենց այդ «թեորիայի» վրա յեր հենվել տրոցկիստական բանդան, միավորվելով Հիտլերի ու ճապոնական զինվորականության հետ՝ ընդդեմ ԽՍՀՄ-ի ու ամբողջ աշխարհի աշխատավորների:

Բանդիտ Ռադեկը դատարանում հետևյալ ձևով շարադրեց որբ-բանդիտ Տրոցկու կողմից իր արբանյակներին առաջադրված պահանջները. «...Արևմուտքում վոչ մի հեղափոխություն հնարավոր չէ, այդ պատճառով կործանեցե՛ք մի յերկրում հեղափոխությունը, կործանեցե՛ք ԽՍՀՄ-ում սոցիալիզմը»:

Այդպես բացվեց՝ իր ժամանակին ընկեր Ստալինի մերկացրած տրոցկիստական և բուխարինյան դարշելի «թեորիաների» իսկական բովանդակությունը: Մի յերկրում սոցիալիզմ կառուցելու անհնարինության «թեորիան» և կազմակերպված կապիտալիզմի «թեորիան» քողարկում էին այն ստոր պրակտիկան, վորի էությունն էր՝ ԽՍՀՄ-ի պարտության պատրաստումը՝ ֆաշիզմի հետ տեղի ունենալիք պատերազմում, տրոցկիստների

ու նրանց աջակիցների սերտաճումը գերմանական ու ճապոնական հետախուզությունների հետ:

Հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի գործի դատավարությունը մերկացրեց տրոցկիստական բանդիտների դիմակավորումը, ակներև կերպով ապացուցեց, որ կուսակցության դեմ մղվող պայքարի տրամաբանությունը տրոցկիստներին հասցրեց մատնության, հայրենիքի դավաճանության, հասցրեց խորհրդային ժողովրդի դեմ ուղղված այնպիսի ստոր հանցագործությունների, որոնք իրենց հրեշավորությամբ գերազանցում են այն ամենը, ինչ որ պատմությունը յերբևիցե իմացել է:

Դատավարությունն ամենայն պարզությամբ հաստատեց, որ, թեակոխելով կուսակցության դեմ մղելիք պայքարի ուղին, տրոցկիստները — զինովյեվականները վոչ մի բոպե ցած չդրին իրենց թունավոր զենքը: Որքան ավելի հաջող եր ընթանում սոցիալիզմի հարձակումը, որքան ավելի հիասքանչ եր աճում-բարձրանում սոցիալիստական հասարակության շենքը, այնքան ավելի խորը՝ դարշահոտ ընդհատակն եյին իջնում անարդ բանդիտները, այնքան ավելի նրբին եյին դառնում յերկերեսանիության, ստի ու խարեբայության մեթոդները, որոնցով նրանք քողարկում եյին իրենց իսկական կերպարանքը:

Այն բանից հետո, յերբ XV կուսակցական համագումարը կուսակցության շարքերից դուրս չպրտեց տրոցկիստներին-զինովյեվականներին, Տրոցկին իր կամակատարներին դիրեկտիվ տվեց—յերկերեսանիորեն հայտարարել տրոցկիզմից հրաժարվելու մասին, որպեսզի կարելի լինի կուսակցության մեջ վերադառնալ հակակուսակցական և հակախորհրդային գործունեությունը շարունակելու համար: Զևի համար նշավակելով իրենց տրոցկիստական համոզմունքները, սուտ յերդումներ շռայլելով կուսակցությանը նվիրված լինելու մասին, աշխատելով քծնությամբ վստահություն ձեռք բերել, տրոցկիստական բանդիտները չգերազանցված ձևացումի ու յերկերեսանիության տակտիկա մշակեցին:

Հույս ունենալով խուսափելու խորհրդային արդարադատությունից, այնպիսի բանդիտները, ինչպես Պյատակովը և Ռադեկը, ճիշտ այնպես, ինչպես նաև Զինովյեվն ու Կամենևը — ընկեր Կիրովի սպանության անմիջական կազմակերպիչները,— տրոցկիստական-զինովյեվական հակահեղափոխական կենտրոնի դատավարության ժամանակ՝ 1936 թ. ողոստոսին «նշավակում եյին» իրենց զինակիցներին, «վիչտ եյին կրում» Կիրովի համար:

Հուդա անունը, վորով Լենինը Տրոցկուն խայտառակության սյունին գամեց, մի անգամ ընդմիշտ սազեց այդ ստոր պրովոկատորներին:

Բանդիտ Դրոբնիսը անպատկառորեն դատարանում պատմում եր, վոր քայքայիչ տրոցկիստական աշխատանք, վնասարարություն և դիվերսիաներ կատարելով, ինքը «ձգտում եր կուսակցական և խորհրդային կազմակերպությունների վստահությանն արժանանալ, վորպեսզի նվազեցնի իրեն ցույց տրվող կասկածամիտ ու անվստահ վերաբերմունքը և այնուհետև սկսի մարդիկ հավաքագրել»:

Կեղտոտ հանցագործները կուսակցության վստահությունն ոգտագործեցին, վորպեսզի, կուսակցական տոմսով սքողված, պատասխանատու պաշտոնների անցնեն և, իրենց պաշտոնեական դիրքն ոգտագործելով, ել ավելի լայն կերպով ծավալեն զարշելի, դավաճանական աշխատանքը:

* * *

Տրոցկիստական բանդիտների չարանենգ հաշիվները սնանկ դուրս յեկան: Ինչքան ել նրանք աշխատեցին խախտել մեր յերկրի հզորությունը և դադարեցնել սոցիալիստական շինարարությունը, նրանց չհաջողվեց արգելակել սոցիալիզմի հաղթական յերթը, վորն իր արտահայտությունն է դտել ի դեմս յերևելի ստախանովյան շարժման:

Չնայած հանքերում և քիմիական արդյունաբերության մեջ տրոցկիստական դավաճանների կատարած վնասարարությանը և դիվերսիաներին, ածխի հանույթը, քիմիական ինդուստրիան, ինչպես և ընկ. Սերդո Օրջոնիկիձեյի ղեկավարած ամբողջ ծանր արդյունաբերությունը, շարունակում են արագորեն բարձրանալ: Չնայած տրոցկիստական բանդայի կողմից յերկաթուղիներում կատարված ստոր գործողություններին, մեր տրանսպորտը ընկ. Լ. Մ. Կագանովիչի ղեկավարությամբ հաղթահարեց հետ մնալը և ժամկետից առաջ կատարեց իրեն առաջադրված պլանը:

«Ինչո՞վ բացատրել այդ հրաշքը, ինչո՞վ բացատրել այդ յերևույթը,—հարց տվեց իր ճառում պետական մեղադրող, ԽՍՀ Միության դատախազ ընկ. Վիշինսկին և պատասխանեց.

— Աշխարհում հրաշքներ չեն լինում: Այստեղ ինչո՞ւ մենք ունենք մեր արդյունաբերության, մեր յերկաթուղային տրանսպորտի այդպիսի վայելուն աճ, այդպիսի բարդավաճում: Վորովհետև

վնասարարների կողմը միավորներ են կանդնած։ Այդ միավորների հասցրած վնասն արագությամբ վերացնում են միլիոնավորները։ Վորովհետև խորհրդային կառավարության ու սոցիալիզմի շինարարության կողմը միլիոնավորներ են կանգնած»։

Բանդիտները հույս ունեին հետաղայում էլ շարունակելու իրենց ստոր գործունեությունը, վարագուրվելով պաշտոնական դիրքով, կուսակցական տոմսով, յերկերեսանիությունն անելով ու ձևանալով։

Նրանք դրանում էլ սխալվեցին։ Պրոլետարական դիկտատուրայի յերկաթե բազուկը — չեկիստները՝ ընկեր Ստալինի հավատարիմ զինակից Ն. Ի. Յեժովի գլխավորությամբ—դուրս հանեց բանդիտներին դարշահոտ ընդհատակից։

Տրոցկիստական բանդայի և աջ հակահեղափոխական թափթփուկների հանցագործությունները, վոր յերևան բերվեցին տրոցկիստական հակախորհրդային կենտրոնի դատավարության ժամանակ, կուսակցությունից և ամբողջ խորհրդային ժողովրդից պահանջում են հսկայական չափով բարձրացնել հեղափոխական զգաստությունը։

«Կապիտալիստական շրջապատումը հասարակ աշխարհագրական հասկացողություն չէ»,—ասել է ընկեր Ստալինը[1]։ Առաջնորդի այս նախազգուշացումը ղեկավարող թել պետք է լինի մեր ամբողջ աշխատանքում։ Ֆաշիզմը և նրա գործակալության՝ տրոցկիստական տականքի և աջ թափթփուկների մնացորդները դենքը ցած չեն դնի՝ ԽՍՀՄ-ի դեմ, սոցիալիզմի դեմ մղվող պայքարում։ Ընդհակառակը, ֆաշիստական դիշատիչները կրկնակի ջանադրությամբ փնտռելու յեն նոր գործակալներ, լրտեսներ, տեռորիստներ, դիվերսանտներ մարդկային նեխված քի մեջ, մեր վոչնչացրած կապիտալիզմի թափթփուկների մեջ։ Չի կարելի խոսքով հավատալ վոչ մի նախկին ոպոզիցիոների։ Հարկավոր է ել ավելի աչալուրջ դիտել նրանց, հարկավոր է հարյուր անգամ ավելի խորն ստուգել յուրաքանչյուր աշխատավորի։ Պետք է կարողանալ ճանաչել կուսակցական տոմսով քողարկված ֆաշիստական հետախույզին։ Պետք է ել ավելի ուժեղ ու խորը ծավալել կուսակցական մասսայական աշխատանքը։ Պետք է ել ավելի ամուր կռել մեր հայրենիքի անխորտակելի պաշտպանական հզորությունը։ Պետք է յեռակի յեռանդով ծավալել ստախանո-

---

1 Ստալին, Լենինիզմի հարցերը, եջ 481 (հայերեն)։

վյան շարժումը, վորպեսզի վոչնչացնենք տրոցկիստական-ֆաշիստական բանդայի վնասարարության հետևանքները:

Սոցիալիզմի թշնամիների դեմ ուղղված մեծագույն, հախուռն վրդովմունքի ու ցասումի զգացմունքով ընդունեց խորհրդային ժողովուրդը տրոցկիստական բանդայի դարշելի ու ստոր գործունեության վերաբերյալ հաղորդումը: Մեր լայնածավալ հայրենիքի բոլոր անկյուններում աշխատավորները տրոցկիստական բանդիտների դեմ ուղղված հսկայական զայրույթի զգացմունքով եյին հետևում այն բանին, թե ինչպես եր արձակվում զզվելի հանցագործությունների կծիկը:

Բանվորներն ու կոլտնտեսականները, կարմիր-բանակայիններն ու ինժեներները, գրողներն ու ոդաչուները, արտիստներն ու ակադեմիկոսները—ամբողջ խորհրդային ժողովուրդը խորը գոհունակության զգացմունքով ընդունեց պրոլետարական դատարանի՝ տրոցկիստական բանդիտներին պատժող դատավճիռը:

Խորհրդային հայրենասիրության, իր կառավարությանը, բոլշևիկյան կուսակցությանը ցուցաբերվող նվիրվածության հզոր ալիքը, դեպի ժողովուրդների առաջնորդ ընկեր Ստալինը տածած անսահման ջերմ սերն ե հնչում Խորհրդային Միության աշխատավորների բանաձևերում, նամակներում, ճառերում ու յելույթներում:

«Անարդ տրոցկիստները վոտնձգություն են անում՝ կուլտուրության դեմ մղած բազմամյա պայքարում դյուղացիության նվաճած ունևոր կյանքի դեմ: Իրենց նպատակ դնելով վերականգնել մեր յերկրում կապիտալիզմը, նրանք ուզում են ցրել կոլտնտեսությունները, նորից մեր վրին նստեցնել պորտաբույծ-կուլակներին: Այդ լինելու բան չե. նրա համար չենք ստեղծել կոլտնտեսությունները, նրա համար չենք յերջանիկ, բերկրալի կյանք կառուցել, վոր թողնենք տրոցկիստները վոչնչացնեն մեր սոցիալիստական հաղթանակները:

Խելագարված հրեշների բարբարոս հանցագործություններին ի պատասխան տրակտորիստներն ու կոմբայնավարները յերդվում են ե՛լ ավելի ներտորեն համախմբվել Լենինի—Ստալինի սիրելի կուսակցության շուրջը, ել ավելի լավ, ստախանովյան աշխատանքով պայքարել բարձր բերքի համար»—այսպես ե Կուրսկի մարզի Բելգորոդի շրջանի տրակտորիստների ու կոմբայնավարների ձայնը[1]:

---

[1] Տես «Правда», 27 հունվարի 1937 թ.:

«Ցեռ մենա՛կ չեմ մեղադրում.—դատարանում իր ճառում ասաց պետական մեղադրող, ԽՍՀ Միության դատախազ ընկ. Վիշինսկին։— Ցեռ մեղադրում եմ մեր ամբողջ ժողովրդի հետ միասին»։ Դատարանի դատավճիռը — այդ՝ խորհրդային ժողովրդի դատավճիռն է, հենց պատմության դատավճիռն է կապիտալիզմի դարձելի ռեստավրատորների վերաբերմամբ։

Լենինի—Ստալինի կուսակցությունը և նրա հետ ամբողջ խորհրդային ժողովուրդը բոլոր անհրաժեշտ հետևությունները կանեն հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի դործի դատավարությունից։ Տրոցկիստական բանդիտների ստոր, քայքայիչ աշխատանքին ԽՍՀՄ-ի աշխատավորները պատասխանում են ստախանովյան շարժման նոր վերելքով, մի շարժում, որն ամենակարճ ժամկետում կվերացնի տրոցկիստական վնասարարության հետևանքները։ Հեղափոխական դդաստության բարձրացումը, յուրաքանչյուր աշխատողի պատասխանատվության բարձրացումը՝ սոցիալիստական շինարարության առանց բացառության բոլոր տեղամասերում՝ չարագործական դավերի համար անթափանցելի զրահ պետք է ստեղծեն։

Յուրաքանչյուր կոմունիստ, յուրաքանչյուր աշխատավոր պարզորոշ պետք է գիտակցի, որ անփութությունը, անհոգությունը, քաղքենիությունը, խորհրդային դեմոկրատիայի խախտումները ճեղքեր են, որոնց միջով թափանցում է նենդ թշնամին, տրոցկիստը, ֆաշիստական դործակալը։

Անհրաժեշտ է մեծ պատասխանատվություն ցուցաբերել կադրեր ընտրելիս, անհրաժեշտ է պայքարել այդ կարևորագույն աշխատանքը ուրիշներին վերավստահելու պրակտիկայի դեմ։ Անհրաժեշտ է ե՛լ ավելի բարձրացնել բոլշևիկյան ինքնաքննադատությունը, այն հաշվով, որ անկանոնությունների մասին վարից յեկող վոչ մի ազդանշան առանց ուշադրության չմնա։ Անհրաժեշտ է շատ ավելի բարձր աստիճանի դնել կուսակցական աշխատանքը, ավելի լավ դեկավարել աշխատավորների հարաճուն ակտիվությունը։

Սրանք են այն հետևությունները, որոնք մեր ամբողջ աշխատանքի հիմքը պետք է կազմեն։

* * *

Դաժան մարտերում, հսկայական զոհերի ու տառապանքների գնով խորհրդային ժողովուրդը բոլշևիկյան կուսակցության դեկավարությամբ, Լենինի ու Ստալինի առաջնորդությամբ հիմ-

նականում կառուցել է սոցիալիստական հասարակությունը, բերկրալի ու յերջանիկ կյանք է նվաճել: Սոցիալիստական հայրենիքը—մեր հողը, մեր գործարանները, ֆաբրիկաները, տրանսպորտը, խորհանտեսություններն ու կոլտնտեսությունները—այդ բոլորը ձեռք են բերվել, կառուցվել են, ստեղծվել են շահագործողների դեմ մղված մարտերում: Խորհրդային ժողովրդի լավագույն զավակներն իրենց կյանքը տվին, վորպեսզի հաղթություն ձեռք բերեն: Այդ պայքարում իր ուժերը մինչև վերջ տվեց Լենինը, այդ պայքարում վառվեցին Լենինի-Ստալինի դինակիցներ՝ Սվերդլովը, Ֆրունզեն, Ջերժինսկին, Կույբիշևը· տրոցկիստական-զինովյեվական հրեշների ձեռքով սպանվեց անմոռանալի Կիրովը:

Մենք թևակոխել ենք պրոլետարական Մեծ հեղափոխության քսաներորդ տարին: Կապիտալիզմի հետ մեր յերկրում հաշիվն ընդմիշտ վերջացած է: Խորհրդային ժողովրդի նվաճումները, սոցիալիստական հասարակակարգի հիմունքները դրվել են առնված մեծագույն փաստաթղթում — ստալինյան Սահմանադրության մեջ: Խորհրդային ժողովրդի ամբողջ ուժն ու հզորությունը, այն ժողովրդի, վորն ընդմիշտ թոթափել է կապիտալիստական շահագործման լուծը և մեր յերկրում սոցիալիստական հասարակարգ է հաստատել, պահակ են կանգնած հաղթանակած սոցիալիզմի յերկրի Սահմանադրությանը:

Մեր մեծ հայրենիքի աշխատավորների սրտում վայելուն ճրագի պես վառվում են ստալինյան խոսքերը՝ «...ԽՍՀՄ-ի ժողովուրդները մահու կռիվ կմղեն հեղափոխության նվաճումների համար»[1]:

Ամբողջ աշխարհի աշխատավորների ջերմ համակրանքն ու սերն է շրջապատում Խորհրդային Միությանը: Յեվ անարդ տրոցկիստական բանդիտները հույս էին դնում այն բանի վրա, թե խորհրդային ժողովրդին ուժաբեկ կանեն և ֆաշիստական սվինների ծայրին կապիտալիստական իրավակարգը կբերեն մեր յերկիրը:

Վո՛չ տրոցկիստական բանդային, վո՛չ նրանց ֆաշիստական տերերին չի հաջողվի պատմությունը դեպի հետ շուռ տալ:

Պրոլետարական դատարանը, կատարելով ժողովրդի կամքը, անխնա պատժում է լպիրշ տրոցկիստական ռեստավրատորներին,

---

[1] Ստալին, Լենինիզմի հարցերը, եջ 678 (հայերեն)։

հայրենիքի դավաճաններին, մատնիչներին, ֆաշիստական վարձկաններին։

Խորհրդային Միության ժողովուրդները, աչալուրջ հետևելով թշնամիների մեքենայություններին, յերկրի յերեսից սրբելով ֆաշիստական բանդիտներին, Ստալինի առաջնորդությամբ կշարունակեն հաղթական ուղին դեպի կոմունիզմ։

«Большевик» № 3, 1937 թ.

Դ. ՈՍԻՊՈՎ

ԻՆՉՈ՞Ւ ՅԵՆ ՆՐԱՆՔ ԽՈՍՏՈՎԱՆՈՒՄ

Բոլոր մեղադրյալները խոստովանեցին իրենց հանցանքը: Բոլոր մեղադրյալներն իրենց հանցագործությունների մասին խոսում են շատ և կարծես թե անկեղծորեն:

Դատարանի այդ պատկերը բուրժուական հայացքով արտասովոր է: Նա զարմանք է պատճառում ոտարերկրացուն: Մանավանդ վոր այդ պատկերն այս կամ այն չափով կրկնվում է հակահեղափոխական կազմակերպությունների նախորդ դատավարություններին: Այդպես յեղավ «արդյունաբերական կուսակցության» դատավարության և մենշևիկների դատավարության ժամանակ: Այդպես յեղավ տրոցկիստական-զինովյեվական կենտրոնի դատավարության ժամանակ:

Հապա ինչո՞ւ յեն մեղադրյալները խոստովանում խորհրդային դատարանում:

Այս հարցը տվեց պետական մեղադրող ընկ. Վիշինսկին Բոգուսլավսկուն և Մուրալովին — հին տրոցկիստների, տրոցկիստական ընդհատակյա հակահեղափոխական կազմակերպության Սիբիրի կենտրոնի անդամներին:

Գուցե, հարց եր տալիս ընկ. Վիշինսկին, կողմնակի ճնշո՞ւմ է յեղել բանտարկության ժամանակ: Զե՞ վոր բուրժուական մամուլի մի մասը ամենատուտ, անհեթեթ հերքիմներ և տարածում այն մասին, թե իբր հարցաքննության ինչ-վոր անծանոթ մեթոդներ են կիրառվել նախնական հետաքննության ժամանակ: Մեղադրյալները կտրականապես ժխտեցին այդպիսի յենթադրությունը: Նրանք հաստատում են, վոր հետաքննությունը կատարվել է միանգամայն կորեկտ ձևով, վոր վոչ մի անմիջական, թե կողմնակի բռնության մասին խոսք անգամ չի կարող լինել: Մեղադրյալ Մուրալովը հայտարարեց, վոր բանտարկության ժամանակ շարունակ կուլտուրականորեն են վերաբերվել իրեն:

Հայտնի յե, վոր մեղադրյալները ձերբակալությունից հետո մի անգամից չեն ավել ցուցմունքները։ Մուրալովը հանցանքը ժխտում եր ութ ամիս, Բոգուսլավսկին—ութ որ։ Ռադեկն ուրանում եր յերեք ամիս...բայց վորքան ժամանակ էլ վոր նրանցից յուրաքանչյուրն աշխատեց լռել իր իսկական հանցագործությունների մասին, այնուամենայնիվ նրանք բոլորը վերջիվերջո լեզուները բաց արին։

Սկսեցին խոսել...Բայց խոստովանությունների լրիվության և անկեղծության աստիճանը վորոշվում է նախ և առաջ նրանց դեմ հավաքված հանցանշանների լրիվությամբ։ Մեղադրյալները խոստովանում են այն, ինչ վոր արդեն յերևան է բերված Ներքդործաքննիչի ու դատախազության քննական որգանների կողմից։ Մեղադրանքը հիմնավորված է խիստ փաստացիորեն։ Հանցագործը համոզվում է, վոր հակահեղափոխական կազմակերպության մեջ կատարած իր դերը հայտնի յե։ Նրան դեմ են մյուս մասնակիցների վկայությունները, փաստաթղթերը, ճիշտ տվյալները։

Մեղադրանքի այդ ճշտությունը, հիմնավորվածությունը բոլոր դատավարությունների կարևորագույն դիծն է։ Մեղադրյալներն ընկճված են նախ և առաջ անհերքելի հանցանշանների ծանրությունից։ Անմտություն է իր հանցանքը ժխտել ակնբախության հանդեպ։ Ուրացումն այդպիսի պայմաններում միայն հաստատում է մեղավորությունը։ Դատարանում ուրացումը մեղադրյալին արդահատելի ու ծիծաղելի դրության մեջ կդներ։ Այդպես յեղավ, որինակ, Ի. Ն. Սմիրնովի հետ, տրոցկիստական-զինովյեվական կենտրոնի դատավարության ժամանակ։ Տրոցկիստական բանդաների կազմակերպիչը փորձում եր ժխտել խստիվ ստուգված, ճշտիվ հաստատված փաստերը։ Նրան ծաղրում ու մերկացնում եյին հենց նրա համախոհներն ու նրա կինը։

Սակայն հետաքննության կողմից արդեն հաստատված փաստերն անկեղծորեն խոստովանելն ամենևին էլ դեռևս չի նշանակում իսկական ու ամբիվ անկեղծություն, իր հանցանքի լիակատար ու վերջնական խոստովանություն։ Ժողովրդի թշնամիները հավատարիմ են մնում իրենց յերբեմն մինչև վերջին. բոլորն են։ Սերգեյ Միրոնովիչ Կիրովի սուր սպանության առաջին դատավարության ժամանակ անարդ Կամենևն ու Զինովյեվը, համոզվելով, վոր իրենց իսկական դերը դեռևս մինչև վերջը յերևան չի բերվել, ամենայն «անկեղծությամբ» խոստովանեցին իրենց քաղաքական ու բարոյական պատասխանատվությունն

սպանության համար։ Նրանք իրենց այդ «անկեղծության» քողի տակ թաղցրին տեռորը ղեկավարող տրոցկիստների ու զինովյևականների միացյալ կենտրոնը։

Իսկ յերբ հետաքննական որդանները յերևան բերին նաև այդ կենտրոնը, և Կամենևը, Զինովյևն ու մյուսները մեղադրվյալների աթոռին նստեցին արդեն վորպես ընկեր Կիրովի սպանության ուղղակի և անմիջական կազմակերպիչներ, նրանք նորից ամենայն «անկեղծությամբ» խոստովանեցին իրենց այդ հանցանքը, վորն արդեն վոչ մի կերպ չեր կարելի ժխտել։ Բայց նրանք թաղցրին «զուգահեռ կենտրոնի» և ընդհատակյա կազմակերպության գոյությունը, յենթադրելով, թե նԿՎԴ-ի որդանները հանցագործների հետքը դեռևս չեն գտել։

Այստեղից պարզ է, թե ինչու յեն խոստովանում մեղադրվյալները։ Անմտություն է ժխտել այն փաստերը, վոր հաստատված են անհերքելի վկայություններով։ Սակայն ինչո՞ւ յեն մեղադրվյալներն աշխատում դատարանին հավատացնել իրենց կատարյալ անկեղծությունը, իրենց շիտակությունը։

Բոգուսլավսկին և Մուրալովը դատարանին բացատրեցին իրենց հանցանքը խոստովանելու շարժառիթները։ Ցուրաքանչյուրը խոսում եր իր ձևով։ Հիմնականում դրանք միևնույն շարժառիթներն են։ Ցուրաքանչյուրի մոտ ձերբակալությունից հետո ձևավորվել եր լիակատար անհուսալիության գիտակցություն այն գործի վերաբերմամբ, վորի համար նրանք դնում եյին գլուխ մահ։ Ձերբակալությունը կրախ եր—թե՛ կազմակերպական և թե՛ անձնական։

Մեկի մոտ բեկումը տեղի յե ունեցել ավելի շուտ, մյուսի մոտ—ավելի ուշ։ Սակայն թե՛ Բոգուսլավսկու, թե՛ Մուրալովի մոտ այդ կրախը պատրաստվել եր նրանց հանցավոր աշխատանքի ամբողջ նախընթաց զարգացումով։ Տարակուսանքները նրանց ուտում եյին — և այնքան ավելի շատ, վորքան ավելի յեր պարզվում տարբերությունը Տրոցկու խոսքերի, դիրեկտիվների ու իսկական խորհրդային իրականության միջև։

Տրոցկին ասում եր. Խորհրդային յերկիրը դնում է գլուխ կործանում։ Փաստերն ասում եյին. յերկիրն ամրանում է։ Տրոցկին ասում եր. պետք է վերադառնալ գլուխ կապիտալիզմը։ Փաստերն ասում եյին. յերկիրը սոցիալիզմ է կառուցում։ Տրոցկին ասում եր. յերկրում աղքատություն աճելու յե։ Փաստերն ասում եյին. յերկրում աշխատավորների բարեկեցությունն աճում է։

«Զե՞ վոր յես կույր չեմ»,—դատարանում ասաց Մուրալովը։ Նրա անձնական չարամտությունը, նրա ստորաքարշ նվիրվածությունը Տրոցկուն՝ վեճի եյին բռնվել փաստերի հետ։ Ինչպես և բոլոր տրոցկիստները, նա իր տրոցկիստական յուղում տապակվում եր։ Սակայն այստեղ ել Տրոցկու՝ տեռորի, վնասարարության, հայրենիքի դավաճանության «նորաղույն կուրսն» եր չվարեցնում նրան։

Վորպեսզի դատարանում ահեղ դատավճռին սպասելիս, միլիոնավոր ժողովրդի առաջ մարդ կարողանա պահպանել մարտիկի հաստատամտությունն ու արիությունը, դրա համար իր մեջ պետք է ունենա բարոյական այն ուժը, հոգեկան այն ամբողջականությունը, վոր տալիս է իր արդարացիության վերաբերմամբ ունեցած վիստակցությունը միայն, իր գործի ուժի ու գեղեցկության վերաբերմամբ ունեցած համոզվածությունը միայն, ինչպես և հայրենիքի համար, ժողովրդի համար, հեղափոխության, սոցիալիզմի համար մեռնելու պատրաստակամությունը։ Ահա թե ինչու իսկական հեղափոխականները, պրոլետարիատի զավակներն արհամարհում են բուրժուական դատարանը, հրաժարվում են ցուցմունքներ տալուց, չեն խոստովանում իրենց հանցանքը։ Նրանք, ընդհակառակը, դատարանում հպարտորեն ծավալում են իրենց գործերը, առանց ներողամտություն խնդրելու իրենց համար և առանց վողորմածություն սպասելու։

Բայց վոչ բարոյական ուժ, վոչ հոգեկան ամբողջականություն չունեն և չեն կարող ունենալ հայրենիքի դավաճանները, բանվոր դասակարգի մատնիչները, այն մարդիկ, վորոնք բանվորական դրոշմը դարձրել են իրենց քաղաքականությունը, բանվորներին սատանայորեն սպանողները։ Այդ մարդիկ ներքուստ մաշված-վատած են։ Ստելությունն ու չարությունը նրանց մոտ փոխարինում եյին համոզվածությանը։ Քանի դեռ նրանք չեյին ձերբակալվել, նրանք դիմանում եյին ավազակային բանդայի դողվածությամբ։ Սնանկանալով, մեկուսացած դրության մեջ ընկնելով, նրանք միանգամից դղացին ամբողջ դատարկությունն իրենց հոգու, վորը մաշվել եր դավաճանության վտանգից։

Բոդուսլավսկին և Մուրալովը դատարանին խնդրում եյին հոգատար իրենց շարժառիթների անկեղծությանը։ Բայց արդյունքներն արդեն ցույց տվին, վոր նրանց անկեղծությունը նույնպիսի արժեք ունի, ինչպես և նրանց ճշմարտասիրությունը։ Նրանք հրաժարվում և դղջում են այսոր, վորպեսզի վաղը

նույն տեղում ապրանքն։ Ցերկերեսանիությունը դարձել է նրանց յերկրորդ բնությունը։ Խոստովանությունների «անկեղծությունը» ծառայում է վորպես զավադրություն նյութող կապիտալիստությունները քողարկելու միջոց։

«Правда», 27 հունվարի 1937 թ.

Ա. ՍՈՍՈՒՐՈՎԱ

ԼՐՏԵՍՆԵՐԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Մեղադրյալների շարքում Սարոյիլովը աչքի է ընկնում մի առանձնահատկությամբ.—նա մեղադրյալի աթոռին նստած իր ցեղակցակիցների մեջ, վորպես բացառություն, սկզբում պարզապես լրտես եր, առանց տրոցկիստական զգեստների: Անկուսակցական ինժեներ Սարոյիլովը 1930 թ. ցեղել է Գերմանիայում՝ պաշտոնական զորձուղման մեջ: Գերմանական հետախույզների փորձված աչքն արագ վորոշեց, վոր բոլոր հնարավորությունները կան նրանից առաջնակարգ լրտես և դիվերսանտ պատրաստելու:

Հետախույզները չսխալվեցին իրենց ընտրության մեջ: Ցերկու-յերեք դրույց Սարոյիլովի հետ, նրա ձեռքը տրված Տրոցկու կեղծոտ գրքույկը, կուշտ նախաճաշ հետախուզության հետ կապված գերմանական ֆիրմայի գեկավարների մոտ, իսկ այնուհետև—շանտաժ: Յեվ Սարոյիլովը վաճառվեց—դարձավ լրտես, վնասարար:

Իր «չար վոգին» նա համարում է Ֆոն-Բերդին, վորը նրա հետ դրուցել է «հայտնի չե, թե ինչ ֆիրմայի անունից, բայց ամեն ինչ լմացել է»: Գերմանական հետախուզության այդ «չար վոգիները» շատ են հանդիպել ինժեներ Սարոյիլովի դիվերսանտական ճանապարհին:

Սարոյիլովի հարցաքննությունը յերևան է բերում՝ ԽՍՀՄ-ի քարածխի արդյունաբերության մեջ գերմանացիների կատարած ճյուղավորված լրտեսական-վնասարարական մեծ աշխատանքի պատկերը—թե՛ «տեխնիկական ոգնության» անվան տակ կատարված է թե՛ մեր հանքահորերը ածխի հանույթի մասնագետներ ուղարկելու փոխարեն պայթեցումների, հրկիզումների ու սպանությունների մասնագետներ ուղարկելու միջոցով:

Մերկացված Սարոյիլովը հանդիսատ, մինչև իսկ կարծես ակա-

դեմքաբար, թվարկում է իր կատարած չարագործությունների հսկայական ցուցակը։ Այստեղ կան թե՛ դծագրերի գողություններ, թե՛ մեքենաների գահլիճը հրկիզելու փորձեր, թե՛ հանքահան կարապիկների ակներև հանցագործ նախագծում, թե՛ ածխի ինքնարժեքի թանգացում, թե՛ պայթեցումներ, թե՛ պրովոկացիոն գործունեություն բանվորների մեջ, թե՛, իհարկե, լրտեսություն։ Այդ բոլորն իր վրա կրում է լրտեսության ու դիվերսիայի գործի դերմանական «մասնագետների» կնիքն ու ձեռքը, վորոնց Սորոյլովը հանձնարարում ու պաշտպանում էր։ № 5–6 հանքահորի ցցահարի պայթեցումը պատրաստել էր դերմանական ինժեներ Շերեստոն, № 7 հանքահորի հրդեհները— դերմանացի մարկշեյդեր Ոտտոն, վնասարարական նախագծեր կազմել էին նույնպես յերեք դերմանացիներ, վորոնք ձեացնում էին այդ վորպես «ռացիոնալացում»։

Բանն այն տեղն էր հասել, վոր արդեն Սորոյլովը, իր կաշու համար սարսափելով, սկսել էր լրտեսության իր յեղբայրակիցներին ըղավել՝ չափն անցկացրի՛ք, տակով կլինե՛նք։ Բայց դերմանական տերերը հուպ էին տալիս, պահանջում էին նոր դիվերսիաներ, զաղանի փաստաթղթերի նոր գողություններ, նոր պայթեցումներ, հրկիզումներ ու սպանություններ։ Սառնասրտորեն այժմ Սորոյլովը զատարանին հաղորդում է դիվերսիաներից մեկի մասին. «Ժոխային պայթյուն տեղի ունեցավ. միքանի յերեխա վոչնչացավ»—կարծես խոսքն ամենաանմեղ բանների մասին է։

Սակայն ի՞նչն էր հայրենիքի այդ դավաճանին կապում մեղադրյալների աթոռին նստած իր այժմյան յեղբայրակիցների հետ։ Սորոյլովն ի՞նչպես դարձավ տրոցկիստ։ Ցեվ ի՞նչ ընդհանուր բան ունի նա, որինակ, Լիվշիցի հետ, վորին Գերագույն դատարանը հարցաքննում է հենց այսոր, Սորոյլովի հետ միևնույն օրը և միևնույն գործով։

Լիվշիցի ուղին կարծես բոլորովին այլ է, քան Սորոյլովի կյանքի ճանապարհը։ Ի տարբերություն Սորոյլովից նա, Լիվշիցը, հին, մոլի տրոցկիստական դայլ է։ Հենց հիմա էլ, դատարանի միկրոֆոնի առաջ, նա խոսում է առանց չտապալելու, լավ մտածելով յուրաքանչյուր խոսքը, վորպեսզի բերանից բանչթռցնի, Գերագույն դատարանին ավելին չասի, քան այն հանցանշանները, վոր նրա դեմ հարուցված են, ավելին չասի, քան այն, ինչ արդեն վոչ մի կերպ հնարավոր չէ թաղցնել։ Խեցգետնի իր աչքերը չռելով և ջուրը կում-կում խմելով, վորպեսզի

վայրկյաններ շահի խորհրդածության համար, Լիվշիցը դատարանում ցուցմունք է տալիս, թե ինչպես է ինքը վնասարար աշխատանքի անցել տրանսպորտում:

Սարսուռ է փչում Լիվշիցի ցուցմունքներից, վոր նա ասես ծորեցնում է առամների արանքից, կակազելով ու բ-ի փոխարեն ղ արտասանելով: Կուսակցությունը հավատաց նրա զղջումին, տրոցկիզմից հեռանալուն և նրան նշանակեց Հարավային յերկաթուղու, այնուհետև—Հյուսիսային Կովկասի, հետո Կուբանի յերկաթուղու պետի պատասխանատու պաշտոնին, իսկ հետագայում նշանակեց հաղորդակցության ճանապարհների ժողկոմի տեղակալ: Սակայն Լիվշիցի ու նրա տրոցկիստ բարեկամների համար, վորպես դավաճանության պրոֆեսիոնալների, վատահություն—նշանակում եր ավելի շատ դողանալու, ավելի շատ վնասելու, բանվորներ սպանելու, տեռորիստական ակտեր պատրաստելու, խորտակումներ կազմակերպելու հնարավորություն:

Պյատակովի ու Սերեբրյակովի կողմից ղեկավարվող Լիվշիցն սկսեց տրոցկիստական կադրեր ջոկել տրանսպորտում: Տրոցկիստական բանդան ու նրա տերերը հիանալի հասկանում էին, վոր յերկաթուղային տրանսպորտը յերկրի ամենակարևոր նյարդն է, և փորձեր էին անում այդ նյարդը կտրելու մերթ մեկ, մերթ մյուս տեղում: Լիվշիցը Հարավային յերկաթուղում վագոններ չեր տալիս ածխի համար: Լիվշիցը Հյուսիսային-Կովկասյան յերկաթուղում վիժեցնում եր նավթի բարձումը: Լիվշիցը ամեն մի յերկաթուղում, վորտեղ նա յեղել է, գնացքների խորտակումներ է սարքել: Լիվշիցը Հաղորդակցության Ճանապարհների ժողկոմատում իր շայկայի մասնակիցներին տեղերում առաջադրանքներ եր տալիս. վորքան կարելի յե շատ խորտակումներ: Վորքան կարելի յե շատ զոհեր: Ավելի շատ շոգեքարշեր և վագոններ ջարդել: Ավելի շատ ճանապարհներ փչացնել: Ավելի յերկար և ավելի վատ նորոգել ու շինել:

Զոհե՞ր: Այո՛, իհարկե, Լիվշիցը դիտեր զրանց մասին: Ընկ. Վիշինսկու հարցին նա սառնասիրտ պատասխանում է. քանի վոր խորտակում է կատարվում—նշանակում է զոհեր կլինեն, այդ յես դիտեյի... Այդ նրան չեր շփոթեցնում: Բոլորովին ընդհակառակը—վոխակալությամբ լցված տրոցկիստական խիժը ուրախանում եր մարդկային զոհերի առթիվ: Վորքան ավելի շատ լինեն զոհերը, այնքան ավելի ուրախ կլինեն տերերը: Իսկ իր իսկական տերերին նա, Լիվշիցը լավ եր ճանաչում: Ինչ

գիտեր, վոր ծառայում է գերմանական ու ճապոնական իմպերիալիստներին, ու վանաովել էր նրանց կրկնակի՝ թե՛ Պյատակովի—Տրոցկու միջոցով, թե՛ բացի այդ—Կնյազեվի միջոցով:

Կնյազեվի միջոցով էր Լիվշիցը դարձել ուղղակի ճապոնական լրտես և հետախույզ: Կնյազեվի միջոցով էր նա ճապոնական հետախուզության լիազորներին հանձնում տրանսպորտի — Խորհրդային յերկրի կենսական նյարդի վերաբերյալ զաղտնի փաստաթղթերը: Փաստաթղթեր է հանձնել ու հանձնարարություններ է ստացել գնացքների նորանոր խորտակումների, նորանոր գիվերսիաների, սպանությունների համար: Հանցանշանների չնորհիվ նեղն ընկած, նա այժմ զատարանում արդեն այլևս չի փորձում ճապոնական հետախուզության հետ ունեցած իր կապը թաղցնել: Պաշտոնական առանձնասենյակում նա, Լիվշիցը, գիվերսիոն առաջադրանքներ է տվել Կնյազեվին, Առնոլդովին, Յեմշանովին և մյուս տրոցկիստական գարշելիներին, պաշտոնական առանձնասենյակում Կնյազեվին ճապոնական հետախուզության համար պաշտպանական նշանակություն ունեցող փաստաթղթեր է հանձնել:

Լրտեսական ծառայությունը դարձել էր պրոֆեսիա Լիվշիցի համար, և այդ նրան ազդակից էր դարձրել Սարոյլովին, զարդապես լրտես Սարոյլովներին ազդակից էր դարձրել տրոցկիստական լրտեսներ՝ Պյատակովին, Ռադեկին, Սերեբրյակովին, Շեստովին և մյուսներին: Մենք մի ընդհանուր տեր ունենք և ընդհանուր նպատակներ,—այդպես ասելիմիա կերպով տրոցկիստական բանդիտ Շեստովն ասել է զարդապես բանդիտ Սարոյլովին 1931 թվականին, յերբ այդ ազդակցությունը Սարոյլովի համար դեռևս պարզ չէր:

Նա ասում է. 1931 թվականին Շեստովն առաջին անգամ «իմ բնակարանում էր գտնվում: Իմ տարակուսական այն հարցին, վոր յես հետու յեմ նրանց տրոցկիստական ներկուսակցական աշխատանքից և վոր ինձ համար անհասկանալի յե, թե ի՞նչ կոնտակտի մասին կարող է խոսք լինել իմ՝ անկուսակցական ինժեներիս ու տրոցկիստական կազմակերպության միջև,—նա պատասխանեց, թե այդ հարցը, ներկուսակցական աշխատանքի հարցը, անցած ետապի մնացուկ է, և վոր այժմ նրանց առջև տրոցկիստներն ու գերմանացիները նույնպիսի խնդիրներ են դրել, ինչպես և իմ առջև: Վո՛չ մի տարբերություն չկա»:

Սկզբում Լիվշիցի ու Սարոյլովի ուղիները տարբեր են յեղել: Լիվշիցը տրոցկիզմից գնում էր և հասավ լրտեսության,

Ստրոյիլովը լրտեսության միջոցով ճանաչեց տրոցկիզմը։ Իսկ այնուհետև ամեն ինչ բնականաբար համընկնում էր—Տրոցկու գրությունները և հետախուզության գրությունները. ճապոնական հետախուզությանը՝ Լիվշիցին, Կնյազեվին, Տուրոկին և գերմանական հետախուզությանը՝ Ստրոյիլովին, Շեստովին և մյուսներին։ Տրոցկիզմի ու լրտեսության հուղանները, ինչպես և նրանց ատամանը, վաճառվել էին ճապոնական ու գերմանական արծաթով։ Յեվ յերեկ, դատարանի դահլիճում, մեղադրյալ Տուրոկի ցուցմունքները 35 հազար ռուբլու մասին, վոր նա ճապոնական հետախուզությունից ստացել էր իր, Կնյազեվի ու մյուս յեղբայրակիցների համար, հնչեցին ինչպես հուզարկավորության զանգահարություն տրոցկիստական դարշելի արարածների համար,—Ստրոյիլովից սկսած մինչև Լիվշիցը, Շեստովից սկսած մինչև Հուզա-Տրոցկին։ Հուզարկավորության զանգահարություն լրտեսների, դիվերսանտների և մարդասպանների ընկերակցության համար։

«Правда», 27 հունվարի 1937 թ.

Պ. ՊԱՎԼԵՆԿՈ

ՃԱՊՈՆԱՑԻ ՊԱՐՈՆ ԽԱՆ ԿԱՄ ՏՐՈՑԿՈՒ ՀԵՌԱՎՈՐ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿԵՂԾԱՆՈՒՆԸ

Ճապոնացի պարոն Խան, լրտեսը, կարող է պարծենալ, որ ինքն այսուհետև բարեհաջող կերպով վերավորակավորվել, դարձել է տրոցկիստ: Տրոցկիզմը միջազգային լրտեսության մոդայի վերջին ճիչն է: Լրտեսության փիլիսոփայությունը և պրակտիկան, որոնց կլասիկը մինչև վերջին ժամանակները դեներալ Դոիխարան եր, այժմ ձեռք է բերել մի ուրիշ պաշտպան—Տրոցկուն:

Թե տրոցկիզմն ինչպես դարձավ լրտեսների փիլիսոփայություն, այդ հարցի պարզաբանմանը նվիրված են Կնյազեվի և Տուրոկի ցուցմունքները: Կնյազեվը ցուցմունք է տալիս, որ դեռ 1931 թվականին ճապոնացիներն իրեն առաջարկություն են արել նրանց համար աշխատելու, բայց ինքը վերջնական պատասխան չի տվել: Այնուհետև ճապոնացի պարոն Խան, վորոշ ժամանակ անցնելուց հետո, նրան նոր առաջարկություն է արել: Ճապոնացի պարոն Խան այժմ հանդատացուցիչ կերպով ասել է, որ Կնյազեվի կապը ճապոնացիների հետ չպետք է—ասված մի՛ արասցե—անհատական բնույթ կրի, այլ այսուհետև լինելու է ամբողջ տրոցկիստական կազմակերպության կապը ճապոնական հետախուզության հետ: Բացի դրանից, ավելացրել է Խան, նրանք—ճապոնացիները—ավելի բան չեն էլ պահանջում, քան ինքը Տրոցկին:

Ցեվ Կնյազեվն սկսել է աշխատել: Նրա ցուցմունքներից լիակատար ակներևությամբ յերևում է, որ տրոցկիստական կազմակերպությանը պատկանելու հանգամանքը նրան—Կնյազեվին—ամբողջովին ճապոնացիների ձեռքն եր հանձնել: Ճապոնացիները տրոցկիստական կադրերն ստացել են ինչպես տերեր, և ճապոնացի պարոն Խայի ղեկավարության ու Տրոցկու դեր-

մանական տերերի միջև փաստորեն վոչ մի տարբերություն չի յեղել: Պարոն Խայի անունը կարող եր հնչել ինչպես Տրոցկու հեռավոր-արևելյան կեղծանուն:

Ցեվ ահա Կնյազևը ցուցմունք է տալիս իր գործերի մասին, վորպես տրոցկիստի, վորն աճել, լրտես է դարձել աճած, տրոցկիստ դարձած մի ուրիշ լրտեսի ղեկավարությամբ:

Մարդ մի մտածի, թե մեր յերկրի վրա վորքան է նստում այդ մանր ղղվելի վոշիլը, ազնիվ մարդկանց վորքան նյարդեր և նա քայքայել, նյութական վորքան վնասներ է հասցրել, վորքան ազնիվ համբավներ է փչացրել և, վերջապես, վորքան կարմիր-բանակայիններին կյանքեր է կործանել:

Սակայն, հնարավոր է, վոր միայն Կնյազևն է այդպես չափից դուրս յեռանդուն ճապոնասեր տրոցկիստ, իսկ մյուսները, թեպետև հարաբերություններ ունեցել են ճապոնացիների հետ, սակայն, ինչպես Սոկոլնիկովը,—կուլտուրական ձևով, քաղաքաքաղաքավարությամբ առանց մինչև գործի կոպիտ տեխնիկան իջնելու, նույնիսկ խորշելով նրանից: Բայց ահա լսեցե՛ք Լիվշիցի, պարագլուխներից մեկի, ցուցմունքները,—այժմ նա խոստովանեց իր լրտեսական աշխատանքը, թեև նա այդ ժխտել եր նախնական քննության ժամանակ: Բանից դուրս է գալիս, վոր միայն Կնյազևն ու ճապոնացի պարոն Խան չեն, վոր տրոցկիզմը հասկացել են վորպես վնասարարության և լրտեսության թեորիա ու պրակտիկա, այլև «ինքը» Լիվշիցն ել այդպես է մտածել: Դեռ ավելին: Հենց նա յե Կնյազևին կոնկրետ ցուցումներ տվել խորտակումներ կատարելու համար: Սակայն, դուցե Լիվշիցն ի՞նքն է չփոթել վորևե բան և վերևից յեկած դիրեկտիվը հասկացել վոչ այնպես, ինչպես պետք է: Ո՛չ, վոչ, հենց այդ մասին Լիվշիցի հետ խոսք ու զրույց են արել թե՛ Սերեբրյակովը, թե՛ Պյատակովը:

Ընդհանրապես տրոցկիստական աշխատանքի վոր ողակն ել չոչափենք, ամենուրեք տեսնում ենք նպատակների միևնույն սրտառուչ միասնությունը և միջոցների ընդհանրությունը, ոպերատիվնիկների բացառիկ միասնությունն իրենց կենտրոնի հետ, վորը, ինչպես աստվածային յերրորդություն, յերևում է մերթ պարոն Տրոցկու կերպարանքով, մերթ ճապոնացի պարոն Խայի կերպարանքով, մերթ «աղավնակերպ հոգու»—ղեմանական հակահեղափոխության պարոն Կ—ի կերպարանքով: Ցեվ յերբ կլասիկորեն ավարտված, իր ցուցմունքների մեջ ինքն իրեն վարպետորեն նկարած մեղադրյալ մասոն և Ժուլիկ Առնոլդը փոր-

ձում է բոլոր անարդար միջոցներով «հասարակության բարձրագույն խավերին» հասնել,—նա ընկնում է տրոցկիստների մոտ: Յերբ չեխո-սլովակյան, իսկ այնուհետև գերմանական լրտես Գրաշեն ակտիվանում է,—նա ընկնում է տրոցկիստների մոտ: Անասելի ցինիզմով նա ասում է, վոր իրեն համար—վորպես լրտեսի—պարտադիր չեր վոչևիչ համոզմունք ունենալ, սակայն մենք պետք է խոստովանենք, վոր ըստ զբաղմունքի տեսակի վոչ մի համոզմունք չունեցող այս լրտեսի և մյուս տասնվեցի միջև, վորոնք կարծես թե պարտավոր եյին համոզմունք ունենալ, բոլորովին վոչ մի տարբերություն չկա:

Յեվ այդպես, պարոն Խան կարող եր իր բարեկամների շքահանդեսում համոզվել, վոր ինքն ըմբռնել է լրտեսության ամենամոգայական վիլլասոփայության ամբողջ խորությունը և ընդունակ է վարժանել Տրոցկուն նրա ամեն մի գործում: Մյուս կողմից, Տրոցկին ևս կարող է միանգամայն համոզված լինել, վոր ինքը գլուխ կթափի ամեն մի ֆաշիստական յերկրի ամեն մի հակահետախուզության հետ:

Սակայն, մեզ թվում է, այստեղ մինչև իսկ պարոն Խան էլ սկսում է հասկանալ, վոր այդ «ալմիրյան բեզ—Տրոցկու հենց քթի տակ պող կա»: Կարելի յե գնել ու վերավաճառել Տրոցկուն իր կազմակերպության հետ այնպես, վոր նրանք չեն էլ նկատի այդ: Սակայն գնել Պրիմորյե՞ն: Մի ժամանակ արդեն ճապոնացիները փորձեցին այն գնել Կոլչակից ու Սեմյոնովից: Լավ բան դուրս չեկավ: Յե՛վ գրամն եր վճարվել, և՛ զորքեր եյին բերվել, ու հանկարծ տեղի ունեցավ ինչ-վոր ա՛յն ասպիճան անվայել (ըստ ճապոնական խղճի ասած) մի բան, վոր մինչև այժմ ճապոնիայում շատերը չեն մոռանում.—Պրիմորյեյի քաղցած, բոկոտն, վատ զինված պարտիզանները ջհանդամը չպրտեցին անկոչ հյուրերին և այդ մասին յերգ հորինեցին, վոր և յերգում են ամբողջ խորհրդային ժողովրդի հետ: Այդ յերգում վոչ մի ավելորդ բառ չկա:

Իսկ այն ժամանակվանից, այսինքն, Վոլոչայևկայի, Սպասսկի և Նիկոլայևսկի (Ամուրի վրա) օրերից, շատ տարիներ են անցել, և Պրիմորյեյում վորպես անխորտակելի պարիսպ կանգնած է Կարմիր բանակը: Դեռևս առանց պատերազմելու նա մեզ համար ստեղծում է իսկական ժողովրդական հերոսներ, ինչպես Ուվչիննիկովը և Բարանովը: Այդ նույնպես յերգ է: Այդ յերգում էլ ավելորդ բառ չկա:

«Правда», 28 հունվարի 1937 թ.

Ռ. ԼԵՎԻՆԵՍ

ՍՄԵՐԴՅԱԿՈՎՆԵՐԸ

Գերագույն դատարանի առջև կանգնեցին տրոցկիստական կենտրոնի «հերոսները» իրենց ամբողջ գարշելի մերկությամբ: Պատռված և դիմակը ծածկված թշնամիների, հայրենիքի դավաճանների, վորոնք դաղտագողի կատարել են իրենց սուրբ գործը: Ցավ ահա անցնում են մեր առջևից նրանք—վնասարարները, լրտեսները, դիվերսանտները, տեռորիստները, պատվի գործում շնացողները, մեր յերկրի թանգագին մարմինը հատավաճառ առևտրի առարկա դարձնողները, վորոնք պատրաստ են մեր յերկիրը հոշոտելու, կտոր-կտոր անելու և ֆաշիզմի գիշատիչ շների վառքերի տակ գցելու:

Մի նպատակի յե ձգտել այդ բանդան—վորքան կարելի յե ավելի հուսալի կերպով կապել խորհրդային ազատ ժողովրդին կապիտալիստական շղթայով, խլել բանվորներից գործարանները ու ֆաբրիկաները, ցրել կոլտնտեսությունները, հողից դրկել գյուղացիներին, կտոր-կտոր անել Սահմանադրությունը, ժողովրդի վրա լուծ դնել, խեղդել նրա վրա նստել և հրամայել նրան:

Զկար այնպիսի գին, վոր ֆաշիստական այդ բանդիտներին խիստ թանգ թվար այնքա՞ն «նվիրական» նպատակին հասնելու համար: Տեռորով, անկյունից կատարվող չարագործ սպանություններով նրանք ուզում եյին գլխատել ժողովրդին, վոչնչացնել նրա առաջնորդներին, անդամահատել, կտոր-կտոր անել նրա տերիտորիան. Գերմանիային տալ Ուկրաինան, ճապոնական իմպերիալիստներին—Պրիմորյեն, Պրիամուրյեն, ռուսերկրյա ազգերնորներին հանձնել Խորհրդային Միության բնական հարստությունների—յերկաթահանքի, մանգանի, նավթի, վոսկու, անտառանյութերի, ապատիտների բանալիները,—ընդհանրապես պարարտացնել գիշատիչների քիմքը, նրանց հյուրասիրել խորհրդային հացով և յուղով:

Ցեվ չի յեղել վո՛չ մի միջոց, վորից խորշելին այդ սողացող լիժերը։ Ժողովրդին սարկացնելու համար բոլոր միջոցներն էլ նրանց լավ էին թվում։ Պատերազմի հրձիգները, նրանք բոլոր իրենց մատչելի յեղանակներով շտապեցնում էին արյունոտ այն սպանդը, վորպիսին դեռևս աշխարհը չի տեսել։ Արտասահմանում Տրոցկին գործարք է կնքում՝ ֆաշիստական կուսակցության գծով Հիտլերի ոգնական Հեսսի հետ, և յերկուսով կառուցում են Խորհրդային Միությունը բաժանելու և կողոպտելու պլանները։ Իսկ այստեղ, մեր խորհրդային տան մեջ, թաղնվել էին հայրենիքի մյուս դավաճանները, վորոնք խորհրդային դիվանագիտության, արդյունաբերության, տրանսպորտի, մամուլի խնկապես բարձր պոստերում—մեր կուսակցության և կառավարության կողմից նրանց վստահած պոստերում կատարել են իրենց դավաճանական ծառայությունը նույն ոտարերկրյա գրքավոր շտաբների ու հետախուզական որգանների համար, ինչպես և Տրոցկին։ Խորհրդային իշխանության պաշտոնական ներկայացուցիչները լինելով, իրականում նրանք ոտարերկրյա ֆաշիստական իշխանության վոչ-պաշտոնական աստիճանավորներն էին։

Բոլոր այդ գարշելի արարածները վնասել են ամենից ավելի զգայուն տեղերը, վորպեսզի ավելի ցավագին խայթեն։ Տրոցկիստները կազմակերպել են մահափորձեր բոլշևիկյան կուսակցության ու խորհրդային կառավարության ղեկավարների դեմ։ Նրանք ռազմական գնացքների խորտակումներ, հանքահորերի ու գործարանների հրկիզումներ ու պայթեցումներ են սարքել։ Նրանց ձեռքերի վրա—մեղ հարազատ արյունը կա, նրանց խղճի վրա—քիչ մարդկային զոհեր չեն ծանրացած։

Մասսայական սպանություններ ու ժանտախտ էին բերում ժողովրդին այդ մարդասիրական անասունները։ «Մինչև իսկ ավելի լավ, յեթե զոհեր լինեն», հայտարարել է այդ շայկայի անդամներից մեկը, քրեական բանդիտ Դրորնիսը։

Իսկ Պյատակովը 1935 թվականի դեկտեմբերին, ոգտագործելով արտասահմանյան իր պաշտոնեական գործուղումը, մեկուսի մի գյուղաքաղաքում, Նորվեգիայի մայրաքաղաք Ոսլոյից վոչ հեռու, հանդիպում է ունենում Տրոցկու հետ և ինն ամսից հետո, 1936 թ. ոգոստոսին, տրոցկիստական-զինովյեվական հակահեղափոխական բլոկի դատավարության ժամանակ հանդես է գալիս մի հոդվածով, վորտեղ գրում է.

«Նորվեգիական լրագրում լույս տեսած Տրոցկու հայտարա-

բությունն այն մասին, թե իր դեմ ուղղված մեղադրանքներն անհիմն են,—մինչև հատակն ինված ավանտյուրիստի անորինակ լկտիության ու կեղծության ակտ է հանդիսանում...»:

Ինչ խոսք՝ Պյատակովին ստույգ հայտնի չեր, վոր մեղադրանքը հիմնավոր է: Նա առաջին աղբյուրից գիտեր այդ: Զարմացնել կարող էին չեֆի հասցեին ուղղված անպատիվ արտահայտությունները միայն, յեթե վոր այդ անպատվությունը չմտներ «խաղի կազմի մեջ» և նպատակ չունենար փրկելու «ընդհանուր գործը» և Պյատակովի սեփական կաշին: Նույն նպատակներով նա նշավակում է մեղադրյալների աթոռին նստած իր զինակիցներին ամենաթունդ խոսքերով, յերդվում է, վոր ինքը մաքուր է, Հուդայի համբույր և ուղղում կուսակցության ու կառավարության ղեկավարների հասցեին:

«Այդ ամբողջ ստոր հակահեղափոխական գործունեությունը,—հաստատում եր Պյատակովը,—ստախոսության, յերկերեսանիության, բոլորին ու յուրաքանչյուրին խաբելու անտանելի ժանտահոտությամբ է բռնված: Մարդկային անկման ինչպիսի՜ աստիճանի պետք է հասած լինել, Ագեֆից ու Մալինովսկուց եկած պետք է դլորվի անընդհատ հրեային ստի ու պրովոկացիայի այդ ղղվելի սիստեմն ստեղծելու համար:

«Ինձ համար անտանելիորեն ամոթ է հիշել այն մասին, վոր յես եւ 1925—1927 թ. թ. այդ բանդիտների հետ միասին եյի գնում: Յես սխալվել եմ, սաստիկ սխալվել եմ... Յեվ յերբ յես հասկացա, վոր իմ ուղին—դա կուսակցության թշնամու ուղին է, յես դուրս յեկա այդ ուղուց կտրուկ կերպով ու անդառնալիորեն և հսկայական ուրախության զգացումով գնացի նոր ու ճիշտ ուղիով, Ստալինի ուղիով, վորով այն ժամանակվանից հաստատամտորեն ու բերկրանքով գնում եմ ամբողջ կուսակցության հետ միասին»:

Ապա Պյատակովը դրել է «մեր հիանալի կարմիր բանակի» մասին, «զավաճանների այդ աննշան խմբակի զազրելի ինտրիգանական, պարտվողական գլխացավանքի» մասին, այն խմբակի, վորը «թքել եր ուղում մինչև իսկ յերկրի պաշտպանության վրա»: Բայց պյատակովյան համբերության բաժակը լցված է, և նա բացականչում է.—

«Խոսք չեմ գտնում, վորպեսզի լիովին արտահայտեմ իմ զայրույթն ու նողկանքը: Դրանք այնպիսի մարդիկ են, վորոնք կորցրել են մարդկային կերպարանքի վերջին նշույլը: Նրանց հարկավոր է վոչնչացնել, վոչնչացնել ինչպես լեշ, վորը վարա-

կում է Խորհրդային յերկրի մաքուր ու առողջ ոդը... Մեր թշնամին հաղթանակող սոցիալիզմի յերկրում խորամանկ է: Նա հարմարվում է պայմաններին: Ձևանում է: Ստում է: Իր հետքը ծածկում է: Վստահություն է ուզում ձեռք բերել... Այդ դործակալություն է, վորը ձգտում է մեր շարքերը թափանցել և իր ստոր հարվածները հասցնել գաղտագողի...

Լավ է, վոր ՆԳԺԿ-ի որգանները մերկացրին այդ բանդան: Լավ է, վոր նրան կարելի յե վոչնչացնել: Փառք ու պատիվ ՆԳԺԿ-ի աշխատողներին...»:

Այս բոլորը գրվել է այն հաշվով, թե ՆԳԺԿ-ը պարզամիտ կլինի, և այն հուսով, թե կարելի կլինի հետքերը ծածկել: Չհաջողվե՛ց...

Չհաջողվեց, չնայած վոր Պյատակովն արել էր ավելին, քան պարզապես թանաք ու կոկորդիկոսի արցունք թափելը հիշյալ հոդվածում: Նա կատարել է մի քայլ, վորն իր պրովոկատորական մարդվածությամբ գերազանցում է Ազեֆի ու Մալինովսկու ֆանտազիան: Բանավոր նա արտահայտում էր իր պատրաստակամությունը տրոցկիստական-զինովյեվական հակահեղափոխական կենտրոնի դատավարությանը հանդես գալու վորպես մեղադրող, կամ ծայրահեղ դեպքում—վորպես դատավճիռը կիրառող: Սեփական ձեռքով էր ուզում նա դնդակահարել իր համախոհներին և մտերիմներին—Զինովյեվին, Կամենևին և բանդայի մյուս մասնակիցներին, վորոնց հետ միասին ըստ դորձի եյության նա արդեն այն ժամանակ, անցյալ տարվա ոգոստոսին, պետք է մեղադրյալների աթոռին նստեր: Պատրաստ էր նրանց դնդակահարելու, վորովհետև ուզում էր վրեժ լուծել այն մարդկանցից, վորոնք «ղուլահեռ կենտրոնի» մասնակիցների անունները տվել էին:

Վորքան ավելի յես ծանոթանում այդ փաստերին, այնքան ավելի յես լցվում զզվանքի, բարոյական նողկանքի զգացմունքով, վորը փոխվում է ֆիզիկական դարշանքի և վորի մասին գրել է Լեվ Տոլստոյը «Հարություն» վեպում:

Ակամայից մտաբերում ես Դոստոյեվսկու «Կարամազով յեղբայրները» վեպի հերոս Սմերդյակովին: Ծերունի Կարամազովի ու Լիզավետա Սմերդյաշչայայի ապորինի զավակը, «ծայր աստիճան նախանձոտ, չարակամ մի եյակ», ներքինու դեմքով մի ընկնավոր, մարդված պրովոկատորի հոգի ունեցող բարոյական մի այլանդակություն,—նա սպանում է իր հորը: Սմերդյակովի՝ թե՛ հայրենիքի վերաբերմամբ ունեցած հայացքը, թե՛

նրա բարոյական կերպարանքը, թե՛ դիմակավորվելու վարպետությունը շատ բանով հիշեցնում է ներկայիս մեղադրյալներին։

«Ցեռ ամբողջ Ռուսաստանն ասում եմ, Մարյա Կոնդրատյեվնա,—ասում է նա։—...Տասներկու թվականին Ռուսաստանի վրա մեծ արշավանք կատարեց Ֆրանսական Նապոլեոն առաջին կայսրը, այժմյան կայսրի հայրը, և լավ կլիներ, յեթե վոր այն ժամանակ մեզ նվաճելին հենց այդ Ֆրանսիացիները։ Խելացի մի ազգ նվաճած կլիներ շատ հիմար մի ազգի և միացրած կլիներ իրեն։ Մինչև իսկ բոլորովին այլ կարգեր կլիներ»։

Ախորժակի դալով, լակեյ Սմերդյակովը ավելացնում է.

«Ռուս ժողովրդին հարկավոր է ճաղկել...»։

Մի՞թե դրանից հետո է մտնում Տրոցկին, վորը Փարիզում հրատարակվող իր կեղտոտ թերթուկում գրում է.

«ԽՍՀՄ-ի սահմանները... նույնիսկ ազգային արդարացում չունեն։ Ուկրաինական ժողովուրդը,—վորպեսզի բազմաթիվ որինակներից մեկը վերցրած լինենք,—պետական սահմանով յերկու կեսի յե բաժանված...»։

Ըստ յերևույթին, «ազգային արդարացման» նպատակով էլ հենց միայն Տրոցկին վճռել է Գերմանիային «զիջել» Խորհրդային Ուկրաինան, վորի մասին համաձայնություն է յեկել Հեսսի հետ։ Յեթե ուկրաինական ժողովուրդը «պետական սահմանով յերկու մասի յե բաժանված», ապա արժե՞ արդյոք, վոր մենք պահենք այնտեղ մի ինչ-վոր քամահրելի կես մասը։ զիջենք նրանց,—այն ժամանակ «խելացի ազգը» կունենա մի ամբողջ Ուկրաինա։

Վորպեսզի ավելի ճիշտ կատարի Ծերունի Կարամազովի ստանությունը և կողոպտի նրան, Սմերդյակովը կեղծ ընկնավորությունը և անում է հետո այդ մասին պատմում է իր միջակ յերրորդը՝ Իվանին.

«— Ցեռ ընկա այն ժամանակ նկուղը...

— Իսկական ընկնավորությունի՞ց, թե ձևանում եյիր։

— Հասկանալի յե, վոր ձևանում եյի։ Ամեն բանում ձևանում եյի։ Սանդուխքից հանդարտ սահեցի, ընկա բոլորովին ցած ու հանգիստ պառկեցի, իսկ հենց վոր պառկեցի, այդտեղ ելեթ սկսեցի ճչալ։ Ցեվ թպրատցի, մինչև փոր դուրս տարան»։

Այստեղ Սմերդյակովը պատմում է, թե նա ինչպես է սպանել Ծերունուն, փողերը վերցրել և, հանցանշանները թաղցնելու համար, հատակի վրա յե դցել մի ծրար՝ փողը միջին փաթաթած,

և կողքին եղ վարդագույն մի ժապավեն, իսկ հետագայում ակնարկով դատախազին սուտ հետքի վրա յե կանգնեցրել։

Իվանի զարմացած հարցին, թե՝ մի՞թե ամեն ինչ տեղում այն ժամանակ մտածված և յեղել, Սմերդյակովը պատասխանում է.

«Վողորմած յեղեք, մի՞թե կարելի յե այդ բոլորը հնարել այդպիսի փութիկոտությամբ։ Նախապես ամեն ինչ մտածված և յեղել»։

Դեռևս ապանությունից առաջ Սմերդյակովը ակնարկներով Իվանին պատմել է իր պլանների մասին։ Յեվ, յերբ Իվանը նրան հարցնում է.—«... Ի՞նչ է, վաղը ընկնավո՞ր ես ուզում ձևանալ յերեք որով, հա՞»,—Սմերդյակովը պատասխանում է.

«Յեթե յես նույնիսկ այդ բանը կարողանայի եղ, այսինքն, վոր ձևանայի, և վորովհետև այդ անել ամենևին դժվար չի փորձված մարդու համար, ապա ուրեմն այստեղ եղ յես լիակատար իրավունք ունեմ այդ միջոցը գործադրելու՝ իմ կյանքը մահից փրկելու համար...» (Ընդգծումն իմն է։—Ի. Լ.)։

Սմերդյակովի այս վերջին ռեպլիկն ուղղակի վերաբերում է Պյատակովի այն մանրամասներին, վոր նա կատարեց անցյալ տարվա ոգոստոսին տեղի ունեցած տրոցկիստական-զինովյեվական հակահեղափոխական բանդայի դատի ժամանակ։ Վերևում մեջբերված նրա հոդվածը և հատկապես՝ մեղադրողի կամ դատավճիռը կատարողի դերում հանդես դալու վերաբերմամբ նրա արտահայտած պատրաստակամությունը մի՞թե տիպիկ Սմերդյակովյան, դիտմամբ ձևացրած ընկնավորություն չե։

Նույնպիսի հոդված նույն որերին գրել է նաև Ռադեկը։ Նա Տրոցկուն այդ հոդվածում անվանել է ֆաշիստական որեր-բանդիտ, ֆաշիստական բանդայի հետման։ Տրոցկու մասին նա նույնպես գրել է.

«Արյունոտ ծաղրածուն, յերբեմնի մանր-բուրժուական հեղափոխական, հետագայում մանր-բուրժուական հակահեղափոխական, այժմ բացահայտ ֆաշիստ—վատ կատակներ է անում»։

Նա էլ, ինչպես Պյատակովը, նզովում է «ստի ու խարեբության այն սիստեմը, յերկերեսանիության այն սիստեմը, վորպիսին անծանոթ է մարդկության պատմությանը», յերդվում է, վոր ինքը նվիրված է կուսակցությանն ու բանվոր դասակարգի գործին, և պահանջում է՝ «վոչնչացրեք այդ դարշելիներին»։ Նա էլ, ինչպես Սմերդյակովը, հատակի վրա յե գցում դատարկ ծրարը և նրա կողքին վարդագույն ժապավենը, վորպեսզի հանցանշանները ծածկի և հետաքննությունը սուտ հետքի վրա

կանգնեցնի։ Նա պատժում է իր մասին, վոր նույնիսկ այն պահին, յերբ ինքը «գերության մեջ եր գտնվում տրոցկիզմի ձեռքին» և միտք եր հղացել արտասահման փախչել՝ այնտեղ կենտրոն ստեղծելու համար, նա ազնվարար հրաժարվել է դրանից և «սարոտաժի յե յենթարկել փախուստի փորձը»։ Ի՞նչ պակաս հավատարիմ հոգի յե։

Ի տարբերություն Պյատակովից՝ Ռադեկը, լինելով բուն պրոֆեսիայի ժուռնալիստ, գրում եր թերթերում ու ժուռնալներում որը-որին։ Որը-որին, յերկար տարիների ընթացքում, նա յերդում-կրակն եր ընկնում, վոր ինքը հավատարիմ է կուսակցությանը և խորհրդային իշխանությանը, վարժվում եր պրոնելկախոսության պաթետիկայում։

Տեսնես ինչպե՞ս բերանը բռնած հռհռացած կլինի այդ ճիգվիտը, Ոնեգինի նման սարքված թատրոնական արտաքինով այդ դարշելի կեղծ բարեպաշտը իր բանավոր պիրոտեխնիկան գործի դրած ժամանակ և լրագրական թատերաբեմում բուտաֆորային կարտոնե սուսերով քաջաբար սրամարտելու ժամանակ։

Զզվելի, պրոնկացած հոգի, իմպերիալիստական խոհանոցների թափթփուկներից ապականված, թքոտված, դիվանագիտական կուլիսների դարշահոտությունով տոգորված,— արական սեռի այդ կոկոսական դեռ հանդգնություն է ունեցել խորհրդային ժուռնալիստներին ու գրողներին բարձր բարոյախոսություն և դասակարգային տոկունություն սովորեցնելու։ Քանի՞ միլիոն կեղծ խոսքեր է արտասանել այդ սուբյեկտը, քանի՞-քանի՞ անգամներ մերկացրել և բուրժուական ժուռնալիստներին, վորքա՞ն կեղծ փառաբանություններ և իրեն թույլ տվել այդ դավաճանը—գարշելիներից ամենագարշելին և համբույրներ գրոշմել իր՝ չվյատ կնոջ մաշված շրթունքներով։ Դեռևս իր հոդվածների թանաքը չչորացած, Ռադեկը դիվանագիտական ընդունելությունների յե վազել ոտարերկրյա դեսպանատները և մատուցել է այնտեղ իր խակական ծառայությունը իմպերիալիստական պարոններին, քշվշալով, թե ինչ պետք է անել, վոր կարելի լինի հաստատապես կործանել հենց նույն սոցիալիստական դեմոկրատիան, վորին նա գրանից մի ժամ առաջ գովաբանում եր։

Ցավ յեթե—այդ բոլորից ցնցված — զարմանքից ապշած կանգ եք առնում և հարց եք տալիս ձեզ, թե ի՞նչպես կարող է հնարավոր լինել այդպիսի յերկերեսանիություն, ի՞նչպես կարող է հնարավոր լինել բարոյական այդպիսի խորը անկում, ապա

Դոստոյեվսկին Սմերդյակովի բերանով ձեզ պատասխանում է.—
«Զեռնա՞լ...ամենևին դժվար չէ փորձված մարդու համար»:
Ցեվ Ռադե՛կն էր, վոր փորձ չուներ:

Իմ հայրենի քաղաքում նախապատերազմյան տարիները կար մի շվայտ-հարբեցող ժուռնալիստ, վորը թղթակցում էր միաժամանակ թե՛ ձախ-բուրժուական, թե՛ կադետական, թե՛ սև-հարյուրյակային լրագրերին: Ցերբ նրան հարցնում էին, թե այդ ինչպես կարելի յե, նա փաթ ընկնող, հարբած լեզվով պատասխանում էր.—

«Կադետական «Речь»-ում յես գրում եմ վոսկի համար... Հարկավոր է խմել—մի բան ուտել և յերեխաներին կաթի փող հասցնել: Իսկ «Русское знамя»-ում և «Земщина»-յում գրում եմ հոգու համար...»:

Սակայն մեր ժամանակ էլ դեռևս սմերդյակովչչինան սմբողջովին արմատախիլ չի արված: Նա պատսպարվում է կեղտոտ ծակուծուկերում և ճեղքերում: Կասկած չկա, վոր մեր խորհրդային հասարակայնությունը և Ներքդարձժողկոմատի նոր ղեկավար ընկ. Ցեժովը նրան այնտեղից դուրս կքաշի վոտքերից բռնած:

Սմերդյակովյան համատեղության մի այլ «նմուշ» է Սոկոլնիկովը: Կուսակցությունը և յերկիրը նրան վստահել էին մեր դիվանագիտական աշխատանքի ամենապատասխանատու հատվոր -արևելյան ճակատամասը, նստեցրել էին արտաքին ժողկոմի տեղակալի պաշտոնին: Սոկոլնիկովը խորհրդային կառավարության անունից բանակցություններ և վարում հարևան պետության ներկայացուցչի հետ, ձևակերպում և ԽՍՀՄ-ի տեսակետը կարևորագույն պետական հարցերի վերաբերմամբ, իսկ յերբ գրույցի պաշտոնական մասը վերջանում է և թարգմանները դուրս են գալիս սենյակից, Սոկոլնիկովը անցնում է վոչ-պաշտոնական մասին և, հյուրընկալորեն ոտարերկրացուն դեպի դուռն ուղեկցելով, արդեն ուրիշ բանակցություններ և վարում, «հոգու համար», Տրոցկու հանձնարարությամբ, վորին իրոք ծառայում է հավատով ու ճշմարտությամբ:

Սմերդյակովի կողքին, այստեղ մարդ մտաբերում է կլասիկ դրականությունից մի ուրիշ դեմք, կեղծավոր Տարտյուֆին, վորին նկարագրել է Ֆրանսական յերգիծաբան Մոլյերը: Տարտյուֆը կեղծավորությամբ ձեռք է բերել իրեն հովանավորող Որգոնի վստահությունը և նրա կնոջը՝ Ելմիրին համոզում է՝ իրեն անձնատուր լինել: Նա ասում է.

«... Խիղճը—պայմանական բան է.—յերբեմն վատ վարմունքը համերաշխում է նրա հետ լիովին;—միայն ճարպիկություն է այդտեղ հարկավոր, յես այդ չեմ թաղցնի... Ցավ այդպես, մի կողմ նետեք տարակուսանքն ու յերկյուղը: Հանդիստ մտածենք: Մենք այստեղ մենակ ենք, իսկ չարիքը, բոլորի կարծիքով, միայն այն ժամանակ է չարիք կոչվում, յերբ բացահայտ է կատարվում: Բացեիրաց գործելը անպատշաճ է ու անփառունակ, իսկ ծածուկ գործած մեղքը—մեղք չէ...»:

Ցաշիզմի բարձրաստիճան գործակալները Տարտյուֆից վատ չեյին վատահություն ձեռք բերել և դաղտադողի այստեղ իրենց դավաճանական գործերն են առաջ տանում: Յերկար տարիների ընթացքում նրանք այնպես եյին վարժվել հարմարվելուն և դիմակավորվելուն, վոր այդ նրանց յերկրորդ բնությունն եր դարձել:

Տեղին է հիշել «Экономическая жизнь»-ում 1922 թվին տպված Սոկոլնիկովի զրույցը: Սոկոլնիկովն այն ժամանակ ֆինժողկոմի տեղակալ եր:

«Հարկավոր է,—ասել է Սոկոլնիկովը,— դարդացնել խառը ակցիոներական ընկերությունների սիստեմը, տրեստները զուտ սեփական հիմնարկություններից դարձնելով ոտարերկրյա կապիտալների մասնակցությամբ աշխատող մասնավոր-սեփականատիրական ձեռնարկություններ...»:

Արդեն Սոկոլնիկովի այս արտահայտության մեջ, 15 տարի սրանից առաջ, մենք գտնում ենք սաղմային վիճակում կապիտալիզմի վերականգնման ծրագիրը, ԽՍՀՄ-ն ոտարերկրյա կապիտալի ճորտը դարձնելու ծրագիրը: 1925 թվականի վերջին XIV կուսակցական համագումարում Սոկոլնիկովը հանդես յեկավ մեր յերկիրը դաուեսացման յենթարկելու պլանով: Նա յեր վալյուտայի բնաղավառում տեղի ունեցած դեֆիցիտի առաջին մեղավորը: Հենց նա յեր, վոր արտասահմանում պատրաստի առարկաների գնումներ կատարեց մի քանի տասնյակ միլիոն ռուբլու, մի դումար, վորը կրկնակի չափով ավելի յեր սարքավորումներմուծելու համար ծախսված դումարից: Նա յեր հեղինակը այսպես կոչված վոսկու ինտերվենցիայի, վորի վրա Միությունը մի քանի միլիոն ռ. վոսկի կորցրեց: Բոլոր այս դառն ճշմարտությունների մասին Սոկոլնիկովին հիշեցրին Կոմակադեմիայի դիսկուսիայում 1926 թվականին:

Վոչ միայն մենակ Սոկոլնիկովը, այլև բոլոր արոցկիստները, առաջին հերթին Պյատակովը, Ռադեկը, Սերեբրյակովը և Մուրալովն էլ, յերկար տարիների ընթացքում պայքար են մղել

կուսակցության դեմ, վնաս են հասցրել յերկրին ու ժողովրդին, քարոզել են ժողովրդական տնտեսության զարգացման մարող կորագիծ, ստրկորեն խոնարհվել են կապիտալիզմի առջև ու ամենևին չեն հավատացել բանվոր դասակարգի ուժերին: Նրանց լոզունգն ե յեղել կուսակցության ԿԿ-ի 1927 թ. պլենումում Տրոցկու արտասանած խոսքերը.—«Համաշխարհային շուկային մենք յենթարկված ենք, համաշխարհային շուկայից մենք կտրըվել չենք կարող: Համաշխարհային շուկայի հետ մենք կապված ենք ամբողջ անցյալով, և համաշխարհային շուկային, նախ և առաջ մեր զարգացման տեմպի վրա նրա ունեցած վերահսկողության խմաստով, մենք յենթարկված ենք»:

Այդ քարտը խփված դուրս յեկավ: Գովված համաշխարհային շուկան թևակոխել ե յերկարատև, չորսամյա ճգնաժամը, իսկ մեր զարգացման տեմպերը յեղել են և շարունակում են հեքիաթային կերպով հսկայական լինել: Տրոցկու պրոգնոզներից վոչ մեկը չարդարացավ: Մնացին մեկուսացած աննշան մի բուռն ինտրիգաններ, վորոնք վոչ մի արմատ չունեն ժողովրդի մեջ, մնաց քաղաքական ավանտյուրիստների վայրագ վոխակալությունը, վորը քանի գնում, ավելի ու ավելի յե աճում:

Պարտվողական դիրքերում՝ Տրոցկին և նրա բանդան կանգնած եյին դեռ 1927 թվին, յերկրի դլխին ծառացած՝ պատերազմի սպառնալիքի մոմենտին: Տրոցկուն հատուկ դատարկախոսությունն ֆրազյորությամբ նա առաջ մղեց «Կլեմանսոյի թեզիսը»: Բանդիտական շայկայի պարագլուխ Տրոցկին այն ժամանակ հայտարարեց, վոր Ֆրանսական բուրժուական քաղաքագետ Կլեմանսոյի նման, ինքը կուսակցության ղեկավարության դեմ մղվող պայքարում կանգ չի առնի մինչև իսկ այն դեպքում, յեթե թշնամին կանգնած լինի մայրաքաղաքից մի քանի տասնյակ կիլոմետր հեռավորության վրա:

Այն ժամանակվանից անցել և տաս տարի: Այն ժամանակ առաջադրված «Կլեմանսոյի թեզիսը» դարձավ կոնկրետ համաձայնություն Հիտլերի տեղակալ Հեսսի հետ, դարձավ հայրենիքի ուղղակի դավաճանություն: Տրոցկիստների դաղտնի տպարանը, բուրժուական ինտելիդենտների և հակահեղափոխականների հետ ունեցած նրանց կապը, 1927 թվի նոյեմբերի 7-ին փողոցային ցույց սարքելու փորձերը, արտասահմանում Մասլովի կեղտոտ թերթուկում դաղտնի տեղեկություններ հրապարակելը և այլ «սխրագործությունները» նսեմանում, հետին պլանի վրա յեն նահանջում նույն այդ բանդայի ամենածանր հանցագործություն-

ների հանդեպ։ Ավերված ավանտյուրիստները պայքարի տրամաբանությամբ հասցված են ներկայիս խայտառակ սահմանին։

Այժմ մեղադրյալների աթոռի վրա յեն ֆաշիզմի վիժվածքները, մատնիչները, հայրենիքի դավաճանները, վնասարարները, լրտեսները, դիվերսանտները — մարդկության ամենավոխերիմ ու նենգ թշնամիները։ Նրանք դատարանի առջև կանգնեցին լրենց ամբողջ գարշելի մերկությամբ, և մենք տեսանք Սմերդյակովների նոր հրատարակությունը, միս ու արյուն դարձած նոզկալի մի կերպարանք։ Մեր որերի Սմերդյակովներն առաջ են բերում զայրույթի ու զզվանքի խառն զգացմունք։ Այդ վոչ միայն կապիտալիզմի վերականգնման դաղափարախոսներն են, այդ՝ ֆաշիստացող բուրժուազիայի բարոյական կերպարանքն է, նրա ծերության հյուծախտի, խելագար կատաղության և կենդանի վտածության արդասիքն է։

«Правда», 25 հունվարի 1937 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Դատարանի դատավճիռը ժողովրդի դատավճիռն է 5

Ստորներից ստորադուինները 20

Հայրենիքը ծախողները 26

Կապիտալիզմի ռեստավրատորների տրոցկիստական շայկան 31

Հայրենիքի դավաճանները, ֆաշիզմի լակեյները, կապիտալիզմի ստոր ռեստավրատորները 36

Մարդասպանների և հայրենիքի դավաճանների տրոցկիստական բանդան 44

Դատարանի դատավճիռը ժողովրդի ձայնն է 61

Ցերկիրը վոչնչանում է արդար դատավճիռը 66

Մարդկության թշնամիները, պատերազմի հրձիգները 71

Դատավարությունից անել բոլոր հետևությունները 76

Ժողովրդի վայրագ թշնամիների՝ տրոցկիստների նպատակներն ու մեթոդները 81

Ա. ԴԱՎԻԴՅՈՒԿ, Կոլտնտեսային գյուղացիության թշնամիները . . 91

Կապիտալիստական շրջապատումը և նրա գործակալությունը . . . 103

Ն. ՌՈՒԲԻՆՇՏԵՅՆ, Հայրենիքի անարդ դավաճանները և ֆաշիզմի վարձկանները 113

Դ. ՈՍԻՊՈՎ, Ինչո՞ւ յեն նրանք խոստովանում 140

Լ. ՌՈՎԻՆՍԿԻ, Լրտեսների ընկերակցությունը 145

Գ. ՊԱՎԼԵՆԿՈ, Ճապոնացի պարոն Խան կամ Տրոցկու հեռավոր-արևելյան կեղծանունը 150

Ի. ԼԵԺՆՅՈՎ, Սմերդյակովները 153

ՀՈՒՍ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

Թարգմանեցին՝ Ղուկասյան յեվ Հ. Ֆ.-Հովհաննիսյան
Խմբ. Մ. Հովհաննիսյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Վ. Ջիդեջյան
Կոնտր. սրբ. Լ. Արովյան

Գլավլիտի լիազոր Ի—4879, հրատ. № 440, պատվեր № 66,
Տիրաժ 7.000, ինդեքս $\frac{\text{П-84}}{\text{РК}}$

Հանձնված է արտադրության 7/IV—1937 թ.
Ստորագրված է տպագրության 29/IV—1937 թ.
ԳԻՆԸ 1 Ռ.
Հայկուսհրատի տպարան, Երևան, Նալբանդյան № 71

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

եջ	տող	տպված է	պետք է լինի
5	13 վ.	Ակասկած	Անկասկած
22	12 ն.	Բալկանելի	Բալկաննելի
87	4 վ.	ծաղկեփունջ	փունջ

Թարգմանեցին՝ Ղուկասյան յեվ Հ. Ֆ.-Հովհաննիսյան
Խմբ. Մ. Հովհաննիսյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Վ. Ջիդեջյան
Կոնտր. սրբ. Լ. Աբովյան

Գլավլիտի լիազոր Ի—4879, հրատ. № 440, պատվեր № 66,
Տիրաժ 7.000, ինդեքս $\frac{\text{П-84}}{\text{РК}}$

Հանձնված է արտադրության 7/IV—1937 թ.
Ստորագրված է տպագրության 29/IV – 1937 թ.
ԳԻՆԸ 1 Ռ.
Հայկուսհրատի տպարան, Երևան, Ալլահվերդյան № 71

Пров. 1940 г.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0016341

271

-104.

ԳԻՆԻ ~~1-ԱՌ~~.

9957

ВРАГИ НАРОДА

[К итогам процесса
антисоветского
троцкистского центра]

Армпартиздат, Ереван, 1937